Professor Stanton claims that, according to reports of UN and the non-governmental organizations, the genocide could have been prevented until its fourth phase. He posed another issue as well; It is important to put emphasis not only on who committed the crime but also on whom organized it, because it is considered to be genocide even if the individuals who committed the crimes followed commands or had a relationship with government functionaries, who haven't expensed their views in public. The accusation is extended if there is a para military interference for the committing of the crime.

During the preparation of the genocide the victims are separated from the mass, secret situations are prepared, the would-be victims are aimed and become targets. Properties are confiscated, the movements are limited by creating blocked places,

¹ On 2 August 2001, the International Court of Crimes for former Yugoslavia it decided that the makes in the Semprenitsa of Bosnia - Herzegovina they constituted Genocide.

² UN (47/121- 18/12/1992, 9).

³ **Cipolat U.** The Punishment of Rape under International Humanitarian Law: how to Deal with Perpetrators in the Yugoslav Context, Yale Law School, 1996.

⁴ **Kiratzopoulos V.**, op. cit., p. 44.

⁵ Two basic weaknesses of ICTY it is that it cannot judge affairs for crimes that were committed before the 1 July 2002 and his jurisdiction of is additional that of courts of countries that have ratified the Treaty of Rome. **Kiratzopoulos V.**, op. cit., p. 99.

⁶ **Kuper L.**, op. cit., **Ternon Y.**, L'État criminel. Les génocides au XX^e siècle, Paris, 1995.

⁷ **Stanton G.H.**, The Eight Stages of Genocide, Yale, 1998.

camps are created and house arrest imposed. It is the phase when the foreign powers must intervene in order to avoid outrages, to help organize self-defense and if the UN and the foreign powers cannot prevent the genocide, then the seventh, phase of the genocide begins.

Then, state and paramilitary powers are used, groups which will support the Genocide whereas the last phase is of the great interest for the final outcome of the Genocide since the persecutor, creates massive graves, wipes out elements and terrifies the witnesses, denies that there has been a crime committed, blocks any research until the final destruction of any elements. The persecutors and the mastermind are left un-punished, they declare inability to find those guilty and arrest them and point to the victims as the main responsible for the genocide.

4. Conclusions

The international crime of Genocide opposes responsibilities not only on the state which committed it, but also to the whole international community:

- a) For not recognizing a situation created by global crime as legal
- b) For not helping the performance of an international crime to maintain the illegal situation and¹
- c) To help other countries with the application of the obligations above. That is, it imposes on the international community the obligation not to recognize an illegal situation as a result of Genocide².

A universal struggle to ask for and point out the truth will find a lot of nations agreed. In order not to repeat the crimes, the responsible and the reasons that led them have to be found out. The truth must be sought and presented to the international public opinion, which knows how to judge and sentence without self-interest. Nowadays, when other nations suffer genocides from racist states, it is time for the first step to be taken to recognize the Armenian genocide. On the other hand, the contemporary Turkish state has to answer for the Armenian Genocide, without making propaganda and pleads inconsistency as a state in order to be exculpated from the charge. This state, as the creation of Mustafa Kemal, and the Young Turks are responsible for the crime of Genocide. Each nation has the right to intensely demand from the authorities of the crimes and offences committed against it to recognize them. The greater the harm and the longer the facts were hidden, the more intense the desire for such recognition becomes.

Recognition, which is a substantial way to fight against genocide; Recognition which constitutes the confirmation of a nation's right to the respect of its existence according to the international law and the historic truth.

¹ **Shaw M.** // International Law, New York, 2002, p. 481, it marks that the violation of international obligation gives reason for a requirement for the repair.

² **Lauterpacht H.**, Recognition // International Law, Cambridge, 1947, p. 20, **Bassiouni C.**, Crimes against Humanity in International Criminal Law, Martinus Nijhof, Dordrecht, 1992, **Shelton D.** (ed.), Encyclopaedia of Genocide and Crimes against Humanity, MacMillan reference, 2004, **Francillon J.**, Aspects juridiques des crimes contre l'humanité // L'actualité du génocide des Arméniens, Edipol, 1999, p. 397-404.

**Թեոֆանիս Մալկիդիս – Յեղասպանությունը որպես հանցանք և
Հայոց ցեղասպանությունը**

Հոդվածում վերլուծվում է ցեղասպանության հարցը՝ սկսած եզրույթի առաջին հիշատակումից՝ Առաջին համաշխարհային պատերազմից մինչև ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության գաղափարի ընդունումը: Հեղինակը տալիս է նաև ցեղասպանություն միջազգային եզրույթի տիպական նկարագիրը, և թե ինչով այն առնչվում հայերի դեմ ուղղված XX դարի առաջին ցեղասպանության:

Բացի այդ, հեղինակը քննարկում է Հայոց ցեղասպանությունը քաղաքական, դիվանագիտական և պատմական համատեքստում և ուսումնասիրում Հայոց ցեղասպանության և դրա միջազգայնորեն ճանաչման համար բացված նոր հեռանկարները:

Теофанис Малкидис – Геноцид как преступление и Геноцид армян

В статье анализируется вопрос геноцида с первого упоминания термина – от Первой мировой войны до принятия идеи геноцида со стороны ООН. Автор дает также типовое определение международного термина геноцид и то, каким образом он связан с первым геноцидом XX века, совершенным против армян.

Кроме этого, автор анализирует Геноцид армян в международном политическом, дипломатическом и историческом контексте и исследует новые перспективы, открывающиеся для признания Геноцида армян.

**ԱՄՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

***Բանալի բառեր** – Հայոց ցեղասպանություն, միջազգային ճանաչում, Միացյալ Նահանգներ, 252-րդ բանաձև, ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատ, հայկական հարց, նախընտրական խոստում, նախագահ*

Հայ ժողովրդի պատմության ամենասև եջը Հայոց ցեղասպանությունն է Օսմանյան կայսրությունում, որը նրան պատճառել է մարդկային, տարածքային, մշակութային և նյութական անդարմանելի կորուստներ:

Ինչպես շատ երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի առաջադեմ հասարակությունը զայրույթով է ընդունել 1915 թ. հայերի կոտորածի և տեղահանության փաստը: Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ի քաղաքական մոտեցումը Հայկական հարցի առնչությամբ հանգել է հետևյալին՝ ցանկանում ենք ստեղծել մեծ Հայաստան, սակայն չենք պատրաստվում դիմելու որևէ զոհողության: Այդուհանդերձ, դա չի նշանակում, թե ԱՄՆ-ը որևէ դերակատարություն չի ստանձնել այդ ժամանակ: Ավելին, նա իր բացառիկ մասնակցությունն է ունեցել Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի սկզբնական շրջանում, ընդ որում՝ թե՛ պաշտոնական վավերագրերի մակարդակով ցեղասպանության փաստն արձանագրելու և դրա վերաբերյալ տեղեկատվությունն աշխարհում տարածելու և թե՛ ցեղասպանության գործընթացին միջամտելու և վերապրածների օգնություն ցույց տալու առումներով: Ելնելով ոչ միայն զուտ մարդասիրական, այլև քաղաքական ու տնտեսական շահերից՝ ԱՄՆ-ը Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայոց ցեղասպանության դատապարտման և Արևմտյան Հայաստանը ներառող հայկական պետականության ստեղծման խնդրին առավել հետամուտ պետություն էր, քանի դեռ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական նոր իրողությունների բերումով խնդիրը չէր կորցրել արդիականությունը: Բացի դրանից, ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի հետ միաժամանակ առիթ էր ունեցել արծարծել հայկական կոտորածների և փոխհատուցման խնդիրն արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին:

ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացի հիմնական փուլն սկսվել է 1965 թ., երբ ամերիկահայ համայնքը նշում էր Եղեռնի 50-րդ տարելիցը: Այս առիթով Կալիֆոռնիայի նահանգի Օրենսդիր ժողովն ընդունեց Ասամբլեայի թիվ 274 բանաձևը, որում նշված

էր. «50 տարի առաջ՝ 1915 թ. ապրիլի 24-ին, Թուրքական կայսրության կառավարությունը՝ իբրև Կենտրոնական դաշինքի երկրների դաշնակից, սկսել է հայ ազգի պարբերաբար բնաջնջման ծրագիրը: ... 1915-1918 թթ. ընթացքում ողջ հայության կեսն իր բնակավայրերից քշվել է դեպի Սիրիայի անապատը և սպանվել կամ աննկարագրելի սարսափներ է կրել: ... Մարդկության պատմության մեջ չի եղել ոչ մի իրադարձություն, որն այսքան հիմնովին գրավի աշխարհի ժողովուրդների սրտակցությունը, սակայն որ այսքան շուտ էլ մոռացվի»¹:

Նույն թվականին Կալիֆորնիայի նահանգապետ Էդմոնդ Բրաունը հանդես է եկել հայտարարությամբ, որում նշվում էր. «1915 թ. հայկական կոտորածի հիշատակի այս օրն աշխարհը պետք է դադար տա՝ խորհելու պատմական դասերի և դրանց համամարդկային նշանակության մասին: Ես կոչ եմ անում բոլոր կալիֆորնիացիներին միանալ մեր հայ հարևաններին և համաքաղաքացիներին՝ նշելու այն 2 մլն. հայերի մահը, ովքեր հալածանքների են ենթարկվել և դատապարտվել մահվան»²:

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու գործում Կալիֆորնիա նահանգին առաջինը միացան Նյու Ջերսին և Նյու Յորքը: Նրանց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթն այն հուսադրող տրամադրությունն էր, որն առաջացրել էին թուրքական գորքերի՝ Կիպրոս ներխուժելուց հետո ԱՄՆ-ում ծայր առած հակաթուրքական տրամադրվածությունը և 1975 թ. ապրիլի 9-ին ԱՄՆ-ի կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող Ներկայացուցիչների պալատի թիվ 148 համատեղ բանաձևը: Այսպես, 1975 թ. ապրիլի 1-ին Նյու Ջերսիի Գլխավոր ասամբլեան ընդունեց մի բանաձև, որում մասնավորապես նշված էր. «1975 թ. ապրիլի 24-ին նշվում է 1915-1918 թթ. պարբերաբար իրականացված ցեղասպանության 60-րդ տարելիցը, որի հետևանքով բնաջնջվել են Թուրքիայում բնակվող 1.5-2 միլիոն հայեր»³:

1975 թ. ապրիլի 24-ին Նյու Յորքի Օրենսդիր ժողովն ընդունեց Սենատի և Ասամբլեայի համատեղ բանաձև, որում դատապարտվում էր թուրքական իշխանությունների՝ հայկական ռասան բնաջնջելու փորձը⁴: 1990 թ. Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ նախագահ Ջորջ Բուշ ավագը հանդես եկավ ուղերձով, որում 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից իրականացված քաղաքականությունն ան-

¹ State of California. The Legislative. Assembly Resolution 274. 1965. Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (ՀՅԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 1:

² State of California. Office of the Governor. Proclamation. Governor Edmund G. Brown. 1965. Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 41, փաստաթուղթ 4:

³ State of New Jersey. General Assembly. Assembly Resolution. April 1, 1975.

⁴ State of New York. The Legislature. Senate and Assembly Joint Resolution. April 24, 1975.

վանում էր «մարդկության դեմ հանցագործություն»¹: Թեև ցեղասպանությունը դասվում է հենց մարդկության դեմ հանցագործությունների շարքում, այնուամենայնիվ Ջորջ Բուշ ավագը չկատարեց նախընտրական իր խոստումը և ձեռնպահ մնաց ցեղասպանություն եզրույթն օգտագործելուց, ինչպես դա արել էր նախագահ Ջիմի Քարտերը 1978 թ.: Սակայն այս ամենից բացի, պետք չէ մոռանալ, որ 1981 թ. նախագահ Ռոնալդ Ռեյգանն իր թիվ 4838 ուղերձում օգտագործել էր հենց «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը²: ԱՄՆ նախագահ Բիլ Բիլնթոնի պաշտոնավարության ժամանակաշրջանում, սկսած 1994 թ., Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ նախագահական ուղերձները դարձան ամենամյա: Սակայն բովանդակային առումով նրա ելույթները որևէ փոփոխություն չկրեցին: Ավելին, իր ուղերձներում Բիլնթոնը սկսեց ավելի հպանցիկ անդրադառնալ Հայոց ցեղասպանության թեմային՝ առավելապես իր խոսքը կենտրոնացնելով ՀՀ ապագայի վերաբերյալ ԱՄՆ-ի ունեցած տեսակետի վրա և անդրադառնալով անկախ պետականության ու ազատական տնտեսություն կառուցելուն, հարևանների և մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելուն, Ղարաբաղյան խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու գործում Հայաստանին սատար կանգնելու ԱՄՆ-ի պատրաստակամությանը:

Ինչևէ, հարկ է հիշել նաև այն, որ Միացյալ Նահանգներն առաջին պետությունն է, որն արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը՝ Ուրուգվայից դեռևս 14 տարի առաջ՝ 1951 թ., և Ցեղասպանության կոնվենցիայի ստորագրումից ընդամենը երեք տարի անց: ԱՄՆ-ի կառավարությունը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին 1951 թ. հունվարի հղած իր գրավոր հայտարարության մեջ բառացիորեն հավաստել է հետևյալը. «Քրիստոնյաների հալածանքները հռոմեացիների կողմից, հայերի ջարդերը թուրքերի կողմից, միլիոնավոր հրեաների և լեհերի ոչնչացումը նացիստների կողմից ցեղասպանություն հանցագործության ակնհայտ օրինակներ են: Այս հիմքի վրա է Միավորված ազգերի Վեհաժողովը քննության առել ցեղասպանության հարցը»³:

¹ The White House. Office of the Press Secretary. April 20, 1990.

² The White Hoes. Office of the Press Secretary. April 22, 1981. Տե՛ս նաև Public Papers of the presidents of the United States, Administration of Ronald Reagan, 1981, Washington, Government Printing Office, 1982, p. 459:

³ “The Roman persecutions of the Christians, the Turkish massacres of Armenians, the extermination of millions of Jews and Poles by the Nazis are outstanding Assembly of the crime of Genocide. This was the background when the general Assembly of the United Nations considered the problem of genocide”. International Court of Justice: pleadings, oral arguments, documents; Reservations on the Convention on the Punishment of the Crime of Genocide: **Chapter IV, Human Rights**, 1. Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Paris, 9 December 1948 Entry into force 12 January 1951, in accordance with article XIII, Registration-12 January 1951, No. 1021, Status-Signatories: 41. Parties: 146, Text- United Nations, *Treaty Series*, vol. 78, p. 277.

Վերոշարադրյալից հստակ է, որ թուրքերի կողմից հայերի ջարդերը Միացյալ Նահանգների կառավարությունը միանշանակորեն դիտել է ցեղասպանություն հանցագործության ակնհայտ օրինակ: Ավելին, սույն հայտարարությունն անառարկելիորեն փաստում է, որ ՄԱԿ-ի Վեհաժողովը Ցեղասպանության կոնվենցիան ընդունելիս (1948 թ. դեկտեմբերի 9) ի նկատի է ունեցել նաև Հայոց ցեղասպանությունը: Նշենք նաև, որ ԱՄՆ-ի աջակցությամբ է Ռաֆայել Լեմկինի՝ ցեղասպանության կոնվենցիայի համաձայնագրի նախնական բանաձևը դրվել Գլխավոր ասամբլեայի քննարկմանը: Հիշեցնենք նաև, որ Լեմկինը առաջադրելով «ցեղասպանություն» եզրույթը, հիմք է ընդունել 1915 թ. հայերի ոչնչացումը՝ որպես հիմնարար օրինակ¹: Ցանկանում եմ մեջ բերել նրա խոսքերը. «Որոշ ընթերցողներ արդեն գլխի են ընկել, թե ես ինչ ի նկատի ունեմ, այն է, երեսուն տարի առաջ թուրքերի կողմից իրականացված գազանությունները հայերի նկատմամբ: Սակայն ոմանք կասեն, որ այդպես չեն մտածել: Ահա սա է մեր ժամանակների ողբերգությունը: Մենք չափազանց շուտ ենք մոռանում: Երեկ գոհերը «միայն» հայերն էին, այսօր «միայն» հրեաներն են, բայց նաև լեհերն ու այլ եվրոպական ժողովուրդներ: Իսկ ո՞վ կլինի վաղը»²:

Ցեղասպանության կոնվենցիան ԱՄՆ-ը վավերացրել է 1988 թ. նոյեմբերի 25-ին: Ըստ այդմ, նշյալ փաստաթուղթը, համաձայն Միացյալ Նահանգների սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի, դարձել է երկրի օրենսդրության բաղկացուցիչ մասը (supreme Law of the Land):

Կարծում ենք, որ Միացյալ Նահանգներում նույնպես քիչ աշխատանք չի տարվել Հայոց ցեղասպանության դատապարտման ճանապարհին, քան մեծ թվով այն երկրներում, որոնց անունը նշվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչած 21 պետությունների ցանկում:

ԱՄՆ-ը, Հայաստանից և Կանադայից բացի, միակ պետությունն է, որտեղ պետական ղեկավարը ապրիլի 24-ին հանդես է գալիս ելույթով: Սկսած 1994 թվականից՝ յուրաքանչյուր տարեկիցի օրը հնչում է խոշորագույն գերտերություններից մեկի նախագահի խոսքը 1915 թ. ոճրագործությունների վերաբերյալ. սա արդեն բավական խոսուն է:

Ճիշտ է, մեզ մտահոգում է այն փաստը, որ ԱՄՆ-ի նախագահության թեկնածուներն ընտրարշավի ժամանակ պարբերաբար հանդես են գալիս «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը հստակ կիրառելու խոստումով, սակայն նախագահ դառնալուց հետո դա խոստումը մոռացության են մատնում: Հենց օրինակ Բարաք Օբաման, երբ նախագահի թեկնածու էր, այդ ժամանակ դեռևս սենատոր, հայտարարել է, որ «Հայոց ցեղասպանությունը ենթադրություն չէ, ոչ էլ անձնական կարծիք կամ տեսակետ, այն

¹ Auran Y., The Banality of Denial: Israel and the Armenian Genocide, New Brunswick, N.J., 2003.

² Թարգմանված է եբրայերենից. Յիվո Բլեթեր, Եբրայական գիտական ինստիտուտի ամսագիր, հ. XXVIII. համ. 2, 1948:

Միացյալ Նահանգներն է, որը հավատարմագրված է բազմաթիվ պատմական ապացույցներով: Փաստերն անհերքելի են... որպես նախագահ ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»: Սակայն իր առաջին նախագահական ելույթում խուսափեց «ցեղասպանություն» բառերից, բայց օգտագործեց հայերեն «Մեծ եղեռն» արտահայտությունը: Իսկ Մեջլիսում ունեցած իր ելույթում՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հատվածում, Օբաման «Զիկագո տրիբուն» թերթի թղթակցի այն հարցին, թե արդյոք իր տեսակետը փոխել է, նա իբրև նախագահ պատասխանել է. «Հարցի վերաբերյալ տեսակետներս արձանագրված են: Ես չեմ փոխել իմ տեսակետը»: Փաստորեն նախագահները հրաժարվում են կատարել խոստումները՝ ասելով, որ Թուրքիան կարևոր դեր ունի ՆԱՏՕ-ի համակարգում կամ ԱՄՆ տարածաշրջանային ռազմավարական շահերի համապատկերում: Փաստ է նաև այն, որ ԱՄՆ-ի 40-րդ նախագահ Ռեյգանի հայտարարությունը պետական ոչ մի ղեկավար չի մերժել:

Այժմ դիտարկենք Կոնգրեսի մակարդակով ճանաչմանը. ԱՄՆ-ի օրենսդիր մարմինը երկու անգամ ընդունել է համապատասխան որոշումներ, որոնցում հստակորեն ամրագրված է «Հայոց ցեղասպանություն» բառակապակցությունը: 1975 թ. ապրիլի 9-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի ընդունած որոշման մեջ նշված է. «1975 թ. ապրիլի 24-ը հաստատել որպես մարդու կոդմից մարդու նկատմամբ դաժանության հիշատակի օր: ԱՄՆ-ի նախագահը լիազորվում է, և նրանից պահանջվում է հրապարակել հայտարարություն, որով ԱՄՆ-ի ժողովրդին կոչ կարվի այս օրը հիշել բոլոր ցեղասպանությունների գոհերին և հատկապես հայերին, որոնք ցեղասպանության են ենթարկվել 1915 թ., որի պատճառով այս օրը ոգեկոչվում է համայն աշխարհի հայերի և նրանց բարեկամների կողմից»: Ինչպես նշեցինք, 1981 թ. նախագահ Ռեյգանը հրապարակեց համապատասխան հայտարարություն, ինչը, ըստ էության, ամբողջացրեց Կոնգրեսի փաստաթղթի պահանջը: 1984 թ. սեպտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատն ընդունեց ևս մեկ որոշում, որը հիմնականում կրկնում էր 1975 թ. փաստաթուղթը, սակայն առավել խիստ շեշտադրումներ էր կրում. «1985 թվականից ապրիլի 24-ը հաստատել որպես մարդու կոդմից մարդու նկատմամբ դաժանության հիշատակի ազգային օր»: Այսպիսով, հարկ է նշել, որ ամերիկյան Կոնգրեսը ևս Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրենսդիրների թվում է: Սա փաստ է: Նշենք նաև, որ ԱՄՆ-ի 50 նահանգներից 43-ը տարբեր ժամանակներում ընդունել են Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշումներ:

Զպետք է մոռանանք նաև ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունների աշխատանքները և Ներկայացուցիչների պալատի հայկական հարցերով հանձնախմբի անդամների ակտիվ ջանքերը, որոնց շնորհիվ 2010 թ. մարտի 4-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության դրվեց հայերի դեմ իրականացված ցեղասպանության 252-րդ բանաձևը, որն ընդունվեց

46 հոգուց բաղկացած հանձնաժողովի 23 կողմ և 22 դեմ քվեների հարաբերակցությամբ (մեկ անդամ չներկայացավ քվեարկությանը): 252-րդ բանաձևը կոչ է անում ԱՄՆ-ի նախագահին «ապահովել, որպեսզի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը պատշաճ ըմբռնում ցուցաբերի հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը՝ Միացյալ Նահանգների արձանագրություններում փաստված մարդու իրավունքների, էթնիկ գոտումների և ցեղասպանության հարցերի առնչությամբ», ինչպես նաև ապրիլ-քսանչորսյան իր ամենամյա ուղերձում «ճշգրիտ կերպով բնորոշել մեկուկես միլիոն հայերի պարբերական և կանխամտածված բնաջնջումը որպես ցեղապանություն»¹: Բանաձևի ծանոթագրություններում հստակ նշվում է.

«Հայերի դեմ իրագործված ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրության կողմից 1915-1923 թվականներին, որի արդյունքում տեղահանվել են երկու միլիոն հայեր:

Նրանցից մեկուկես միլիոնը սպանվել է, կես միլիոն վերապրածներ վտարվել են իրենց տներից: Այս ամենի արդյունքում վերացվեց հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատմական հայրենիքում»: Նշենք, որ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարցերի հանձնաժողովը նման բովանդակությամբ բանաձևեր ընդունել է 2000, 2005 և 2007 (նույն նպատակը հետապնդող 106-րդ բանաձևը, նույն 252-րդ բանաձևը) թվականներին: Թեև այդ բանաձևերը մեծ աջակցություն էին վայելում Կոնգրեսում, Ներկայացուցիչների պալատի լիազուրկ նիստում քվեարկության չեն դրվել, քանի որ թե՛ Բիլ Քլինթոնը և թե՛ Ջորջ Բուշ կրտսերը կտրականապես դեմ արտահայտվեցին բանաձևերի ընդունմանը՝ պատճառաբանելով, որ թուրքերը կարող են պատասխան քայլերի դիմել²: Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Հովարդ Բերմանը նույնպես կոչում է քվեարկել 252-րդ բանաձևին: Պետք է նկատել, որ 252-րդ բանաձևին կոչում քվեարկած անդամներից մի քանիսը ղեկավարում են Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովները: Դոնալդ Փեյնը, օրինակ, Աֆրիկայի և համաշխարհային առողջապահության հանձնաժողովի ղեկավարն է, Էնի Ֆալեոմավաեզան (դեմոկրատ) ղեկավարում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան և գլոբալ բնապահպանություն հանձնաժողովը, Բրեդ Շերմանը՝ Ահաբեկչություն, չտարածում և առևտուր, Գարի Աքերմանը՝ Մերձավոր Արևելք և Հարավային Ասիա, Էլիոթ Էնգելը՝ Արևմտյան կիսագունդ ենթահանձնաժողովները: Նկատենք, որ 252-րդ բանաձևի քվեարկության ընթացքում Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի գրեթե բոլոր անդամները բացահայտ ճանաչել են հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը, սակայն դեմ քվեարկած-

¹ ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը հավանություն տվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծին, 05.03.2010 թ., <http://www.armenialiberty.org/content/article/1974951.html>

² Նույն տեղում:

ներն իրենց դիրքորոշումը պայմանավորել են ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական հարաբերություններով և այն պատճառաբանությամբ, որ բանաձևի ընդունումը կվնասի այդ հարաբերություններին, կամ ոչ պատշաճ ժամանակի ընտրությամբ՝ կապված հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի հետ՝ Աֆղանստանում ամերիկյան զորքերը չվտանգելու առումով և այլն: Անհրաժեշտ է հստակեցնել, որ ԱՄՆ-ի Կոնգրեսում հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման վերաբերյալ բանաձևերի քվեարկումը, որպես կանոն, ակտիվանում է հատկապես ապրիլի 24-ի նախաշեմին՝ պայմանավորված Միացյալ Նահանգներում հայկական լոբբինգի ակտիվացմամբ: Մյուս կողմից, սակայն, նման բանաձևերի քվեարկությունը, իսկ արդյունքում՝ դրանց ընդունումը կամ մերժումը, էապես պայմանավորված են ոչ միայն ԱՄՆ-Թուրքիա, այլև ԱՄՆ-ՀՀ փոխհարաբերություններով: Կոնգրեսում նման քննարկումները կարևոր նախադրյալ են Սպիտակ տան վարչակազմի համար՝ ճնշումներ գործադրելու առաջին հերթին Թուրքիայի վրա:

Փաստերի համադրությունից հետևում է մեկ իրողություն. զուտ իրավական տեսանկյունից Միացյալ Նահանգները հանդես է գալիս որպես օրենսդիր և գործադիր մակարդակում Հայոց ցեղասպանությունը դատապարտած պետություն:

Այսպիսով.

1. Ակնհայտ է, որ ներկայումս Միացյալ Նահանգները պատրաստ է մեկ անգամ ևս «թուրքերի կողմից հայերի ջարդերը» որակել որպես ցեղասպանություն: Նպատակը ոչ թե Հայոց ցեղասպանության ճանաչումն է, այլ այդ ցեղասպանության հետևանքների վերացումը: Այն է՝ հայերի բարոյական, նյութական և տարածքային իրավունքների վերականգնումը:
2. Այս պայմաններում մեզ հուզող հարցի փոխանցումը քաղաքական դաշտից իրավական դաշտ ավելի շահեկան է:
3. Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է և որպես միջազգային իրավունքի ու միջազգային իրավունքի ոտնահարման հարց՝ ենթակա է Արդարության միջազգային դատարանի իրավասությանը: (Արդարության միջազգային դատարանի կանոնադրություն, հոդված 36.2 (բ, գ, դ); Statute of the International Court of Justice, article 36.2 (b, c, d):
4. Հայաստանը՝ որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, կարող է ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով (Միջազգային դատարանի Կանոնադրության 36-րդ հոդվածի 2 կետի «ա» և «բ» ենթակետերի հիման վրա) հավաստել Վիլսոնի իրավարար վճռի վավերականությունը և դրանով իսկ վերահաստատել իր տիտղոսը իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքի նկատմամբ:

Гаяне Галстян – *Позиция США относительно вопроса Геноцида армян*

Статья посвящена процессу признания и осуждения Геноцида армян со стороны США. Позиция США в данном вопросе сводится к тому, что Соединенные Штаты принимают геноцид как исторический факт и скорбят над потерей 1.5 миллиона армян, которые были истреблены или отправлены в лагеря смерти. В данном контексте официальное признание геноцида армян со стороны США имеет особую важность. Из вышеизложенного очевидно, что процесс продолжается, и США полностью признают факт Геноцида армян, поскольку это является не только задачей армянской общины этой страны, но также вопросом, требующим давнего анализа и закрепленным во внутривнутриполитической повестке дня. Геноцид армян в США давно стал внутренним пробным камнем, и правительство этой страны должно решить данную задачу, не принимая во внимание политику отрицания в этом вопросе со стороны Турции.

Gayane Galstyan – The USA Standpoint on the Armenian Genocide

The article is dedicated to the recognition and condemning process of Armenian genocide by the US. The position of US in this issue leads to a point where as a historical fact the US clearly recognizes and mourns the loss of 1.5 million Armenians who were massacred or sent to death camps. This is particularly important in the context of official recognition of the Armenian genocide in the US. According to what was mentioned above it's obvious that the process for the US to fully recognize the Armenian genocide is going on. This is not just a problem of the Armenian community in the US, but also an internal political agenda issue, that requires solution already along time. The Armenian genocide has become a touchstone in the US. The US government has to give solution to this issue without taking into account Turkey's policy of denial.

ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Բանալի բառեր – Յոհաննես Լեփսիուս, Հայկական հարց, Գերմանա-հայկական ընկերություն, հայկական բարեփոխումներ, Գերմանիա, Թուրքիա, Արևելյան հարց, «Մեսրոպ» պարբերական

XIX դարի 90-ական թթ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները առաջացրին աշխարհի առաջադեմ մտավորականների ցատումն ու զայրույթը, որոնցից շատերը դատապարտեցին խաղաղ հայ բնակչության նկատմամբ թուրքական բարբարոսական քաղաքականությունը, հանդես եկան հայ այրիների ու որբերի պաշտպանությամբ:

Համիդյան քաղաքականությանն աջակցող Գերմանիայում, որտեղ հայերը համարվում էին Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող անվտանգության տարր, գտնվեցին ազնիվ մարդիկ, ազդեցիկ մտավորականներ, որոնք, հաղթահարելով պետական-քաղաքական շահերով պայմանավորված արգելքները, մարդասիրական մեծ օգնություն ցույց տվեցին տառապյալ հայ ժողովրդին: Ի տարբերություն, օրինակ, Անգլիայի ու Ֆրանսիայի, որտեղ բազմաթիվ հեղինակավոր անհատներ հանդես էին գալիս հայերի պաշտպանությամբ, Գերմանիայում նման գործիչների թիվը մեծ չէր: Նրանց շարքում էին Յոհաննես Լեփսիուսը, Պաուլ Ռոհրբախը, Էվալդ Շթիրը, Մարտին Ռադեն և այլք, որոնք դարձան հայ ժողովրդի ջերմ պաշտպանը: Հայերի հետ շփման և հայ ազգային ֆենոմենը ճանաչելու ընթացքում գերմանացի այդ մտավորականները, ի դեմս հայ ժողովրդի, իրենց համար հայտնաբերեցին «ամենաընդունակ եւ յառաջադեմ ցեղը ամբողջ առաջաւոր Ասիոյ մեջ»¹, որն ի վիճակի էր ստանձնել Արևելքի զարգացման գործը: Ուստի այս գործիչները գտնում էին, որ Գերմանիան պետք է սերտ հարաբերություններ հաստատի հայ ժողովրդի հետ՝ դարձնելով նրան իր գործընկերն Արևելքում: «Հայերը որպես քաղաքական և մշակութային ազդակ Արևելքում» հոդվածում Պ. Ռոհրբախը գրում էր. «Գերմանիան, որպես Արևելքի մեջ առաջնակարգ կերպով շահագրգռված մի պետություն, պետք է ձգտի գրաւել հայերին: Որովհետեւ երկաթուղիներով ու զինուորական միսիաներով չէ, որ Գերմանիան պիտի յաջողի իր քաղաքական նպատակների մեջ: Մենք պարտաւոր ենք նույնքան մեծ կարեւորութիւն տալ նաեւ կուլտուր-բարոյական յարաբե-

¹ Տե՛ս „Mesrop“, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 14:

րութիւնների մշակմանը Թիւրքիոյ մէջ բնակուող բոլոր ազգութիւնների հետ. եւ ոչ մէկ ազգ այս ասպարեզի վրայ մեզ կարող է այնքան օգտակար լինել, որքան Հայը»¹:

Հայտնի է, որ Գերմանիան նպատակ ուներ դառնալ աշխարհակալ տերություն և մեծ ծրագրեր ուներ՝ կապված Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի հետ: Գերմանիայի՝ Արևելքում իրագործվող ծավալապաշտական քաղաքականության արտահայտություններից էր Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման նախագիծը: Այս ճանապարհին նրա առաջնային նպատակն իր ազդեցության ուժեղացումն էր Ասիական Թուրքիայում, հատկապես՝ Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում: Հենց այդ ենթատեքստում էր, որ նա սկսեց ակտիվ մասնակցություն ունենալ Արևելյան հարցի և նրա անբաժան մասը կազմող Հայկական հարցի խնդրում, որտեղ բխվում էին մեծ տերությունների շահերը: Այս հանգամանքը ցայտուն արտահայտվում էր նաև Գերմանիայի և ցարական Ռուսաստանի փոխհարաբերություններում: Պաշտոնական Գերմանիան, հաշվի առնելով հայերի ռուսամետ դիրքորոշումը, սկզբնապես դեմ էր Հայկական հարցի քննարկումներին՝ գտնելով, որ այն քաղաքական և ռազմավարական տեսանկյուններից կլիանգարի Գերմանիային իրականացնել իր իմպերիալիստական նկրտումները: Նույնիսկ ծրագրվում էր Վանի, Բիթլիսի և Էրզրումի շուրջ կես միլիոն հայ բնակչությանը քշել Հալեպ ու Միջագետք և հայերի լքյալ տարածքները բնակեցնել արաբներով², որով պողպատե պատնեշ կստեղծվեր Ռուսաստանի դեմ: Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Յիմերմանն ասում էր. «Հայերով բնակեցված Հայաստանը վտանգավոր է Գերմանիայի շահերի համար, քանի որ հայերը Թուրքիայի թուլության աղբյուրն են»³: Իսկ 1913 թ. աշնանը Բեռլինում ստեղծվեց գերմանական կառավարությանն առընթեր «Գերմանա-թուրքական կոմիտե», որի նպատակը երիտթուրքական իշխանություններին աջակցելն էր և Թուրքիայում Գերմանիայի ազդեցության ուժեղացումը:

Ինչպես տեսնում ենք, գերմանական պաշտոնական դիվանագիտությունն աստիճանաբար մի կողմ էր քաշվում Հայկական հարցից և աշխատում չմիջամտել թուրքերի՝ հայկական բարենորոգումների տապալմանն ուղղված գործողություններին: Այս պայմաններում հայ ժողովրդի գերմանացի բարեկամները միջոցներ էին փնտրում՝ հայկական բարեփոխումները կյանքի կոչելու և ընդհանրապես հայ-գերմանական կապերն ամրապնդելու ուղղությամբ: Դա առավելապես նկատելի դարձավ XX դարի երկրորդ

¹ Նույն տեղում, էջ 15:

² St u **Hofmann T.**, Armenisches Golgatha, ohne Brot, ohne Wasser, ohne Grab, Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 144, Jg. 2009/Heft 2, էջ 65:

³ **Аветян А. С.**, Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, М., 1966, էջ 36:

տասնամյակի սկզբին Բալկանյան երկրների դեմ պատերազմում Թուրքիայի կրած պարտություններից հետո, երբ վերստին մեծ տերությունների քաղաքականության օրակարգում հայտնվեց Հայկական հարցը, որի լուծումը բախտորոշ նշանակություն ուներ Օսմանյան պետության համար: Ստեղծված պայմաններում Գերմանիայի հայասիրական ուժերը փորձեցին իրենց ներդրումն ունենալ հայկական բարեփոխումների իրագործմանը խանգարող խոչընդոտների չեզոքացման գործում: Ուստի, երբ 1913 թ. սկզբին հիմնվեց Բեռլինի հայկական կոմիտեն¹, հայ ժողովրդի գերմանացի բարեկամները, մասնավորապես Յոհ. Լեփսիուսը, պատրաստակամությամբ համաձայնեցին նպաստել դրա գործունեությանը: Այդ գործիչները համոզված էին, որ Գերմանիան պետք է վերստին մեծ տերությունների քաղաքական օրակարգ մտած Հայկական բարենորոգումների քննարկման հարցում ակտիվ դիրքորոշում ցուցաբերի: Եթե նա շահագրգռված էր իր ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքում, ուստի պետք է նաև սերտ հարաբերություններ հաստատեր Թուրքիայի հայության հետ²: Ըստ այդմ հարկավոր էր գերմանական կառավարությանը հասկանալի դարձնել, որ հայերն ինչպես իրենց թվաքանակով, այնպես էլ մշակութային ու տնտեսական զարգացման մակարդակով շատ կարևոր տարր են Օսմանյան պետության մեջ, և որ, եթե համապատասխան բարեփոխումների միջոցով նրանց համար ստեղծվեն ապահով պայմաններ, նրանց և թուրքերի միջև ոչ միայն խաղաղ համագոյակցություն կհաստատվի, այլև նրանք նույնիսկ կարող են վճռական դեր կատարել նաև Թուրքիայի վերակենդանացման թե՛ այնտեղ, թե՛ ամբողջ Մերձավոր Արևելքում գերմանական տնտեսաքաղաքական ծրագրերն իրականացնելու հարցում³:

«Թուրքիայի ապագան» հողվածում Յոհ. Լեփսիուսը քրիստոնյաներին համարում էր Թուրքիայի արդիականացման հիմքը: Նա նշում էր, որ քրիստոնյաները, մասնավորապես հայերը, ակտիվ են տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում, արհեստագործությունը և առևտուրը գտնվում են նրանց ձեռքում, տիրապետում են օտար լեզուների: Հայերի ներգրավումը երկրի զարգացման հարցում բխում է Թուրքիայի շահերից: Հետևաբար, ըստ Լեփսիուսի, ինչպես Թուրքիան, այնպես էլ նրա դաշնակից Գերմանիան պետք է շահագրգռված լինեին հայկական բարեփոխումների

¹ Հայկական բարեփոխումների հարցում զգալի շահագրգռվածություն էր դրսևորում Ռուսաստանը: Ուստի ինչպես 1878 թ., այս անգամ էլ Ռուսաստանը ստանձնեց նախաձեռնությունը Արևմտյան Հայաստանում բարեփոխումների միջոցով կարգ ու կանոն և օրինականություն ստեղծելու խնդրում: Այդ նպատակով Եվրոպայի տարբեր մայրաքաղաքներում հիմնվեցին հայկական կոմիտեներ, որոնք հայոց կաթողիկոսի պատվիրակ Պողոս Նուբար փաշայի և եվրոպացի բարեկամների օգնությամբ պետք է աշխատեին համոզել մեծ տերություններին հայկական բարեփոխումների իրականացման անհետաձգելի անհրաժեշտությունը:

² Տե՛ս **Միմոնյան Հ.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 5, Երևան, 2013, էջ 1055:

³ Տե՛ս „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 3:

իրականացմամբ¹: Գերմանիայի կողմից հայանպաստ դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտությունը Լեփսիուսը պատճառաբանում էր նաև այն հանգամանքով, որ բարեփոխումների մերժման դեպքում Օսմանյան պետությունը հարկադրված կլիներ Հայաստանը զիջել Ռուսաստանին և այդպիսով դատապարտվել ամբողջական մասնատման², որի դեպքում Գերմանիան ևս ոչինչ չէր շահի³:

Ավելացնենք նաև, որ Լեփսիուսը մերժում էր Թուրքիայի «իսլամական մշակութային պետություն» դառնալու հնարավորությունը: Նրա կարծիքով՝ Թուրքիան կարող էր մշակութային երկիր դառնալ քրիստոնեական մշակութի զարգացման միջոցով, և այդ հարցում նույնպես կարևորագույն դերը վիճակված էր հայերին⁴:

Այսպիսով, Լեփսիուսի համոզմամբ, Օսմանյան պետության ինչպես «քաղաքական գոյության», այնպես էլ «մշակութային պետություն» դառնալու ճանապարհին վճռական դերը պատկանում էր հայերին:

Վերոնշյալ տեսակետները չէին կարող Գերմանիայի պաշտոնական շրջանների վրա ազդեցություն չգործել, մանավանդ որ Բալկանյան պատերազմի ընթացքը չարդարացրեց այն հույսերը, որ գերմանական քաղաքականությունը կապում էր պաշտոնական Թուրքիայի հետ՝ միակողմանի նպաստելով նրա քաղաքականությանը: Գերմանական կառավարությունն այժմ լավ գիտակցում էր, որ առանց բարեփոխումների և առանց թուրքական կառավարությանը պետության տարբեր ազդությունների, մանավանդ հայերի հետ հաշտեցնելու՝ Օսմանյան պետության ամբողջականության պահպանումը անհնար կլիներ: Արդեն 1913 թ. հունվարին Գերմանիայի ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ցիմերմանը Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին հրահանգում էր, որ գերմանական կառավարությունը հայկական բարեփոխումների վերաբերյալ կայանալիք բանակցությունների ընթացքում չպետք է չեզոք դիրքորոշում գրավեր, այլ ելնելով Թուրքիայում իր տնտեսական շահերից՝ պետք է ակտիվորեն մասնակցեր դրանց⁵:

Այս շրջանում փոխվել էր նաև գերմանական հասարակության մեջ հայ ժողովրդի մասին նախկինում գոյություն ունեցող վերին աստիճանի անպաստ կարծիքը, և ի հայտ էին եկել հայերի տնտեսական ու մշակութային ունակություններն ավելի ճիշտ կերպով գնահատելու նշաններ: Այս գործում մեծ դերակատարություն ունեին հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային շփումները. 1894-1896 թթ. կոտորածներից հետո Հայաստանում

¹ Տե՛ս **Aschke M.**, Von den armenischen Reformen 1913 zum Völkermord an den Armeniern 1915 // Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 164, Jg. 2014/Heft 3, էջ 48:

² Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 203:

³ Տե՛ս **Aschke M.**, նշվ. աշխ., էջ 48:

⁴ Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 203:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 201:

հիմնվել էին մեծ թվով գերմանական դպրոցներ, որբանոցներ և հիվանդանոցներ, որոնք այնտեղ տարածում էին գերմանական մշակույթը: Հայաստանում մեծ թափով առաջ էր ընթանում գերմաներենի, գերմանական գիտության ու գրականության ուսումնասիրությունը: Բազմաթիվ հայ երիտասարդներ սովորել էին գերմանական բարձրագույն ուսումնական հաստատություններում և կապեր հաստատել գիտության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչների հետ: Հայոց լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրությունը շատ դեպքերում կատարվում էր գերմանացի գիտնականների ակտիվ աջակցությամբ¹:

Հայ և գերմանացի ժողովուրդների փոխադարձ կապերն ավելի խորացնելու և ամուր ու տևական հիմքերի վրա դնելու նպատակով Յոհ. Լեփսիուսն ու նրա բարեկամները որոշեցին հիմնել Գերմանա-հայկական ընկերություն, որը պետք է նպաստեր հայ-գերմանական մերձեցմանը՝ մշակութային հողի վրա և Թուրքիայի արդիականացմանը ներսից՝ հայերի (հայկական մշակույթի զարգացման) միջոցով ու դրսից՝ գերմանական ազդեցության ուժեղացմամբ: Վերջինս դրսևորվելու էր Թուրքիայում դպրոցներ, գիտական հաստատություններ բացելով, որոնք պետք է նպաստեին այդ երկրում գերմանական մշակույթի և լեզվի ազդեցության ուժեղացմանը: Այն պատկերացումը, որ գերմանական ազդեցության ավելացումը բարեփոխված և արդիականացված Թուրքիայում, Բաղդադի երկաթուղու կառուցումը և Անատոլիայի այլ երկաթուղային գծերի շահագործման միջոցով տնտեսական մեծ հնարավորությունների առաջ գալը, գերմանական տնտեսության հսկայական կապիտալ ներդրումներն այս տարածքում կլինեին գրավիչ և հեռանկարային ինչպես թուրքական պետության, այնպես էլ նրա քրիստոնյա ազգությունների անվտանգության ու զարգացման համար, մղում էր Լեփսիուսին և նրա բարեկամներին գործնական քայլեր ձեռնարկել Գերմանա-հայկական ընկերություն ստեղծելու ուղղությամբ²:

1913 թ. մարտի սկզբին Բեռլինում տեղի ունեցավ Լեփսիուսի, Ռոհրբախի և Շթիրի հանդիպումը: Նրանք պայմանավորվեցին հնարավորինս արագ իրականացնել Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը: Այդ նպատակով 1913 թ. մարտի 29-ից այս գործիչները սկսեցին հանդիպումներ ունենալ Գերմանիայում ապրող հայ արդյունաբերողների, առևտրականների, ուսանողների, մտավորականների հետ: Վերջինների թվում էին բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Լիպարիտ Նազարյանը, որոնք քաղաքական պատճառներով հեռացել էին իրենց հայրենիքից: Բանակցություններ էր վարում նաև Բեռլինի հայկական համայնքի ղեկավար Ջեյմս Գրինֆիլդը: Վերջինիս միջոցով հաջող-

¹ Տե՛ս **Meißner A.**, Die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft: in 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft (Hg. Raffi Kantian), Frankfurt am Mein, 2014, էջ 105:

² Տե՛ս **Aschke M.**, նշվ. աշխ., էջ 48:

վեց կապ հաստատել նաև Հայաստանում բնակվող հայ մտավորականների հետ: Էջմիածնից Կարապետ Տեր-Մկրտչյանը* ողջունում էր կազմակերպության ստեղծման գաղափարը: Նա կարողացավ նաև այլ համակիրներ գտնել Հայաստանում, և բացի դրանից նրա օգնությամբ կապ հաստատվեց նաև Ստամբուլի պատրիարքարանի հետ¹:

Մեկ ամբողջ տարի պահանջվեց ընկերության հիմնադրման ծրագիրը կյանքի կոչելու համար: Այս ընթացքում Բեռլինում բազմակողմանի աշխատանքներ էին տարվում. հայթայթվում էին ֆինանսական միջոցներ, առաջ էր տարվում սեփական մամուլի օրգան ունենալու խնդիրը: Կազմվեց նաև ստեղծվելիք կազմակերպության հիմնադրումն ազդարարող ընդարձակ կոչի նախագիծը, որը պաշտոնապես պետք է ընդունվեր կազմակերպության հիմնադիր նիստում: Չնայած փաստաթուղթը դեռ «նախագիծ» էր, բայց այն մինչև հաստատումը հրապարակվեց մամուլում՝ տարածվելով նաև հայկական պարբերականներում:

Կոչում հույս էր հայտնվում, որ դարձյալ մեծ տերությունների քաղաքական օրակարգում հայտնված Հայկական հարցը կլուծվեր, կվերացվեին հիմնական խոչընդոտները, և հայ ժողովրդին կտրվեր տնտեսական և մշակութային զարգացման ավելի լայն հնարավորություն: Նշվում էր նաև, որ այս հարցում առավել մեծ շահագրգռվածություն ցուցաբերող պետությունը Գերմանիան էր, որի տնտեսական մեծ ձեռնարկումները Փոքր Ասիայում տեղի էին ունենում նաև հայաբնակ շրջաններում: Այս հանգամանքը նրան հարկադրում էր ավելի սերտ հարաբերություններ պահպանել հայ ժողովրդի հետ, «որոնք բոլոր այդ տարածքներում տնտեսական և մշակութային կյանքի վարիչներ էին»:

Կոչում նշվում էր նաև հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային շփումների մասին, և անհրաժեշտ էր համարվում ավելի խորացնել դրանք: Ուստի կոչի վերջում կարդում ենք. «Բոլոր նրանց, ովքեր գիտական, քաղաքական կամ ընդհանրապես մշակութային, մարդասիրական և կրոնական հետաքրքրություններից ելնելով, մտածում են գերմանա-հայկական կապերի ամրապնդման մասին, կոչ ենք անում մեզ հետ միավորվել «Գերմանա-հայկական ընկերության» մեջ»²:

* Կարապետ Տեր-Մկրտչյանը ծնվել է Նախիջևանում 1866 թ., 1880-1888 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1889 թ. օծվել սարկավագ, իսկ 1894 թ.՝ քահանա: 1895 թ. փետրվարին ստացել է վարդապետի կոչում: Գերմանիայում ուսումնառելուց հետո վերադարձել է հայրենիք: 1899 թ. նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, խմբագրել է «Արարատ» ամսագիրը: 1907 թ. տեղափոխվել է Բաքու և աշխատել որպես գիմնազիայի ուսուցիչ: 1907 թ. նա նշանակվել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ:

¹ Meißner A., Martin Rades „Christliche Welt“ und Armenien, Band 22, Berlin, 2010, էջ 200:

² Meißner A., Die Gründung der Deutsch-Armenischen Gesellschaft, էջ 105:

Այս կազմակերպությունը հետապնդելու էր հետևյալ նպատակները. ա) Գերմանիայում ստեղծել արդար և անկողմնակալ կարծիք հայ ժողովրդի և հայերի շրջանում գերմանական ժողովրդի վերաբերյալ, բ) համակողմանի պատկերացում տալ համաշխարհային մշակույթում հայ ժողովրդի մատուցած ծառայությունների և հայ մշակույթի զարգացման հարցում գերմանական ժողովրդի ցուցաբերած ձգտումների վերաբերյալ, գ) օժանդակել գերմանացիների և հայերի, մասնավորապես Գերմանիայում սովորող հայ ուսանողների անձնական կապերի զարգացմանը¹:

Այդ նպատակների իրականացման ճանապարհին կարևորագույն խնդիրներից էր համարվում ընկերության պաշտոնական պարբերականի հրատարակումը երկու լեզուներով՝ հայերեն և գերմաներեն: Պարբերականը, ընկերության անդամների միջև կապ ստեղծելուց և պահպանելուց զատ, պետք է ծառայեր մի կողմից գերմանալեզու բաժնում՝ գերմանական հասարակությանը հայ ժողովրդի կյանքին, նրա «ապրումներին ու ցավերին» ճշգրտորեն ծանոթացնելու գործին, մյուս կողմից՝ հայալեզու բաժնում հայ ժողովրդին տեղեկություններ հաղորդել արևմտյան մշակույթի առաջադիմության, գիտության ու կրթության արդյունքների մասին, որոնցում Գերմանիան նշանակալից բաժին ուներ²: Որոշվեց պարբերականի գերմաներեն մասի խմբագիր նշանակել Էվալդ Շթիրին, իսկ հայերեն մասի խմբագիր դարձավ Գրինֆիլդը: Գերմանա-հայկական ընկերության անդամներին «Mesrop» («Մեսրոպ») խորագիրը կրող պարբերականը հատկացվելու էր անվճար: Առաջին փորձնական պրակի հրատարակման ժամկետ նշանակվեց 1914 թ. հուլիսի 1-ը³: Պարբերականի գերմաներեն բաժնի նյութերը լույս էին տեսնելու Բեռլինում, իսկ հայերեն բաժնինը՝ Կ. Պոլսում կամ Վիեննայում⁴: Յ. Մարկվարտի միջոցով, ով մասնակցել է ընկերության հիմնադրման նախապատրաստական աշխատանքներին, Շթիրը համագործակցության մեջ մտավ Վիեննայի Մխիթարյանների հայտնի տպարանի տնօրեն, Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ալիկյանի հետ: Համաձայնություն ձեռք բերվեց «Mesrop»-ի հայերեն բաժինը տպագրել Վիեննայի հայկական տպարանում⁵:

Կազմակերպության նպատակների իրականացման համար նախատեսվում էր կատարել մի շարք այլ աշխատանքներ, ինչպես, օրինակ, Հայաստանի իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հաղորդում գերմանական մամուլին, արժեքավոր հայկական գործերի թարգմանություն գերմաներեն և հակառակը՝ հայոց լեզվի, հայ մշակույթի և պատմու-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

² Տե՛ս „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 5:

³ Տե՛ս **Meißner A.**, Martin Rades „Christliche Welt” und Armenien, էջ 202:

⁴ Տե՛ս **Միմոնյան Հր.**, նշվ. աշխ., էջ 1062:

⁵ Տե՛ս **Meißner A.**, նշվ. աշխ., էջ 202:

թյան ուսումնասիրության համար Գերմանիայում հայագիտական գրադարանի հիմնադրում, հայկական դպրոցներում գերմաներենի դասավանդման խրախուսում, Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար տեղեկատվական կենտրոնի հիմնադրում և գերմանական ընտանիքների հետ նրանց շփումների ընդլայնում¹:

Մինչ Բեռլինում նախապատրաստական աշխատանքներ էին տարվում ընկերության հիմնադրման ուղղությամբ, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում ստորագրվեց Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիր: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու նահանգի: Առաջինի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ երկրորդի մեջ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի վիլայեթները: Նահանգապետների (վերատեսուչների) թեկնածություններն առաջադրելու էին եվրոպացիները, և հաստատելու էր սուլթանը: Նահանգապետների ենթակայության ներքո էին գտնվելու վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները: Հողային հարցերը պետք է վճռվեին նահանգապետի անմիջական միջամտությամբ: Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):

Նահանգապետներն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին ներքին կարգ ու կանոնին: Հայերին արտոնվում էր զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Ազգային դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում Օսմանյան պետությունը²:

1914 թ. ապրիլի 23-ին Ավ. Իսահակյանը Ամերիկայում գտնվող Միմոն Վրացյանին Բեռլինից գրում էր. «Ես երկու ամսից ավելի է, որ Բեռլինում եմ, հայկական և գերմանական կոմիտեի գործն եմ վարում՝ քարտուղարն եմ: Եվ հրատարակելու ենք ամսաթերթ՝ հայերեն և գերմաներեն բաժիններով: Շուտով կստանա (կոմիտեի) կոչը և ծրագիրը, որ թե թերթումդ հրատարակես և թե մեզ աշխատակցես: Շատ անվանի մարդիկ ունենք մեզ հետ, շատ հայտնի անձեր՝ ամբողջ Գերմանիայում հռչակված և ազդեցիկ: Վստահ կարելի է ասել, որ եթե հայ-գերման ընկերությունը չլիներ, այս ռեֆորմները ջուրն էին ընկել՝: Դա խոստովանում են թե բժ. Զավրիևը և թե (ՀՅԴ) Պոլսի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 203-204:

² Տե՛ս «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»: Դասագիրք բուհերի համար (Մ. Ա. Կատվալյան, Պ. Հ. Հովհաննիսյան, Է. Գ. Մինասյան և ուրիշներ): Պրոֆ. Հր. Ռ. Միմոնյանի խմբագրությամբ, Երևան, 2012, էջ 447-448:

* 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը ստորագրվել է Գերմանահայկական ընկերության հիմնադրումից չորս ամիս առաջ: Հավանաբար նամակագիրը

բյուրոն: Մեր բարեկամ գերմանացիք համոզում էին գերման դիպլոմատներին և նրանց վրա ճնշում գործադրում, որ համաձայնվեն ռուսներին»¹:

Բարեփոխումների համաձայնագրի ստորագրումը արագացրեց Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը:

1914 թ. հունիսի 16-ին Բեռլինի ազգագրության թանգարանի դահլիճում բազմաթիվ հյուրերի ներկայությամբ պաշտոնապես բացվեց ընկերության անդրանիկ նիստը: Ժողովի բացումը կատարեց և այն ղեկավարեց Յոհ. Լեփսիուսը: Զեկուցումներով հանդես եկան Գրինֆիլդը, Ռոհրբախը: Նիստը պաշտոնապես ընդունեց ամիսներ առաջ հրապարակված կոչի նախագծի տեքստը, որով ազդարարվեց ընկերության ստեղծման մասին: Փաստաթուղթը ստորագրեցին հասարակական կյանքի տարբեր ոլորտներից շուրջ հարյուր անհատներ: Նրանց թվում էին Ժամանակի այնպիսի ականավոր գործիչներ, ինչպիսիք էին Ավ. Իսահակյանը, Ներսես Ալկինյանը, Լեւոն-Հատուպտը, Ռայխսթագի անդամ Ֆրիդրիխ Նաումանը և ուրիշներ: Ընկերության նախագահ ընտրվեց Յոհ. Լեփսիուսը, նրա փոխանորդներ՝ Գրինֆիլդը և Ռոհրբախը, գործավարներ՝ Շթիրը և Իսահակյանը, գանձապահ՝ Արմենակ Հայրանյանը: Կազմակերպությունը կոչվեց «Գերմանա-հայկական ընկերություն» („Deutsch-Armenische Gesellschaft”)²:

Ընկերության հիմնադիր անդամներն էին Յոհ. Լեփսիուսը, Յ. Մարկվարտը, Մ. Ռադեն, Պ. Ռոհրբախը, քահանա Է. Շթիրը, Գրինֆիլդը, Դարբինյանը, Հայրանյանը, Մուրադյանը, Շահբազյանը³:

1914 թ. հուլիսի 1-ին գերմաներեն և հայերեն բաժիններով հրատարակվեց „Mesrop” պարբերականի առաջին և ցավոք միակ համարը^{*}: Հանդեսի հիմնադրմանը մասնակից հայ գործիչների անունից տպագրվել է հետևյալ համառոտ հաղորդումը. «Մեր օրգանը կոչեցինք «Մեսրոպ» անունով գերմանացի բարեկամների առաջարկությամբ, որովհետև այդ անունը ծանոթ է իրենց աւելի, քան մեկ ուրիշ հայկական անուն ու յետոյ՝ յոբեյանի առիթով (նկատի ունենին գրերի գյուտի 1500-ամյակը-Հ.Ս.) ուզեցինք հարգած լինել յիշատակը այն անձի, որ բացեց մեր ժողովրդի առջև լույսի ճանապարհը»⁴:

Պարբերականը պայմանականորեն բաղկացած էր երկու մասից՝ յուրաքանչյուրը 32 էջ: Դրանում զետեղված էին Պ. Ռոհրբախի („Die Armenier als

նկատի է ունեցել գերմանացի հայասերների նախորդ ամիսներին Հայկական հարցի օգտին ծավալած գործունեությունը:

¹ Տե՛ս **Միմոնյան Հր.**, նշվ. աշխ., էջ 1059:

² Տե՛ս **Meißner A.**, Martin Rades „Christliche Welt” und Armenien, էջ 204:

³ Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 208:

^{*} Պատրաստ էր նաև „Mesrop” հանդեսի երկրորդ համարը, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Որոշ հետազոտողներ կարծում են, որ այդ նյութերը Ժամանակին պահ են տրվել Վիեննայի Միախորայան միաբանությանը: Դրանք գտնելու բոլոր փնտրտուքները ապարդյուն են անցել:

⁴ „Mesrop”, թիվ 1, հուլիս, 1914, մաս երկրորդ, էջ 7:

politischer und kultureller Faktor im Orient” կամ «Հայերը որպես քաղաքական և մշակութային ազդակ Արևելքում»), Յոհ. Լեփսիուսի („Die armenischen Reformen” կամ «Հայկական բարեփոխումները») և Ջեյմս Գրինֆիլդի («Մեր գործի շուրջը») հոդվածները, գրական, հրապարակախոսական այլ նյութեր:

Ընկերության նպատակների մասին բացատրությունները տեղ են գտել Գրինֆիլդի հոդվածում: Նա կարծում էր, որ կլինեն մարդիկ, որոնք իրենց ձեռնարկը կդիտեն որպես Գերմանիայի պետական կառույցների կողմից կյանքի կոչված կազմակերպություն, որը ծառայելու է որպես գործիք՝ միակողմանի պաշտպանելու գերմանական քաղաքական շահերը Հայաստանում և խանգարելու է Ռուսաստանի կողմից այնտեղ կիրառվող քաղաքականությանը: Թյուրիմացություններից և սխալ մեկնաբանություններից խուսափելու համար Գրինֆիլդը գրում էր. «Մեր ընկերությունը կուլտուրական նպատակների է հետևում: Բայց եթե այդ էլ չը լինէր, մենք կատարելապես գիտակցում ենք եւ մեր գերման բարեկամներից աւելի իրազեկները նույնպէս համաձայն են, որ մեր ազգի ապագան սերտ կապով կապված է Ռուսաստանի հետ եւ հայերը պիտի բարեկամական եւ անկեղծ յարաբերութեանց մէջ մնան այս պետութեան հետ: Բայց Ռուսաստանի բարեհաճ դիտաւորութիւնները մեր ազգի նկատմամբ աւելի եւս յաջողութիւն կունենան, եթէ նրանց կաջակցի Տաճկաստանում մեծ ազդեցութիւն վայելող գերման քաղաքականութիւնը: Ուրեմն հայութեան շահերը պահանջում են այս երկու մեծ պետութիւններին կատարել գործակցութիւնը մեր խնդրում եւ Հայ-գերման ընկերութիւնը ապագայում փոխարեն հակառակութեանց առիթ տալու՝ ընդհակառակը պիտի աշխատի մեղմացնել մեր շահերին վնասակար երկպառակութիւնները եւ վերացնել անհիմն կասկածները, ինչպէս որ այդ ցարդ որոշ չափով արել է Բերլինի հայկական կոմիտեն»¹:

Այսպիսով, հայ ժողովրդի գերմանացի բարեկամները հետևողական աշխատանքի շնորհիվ կարողացան կյանքի կոչել Գերմանա-հայկական ընկերություն ստեղծելու գաղափարը: Ընկերության հիմնադրումով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային կապերը խորացնելու, միմյանց պատմությունն ու մշակույթը ավելի լավ ճանաչելու և գնահատելու համար: Երկու ժողովուրդների միջև մշակութային կապերի խորացման հնարավորությունը մեծ հեռանկարներ էր բացում հայ և գերմանացի ժողովուրդների համագործակցության, հայ-գերմանական մերձեցման համար, որին ձգտում էին Գերմանիայի հայասիրական ուժերը, և որը համապատասխանում էր Գերմանիայի՝ Արևելքում հետապնդած շահերին:

¹ Նույն տեղում, էջ 6-7:

Грануш Саакян – Основание Немецко-армянского общества

Представители немецкой интеллигенции – Й. Лепсиус и его соратники, выделяющиеся проармянской деятельностью после гамидских погромов 90-х гг. XIX века, не только поддерживали связь с армянским народом, но и попытались углубить и поставить ее на более прочную и длительную почву.

В ходе общения с армянским народом, оценив и заметив его высокие интеллектуальные способности, немецкие деятели пришли к выводу, что армяне в состоянии взять на себя дело развития всего Востока. Таким образом, они призывали официальную Германию, имеющую большие интересы на Востоке, установить тесные связи с армянским народом, сделав его тем самым своим союзником на Востоке.

Эти взгляды привлекли внимание официальной Германии лишь после поражения Турции в войне против балканских стран, так как не были оправданы те надежды, которые германская политика связывала с Турцией.

В этот период Й. Лепсиус и его соратники решили основать Немецко-армянское общество, которое должно было способствовать армяно-немецкому сближению на культурной основе. После года подготовительных работ, 16 июня 1914 года, в зале Берлинского этнографического музея было официально открыто первое заседание общества, чем и было ознаменовано его открытие. Общество было названо «Немецко-армянское общество» (*„Deutsch-Armenische Gesellschaft“*), первым председателем которого был избран Й. Лепсиус. 1 июля 1914 года на армянском и немецком языках было опубликовано официальное периодическое издание общества – первый и единственный номер «Месропа». Общество стало мостом между армянским и немецким народом, которое попыталось открыть большие перспективы для сотрудничества двух народов и армяно-немецкого сближения.

Hranush Sahakyan – *The Foundation of German-Armenian Association*

In the 90s of XIX century since the period of the Hamid massacres German intellectuals Joh. Lepsius and his friends known for their support of Armenians never broke off ties with the Armenian people, but instead, tried to deepen them and put on a firm and lasting ground.

Getting in touch with Armenians and noticing and appreciating their high mental abilities and skills, the German activists had come to the conclusion that the Armenians were able to take the development of the whole East on themselves.

Therefore, they exhorted official Germany, having great interests in the East, to establish close ties with the Armenian people by making them its partner in the East. Official Germany took notice of these views after Turkey's defeat in the war against the Balkan countries as the hopes that German policy linked with Turkey were not justified.

It was in this period that Joh. Lepsius and his friends decided to set up a German-Armenian Society to encourage a rapprochement on the cultural basis.

After a year-long preparatory works, on the 16th of June 1914, in the hall of the Berlin Ethnology Museum officially opened the company's first session, which announced the establishment of the company. The Company was named German-Armenian Association (*„Deutsch-Armenische Gesellschaft“*) and Joh. Lepsius was elected the first President of it. On the 1st of July 1914, the first and the only edition of the periodical of the Association “Mesrop” was published in the Armenian and German languages. The Association became a bridge between the Armenian and German peoples in an attempt to open up great prospects for both nations.

ԱՐԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՁԸ
ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր – Աբաս Բագրատունի, Ատրպատական, Հայոց թագավոր, գահակալություն, նոր իրադրություն, Սայֆ ալ-Դաուլա, կարգավիճակ, տիրույթ, գավառներ, հակաթոռ թագավոր

1. Նոր իրադրության ձևավորումը

Աբաս Բագրատունին գահ է բարձրացել 929 թ., երբ բացի նրանից Հայաստանում «Հայոց թագավոր» տիտղոսով հանդես էին գալիս երկու այլ գահակալներ ևս՝ Գագիկ Արծրունին¹ և Աշոտ Շապուհյան Բագրատունին²: Վերջինս տիրում էր Այրարատի մի շարք շրջանների և հանդես գալիս Բագրատունի հակաթոռ թագավորի դերում: Մյուս կողմից, դեռևս շարունակվում էին Ատրպատականի տիրակալների արշավանքները Հայաստան, որոնք Նախճավան-Դվին երթուղով հասնում էին Հայոց միջնաշխարհը՝ Բագրատունիների տոհմական տիրույթները:

934 թ. Աշոտ Շապուհյանի մահից հետո նրա տիրույթներն անցան Աբասին, որով վերջինիս հնարավորությունները բազմապատկվեցին, իսկ շուտով դադարեցին Ատրպատականի գորքերի արշավանքները: Նման իրողությունները առաջ բերին դրական լուրջ տեղաշարժեր, որոնցից լավագույնս օգտվեց Աբաս Բագրատունին:

Իբն Հաուկալը պահպանել է մի ուշագրավ տեղեկություն այն մասին, որ մինչև հիջրայի 325 թվականը (19 նոյեմբեր, 936 թ. - 7 նոյեմբեր, 937 թ.) Հայաստանին հարևան մուսուլման տիրակալները, չնայած այն բանին, որ հա-

¹ Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 281-282, «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց» (այսուհետ՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 545-546, 579:

² Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 538: Ըստ մի տեղեկության՝ 916 թ. թագադրված Աշոտ Շապուհյանը թագավորել է 18 տարի. «*զԱշոտ, որդի Շապուհոյ, եղբոր Սմբատայ, կացուցանէ* (Ատրպատականի ամիր Յուսուֆը) *ի տեղոջ Սմբատայ, որ թագաւորեաց Հայոց ամս ԺԸ (18)*»: Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501: Հմմտ. «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեօթուկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 58:

յերը հարկ էին վճարում և ըստ մուսուլմանական իրավունքի՝ համարվում հովանավորյալ (զիմմի), պարբերաբար ներխուժում էին Հայաստան, գերեվարում և վնասներ պատճառում ժողովրդին: Ըստ նրա՝ **հիջրայի 325 թ. հետո վիճակը փոխվեց**¹: Թե ինչ է տեղի ունեցել այդ թվականին, խիստ կարևոր է պարզաբանել: Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում է, որ 937 թ. ամենանշանավոր իրադարձությունը Ատրպատականի տիրակալ Լաշքարիի (937-938) ներխուժումն էր Հայաստան և պարտությունը՝ նկատի ունենալով, որ դրանից հետո տևական ժամանակ հարևան ամիրությունների գորքերը Հայաստանի կենտրոնական շրջաններ չեն ներխուժել²:

Ամենայն հավանականությամբ, նշված իրադարձությունը կապված է Ատրպատականում նոր իրավիճակի ձևավորման հետ, երբ Լաշքարիի Վասպուրականում պարտվել էր³, իսկ երկրամասին աստիճանաբար տիրում էր Դայսամ իբն Իբրահիմը (938-941), որը բարեկամական հարաբերությունների մեջ էր Գագիկ Արծրունու հետ, զբաղված սեփական խնդիրներով՝ չէր խոչընդոտում Հայաստանի անդորրը⁴: Փաստորեն, Լաշքարիի վախճանից հետո մի քանի տարի Հայաստանը խաղաղ զարգացման հնարավորություն է ստացել, ինչն արձանագրել է Իբն Հաուկալը:

2. Աբաս թագավորի կշռի աստիճանական աճը Հայաստանի շուրջ ձևավորված նոր իրադրության պայմաններում

Աբասի գահակալության՝ 938-942 թթ. շրջափուլի մի շարք կարևոր մանրամասներ լուսաբանելու համար շահեկան է Հայաստանի շուրջ 930-ական թթ. վերջին տեղի ունեցող իրադարձությունների և Հայոց թագավորության վրա դրանց ուղղակի ներգործության քննությունը:

Լաշքարիի պարտությունից հետո Ատրպատականի գորքի արշավանքները դադարեցին, բայց միևնույն ժամանակ Հյուսիսային Միջագետքում սկսեց հզորանալ Համդանյանների ամիրությունը՝ սերտ առնչությունների մեջ մտնելով Հայաստանի հարավարևմտյան շրջանների հետ: Հիջրայի 323 թ. (935 թ.) Հասան իբն Աբու ալ-Հայջա ալ-Համդանին՝ Հյուսիսային Միջագետքի ապագա տիրակալը, որը հետագայում կոչվեց Նասիր ալ-Դաուլա, խալիֆի վեզիր Իբն Մուկլայի գորքի կողմից հարձակման ենթարկվեց և

¹ Տե՛ս **Ibn Haukal**, Liber imaginis terrae, “Bibliotheca geographorum arabicorum”, pars II, “Opus geographicum”, Leiden, 1967, p. 343:

² Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ (Թ-Ժ դարեր), ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 631, ծանոթ. 1:

³ Տե՛ս **Miskawayh**, Tajārib al-umam wa ta’āqib al-himam, ց. 5, Beirut, 2003, ց. 223-224; **Ibn al-Athīr**, Al-Kāmil fī al-tārīkh, ց. 7, Beirut, 1987, ց. 140-141:

⁴ Տե՛ս **Miskawayh**, նշվ. աշխ., էջ 165-166:

ապաստանեց Անձնացյաց գավառում [բիլադ (երկիր) ալ-Ջավազան]¹: Ըստ Իբն Ջաֆիրի՝ այդ ժամանակ նրան հպատակվեցին «Հայաստանի թագավորները»²: 936 թ. (հիջրայի 324 թ.), երբ Նասիր ալ-Դաուլան խալիֆի կողմից նշանակվեց Հյուսիսային Միջագետքի կառավարիչ, ստիպված եղավ պատերազմել Արգնի իշխան Ալի իբն Ջաֆար Դայլամցու դեմ: Վերջինս դիմեց «Հայոց թագավոր Իբն Թուռնիկին»՝ օգնության խնդրանքով³: Ալի իբն Ջաֆարը պարտություն կրեց Նասիր ալ-Դաուլայի կրտսեր եղբոր՝ Դիար Բաքրի կառավարիչ Ալի իբն Աբու ալ-Հայջա ալ-Համդանիի (հետագայում՝ Սայֆ ալ-Դաուլա կոչվածի) կողմից: Վերջինս այնուհետև ներխուժեց Տարոն: Թե ինչ է կատարվել Տարոնում այդ ժամանակ, հայտնի չէ⁴:

Ըստ Իբն Ջաֆիրի՝ 939 թ. Սայֆ ալ-Դաուլան արշավում է դեպի Կարնո քաղաք: Վերջինիս մոտակայքում էր գտնվում Հավճիչ (Հաֆջիջ) քաղաքը: Տեղեկանալով Սայֆ ալ-Դաուլայի զորքի մոտեցմանը՝ բյուզանդացիները քանդում են քաղաքը և նահանջում, որից հետո Սայֆ ալ-Դաուլան վերադառնում է Արգն ու ձմեռում այնտեղ⁵:

Սայֆ ալ-Դաուլայի 939 թ. արշավանքը հիշատակում է նաև Ասողիկը. «**Եւ յՅԶԸ թուականին** (338 թ.՝ ապրիլ, 939 թ. - ապրիլ, 940 թ.) **Համտուն** (իմա՝ Համդանյան – Ա. Ե.) **ի Կողոնիա եմուտ զարաւք բազմաւք եւ անդրէն դարձաւ**»⁶: Ցավոք, նա չի հիշատակում, թե Հայաստանում ինչ է տեղի ունեցել:

Հիջրայի 328 թ. (18 հոկտեմբեր, 939 թ. - 5 հոկտեմբեր, 940 թ.) Սայֆ ալ-Դաուլան դարձյալ մտնում է Հայաստան: Այդ մասին հիշատակում են Իբն Ջաֆիրը և Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին: Ըստ Իբն Ջաֆիրի՝ Սայֆ ալ-Դաուլան Խլաթում հանդիպել է «Հայաստանի և Վրաստանի թագավորին», որին պատիվներ է մատուցել, բայց նրանից վերցրել է որոշ բերդեր: Բացի «Հայաստանի և Վրաստանի թագավորից», նրան հպատակվել են Հայաստանի մի քանի իշխաններ: Խլաթից Սայֆ ալ-Դաուլայի զորքը շարժվեց Տարոնի իշխան Իբն Թոռնիկի (Իբն Թուռնիկ) երկիրը, զրավեց Մուշը և ավերեց տեղի եկեղեցին⁷:

Ըստ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի՝ 940 թ. Սայֆ ալ-Դաուլան մտնում է Հայաստան և Դատվանում (Թայտուանա) իր մոտ կանչում Դերենիկի որդի Գագիկին (Իբն Ջաջիկ իբն ալ-Դայրանի), Խլաթ (Խիլատ), Արծկե (Դատ ալ-

¹ Տե՛ս **Miskawayh**, նշվ. աշխ., էջ 185:

² Տե՛ս **Ibn Zāfir**, Akhbār al-duwal al-munqatī‘a, Irbid, 1999, ց. 1, Տ. 56.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 63: Տե՛ս նաև «Recueil des textes relatifs à l’émir Sayf al-Daula le Hamdanide», avec annotations, éditée par M. Canard, “Bibliotheca Arabica”, VIII, Paris, 1934, p. 71:

⁴ Տե՛ս **Canard M.**, Les H’amdanides et l’Arménie // «Annales de l’Institut d’Etudes Orientales», Alger, 1948, VII, p. 84-85:

⁵ Տե՛ս **Ibn Zāfir**, նշվ. աշխ., էջ 62:

⁶ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 754:

⁷ Տե՛ս **Ibn Zāfir**, նշվ. աշխ., էջ 63:

Ջաուզ), Արճեշ (Արջիշ) և Բերկրի (Բարքարի) քաղաքների ամիր Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու ալ-Մուիզզին, Մանագկերտի (Մանագջիրդ), Դաշթ ալ-Վարքի¹ և Հարքի (ալ-Հարք) ամիր Աբդ ալ-Համիդին, ինչպես նաև Հայաստանի իշխանաց իշխան (բատրիկ ալ-բատարիկա) Գրիգորի որդի Աշոտին (Աշոտ իբն Ջարջուր): Նա Գագիկ Արծրունուց ստացել է Շահրան և ալ-Համիդ ամրոցները²՝ շրջակա ավաններով ու տարածքներով, Ահմադ իբն Աբդ ալ-Ռահմանից՝ Բաղեշ (Բաղլիս կամ Բիթլիս) քաղաքը՝ շրջակայքով, իսկ Աշոտից՝ Սասուն (ալ-Սանասունա) երկիրը՝ Կողբ (Կուլբ) և Մուլայման ամրոցներով³:

Երկու տեղեկությունների համադրությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանելու կարևոր իրողություններ: Մասնավորապես, Սայֆ ալ-Դաուլան ներխուժել է Հայաստան, կանգ առել Բզունյաց ծովի ափին՝ Խլաթում կամ Դատվանում և հարակից երկրամասերում իշխողների հպատակության խոստումն ընդունելուց հետո նրանցից ստացել բերդեր ու տարածքներ, որոնք, ընդհանուր առմամբ, գտնվում էին Հայաստանի հարավ-արևմուտքում և զբաղեցնում էին ռազմավարական կարևոր դիրք, ինչպես, օրինակ՝ Բիթլիսը և Սասունը:

Հեշտությամբ ճշգրտվում է վերոհիշյալ տեղեկություններում նշված հայ իշխողներից յուրաքանչյուրի ինքնությունը: Իբն Ջաշիկ իբն ալ-Դայրանի անվան ներքո պետք է հասկանալ ոչ թե Գագիկ Արծրունու որդի Դերենիկին⁴, այլ հենց Գագիկ Արծրունուն, քանի որ նույն այդ դեպքերին անդրադարձած Իբն Ջաֆիրը հիշում է հենց նրան՝ «Հայաստանի և Վրաստանի թագավոր» տիտղոսով⁵: Իսկ Աշոտ իբն Ջարջուրը (Գրիգորի որդի Աշոտը) և Իբն Թոռնիկը (Թոռնիկի որդին), փաստորեն, համապատասխանաբար Աղձնիքի հյուսիսային գավառների (Սանասունք, Սալնո ձոր, Երխեթք,

¹ Տեղորոշելը դժվար է, բայց ակնհայտ է, որ դրա նույնացումն այսպես կոչված Վարագա դաշտին (տե՛ս **Խալաթեանց Բ.**, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 42; **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 77) սխալ է:

² Փորձ է կատարվել ալ-Համիդը նույնացնելու Ամյուկ բերդին (տե՛ս **Markwart J.**, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 460), որն անհավանական է: Ամենայն հավանականությամբ, նշված ամրոցները գտնվում էին Գագիկ Արծրունու տերության հարավարևմտյան մասում և խլվել էին թուլացած Ջուրարիկների ամիրությունից: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 154:

³ Տե՛ս «Recueil des textes relatifs à l'émir Sayf al-Daula le Hamdanide», p. 76-78: Անունների ու անվանումների նույնացումները՝ ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 152-153:

⁴ Տե՛ս **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 114:

⁵ Մ. Կանարը կարծում է, որ այդտեղ խոսքը Աբաս թագավորի մասին է (տե՛ս **Canard M.**, նշվ. աշխ., էջ 89-90), բայց իրականում «Հայոց և Վրաց թագավոր» տիտղոսը կրում էր Գագիկ Արծրունին: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 153:

Գզեղիս և այլն) և Տարոնի իշխաններն էին¹, որոնցից առաջինը գրկվեց Սասունից, իսկ երկրորդը՝ Մուշ քաղաքից:

Տեսնում ենք, որ Հայաստանի հարավարևմտյան և արևմտյան շրջաններին առնչվող այդ հույժ կարևոր իրադարձություններին Աբաս թագավորը չի մասնակցել: Խնդիրն այն է, որ Սասունի կորուստը հյուծեց Տարոնի իշխանությունը՝ դուռ բանալով Բյուզանդիայի կողմից այն կլանելու համար, իսկ Գագիկ Արծրունու, Տարոնի իշխան Աշոտի, այլ իշխանների և արաբ ամիրների հպատակվելը Դիար Բաքրի տիրակալին հղի էր մեծ վտանգով Հայոց թագավորության ապագայի տեսանկյունից: Աբասի չեզոքության պատճառը, թերևս, այն էր, որ Սայֆ ալ-Դաուլայի արշավանքների թատերաբեմից Բագրատունյաց տիրույթները բավականին հեռու էին գտնվում, իսկ Հայոց թագավորը դեռևս այն վիճակում չէր, որ փորձեր միջամտել այդ ժամանակների Մերձավոր Արևելքի ամենանշանավոր գորավարներից մեկի՝ Սայֆ ալ-Դաուլայի գործերին: Վերջինիս **940 թ. ներխուժումը Հայաստան ծանր հարված հասցրեց Գագիկ Արծրունու հզորությանը, որը ստիպված եղավ Դիար Բաքրի տիրակալին զիջելու ամրոցներ և դրանց շրջակա տարածքները: Ուստի՝ չնայած նշված դեպքերին Աբասի չմասնակցելու**

¹ Իբն Թոռնիկի վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ն. Ադոնցը, դժվարանալով ճշգրտել Իբն Թոռնիկի ով լինելը, սկզբում առաջարկում է նրան նույնացնել Գրիգորի որդի Բագրատի (Կոստանդին Օիրանաձնի հիշատակած Պանգրատը) հետ, սակայն, ի վերջո, բավարարվում է արձանագրելով, որ եղել է Իբն Թոռնիկ անունով իշխան: Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ե, Երևան, 2012, էջ 291: Ըստ Գ. Գրիգորյանի, որը հետևում է Յո. Մարկվարտին (տե՛ս **Markwart J.**, Südarmenien und die Tigrißquellen, S. 463), Իբն Թոռնիկը նույնանուն է Գրիգորի որդի Աշոտի հետ (տե՛ս **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Երևան, 1983, էջ 144-145), թեև այդպես էլ չի բացատրում, թե ինչպե՛ս կարող էր Գրիգորի որդին [արաբերեն՝ Իբն Ջարջուր (Գրիգոր)] դառնալ Թոռնիկի որդի՝ Իբն Թոռնիկ:

Մեր հետազոտություններից մեկում ցույց ենք տվել, որ X դ. սկզբին Տարոնի ընդարձակ իշխանությունը բաժանված էր երկու մասի՝ հարավային (ընդգրկում էր Տուրուբերանի գավառներից՝ Տարոնի հարավային մասը, Ասպակունյաց ձորն ու Խույթը, Աղձնիքի գավառներից՝ Սանասունքը, Սալնո ձորը, Երխեթքն ու Գզեղիսը, Շոփքի գավառներից՝ Բալահովիտն ու Պաղնատունը ամբողջությամբ և Հաշտյանքի հարավային մասը) և հյուսիսային (ընդգրկում էր Տուրուբերանի գավառներից Տարոնի հյուսիսային, Հարքի արևմտյան և Արշամունիքի հարավային հատվածները, Բարձր Հայքի գավառներից՝ Մուգուրի արևելյան, Եկեղյացի արևելյան ու հարավային հատվածներն ու Մանանաղին, ինչպես նաև Շոփքի գավառներից՝ Խորձյանն ու Հաշտյանքի հյուսիսային հատվածը): Առաջինում իշխում էր Կոստանդին Օիրանաձնի աշխատությունից հայտնի Գրիգոր-Կրիկորիկը (տե՛ս **Կոստանդին Օիրանաձնի**, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 4-5), իսկ երկրորդում՝ նրա եղբայր Ապոգանեսը, որի որդին Թոռնիկն էր: Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դ. սկզբին // «Բանբեր Երևանի համալսարանի» (ԲԵՀ), 2009, թիվ 1, էջ 82-85: Իրականում, հենց այս Թոռնիկի որդին է, որ հիշատակվում է Իբն Ջաֆիրի կողմից: Ինչ վերաբերում է Աշոտ իբն Գրիգորին, ապա նա Գրիգոր-Կրիկորիկի որդին էր:

հանգամանքին, դրանք, ըստ էության, հոգուտ նրա էին տեղի ունենում, քանի որ թուլացնում էին Հայոց երկրորդ թագավորի դիրքերը:

Այս շրջանում, օգտագործելով նշված բարենպաստ պայմանները, Աբասն աստիճանաբար հզորանում է և նույնիսկ սկսում միջամտել Այսրկովկասում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Այսրկովկասի քաղկեդոնականների միջավայրում նրա գլխավոր գործընկերը նրա աներ¹, Վրաց իշխան Գուրգենն էր: Աբասի օգնությամբ մինչև 941 թ. Գուրգենը լայն գործունեություն էր իրականացնում Այսրկովկասում՝ հաջողությամբ հետ մղելով Աբխազաց թագավորության գրոհները, սահմանափակելով Կղարջքի տերերի գործունեությունը և տարածելով քաղկեդոնականությունը Աղվանից թագավորությունում²: Աբխազաց թագավորը Գուրգենի դեմ պայքարելու համար սկսում է հովանավորել Արտանուջի տեր Աշոտ Կիսկաս իշխանին (մահ՝ 939 թ.), որին ամուսնացնում է իր քրոջ հետ: Հակամարտությունն ավարտվեց մոտ 935 թ. Գուրգենի հաղթանակով, որը գրավեց Արտանուջը, բայց հարկ համարեց Աշոտին զիջել Աճարայի մի մասը և Ղվել բերդը³: Հետագայում Գուրգենը ետ խլեց զիջածը, իսկ Աշոտ Կիսկասը, զրկված տիրույթներից, հեռացավ Աբխազաց թագավորություն⁴:

Դատելով այն իրողությունից, որ Գուրգենը պարտության մատնեց Արտանուջի տեր Աշոտ Կիսկաս իշխանին, զգալիորեն փոխվել էր ուժերի հարաբերակցությունն Այսրկովկասում: Հայոց թագավորի աջակցությունը վայելող Գուրգենից եկող վտանգի դեմ միավորվել էին Աբխազաց թագավորն ու Արտանուջի իշխանը, որն իր կնիքը թողեց նաև Գուրգենի մահից (941 թ.) հետո տեղի ունեցող դեպքերի վրա: Ուստի, պատահական չէ, որ շուտով Աբաս թագավորին հարկ եղավ պատերազմելու Աբխազաց թագավորության և Կղարջքի միացյալ ուժերի դեմ⁵:

Փաստերը վկայում են, որ արդեն 940-ական թթ. սկզբի դրությամբ Աբասը զգալիորեն ամրապնդել էր իր դիրքերը: Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերում պահպանված հույժ կարևոր տեղեկությունները ցույց են տալիս, որ **այդ ժամանակ Աբասը կարողացել էր առնվազն հավասար կարգավիճակ ձեռք բերել Գազիկ Արծրունու հետ**, որ, ինչպես տեսանք, արաբագիր սկզբնաղբյուրում հանդես է գալիս, որպես «Հայաստանի և Վրաստանի

¹ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Աշոտ Երկաթը «*առ ինքն կոչէ զեղբայր իւր զԱբաս, զոր իշխան իշխանաց էր կացուցեալ, և զիշխանն Վրաց Գուրգէն զնորուն աներ*»: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 544:

² Մանրամասնորեն տե՛ս **Եղիազարյան Ա.**, Բագրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը: Մաս երկրորդ. Համավրացական թագավորության ինքնուրույն պատմական հեռանկարի ուրվագծերը // «ՎԷՄ», 2013, թիվ 2, էջ 50-56:

³ Տե՛ս **Կոստանդին Օիրանածին**, էջ 19, էջ 237, ծանոթ. 7: Տե՛ս նաև **Toumanoff C.**, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century // “Le Museon“, 74, 1961, p. 26.

⁴ Տե՛ս **Կոստանդին Օիրանածին**, էջ 19:

⁵ Տե՛ս **Ասողիկ**, էջ 749:

թագավոր», իսկ Բյուզանդիայի արքունիքի կողմից ճանաչվում որպես գերակա՝ «**[Մեծ Հայքի] իշխանաց իշխան**»¹: Կաթողիկոսը գրում է, որ ինքը դիմել է «ի շրջանիս Հայոց ՅՂ (941-942 թթ.) բաղադրութեանն՝ **յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզարացն երկոցունց ինքնակայացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեզահամբոյր հզարի եւ մեծի Հայոց արքայի**»²: Մինչ այդ նրա համար առաջին տեղում Գագիկ Արծրունին էր: Հայոց Արևելից կողմերի եկեղեցական խնդիրներից մեկի առիթով Անանիա Մոկացին գրում է, որ «**կամաւք հաւանութեամբ եւ գեղեցկասաղիք խորհրդովք մեծին եւ բարեացապարտն Գագկայ Հայոց թագաւորի**, նախ գրեաք հրովարտակ պատճէն ի յաշխարհն Աղուանից»³: Այնուհետև, Գագիկի մահը ներկայացնելիս նա գրում է, որ «եբարձ զպսակն աւճոյ մերում, զփառսն եկեղեցոյ եւ զպարծանս քրիստոնէից, զարի եւ զհզար, զծովահանճար իմաստիւք զտէր **Գագիկ Հայոց թագաւոր**»⁴: Հետագայում, թեև կաթողիկոսն այնպես է ներկայացնում, թե Գագիկ Արծրունուն հաջորդած Գրիգոր Դերենիկն ամեն ինչով՝ թե՛ հանճարով և թե՛ հզորությամբ նման էր հորը, այդուհանդերձ նրա տեսադաշտում գերիշխող դիրք է զբաղեցնում Աբաս Բագրատունին, որին նա դիմում է քաղկեդոնականությունն արմատախիլ անելու խնդրանքով⁵: Մի փոքր անց Անանիա Մոկացին Գրիգոր Դերենիկին կոչում է «**Վասպուրականի թագավոր**»՝ նրա կողքին հիշատակելով «**Հայոց թագավոր**» Աբասին⁶:

Փաստորեն, արդեն 940-ական թթ. սկզբին Աբասին հաջողվել է ոչ միայն բարձրացնել սեփական հեղինակությունը, այլև կայունացնել երկրի ներքին իրավիճակը և դերակատարություն ձեռք բերել հարևան երկրների քաղաքական ճակատագրում: Դրան նպաստել է նաև այն, որ, ինչպես տեսանք, հավասարակշիռ հարաբերություններ են հաստատվել Գագիկ Արծրունու հետ, որի դարաշրջանը մոտենում էր ավարտին:

¹ Տե՛ս **Կոստանդին Միքանածին**, էջ 151:

² «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» (այսուհետ՝ **Անանիա Մոկացի**), «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 256:

³ Նույն տեղում, էջ 257:

⁴ Նույն տեղում, էջ 258:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 259:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 260:

3. Բագրատունյաց տիրույթների ամբողջականության վերականգնումը

Աբաս թագավորի օրոք Բագրատունիների թագավորության սահմանների վերաբերյալ պահպանվել է սահմանափակ նյութ, որի պայմաններում արքունի տիրույթների ընդգրկած տարածքները և Հայոց թագավորության սահմաններն ընդհանրապես հստակեցնելը խիստ դժվարանում է:

Հարկ է ի սկզբանե փաստել, որ նշված տիրույթների սահմանների ու ընդգրկման առումով Աբասի գահակալության առաջին շրջանը բաժանվում է երկու ենթափուլի՝ մինչև հակաթոռ Հայոց թագավոր Աշոտ Շապուհյանի մահը և դրանից հետո, երբ նրա տիրույթներն Արշարունիքում և Ճակատքում անցան Աբասին: Փաստորեն, 934 թ. տեղի ունեցած այդ իրադարձությամբ, ի վերջո, գրեթե լիովին վերականգնվեց Բագրատունյաց տոհմական տիրույթների ամբողջականությունը, որ խաթարվել էր Սմբատ Ա-ի սպանությունից հետո:

Աղբյուրներում պահպանված համապատասխան նյութը վերաբերում է Աբասի գահակալության առաջին շրջանի հենց երկրորդ ենթափուլին (935-942): Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «**Բագրատունիքն իշխեին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ** (իմա՝ Գեղամա կամ Գեղարքունյաց ծով – Ա. Ե.) **և մինչ ի յՈւխտիսն** (իմա՝ Ուղթիքը կամ Ուղթիսը Տայքում – Ա. Ե.) **և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանե**»¹: Այդ տեղեկության ժամանակաշրջանային ընդգրկման անորոշությունը հաղթահարվում է հայկական անանուն ժամանակագրություններից մեկում նույն այդ հիշատակության հստակ թվագրմամբ: Ըստ դրա՝ հիշատակությունը վերաբերում է Սմբատ Ա-ի մահից հետո ընկած ժամանակաշրջանին՝ մինչև Բագրատունիների նոր թագավորությունների ի հայտ գալը², այսինքն, մասնավորապես, Աբասի գահակալությանը:

Փաստորեն, այս շրջանում Աբասի տիրապետությունն ընդգրկում էր հիմնականում Մեծ Հայքի Այրարատ նահանգի տարածքը, ինչպես նաև Տայքի (արևելյան հատվածը՝ մինչև Ուղթիք-Օլթի), Գուգարքի (Արտահանից մինչև Աղստն գետի հովիտը՝ բացառությամբ որոշ հյուսիսային հատվածների), Ուտիքի (հյուսիսարևմտյան հատվածը՝ Աղստնի հովտից մինչև Գարդման) և Սյունիքի (հյուսիսային հատվածը՝ Գեղարքունիքը և Սոթքը³) որոշ գավառներ, այսինքն՝ գլխավորապես Բագրատունիների տոհմական և

¹ «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 300:

² Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 384:

³ Տե՛ս **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Երևան, 1966, էջ 60-61:

արքունի տիրույթները և հարակից երկրամասերը՝ տարածվելով մինչև Կարնո քաղաք և Ուղթիք արևմուտքում, Գարդման և Գեղարքունյաց ծով՝ արևելքում, Չորագետ (Կուր գետին միախառնվելու տեղում)՝ հյուսիսում և Վասպուրականի թագավորություն՝ հարավում¹:

Քննությունը ցույց է տալիս, որ Աբասը տիրում էր նաև Տուրուբերանի մի շարք գավառների: Հայտնի է, որ դեռևս Սմբատ Ա թագավորի օրոք Տուրուբերանում ընդարձակ տարածքների տիրող կայսիկներից հարքունիս էին գրավվել Մարդադի, Կորո ձոր (Կորի), Հարք և Աղիովիտ գավառները, Ապահունիքի մեծ մասը, ինչպես նաև Արճեշ, Արծկե և Խլաթ քաղաքները²: Խնդրո առարկա շրջանում հայկական սկզբնաղբյուրներում տեղեկությունների սղության պատճառով դժվար է հստակություն սահմանել այդ գավառների հետագա պատկանելիության հարցում: Ըստ Կոստանդին Ծիրանածինի՝ Ապահունիք, Կորո ձոր և Հարք գավառները, ինչպես նաև Խլաթ, Արճեշ և Բերկրի քաղաքները գտնվում էին Սմբատ Ա-ի «գերիշխանության և տիրապետության ներքո», բայց նրա սպանությունից հետո ինքնուրույնություն ձեռք բերեցին³: Դատելով 939-940 թթ. վերաբերող բերյալ նյութից՝ այդ գավառները և քաղաքները շարունակում էին գտնվել ինքնուրույն վճակում, թեև Կոստանդին Ծիրանածինը գրում է, թե բյուզանդական զորավար Հովհաննես Կուրկուասի կողմից այդ գավառներն ասպատակելուց ու ավերելուց հետո նրանց տերերը ստիպված եղան ենթարկվել Ռոմանոս Ա կայսրին (920-944) և հարկ վճարել նրան⁴: Ամենայն հավանականությամբ, խոսքը Հովհաննես Կուրկուասի 931 թ. արշավանքի մասին է⁵, երբ Գագիկ Արծրունու հորդորով բյուզանդական բանակը ներխուժեց Հայաստան, ավերեց Բերկրին ու Խլաթը, կոտորեց ու գերեվարեց հազարավոր արաբների⁶: Հայտնի է, որ այդ ուղղությամբ Բագրատունյաց տիրույթների մաս էր կազմում Բագրևանդը, որտեղ տեղակայված արաբական գնդերը ոչնչացրել էր Աշոտ Երկաթը (914-

¹ Բագրատունիների տիրույթների մասին մանրամասնորեն տե՛ս **Եղիազարյան Ա.**, Բագրատունիների տիրույթների ձևավորումը և արքունի տիրույթներն Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք, «Տարեգիրք» ԵՊՀ պատմության ֆակուլտետի պատմագիտական հանդես, Բ, Երևան, 2010, էջ 87-105:

² Տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971, էջ 159-161: Հմմտ. **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11: Տե՛ս նաև **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 107-111:

³ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10-11, 13:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

⁵ Տե՛ս **Դանիելյան Է.**, Մանագկերտը բյուզանդա-արաբական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես – X դար) // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1977, թիվ 1, էջ 161-172:

⁶ Տե՛ս **Ibn al-Athīr**, 7, էջ 69-70:

929)¹: Հայտնի է նաև Մարդադի գավառի ճակատագիրը, որը նույնանում է Արիստակես Լաստիվերցու հիշատակած Ադորիին: Այնտեղ, ըստ պատմիչի՝ գտնվում էր Հավճիչ ամրոցը Մուրց գետի միջին հոսանքի ավազանում²: Վերևում տեսանք, որ Սայֆ ալ-Դաուլայի 939 թ. արշավանքի ժամանակ Հավճիչը գտնվում էր բյուզանդացիների ձեռքում, որոնք այն ավերեցին ու նահանջեցին: Դա ցույց է տալիս, որ Մարդադին աստիճանաբար անցնում էր բյուզանդական տիրապետության ոլորտը: Ինչ վերաբերում է Մարդադիի, Ապահունիքի, Հարքի և Բագրևանդի միջև ընկած Տուրուբերանի հյուսիսարևելյան գավառներին՝ Դասնավորքին, Տվարածատափին, Դալառին և Վարաժնունիքին, ապա դրանք, անկասկած, մաս էին կազմում Բագրատունյաց տիրույթներին, քանի որ Կոստանդին Ծիրանածնի կողմից հստակորեն ներկայացված՝ արաբական ամիրայությունների սահմաններում ընդգրկված գավառների մեջ հիշատակված չեն: Դրանք հետագայում, ինչպես կտեսնենք, նաև Բագրատունյաց տիրույթների արևմտյան գավառների տարածքում ստեղծված Կարսի թագավորության մեջ էլին մտնում, ուստի՝ կարելի է եզրակացնել, որ շարունակում էին մաս կազմել Բագրատունյաց կենտրոնական իշխանության տիրույթների: Թեև Մարդադիի օրինակով պարզ է, որ դրանք ևս արդեն ընդգրկվում էին Բյուզանդիայի հետաքրքրությունների շրջանակում:

Բագրատունյաց տիրույթների սահմանները հյուսիսում ընդգրկում էին Տփղիսից ոչ հեռու գտնվող Շամշուլդե ամրոցը: Այն պատկանել էր Սմբատ Ա-ին (891-914), որի կողմից ամրոցի ու շրջակայքի վերակացու նշանակած Գնթունիները ապստամբել էին Աշոտ Երկաթի դեմ: Վերջինս նրանց պարտության մատնեց, և միայն Վասակ Գնթունուն հաջողվեց մի խումբ զինվորներով փրկվել ու ապաստանել Շամշուլդեում³: Վասակ Գնթունու հաջորդ քայլը եղավ Շամշուլդեն Վրաց իշխան Գուրգենին հանձնելը և նրա տիրույթներում գտնվող Կրուստ ամրոցը տեղափոխվելը⁴: Սակայն Շամշուլդե մեկնած Գուրգենին չհաջողվեց տիրանալ ամրոցին, քանի որ պահապանները հրաժարվեցին հանձնվել և հրավիրեցին Աշոտ Երկաթին: Վերջինս բանակով Շամշուլդե հասավ այն ժամանակ, երբ Գուրգենի զորքն արդեն ներխուժել էր քաղաք: Աշոտ Երկաթին հայտնեցին, որ ամրոցի պահապանները հանուն նրա են կռվում Գուրգենի դեմ, և նա պահանջեց իր առջև բացել ամրոցի դարպասները: Այնուհետև Աշոտ Երկաթի բանակը գերի վերցրեց Գուրգենի զորքը: Նրա բոլոր զինվորների թթերը և ականջներն Աշոտ Երկաթի հրամանով կտրեցին, իսկ հետո կուրացրեցին: «**Եւ այնուհետեւ ապա հիւսիսական**

¹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 508:

² «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 106:

³ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 539-540:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 552:

ազգքն այնոքիկ ընդ ձեռամբ նորա (իմա՝ Աշոտ Երկաթի – Ս. Ե.) նուաճեալ հնազանդէին ի ծառայութիւն, եւ ըստ աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր եւ գաւրանայր»¹: Այս իրադարձությունը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, 920 թ.: Դրանից հետո, ստեղծված իրավիճակը պահպանվեց նաև Աբասի օրոք:

Աբասի տիրությունները տարածվում էին մինչև Կուր գետը Ձորագետի և Աղստևի շրջանում: Նման կարծիքը հիմնավորվում է իրողությամբ, որ Աբխազաց Բեր իշխանը Հայոց թագավորություն ներխուժելու համար «Խաղայ գայ անթիւ բազմութեամբ առ ափն գետոյն, որ Կուրն կոչի՝ անապատացուցնել կամելով գաշխարհս Հայոց»²: Նրա դեմ արշավելիս Աբասի զորքը շարժվում է դեպի հյուսիս ու բանակում Կուր գետի ափին³:

Այս փուլում Բագրատունիների տիրապետության սահմանները ճշգրտելու համար ունենք այլ կարևոր կովան ևս՝ այդ սահմաններն Աբասի գահակալությունից հետո՝ հաշվի առնելով նաև դրանցում ստեղծված Բագրատունիների նոր թագավորությունների (Լոռու և Կարսի) ընդգրկած տարածքները: Վերջիններիս սահմաններում ընդգրկված էին Բագրատունիների՝ Այրարատի և Գուգարքի տիրություններից ընդարձակ երկրամասեր, որոնք նախկինում մաս էին կազմում, անկասկած, Աբասի տիրությունների և նրանից էլ փոխանցվել էին Աշոտ Գ-ին (953-977): Կարսի թագավորության մեջ էին մտնում Այրարատի Վանանդ, Աբեղյանք, Հավնունիք, Գաբեղյանք, Արշարունիք գավառները և Բասեն գավառի արևելյան հատվածը⁴: Լոռու թագավորության սահմանների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Սանահինի վանքի «Հիշատակարանը» («Քէօթուկ»), ըստ որի՝ հայոց 428 թվականին (979-980) Սմբատ Բ թագավորը (977-989) հատուկ հրովարտակով տվել է «վիճակ եւ երկիրս գայս Սանահնիս գամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին եւ զՆերքին, մինչ ի լեառն Բագում, յայսկոյս եւ յալլնկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւ մինչ ի սահմանս Տփիս[ե]աց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիզ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ»⁵: «Տաշրաց երկրի», որը նույնանում է 981 թ. հիմնադրված Լոռու թագավորությանը⁶, սահման-

¹ Նույն տեղում, էջ 553:

² Տե՛ս **Ասողիկ**, էջ 749:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 749-750:

⁴ Տե՛ս **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1971, թիվ 3, էջ 4; **Մաթևոսյան Ռ.**, Վանանդը Բագրատունյաց ոստանի մարզ (X դ. առաջին կես) // «ԼՀԳ», 1979, թիվ 4, էջ 79-84:

⁵ «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)», էջ 67-68:

⁶ Տե՛ս «Մխիթարայ Այրիւանեցոյ պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 56; «Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71: Թվականի ճշգրտումը տե՛ս **Շահնազարյան Ա.**, Տաշիր-

ներն այնքան հստակ են ներկայացված, որ բացահայտում են այդ երկրում ընդգրկված՝ Այրարատի ծայր հյուսիսարևելյան հատվածը (Նիգ գավառի հյուսիսային հատվածը՝ «հայսկոյս Բագումը» և, ամենայն հավանականությամբ, նաև Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկոցաց-Ծաղկունյաց լեռները) և Գուգարքի ողջ արևելյան հատվածը՝ Կանգարքից մինչև Շամշուլդե ամրոցը հյուսիսում և Կայան բերդը համանուն գավառակով՝ արևելքում, որը տարածվում էր Աղստև գետի հովտում¹: Ասվածին համահունչ է Վարդան վարդապետի այն հաղորդումը, որ Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենը «**Ժառանգե զՏաշիր Սևորդուվքն Ձորոյգետին. և զԿայեն և զԿաթոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զԲագունիք՝ որ է Բագկերտ ի գաւառն Տաշրայ**»²:

Հայաստանի՝ այդ շրջանի վարչաքաղաքական իրավիճակին առնչվող կարևոր տեղեկություններ է հաղորդել Կոստանդին Ծիրանածինը, որը, խոսելով այն մասին, թե կայսրությունը նամակներ էր ուղարկում Հայաստանի մի շարք իշխանների, տեղեկացնում է, որ այդ ժամանակ Գագիկ Արծրունին «**իշխանաց իշխանի պատիվն է ստացել**»³, այսինքն՝ նշված տեղեկությունը վերաբերում է 929-943 թթ. պատմաշրջանի իրողություններին, երբ Աշոտ Երկաթի մահից հետո Գագիկ Արծրունին որոշ ժամանակ Հայաստանում ճանաչվել էր որպես գերակա: Հայաստանում հիշատակված են մի շարք «իշխանություններ»՝ Մեծ Հայքի (կենտրոնական իշխանություն), Վասպուրականի, Կոգովիտի, Տարոնի, Մուքի, Անձևացյաց, Սյունիքի, Վայոց ձորի, Խաչենի և Սևորդյաց⁴: Եթե այս տեղեկության լույսով փորձենք քարտեզագրել Աբասի տիրությունների սահմանները (դրանցից բացառելով առանձին հիշատակվող գավառների տարածքները), ապա դրանք գրեթե ամբողջությամբ կհամապատասխանեն Ստեփանոս Օրբելյանի նշած սահմաններին: Իսկ որ Կոստանդին Ծիրանածին տեղեկությունը մեծ մասամբ համապատասխանում է իրականությանը, հիմնավորվում է նրանով, որ այդ շրջանում Խաչենի, Փառիսոսի, Գոռոզվա, բուն Սյունյաց և Կապանի (Բաղաց) իշխանու-

Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը // «ՊԲՀ», 2009, թիվ 2-3, էջ 224-233:

¹ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Կայան բերդի և գավառի տեղադրությունը // «ԼՀԳ», 1972, թիվ 2, էջ 53-62:

² Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», ի Վենետիկ-ի Սուրբ Ղազար, 1862, էջ 90: Անանուն ժամանակագրություններից մեկում Լոռու թագավորության սահմանների մասին ասված է. «*Գուրգէն* (Լոռու առաջին թագավորը-Ա.Ե.) *տիրէ Գոգարացոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփիսեաց*»: «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501: Ակնհայտ է, որ սույն՝ խիստ ընդհանրական նկարագրությունը համապատասխանում է Մանահնի հիշատակարանի հաղորդած տվյալներին:

³ Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 151:

⁴ Տե՛ս նույն տեղում:

թյունների մասին հիշատակում է նաև Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացի¹:

Փաստորեն, իր գահակալության խնդրո առարկա փուլում Աբասին հաջողվեց վերամիավորել Բագրատունյաց երբեմնի ընդարձակ տիրույթների մեծագույն մասը: Ավատատիրական դարաշրջանի տրամաբանությամբ դա հանգեցրեց Աբասի դերի կտրուկ աճին ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում, քանի որ նման ընդարձակ ավատական տիրույթների՝ հարուստ մարդկային ու տնտեսական ներուժով, տարածաշրջանում որևէ այլ մեկը չէր տիրապետում: Ուստի կարելի է արձանագրել շատ կարևոր մի գործընթաց: Սեփական տիրույթների ընդարձակմանը զուգընթաց աճել են Աբասի թե՛ հեղինակությունը և թե՛ հնարավորությունները, որոնք, ի վերջո, բերել են Բագրատունի գահակալի՝ Հայաստանում գերագահ դիրքի հասնելուն նրա գահակալության արդեն հաջորդ փուլում:

**Арман Егиазарян – *Подъем Абаса Багратуни в условиях
новой обстановки вокруг Армении***

Согласно арабскому автору Ибн Хаукалю до 325 года хиджры (19 ноябрь, 936 г. - 7 ноябрь, 937 г.) войска соседствующих с Арменией эмиратов периодически вторгались в пределы страны, убивали и грабили ее жителей, но после 325 года все изменилось. По всей вероятности, это связана с тем, что после 937 года в течении длительного времени враждующий с Армянским царством эмират Атропатены прекратил свои набеги в Армению.

Царь Армении Абас воспользовался этим и сумел восстановить территориальную целостность феодальных владений Багратуниев, в основе чего он стал главенствующим правителем во всей Армении.

Arman Yeghiazaryan – *Rising of Abas Bagratuni in the New Situation around Armenia*

According to Arab author Ibn Haukal till 325, year of hijra (November 19, 936 - November 7, 937) troops of emirates neighbouring Armenia were periodically invading the country, killing and robbing its population, but after 325, year of hijra everything changed. Probably this is related to the fact that after 937 feuding with the Armenian kingdom for a long time emirate of Atropatene stopped its raids to Armenia.

Armenian King Abas took advantage of that and was able to restore the territorial integrity of feudal domains of Bagratunies, as a result of which he became a dominant ruler throughout Armenia.

¹ Տե՛ս Անանիա Մոկացի, էջ 258, 261, 267, 269-273:

**ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ «ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
ԵՐԿԻ ՄԻ ԱՆՀԱՅՏ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ**

Բանալի բառեր – Երեմիա Քյոմուրճյան, Կ. Պոլիս, աղբյուրագիտություն, պատմագրություն, օրագրություն, հիշատակարան, բնագրագիտություն, ձեռագիր

Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի համակողմանի ուսումնասիրությունը կայուն հանգրվան կարող է դառնալ XVII դարի «նոր վերելքի» շրջանի հայ պատմագրության զարգացումն ու առանձնահատկությունները առմիշտ սահմանելու համար: Այս ճանապարհին լուծելիք առաջին խնդիրներից մեկը «Օրագրության» աղբյուրագիտական հենքը ճշտորոշելն է: Նման մի փորձ անելու առիթ մեզ ընձեռեց հայերեն ձեռագրերի հիշատակարանները հերթական անգամ պրպտելը, որի նպատակը սկզբում ամեննին «Օրագրութիւնը» չէր: Ինչևէ, Յեյլի համալսարանի Բայնեկե գրադարանում (The Beinecke Rare Book and Manuscript Library) պահվող մի հայերեն Հայսմավուրքի (Z107.008) հիշատակարանի առաջին իսկ տողերն ընթերցելիս մեզ համար ակնհայտ դարձավ դրա կապը Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի հետ: Հիշատակարանը գրի է առնվել 1648 թ. Կ. Պոլսի Սուրբ Սարգիս Զորավար եկեղեցում Քրիստոսաստուր գրչի ձեռքով (ստացողներ՝ Հովհաննես և Խաչատուր երեցներ): Դատելով Երեմիա Չելեպիի կենսագրության մեր ունեցած տվյալներից՝ նրա մուտքը Կ. Պոլսի բոլոր հայկական եկեղեցիներ առանձնապես խոչընդոտների չէր հանդիպում, բայց դրանց թվում նրան հատկապես հոգեհարազատ էր այս Սուրբ Սարգիս Զորավար եկեղեցին, որը նա անվանում էր «եկեղեցի մեր»¹. Երեմիայի հայրը՝ Մարտիրոս Քյոմուրճյանը, այստեղ է մատուցել քահանայական իր ծառայությունը: Հայ եկեղեցու հոգևոր աստիճանակարգում իր առաջին ու միակ քայլը Երեմիա Քյոմուրճյանը արել է դարձյալ այս եկեղեցում՝ ստանալով դպրական տվչություն²: Այսպիսով, այն ուղին, որով այս հիշատակարանը կարող էր անցնել Երեմիա Քյոմուրճյանի ձեռքը, բավական կանխատեսելի է: Քանի որ Օսմանյան կայսրության արտաքին ու ներքին քաղաքական անցքերի մասին հիշատակությունները մշտապես եղել են Երեմիա Քյոմուրճյանի երկերի առանցքային կողմերից մեկը, և «Օրագրութիւնը» ևս բացառություն չի կազ-

¹ Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանի, հրատ.՝ Մեսրոպ արքեպ. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 6, 24 (այսուհետև՝ «Օրագրութիւն»):

² Նույն տեղում, էջ 6:

մել, հիշատակարանում տեղ գտած բավական ընդարձակ վկայությունները, որ վերաբերում են 1648 թ. կայսրությունում ենիչերիների պատրաստած պալատական հեղաշրջմանը, լիովին տեղավորվում են այս երկի կառուցվածքային և թեմատիկ սահմաններում, ինչը, բնականաբար, Քյոմուրճյանի համար եղել է դրանք իր աշխատանքում օգտագործելու շարժառիթը: Արդ, 1648 թ. հիշատակարանի և «Օրագրության» սերտ առնչությունը փաստող բնագրային մի երկու համադրություն կատարենք.

1648 թ. հիշատակարան

Օրագրություն

...ի մետասան յաւուրց Յունիս ամսոյ, յաւուր կիրակէի, յետ մտանելոյ արեգականն, զի հանդերձեալ էր ժամ նսեմութեան, եղև յանկարծակի ճայթուն մեծ եւ ահագին, թընդին առեալ յերկիր շարժեցաւ, եւ դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, զի նաւք ի վերայ ծովուն, առ յիրեարս հարեալ մնացին, եւ սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային, զի հազիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին: Իսկ ողորմածն եւ մարդասէրն Աստուած, իւր անբաւ մարդասիրութեամբն, խնայեաց զգինս կաթուածոյ սուրբ յարեանն իւրոյ, եւ վերստին շնորհեաց զանցանս մեղականացս¹:

[1648] Յունիսի ամսոյ ԺԱ յաւուր Կիրակէի յետ մտանելոյ արեգականն ի մուտս՝ եղև յանկարծակի ճայթուն մեծ և ահագին, զի թնդին առեալ երկիր շարժեցաւ և դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, և նաւք ի վերայ ծովուն առ իրեարս հարեալ մնային և ի սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային. զի երեք անգամ մի ի վերայ միոյ շարժեաց և հազիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին, հայեցեալ ամենողորմ Ստեղծողն յողբ և ի ճիշ տղայոց անմեղաց և միանգամայն ամենայն սեռի²:

1648 թ. հիշատակարան

Օրագրություն

Եւ իբրեւ այս այսպէս պատրաստեցան յերկոցունց կողմանց ի պատերազմ, ճակատ առ ճակատ, յայնժամ յարեան ի վերայ միմեանց. իսպահին եւ յեկիչարին՝ գազանացեալ զօրութեամբ: Քաջքն՝ խիզախէին,

Եւ կացին յերկուց կողմանց ճակատ առ ճակատ և յարեան ի վերայ միմեանց գազանացեալ զօրութեամբ. քաջքն խիզախէին, արիացեալքն գոչէին, սուսերքն փայլփայլէին և սաղաւարտքն շողշողային և ի բազմա-

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, by A.K. Sanjian, Berkeley-Los Angeles-London, 1976, p. 160-161.

² «Օրագրություն», էջ 1:

արիացեալքն՝ գոչէին, թանձրամիտքն՝ յիմարէին, եւ վատասիրտքն՝ լքանէին: Սուսերքն՝ փայլփայլէին, եւ սաղավարդքն շողշողային, եւ ի բազմախուռ նիզակացն, որպէս հրաձգութիւնք եռային յերկնից, ի փայլմանէ պատենագէն վառելոցն, ընդ ճառագայթից՝ արեգական միացեալ սոսսոսային, որ եւ կորկորմունք վահանաւորաց, եւ ճայթճայթմունք լարիցն՝ ի լսելիս մարդկան խլացուցանէին: Եւ աստ էր տեսանել զաղէտ եւ տագնապ մեծի կորստեան նոցա. զի որպէս փայտք՝ հարեալք ի փայտահարաց ի մէջ մայրաց եղեալք ի գետնի. այսպէս եւ նոքայ հարեալք ի միմեանց բազմահար հարուածք. եւ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց: Ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ըղեղասոյգ սատակեցան, եւ ոմանց կլափն ներքին ընդ կոկորդեան ի բաց եղան, եւ ոմանց ընդ միջուն յերկուս բաժանեալ հերձաւ. եւ ոմանք գլխահատք կորեան. եւ այլք բազումք կիսամահք լեալք, ոտնոտ եւ ձեռնատ, քընթատ եւ ակընջատ, անկեալ ի գետնի տքային եւ հեծային, մինչ զի սպառուած շնչոյն՝ կսկծալի հեծեծանօք զհոգիս իւրեանց դառնագին արձակէին: Վասն որոյ լի եղեւ արեամբ եւ դիակամբք շրջապատ եւ սրահ լայնատարած ճամուն, ներկեցաւ երկիր յարենէ նոցա: Սայլք եւ սանդուխք, սիւնք եւ խարիսխք՝ ի միագոյն լեալ կարմրացան՝ որպէս ծով արեան. եւ զօրքն ըսպահոցն փախստական լեալ

խուռ նիզակացն և ի փայլմանէ պատենագէն վառելոցն՝ ընդ ճառագայթից արեգականն սոսսոսային: Եւ աստ էր տեսանել զաղէտ և զտագնապ կորստեան նոցա, զի որպէս փայտք հարեալք ի փայտահարաց, այնպէս՝ հարեալք ի միմեանց բազմահար հարուածովք՝ անկեալ ի գետնի դիաթաւալ խաղային ի մէջ ճապաղի արեանց: Եւ ոմանք ի փախուստ դառնային և ոչ ժամանէին ի տեղի թաքստեան, այլ հասեալքն գնոսա ոչնչացուցանէին. ոմանց սկաւառակն յերկուս հերձեալ ըղեղասոյգ սատակէին, ոմանք յերկուս հերձեալ և ոմանք գլխահատք, ոմանք կիսամահք լեալ ոտնատ և ձեռնատ, քընթատ և ակընջատ տքային և հեծային և կսկծանօք զհոգիս իւրեանց արձակէին, և լի լինէր արեամբ և դիակամբք շրջապատ և սրահ ճամուն և ի միջի նորա և յելսն մնարային փախուցելոց զօրաց սպահոց². և բազումք հալածեցան և գէշք նոցին ընդ նսեմանալ երեկոյին կառաքարձք տարեալ ընկեցան ի ծով, և յայնմհետէ ուղիղ ոչ կարէին հայել յերեսս միմեանց, ուր որ հանդիպէին³:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 163-164.

² Թուրք. sipahi, օսմանյան հեծյալ զինվոր. բառը ունի նաև զորք իմաստը:

³ «Օրագրութիւն», էջ 5-6:

հալածեցան: Որ եւ գէշք նոցա՝ ընդ նսեմանալ յերեկոյեան՝ կառաքարձք տարեալ ընկեցան ի ծով: Որ էր ժամանակս աշնանային, եւ շնչաբերութեան հարաւային հողմոյն, որ եւ անկեալ ի ներքոյ ահագին ծովուս, խառներ եւ խախալէր, ճոճայր ծովն մեծ եւ սաջէր, ծաւալէր եւ ծփծփայր: Եւ ի սաստիկ հարմանէ յալեացն ի բաց ոստաւ գէշք նոցա, առ ափս ծովուն, իբրեւ կուտակս ձկանց երեւեին, որպէս ուռկանաւ ըմբռնեալ յորսակցաց մարդկան¹:

Բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ «Օրագրության» մեջ վերոնշյալ հիշատակարանի տվյալները ոչ թե սոսկ օգտագործված են կամ բնագիր են մտել որոշակի մշակված սկզբունքներով, այլ բառացիորեն տեղափոխվել են 1648 թվականի շարադրանք: Բացառություն են թերևս հիշատակարանում տեղ գտած նյութը Քյոմուրճյանի կողմից համառոտելու կամ ոչ էական հավելումներ անելու դեպքերը, որոնք, սակայն, շատ բան չեն փոխում: Այնտեղ, որտեղ Երեմիան շեղվել է իր սկզբնաղբյուրից, ավելի ընդարձակել հաղորդած տեղեկույթի շրջանակները, այնուամենայնիվ մինչև վերջ չի ձերբազատվել հիշատակարանի ազդեցությունից, ինչի վկայությունն են, օրինակ, ստորև արված ընդգծումները, որ, կարծում ենք, պատահական համընկնումներ չեն.

1648 թ. հիշատակարան

...Վառեալք եւ սպառագինեալք, եկեալ ժամանեցին ի մեծանիստ եւ լայնատարած տեղին, որ կոչի Յէնկի ճամի, զոր ի վերոյ գրեցաք, **յորում կայացեալ կայ տեղին յայն՝ արձանս եռակ, որ եւ մինն ի նոցանէ եռակահիւս ձուլածութեամբ ձեւս վիշապայունի ընդ յինքեանս**¹:

Օրագրություն

Եւ եկեալ խուռն ամբոխիւ հասին ի ժամադրեալ տեղիսն՝ լայնատարած և մեծասարաս աղօթարանն իւրեանց, որ կոչի Եէնկի ճամի², ի կողմս արևելից շինեալ Սուլթան յԱհմէտէ հօրեն Իպրահիմի, որ է հանդէպ պալատի թագաւորին. **յորում սրահի կայացեալ կայ ի Յու-**

¹ Նույն տեղում, էջ 163:

² Պետք չէ շփոթել Ստամբուլի Նոր կոչված մզկիթի հետ (թուրք. Yeni Cami կամ Valide Sultan Camii), որ կառուցվել է 1597-1665 թթ. և տեղակայված է Սուլթանահմեդ հրապարակից (նույն ինքը՝ Կոստանդնուպոլսի ձիվնթացարանը (թուրք. At Meydani) դուրս՝ ծովեզերքին

նաց՝ ի տեղի ձիւնթաց ասպարիսին **այն արձանս եռակ.** մինն բարձր քարահիւս շինեալ, որ երկայնութիւն ունի իբր մարդաչափս եօթանց¹. և երկրորդն խոնարհ քան զնա քար և փերթ կանգնեալ ի վերայ չորից ոտից քարանց շինեալ ի Թեոդոսէ². **և երրորդն ի նոցանէ է պղնծի եռակահիւս ձուլածութեամբ, եռ գլխեան ի ձև վիշապաց ունի ընդ ինքեան**³: Ասեն վասն սորա՝ թէ տըլըսմ⁴ է յաղագս օձից, զի մի բազմացի ի քաղաքս և կամ թունաւորեցի⁵:

Թերևս միակ ուշադրության արժանի առանձնահատկությունը, որ կարելի է նշել այս երկու գործն իրար կապող ուղու մասին, այն է, որ, մեր

Ոսկեդջուրի վրա գցված Գալաթա կամրջի հարավային ծայրին: Ինչպես ցույց է տալիս հարակից հուշարձանների նկարագրությունը, որին անդրադարձել ենք ստորև, խոսքը Սուլթան Ահմեդ մզկիթի մասին է, որ 1609-1616 թթ. կառուցել է Իբրահիմ I-ի հայրը՝ Ահմեդ I-ը (1603-1617): Եվրոպացիները սրան տվել են նաև Կապույտ մզկիթ անունը: Հիշատակված «Ենկի ճամի» անվանաձևը, հավանաբար, պետք է բացատրել շինության նորակառույց լինելու հանգամանքով, սակայն այն հետագայում քաղաքացիություն չի ստացել, քանի որ մեր բոլոր փորձերը՝ գտնելու թուրքերեն գեթ մեկ հիշատակություն այս անվամբ, հաջողություն չունեցան:

¹ Կոստանդինի (իմա՝ բյուզանդական կայսր Կոստանդին VII (913-945) կոթողն է, սկզբնական երկարությունը եղել է 32 մ, ներկայումս՝ 21 մ:

² Թեոդորոսի կամ Եգիպտական կոթողն է՝ եգիպտական Թուրմոս III փարավոնի հաղթական արշավանքներից մեկին նվիրված այս կոթողը IV դարում բյուզանդական կայսր Թեոդորոս I Մեծի (379-395) հրամանով տեղափոխվել է Կ. Պոլիս և մինչ օրս հանգրվանում է այնտեղ:

³ Ք. ա. 479 թ. Պլատեայի մոտ հույներից պարսիկների պարտությունը խորհրդանշող հանրահայտ բրոնզաձուլյ Օձաձև պուսն է, որ Դելֆիքից Կ. Պոլիս է բերվել Կոստանդին I Մեծի (306-337) հրամանով: Հետաքրքրական է, որ կոթողը ձուլվել է պարտված պարսից զինվորների վահաններից:

⁴ Խոսքը թալիսմանի մասին է (հուն.՝ τέλεσμα):

⁵ «Օրագրութիւն», էջ 4: Այս հատվածը տեղ է գտել Երեմիա Քյոմուրճյանի մեկ ուրիշ՝ «Ստամպոլոյ պատմութիւն» երկի մեջ ևս.

«Ի ձախս երեւի մեզ դէմ՝ ճամին մեծ, որ Ահմէտ սուլթան,
Որ է վեց մինարէիւք հայի սա ընդ գաւիթն Աթ մէյտան:
Ուր կայ արձանն եգափերթ՝ զոր կանգնեաց Մեծ Թեոդոսն այն,
Հէլէն եւ լաթին գրովք՝ եւ զիտնոց դրոշմանըշան:

Ուր զպըղընձէ եռահիւսն եռագլուիւք վիշապք բաց բերան,
Տըլ ըսմ լէօն սօֆօսի՝ սակ օձից որ աստ չերևան,
Այլ ի վայրէ քարահիւս բարձրագոյն քան զայն որ ասացան,

Որք սողան ելնուն ի ծայրն՝ թագաւորք պաղշիշ նոցա տան», **Երեմիա Չէլէպի Քեօմուրճեան**, Ստամպոլոյ պատմութիւն, հրատ. եւ ծանօթ.՝ Վ. Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 10:

համոզմամբ, 1648 թ. վերաբերող այս շարադրանքը Երեմիա Քյոմուրճյանը «Օրագրութիւն» է մտցրել հետագայում՝ պայմանավորված այդ երկի թեմատիկ ընդգրկման ծավալմամբ: «Օրագրութիւնը» ներառում է 1648-1662 թթ. պատմություն (բացակայում են միայն 1651 թ. անցքերը), 1648 թ. Երեմիա Քյոմուրճյանը եղել է 11 տարեկան, չենք կարծում, որ այս տարիքում նա ծրագրել էր գրել մի այնպիսի ծավալուն երկ, ինչպիսին «Օրագրութիւնն» է: Ավելի վաղ մենք առաջ էինք քաշել այն տեսակետը, որ սկսած 1649 թ.՝ նա այս գործը շարադրել է իբրև օրագիր՝ ներկայացուցչական մի պատվիրակության՝ դեպի Երուսաղեմ կատարած ուխտագնացության հանգամանքները հրնթացս գրառելու նպատակով, սա էլ, ըստ էության, եղել է այս գործի շարադրման նրա նախնական շարժառիթը¹:

Քանի որ սկզբնաղբյուրից օգտվելու Քյոմուրճյանի ունեցած գործիքակազմը, ինչպես վերը արդեն տեսանք, բավական աղքատիկ է, և նյութի հետ հարաբերվելու հեղինակի կիրառած միակ էական հնարքը օգտագործված սկզբնաղբյուրի անունն անտեսելն է, կարելի էր այլևս չխոսել 1648 թ. այս հիշատակարանի և Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի միջև եղած աղբյուրագիտական աղերսների մասին: Սակայն մեր ուշադրությունը գրավել է մի հարց նա՝ այս երկու սկզբնաղբյուրի ժամանակագրական համակարգում տեղ գտած շեղումները: Օսմանյան կայսրության պատմական անցքերը ժամանակագրական անճշտություններով են տրված թե՛ հիշատակարանում և թե՛ Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկում²: Մի կողմից՝ այս երևույթը պայմանավորված էր, կարծում ենք, նրանով, որ հայկական սկզբնաղբյուրները մասը չէին օսմանյան պաշտոնական պատմագրության. ներկայացվող հեղինակները դեպքերին ականջալուր ու ականատես չէին, ուստի հաճախ չէին կարող օրվա և ժամի ճշգրտությամբ ներկայացնել

¹ Տակավին անծանոթ լինելով այս հիշատակարանին՝ «Օրագրության» 1648 թ. ներկայացնող շարադրանքի ոճական և այլ տարբերությունները նկատելով, այս հատվածի՝ հետագայի ընդմիջարկություն լինելու մասին տեսակետը մենք առաջ ենք քաշել ավելի վաղ, տե՛ս **Այվազյան Գ.**, Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկը (աղբյուրագիտական դիտարկումներ), Հայոց պատմության հարցեր, 15, Երևան, 2014, էջ 91-92: Այժմ դա փաստվում է նաև այս հիշատակարանի տվյալներով:

² Այս աշխատանքի շրջանակներում մենք ուշադրություն ենք դարձրել մասնավորապես օսմանյան վեզիրների կառավարման թվականների վերաբերյալ «Օրագրության» հաղորդած տվյալներին: «Օրագրության» ժամանակագրական ընդգրկումը համեմատական է օսմանյան 16 վեզիրի կառավարման շրջաններին, բացառությամբ երկու վեզիրի, որոնք իշխել են 1651 թ. միջոցին («Օրագրության» մեջ 1651 թ. շարադրանքը բացակայում է), մնացածների նշանակման կամ պաշտոնանկման հանգամանքները մեծ կամ փոքր չափով տեղ են գտել սկզբնաղբյուրի շարադրանքում: Առանց բացառության բոլոր հիշատակված վեզիրների պաշտոնավարության ժամանակագրական սահմանները Երեմիա Քյոմուրճյանի կողմից ներկայացված են մի քանի օրվա տարբերությամբ և չեն համընկնում մերօրյա պատմագիտության սահմանած ժամանակագրական տախտակների տվյալներին:

իրադարձությունները¹: Մյուս կողմից՝ հանդիպող սխալները երբեմն արդյունք են ժամանակագրության հարցում հեղինակների ցուցաբերած որոշակի անփութության ու անուշադրության²:

1648 թ. հիշատակարան

Իսկ ահագին հրաշա այս, գուշակումն եղեւ արտաբերելի իրիս այս, զի ի զրաւել քառակ տասանց եւ եւթից, յաւուրց Յուլսի ամսոյ եւ յաւուրս ուրբաթու ի մէջ գիշերի, դղըրդեցաւ քաղաքս: Եւ ըսմք մարդկան ի մի վայր գումարեցան. ուլամայք եւ սուլամայք, մեծամեծք եւ իշխանք, զօրք եւ զինաւորք, ամենեքեան խորհուրդ առին ի միասին եւ խորհեցան սակս սպանման թագաւորին: Եւ ընդ լուսանալ առաւօտուն, վերացաւ աղմուկ մեծ, եւ խռովութիւն յոյժ: Յայնժամ հրամայեցին փակել դրունք քաղաքիս, եւ եղին պահապանս ի վերայ նոցա մեծաւ զգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար յումեք անցանել ի դրանցն, եւ կամ հանել զմեռեալս եւ տանել առ ի թաղումն: Եւ ի նոյն վայրի ըստ իւրեանց կամացն՝ կարգեցին նախարար եւ դատաւոր ի

Օրագրութիւն

Իսկ ահագին հրաշա այս գուշակումն եղև արտաբերելի իրիս այս. զի ի զրաւել աւուրց ԽԷ-ից, յուլիս ամսոյ ԻԷ յաւուր² ԶԶի (ուրբաթ-Գ. Ա.) (27 յուլիս) ի մէջ գիշերի դղրդեցաւ քաղաքս և ըսմք մարդկան ի մի վայր գումարեցան՝ ուլամայք և սուլամայք³, մեծամեծք և իշխանք, զօրք և զինաւորք խորհուրդ առին ի միասին սակս սպանման թագաւորին, առեալ ֆէթվայ⁴ ի մօլնայէն, որ ասեն մուհտի⁵՝ Աբդուհիմ⁶ անուն: Եւ ընդ լուսանալ առաւօտուն բարձրացաւ աղմուկ և խռովութիւն յոյժ: Յայնժամ հրամայեցին փակել զդրունս քաղաքիս և եղին պահապանս մեծաւ զգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար ումեք անցանել ի դրանցն կամ հանել զմեռեալ և տանել ի թաղումն: Յայնժամ ըստ կամաց իւրեանց մեծամեծք եէնկիչերոնցն կարգեցին զօրագլուխ, նախարար և

¹ Նոյն բանը չի կարելի ասել հայկական միջավայրում ծավալված դեպքերի շարադրանքի մասին. Երեմիա Քյումուրճյանը, լինելով իր օրերի պոլսահայ կյանքի անցուդարձի կիզակետում, հնարավորություն ուներ առավել հավաստի ժամանակագրական տվյալներ հաղորդելու, ինչը և հիմնականում արել է:

² «Եւ այս եղև յաւուրս յամսոյ հոկտեմբերի Ժ եւ Է (17): Եւ անցեալ ի մէջ աւուրս Կ եւ Ը (68 – Գ. Ա.), ի մահուանէ թագաւորին մինչեւ ցայս վայր», A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 164: Երեմիա Քյումուրճյանը նույնությամբ կրկնում է այս վկայությունը (տե՛ս «Օրագրութիւն», էջ 5): Սուրբան Իբրահիմ I-ը մահկանացուն կնքել է 1648 թ. օգոստոսի 18-ին, ուրեմն հոկտեմբերի 17-ին չէր կարող լրանալ նրա մահվան 68-րդ օրը: Եթե ընդունենք անգամ, որ երկու հեղինակն իրենց հաշվարկը կատարել են իբրև մեկնակետ ընդունելով Իբրահիմի մահվան իրենց հիշատակած օրը՝ օգոստոսի 8-ը, ապա ակնհայտ է դառնում, որ առանց մեր օգնության նրանք ակամայից կասկածի տակ են դնում իրենց հաղորդած ժամանակագրական տվյալների արժանահավատությունը, քանի որ ամենապարզ հաշվարկով՝ օգոստոսի 8-ից հոկտեմբերի 17-ն ընկած օրերի ընդհանուր թիվը 68 չէ:

միջի իւրեանց: Եւ առաքեցին առ թագաւորն, որսալ բան ինչ ի բերանոյ նորա, եւ տալ հաւանութիւն ըստ կամաց նոցա: Եւ վասն յերկիւղի բամիցն՝ ընկալաւ զնա թագաւորն եւ մեծաբեաց. եւ ղլաթեալ՝ առ տեղիս իւր առաքեաց: Եւ յայնմ աւուր դադարեցան ի խռովութենէ, եւ ոչ մի ինչ վնաս եղել ի մարդկանէ¹:

դատաւոր ի միջի իւրեանց և եղին վեզիր զՍօֆի Մեհմետ փաշան⁷, որ էր տէֆթերտար⁸, և տէֆթերտար արարին (պարապ), և եենկիչեր աղասի⁹, զՄուրատ աղան¹⁰, և զայլ մեծամեծսն մինչև ցփոքունս: Եւ առաքեցին առ թագաւորն որսալ բան ինչ ի բերանոյ նորա, որպէս թէ հաւան իցէ արարմանց նոցա: Եւ վասն երկիւղի նոցա ընկալաւ զնոսա թագաւորն և ղլաթեալ առ տեղիս իւրեանց առաքեաց և դադարեցան յայնժամ ի խռովութենէ¹¹:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 161.

² Այստեղ որոշակի վրիպում կա. Երեմիա Քյումուրճյանը, նույնությամբ Քրիստոսատուր գրչին հետևելով հանդերձ, ինչպես տեսնում ենք, վճռել է նրա հաղորդած վկայությունների հիման վրա որոշ ճշտումներ կատարել, բայց, փաստորեն, իր հաշվարկներում սխալվել է: Իր բնագրում փորձելով տալ ամսաթիվը՝ նախընթացում հիշատակված հունիսի 11-ից նա հաշվել է այդ 47 օրը և ստացել հուլիսի 27-ը, սակայն 1648 թ. հուլիսի 27-ը եղել է ոչ թե ուրբաթ օր, ինչպես նշում են երկու հեղինակները, այլ հինգշաբթի (շաբաթվա օրերը որոշել ենք՝ ըստ «հաւերժական» օրացույցի, տե՛ս **Քրուտեան Գ.**, Օրացոյց Հայոց, Էջմիածին, 1997, էջ 518): Մեսրոպ արք. Նշանյանը, որ «Օրագրության» բնագիրը պատրաստելիս Քյումուրճյանի հիշատակած շաբաթվա օրերի համապատասխան ամսաթիվերը ներկայացրել է ճշգրտությամբ, ըստ էության, վստահելով Երեմիային, այս անգամ զերծ է մնացել տոմարագիտական հաշվումներից և բավարարվել է միայն փակագծերում Քյումուրճյանի վկայությանը համարժեք (27 Յուլիս) նշումը անելով: Այս շփոթը, կարծում ենք, առաջացել է, քանի որ Քյումուրճյանը, ի տարբերություն Քրիստոսատուր գրչի, իր հաշվարկը կատարելիս 47 օրվա մեջ ներառել է նաև հունիսի 11-ը: Խոսքը իրականում 1648 թ. հուլիսի 28-ի մասին է, որն էլ ուրբաթ օր է եղել:

³ Խոսքը օրենսգետների մասին է:

⁴ Թուրք. fetva, մուֆթիի արձակած որոշումը:

⁵ Թուրք. müftü, մահմեդական բարձրաստիճան հոգևորական, իրավաբան-կրոնագետ և Ղուրանի մեկնաբան, որը սովորաբար գլխավոր դատավորի դեր է կատարում դավանաբանական-իրավական գործերի քննության ժամանակ: Այստեղ պետք է հասկանալ բոլոր մուֆթիներից գլխավորին՝ Մեծ մուֆթին՝ օսմանյան Շեյխ ուլ Իսլամին, որի պարտականությունն էր պետական միջոցառումներին տալ օրենքի ուժ և հետևել, որ դրանք թխեն իսլամի ոգուց:

⁶ Օսմանյան Շեյխ ուլ Իսլամ Հաջի Աբդուռահիմն է (1647-1649) (թուրք. Hacı Abdürrahim Efendi), որ ֆեթվա արձակեց սկզբում՝ Իբրահիմ սուլթանի գահընկեցության, ապա սպանության վերաբերյալ, տե՛ս **Esra Yakut**, Şeyhülislamlik: yenileşme döneminde devlet ve din, İstanbul, 2005, s. 34:

⁷ Օսմանյան Մեծ վեզիր Սոֆու Մեհմետ կամ Մեհմետ փաշան է (թուրք. Sofu Mehmet Paşa կամ Mevlevi Mehmed Paşa), պաշտոնավարել է՝ 1648 թ. օգոստոսի 7-1649 թ. մայիսի 21:

⁸ Թուրք. defterdar կամ başdefterdar, ֆինանսների նախարար:

⁹ Թուրք. yeniçeri ağası, ենիչերիական զորքի հրամանատար:

¹⁰ Մուրադ փաշան (թուրք. Kara Dev Murad) այս պաշտոնը ստանձնում է 1648 թ. դեկտեմբերից:

¹¹ «Օրագրություն», էջ 1-2:

Եւ յետ մետասան ատուրց, առեալ ընդ իւրեանս դահիճ եւ ընթացան ի բանդն. մուծին դահիճն առ նա: Եւ գնացեալ դահիճն մարտեաւ ընդ նմա. եւ իբրեւ ոչ կարաց յաղթել՝ յայնժամ բուռն յարեալ ի յերանացն եւ ճմլեալ նուաղեցոյց, եւ մեծաւ աղաղակաւ ընկեց ի գետնի: Զի այսպէս դառն եւ սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ¹:

Եւ յօգոստոսի Ը յաւուր Գշի (երեքշաբթի– Գ. Ա.)² առեալ ընդ իւրեանս զՂարայ Ալի դահիճն և վաղվաղակի ընթացան ի բանտն, և մարտեաւ դահիճն և իբրև ոչ կարեր յաղթել, յերանացն բուռն հարեալ և ճմլեալ նվաղեցոյց ընկեցեալ ի գետնի և այսպէս դառն և սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ³:

Ամփոփենք. Երեմիա Քյոմուրճյանի «Օրագրություն» երկի 1648 թ. շարադրանքը ամբողջովին հիմնված է նույն թվականին Կ. Պոլսում, Քրիստոսատուր գրչի ձեռքով գրված և այժմ Յեյլի համալսարանի Բայնեկե գրադարանում պահվող Հայսմավուրքի (Z107.008) հիշատակարանի վրա: «Օրագրության» մեջ հիշատակագիր վկայությունների կիրարկումը հետազայի ընդմիջարկություն է: Երկու սկզբնաղբյուրում օսմանյան պատմությանը վերաբերող ժամանակագրական տվյալները ներկայացված են չնչին անճշտություններով, ուստի դրանք պետք է օգտագործել զգուշությամբ և ստուգելուց հետո միայն⁴:

¹ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, p. 163.

² Այստեղ արդեն Երեմիա Քյոմուրճյանը չի վրիպել. բացարձակապես վերացարկվելով վերը քննարկած իր հաշվարկներից՝ այս դեպքում նա Քրիստոսատուրի հիշատակած «յաւուր շաբաթու»-ից (1648 թ. հուլիսի 29-ից) հաշվել է 11 օր և ստացել 1648 թ. օգոստոսի 8-ը, որը եղել է երեքշաբթի: Սակայն Իբրահիմ սուլթանին այս օրը ոչ թե սպանել են, այլ ձերբակալել: Այս և մնացած մյուս դեպքերում օսմանյան պատմությանը աղերսվող բոլոր ժամանակագրական տվյալները ներկայացրել ենք՝ հիմք ընդունելով Ի. Հաքը Ուզունչարշըլըի առաջարկած թվականները, տե՛ս **Hakkı Uzuncarsılı İ., Osmanlı Tarihi III, Cilt 1, Kısım: II, Ankara, 1998:**

³ «Օրագրություն», էջ 4:

⁴ Հոդվածի առնչությամբ օգտակար խորհուրդների համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Մատենադարանի աշխատակից, Բ.Գ.Պ. Գոհար Մուրադյանին և ԵՊՀ պրոֆ., պ.գ.դ. Հայրապետ Մարգարյանին:

**Гаяне Айвазян – Об одном неизвестном источнике
«Дневника» Еремии Челеповича Кемурчяна**

Содержание "Дневника" Еремии Кемурчяна 1648-го года полностью основано на памятнике Месяцеслова (Z107.008), написанном Кристосатуром в том же году в Константинополе, который в настоящее время хранится в библиотеке редких книг и рукописей Бейнеке Йельского университета. Свидетельства взятые из памятника были вставлены в текст "Дневника" в дальнейшем. При изучении обоих источников, нужно принять во внимание тот факт, что хронологические данные касающиеся истории Османской империи имеют незначительные расхождения.

**Gayane Ayvazyan – On an Unknown Source of
Jeremia Chelebi Qyomurtchyan's "Diary"**

The content of Yeremia Qyomurtchyan's "Diary" of 1648 is based entirely on the colophon of Menologium (Z107.008) written by Qristosatur in the same year in Constantinople, which is now kept in the Beinecke Library at Yale University. Pieces of evidence taken from the colophon have been inserted in "Diary" in future. While studying both sources, it is necessary to take into account that the chronological data relating to the history of the Ottoman Empire have minor divergences.

ԿԵՌԼԱՅԻ ՍՈՂՈՍՈՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՍՈՒՏՔԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

Բանալի բառեր – միջնադարյան քանդակ, արտաքին հարդարանք, գաղթօջախ, Կեռլա, Էկեղեցի, Գրիգոր Լուսավորիչ, Հովհաննես Նեփոմուք, ճարտարապետական շինություն, զարդատարր

XVI դ. վերջին և XVII դ. սկզբին Արևմտյան Հայաստանում ջալալիների ասպատակություններից, իսկ Պարսկահայաստանում շահ Աբբաս I-ի բռնագաղթներից խուսափած հայերն ապաստանել են Ռումինիայի հյուսիսային (Մոլդովա) և հարավային (Վալախիա) քաղաքներում: XVII դ. II կեսին Լեհաստանի հայերի բռնի կաթոլիկացման հետևանքով Ռումինիայում են ապաստանել նաև շատ լեհահայեր: XVII դ. Ռումինիա գաղթած հայերի զգալի մասը հաստատվել է նաև երկրի արևմտյան մասում՝ Տրանսիլվանիայում¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (XVI դ. II կես – XVIII դ. I կես) Ռումինիայի մի շարք քաղաքներում Բուխարեստում (1581-1629 թթ. և 1638 թ.), Եդիսաբեթպոլում (Սբ. Հովհաննես Մկրտիչ, 1711 թ. և Սբ. Երրորդություն), Յասիում (1616 թ., Սբ. Գրիգոր Լուսավորիչ), Ջորջովում (1733 թ. Սբ. Աստվածածին), Սեպվիզում (Սբ. Երրորդություն) գործել են բազմաթիվ եկեղեցիներ²: Եկեղեցիների այս շարքը ռումինահայ համայնքի բեղուն գործունեության ապացույցն է, ընդ որում, հայերը կենտրոնացել են ոչ թե մի քաղաքում, այլ գաղթօջախներ են հիմնել գրեթե ողջ Ռումինիայում:

Տրանսիլվանիայում հայերը կառուցեցին երկու քաղաք՝ Կեռլա (1700 թ.) և Տումապրվեն (1733 թ.): Կեռլան (Հայաքաղաք, լատիներեն՝ Արմենոպոլիս) տեղադրված է Մարթինուզին բերդից հյուսիս: Գետի ծանծաղուտի այդ հատվածը տեղացիներն անվանում են «կեռլա», որը ծագում է սլավոնական «կիելվա» բառից և նշանակում է «փոքր խորություն ունեցող տեղ», «ծանծաղուտ»³: Քաղաքը կառուցվել է հատակագծի համաձայն, որն արել է հայազգի ճարտարապետ Ալեքսիսը (Ալեքսանյան), ով եպիսկոպոսի հրավերով եկել էր Հռոմից:

¹ Տե՛ս Բաղդասարյան Մ., Հայ սփյուռքի հանրագիտարան, Երևան, 2002, էջ 440-441:

² Տե՛ս նույն տեղում, էջ 443-447:

³ Տե՛ս Կազմովիչ Ն., Հայրաքաղաք Կեռլայի պատմության էջերեն // Հայ մշակույթն ու արվեստը Կեռլային մեջ, Պուքրեշ, 2002, էջ 32:

Կեռլա քաղաքը կառուցապատվեց աշխարհիկ և հոգևոր շինություններով, ընդ որում քաղաքի ամենահին մասը հարավային հատվածն է, որտեղ կառուցված են առաջին շենքերը և սրբատեղին՝ Սողոմոն եկեղեցին, որն իր անվանումն ստացել է հիմնադրի՝ Սիմա Սողոմոնի անունից: Եկեղեցու կառուցումը սկսվում է 1723 թ.¹:

Հետաքրքրական է, որ եկեղեցու ներսում կա մի որմնանկար, որը պատկերում է իշխանական հագուստով երկու տղամարդկանց ու կանանց: Աջակողմյան տղամարդը եկեղեցու մոդելը ցույց է տալիս իր առջևի տղամարդուն: Ներքևում կա արձանագրություն հետևյալ բովանդակությամբ. Սողոմոն և Աստվածատուր Շիմայանները կառուցեցին այս եկեղեցին 1723 թ., և նորոգվել է 1751, 1797, 1811, 1899 թթ.: Փաստորեն եկեղեցու կառուցումը իրականացվել է երկու կտիտորների (եկեղեցու պատվիրատուներ) կողմից, սակայն այն կոչվել է ավագի անունով: Ինչպես երևում է որմնանկարում, եկեղեցու մոդելը պահող տղամարդը տարեց է, իսկ մյուսը՝ երիտասարդ:

Ուշադրության արժանի է, որ եկեղեցու արևմտյան ճակատին նշված է եկեղեցու շինարարության տարին՝ 1724 թ.: Ամենայն հավանականությամբ եկեղեցու կառուցման աշխատանքներն ավարտվել են այդ թվականին:

Եկեղեցու քանդակային հորինվածքները տեղադրված են գլխավոր մուտքի աջ և ձախ կողմերում: Դեպի վեր ձգվելով՝ արևմտյան շքամուտքը աշտարակաձև կառույցի տեսք է ստանում, որն ունի երեք կիսակլոր պատուհան: Առաջին և երկրորդ պատուհանների միջև տեղադրված է վերը նշված արձանագրությունը: Երրորդ պատուհանից վերև ժամացույց է, իսկ ամենավերին հատվածում շինությունը պսակված է խաչով (նկ. 1):

Քանդակները տեղադրված են մուտքի կողմերում որմնասյուներին արված հատուկ պատվանդանի վրա: Երկու կերպարներն էլ կանգնած են նույն դիրքով, և կրում են հոգևորականի միատեսակ հագուստ: Քանդակները միմյանցից տարբերվում են միայն դեմքի մշակումով և գլխանոցով: Ժամանակի ընթացքում քանդակները բավականին մաշվել են, և ֆիգուրների որոշ հատվածներ բացակայում են (նկ. 2): Մասնավորապես հնարավոր չէ կռահել, թե հոգևորականների ձեռքերին ինչ կա, որը, հնարավորություն կընձեռեր պարզել, թե ովքեր են քանդակված: Աջակողմյան ֆիգուրը գլխանոցով է, ունի դեմքի արտահայտիչ մշակում՝ խոշոր աչքեր և կարճ մորուք: Հոգևորականը ծալքազարդ թիկնոցով է, որը իջնելով ուսերին, մինչև արմունկները ծածկում է թևերը: Թիկնոցի եզրերը առջևում միմյանց միանում են խոշոր ճարմանդով: Հագուստը երկտակ է: Առաջինը ամբողջությամբ ծածկում է ոտքերը, իսկ մյուսը հասնում է ծնկներին: Հագուստի վրա իջնում է փորուրարը: Առավել մանրագին քննելու պարագայում հոգևորականի գլխանոցի

¹ Տե՛ս **Սապրու Ն.**, «Արմենոպոլիս» կամ Կեռլա Պարոքքո // Հայ մշակույթն ու արվեստը Կեռլային մեջ, էջ 103:

վրա նկատվում են ելուստներ, որոնք կարծես հուշում են թանկարժեք քարերի առկայությունը գլխանոցի վրա: Ակնհայտ է նաև կետագարդերի և բուսագարդերի առկայությունը: Առավել ուշագրավ են լայն բացված աչքերը, որոնք նայում են վեր՝ երկինք: Դիմագծերի լարվածությունն ու աչքերի արտահայտությունը վկայում են դիմում առ Աստված:

Քարի մակերեսի ընդհանուր քայքայվածությունը խանգարում է մանրակրկիտ վերծանելու առանձին դետալների: Ամենայն հավանականությամբ մակերեսի մաշվածության պատճառը կավի խառնուրդի առկայությունն է, քանի որ XVIII դ. առաջին երեք տասնամյակում կավային խառնուրդը շատ էր օգտագործվում շինարարությունում, իսկ տները շարվում էին գետաքարերով: XVIII դ. առաջին կեսին Կեռլայում և նրա շրջակա քաղաքներում կար քարամշակման ընդամենը մեկ արհեստանոց¹: Եթե նկատի ունենանք, որ եկեղեցու կառուցումն ավարտվել է 1724 թ., ապա ակներև է, որ քարի մշակումը դեռ այնքան մեծ տարածում չունեի Կեռլայի ճարտարապետության մեջ:

Հոգևորականի թիկնոցի եզրերը զարդարված են երկրաչափական զարդատարրերով: Հագուստի փորուրարն ավարտվում է ծոպերով, իսկ վրան պատկերված են խաչեր, սակայն առավել աչքի է ընկնում հագուստի փեշի հարդարանքը, որն ունի ասեղնագործ մշակում՝ զարդարված բուսական տարրերով: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հագուստն ավարտվում է ժանյակագարդով: Զարդատարրերի նման առատությունը և նուրբ համադրությունը պատահական չէ: XVII-XVIII դդ. Կեռլայում զարգացում է ապրել մանածագործությունը: Զարդարանքը համընկնում է ժամանակի հոգևորականների հագուստի հարդարանքին: Քանդակագործը ռեալիստական մոտեցում է ցուցաբերել հոգևորականի կերպարը կերտելիս:

Զախակոդմյան ֆիգուրը աջակոդմյան հոգևորականի կրկնությունն է: Մասնավորապես՝ մարմնի դիրքը և հագուստի մշակումը: Այս քանդակն առավել եղծված է, քան վերոհիշյալ օրինակը, և հնարավոր չէ ասել՝ հագուստների զարդատարրերը համընկնում են, թե ոչ (նկ. 3): Զախակոդմյան հոգևորականի հագուստի վերին և ստորին եզրերը զարդարված են կետիկազարդով: Հոգևորականի գլուխը թեքված է աջ, աչքերը նայում են վեր: Դուրս ցցված այտոսկրերը, հյուծված դեմքը խոսում են սակավպետության մասին: Առավել լավ են պահպանվել քիթը, բերանը և երկար մորուքը: Նրա դեմքն առավել արտահայտիչ է, թեև նույնպես նայում է վեր, սակայն հայացքը ոչ թե խնդրանք է արտահայտում, այլ պահանջ (նկ. 3):

Քննության ենթարկելով այս երկու քանդակները՝ հարց է ծագում, թե ում է պատկերել քանդակագործը: Նիքոլաե Սապրուն նշում է. «Կեռլայի ճարտարապետական-զարդային քանդակագործության ընտրանին բազմազան

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 104:

Է՝ ընդգրկելով վարդյակներ, զինանշանային արձանագրություններ, հովիվներու բարձրաքանդակ գլուխներ, թուրք մարտիկներու կիսանդրիներ, ատլանտներ, Տիրամոր կամ Սուրբ Հովհաննես Նեփոմուքի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերները»¹: Հաշվի առնելով պատկերագրական առանձնահատկությունները՝ հանգում ենք այն մտքին, որ Սողոմոն եկեղեցու գլխավոր մուտքի երկու քանդակներից մեկում պատկերված է Հովհաննես Նեփոմուքը, իսկ մյուսում՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչը: Սա ամբողջովին համընկնում է քրիստոնեական խորհրդաբանությանը, քանի որ ներկայացված են կաթոլիկ և առաքելական սրբեր: 1684 թ. Տրանսիլվանիայի հայերն ընկել էին կաթոլիկացման հոսանքի մեջ: Թեև սկզբում հայերը դիմադրություն են ցույց տվել, բայց, այնուամենայնիվ, 1690 թ. հայերի կաթոլիկացումն ավարտված էր²: Փաստորեն Սողոմոն եկեղեցին ի սկզբանե կաթոլիկ է եղել և առաքելական ու կաթոլիկ սրբերի պատկերումը երկու կրոնների համերաշխության գրավականն է: Մյուս հարցը հետևյալն է. ինչո՞ւ են հատկապես Հովհաննես Նեփոմուքին քանդակել Գրիգոր Լուսավորչի կողքին: Նեփոմուքի կենսագրության ուսումնասիրությունը լույս է սփռում այս խնդրին:

Չեխ հոգևորական Հովհաննես Նեփոմուքը 1389 թ. նշանակվում է արքեպիսկոպոսի գլխավոր փոխանորդ: Սակայն չեխ թագավոր Վացլավ IV-ի հետ կոնֆլիկտի պատճառով ձերբակալվում է և նետվում բանտ: Նեփոմուքը մահանում է բանտում սովից ու տանջանքներից: Նրա մարմինը, դնելով պարկի մեջ, գցում են գետը: XV դ. Նեփոմուքը դասվում է սրբերի շարքը³: Փաստորեն Նեփոմուքի կյանքի պատմությունը նման է Գրիգոր Լուսավորչի կենսագրությանը, եթե նկատի ունենանք, որ նա ևս արքայի՝ Տրդատ Մեծի կողմից նետվել է բանտ, ուր տանջանքների է ենթարկվել: Թերևս այս նմանությունն է պատճառը, որ հենց Հովհաննես Նեփոմուքին են պատկերել Գրիգոր Լուսավորչի կողքին, ընդ որում Հովհաննես Նեփոմուքի պատկերմանը առաջին անգամ հանդիպում ենք ուշ միջնադարյան հայ արվեստում, իսկ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը XVI-XVIII դդ. լայն տարածում էր գտել: Գրիգոր Լուսավորչի պատկերներ կան Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան արտաքին հարդարանքում, Խոր Վիրապի արևելյան պատին, Լիվոռնոյի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և այդ դարաշրջանի այլ հուշարձաններում:

Սողոմոն եկեղեցու մուտքին Հովհաննես Նեփոմուքի քանդակը առաջին հերթին ընդհանրություններ ունի Չեխիայի Վելկա Դոբրա բնակավայրում գտնվող Հովհաննես Նեփոմուքի 1793 թ. քանդակի հետ: Վերջինս նույնպես արված է պատվանդանի վրա: Սողոմոն եկեղեցու օրինակի հետ առնչվում են հատկապես մորուքի մշակումն ու հագուստի մոդելավորումը, որը նույն-

¹ Նույն տեղում, էջ 108:

² Տե՛ս **Կապտուլիչ Ն.**, նշվ աշխ., էջ 41:

³ https://ru.wikipedia.org/wiki/%D0%AF%D0%BD_%D0%9D%D0%B5%D0%BF 29.01.15թ.

պես երկտակ է, իսկ երկրորդ փեշի եզրերը նախշագարդված են: Այս երկու քանդակներն արվել են XVIII դ. և մոտեցման նույնականությունը պայմանավորված է դարաշրջանի՝ բարոկկոյի արվեստի ոգով, իսկ Գրիգոր Լուսավորչի կերպարը ենթարկվել է արվեստի ընդհանուր բնութագրին: Նիքոլաե Սապրուն կարծում է, որ XVII դ. երկրորդ կեսից նոր էջ է բացվում տրանսիլվանյան կերպարվեստի մեջ: Այն ուրվագծվում է քաղաքային բարոկկո ոճով, որը հայերի կողմից ընդունվեց խոր ընկալումով¹:

Սողոմոն եկեղեցու մուտքի հարդարանքը եթե դիտարկենք Կեռլա քաղաքի ճարտարապետության ենթատեքստում, ապա նկատում ենք, որ աշխարհիկ և հոգևոր շինություններն ունեն հարդարման միևնույն սկզբունքը: Եթե աշխարհիկ շենքերի մուտքի երկու կողմերում սյան վրա կանգնեցված են ասլանտներ, ապա եկեղեցու պարագայում հոգևոր դասի ներկայացուցիչներ են: Աշխարհիկ ճարտարապետության զարգացումը և առհասարակ աշխարհիկ մտածողությունն իր կնիքն է թողնում նաև հոգևոր շինությունների վրա: Նիքոլաե Սապրուն համեմատում է Սողոմոն եկեղեցու արտաքին հարդարանքը Կեռլա քաղաքի տների հետ և ցույց տալիս զուգահեռները²: Դա ևս ապացուցում է մեր տեսակետը:

Ամփոփելով Կեռլայի Սողոմոն եկեղեցու մուտքի հարդարանքը՝ նշենք, որ Հովհաննես Նեփոմուքի և Գրիգոր Լուսավորչի քանդակներն առանձնահատուկ են նախևառաջ իրենց չափերով: Մարդահասակ այս հորինվածքները ոչ թե պատկերաքանդակներ են, որոնք հատուկ են ճարտարապետությանը, այլ գրեթե կլոր քանդակներ, որոնք իբրև սրբերի արձաններ կարող են հանդես գալ ճարտարապետական շինությունից անկախ: Հավելենք նաև, որ Հովհաննես Նեփոմուքին և Գրիգոր Լուսավորչին քանդակագործը ներկայացրել է ոչ թե սրբերի, այլ ժամանակի հոգևորականներին հատկանշական կերպարով: Նրանք ունեն դիմանկարային առանձնահատկություն, քանի որ քանդակագործը «ռեալիստական» մոտեցում է ցուցաբերել սրբերի կերպարները կերտելիս:

¹ Տե՛ս **Սապրու Ն.**, նշվ. աշխ., էջ 100:

² Տե՛ս նույն տեղում, էջ 106:

Լիլիտ Կարապետյան – Դիզայն входа армянской церкви Соломон в Герле

В этой статье освещается армянское культурное наследие в Румынском городе Герле. Мы попытались объединить в одно целое разбросанные материалы. Основная цель статьи – внешний дизайн церкви Соломон, а также иконографические особенности. Мы попытаемся ответить на вопрос кто изображен с двух сторон входа в церковь. По нашему исследованию – это скульптуры Иоганна Непомука и Григора Просветителя, на основе политической обстановки, биографической параллели этих святых, и также иконографических особенностей, которые представлены в статье.

Lilit Karapetyan – Entrance Decoration of Solomon Church in Kerla

This article clarifies Armenian cultural heritage in Kerla of Romania. We try to collect diffused materials. Especially the article investigates the entrance decoration of Solomon Armenian Church in Kerla. Indicates iconographic features and tries to reveal who are sculptured on both sides of Solomon Church. In our opinion, these are Iohann Nepomuk and St. Gregory the Illuminator. The first we take into account political aspect, biographical parallels, which are submitted in the article and the second iconographic peculiarities.

Հուսանկարներ



Նկ. 1 Կերլայի Սողոմոն եկեղեցի



Նկ. 2 Հովհաննես Նեփոմուք



Նկ. 3 Գրիգոր Լուսավորիչ

**ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 1921-1945 ԹԹ.**

Բանալի բառեր – Ներսես Մելիք-Թանգյան, Ռեզա շահ Փեհլևի, իրանահայ համայնք, իրանահայ թեմեր, ինքնավարության մարմիններ, շահական ֆարմաններ, ազգային դպրոցներ, «իրանացման» քաղաքականություն

Հանձինս գոյություն ունեցող թեմերի՝ իրանահայ համայնքի իրավական կարգավիճակի հիմքը կրոնակեղեցական ինքնավարությունն էր: Սկսած տակավին XI դարից, երբ Պարսկաստանում հիմնադրվեցին հայկական առաջին բնակավայրերը, ինքնավարության այդ ձևը դարձավ համայնքին հատուկ¹: Այդ պահից համայնքում ստեղծվեցին ինքնավարության սեփական մարմիններ՝ թեմական առաջնորդարաններ, որոնք XX դարից սկսեցին գործել թեմական կամ համայնական խորհուրդների ձևով:

Իրանահայ համայնքի թեմերը, ինչպես հայկական մյուս համայնքները, ըստ դարավոր սովորության իրավունքի և հնագույն եկեղեցական կանոնների, միշտ ենթարկվել են Ամենայն հայոց կաթողիկոսությանը²:

Հռոմկլան, իսկ այնուհետև Էջմիածինը, թեմերի և նվիրակությունների շրջաններ էին ուղարկում իրենց ներկայացուցիչներին՝ թեմական առաջնորդներին: Համայնքի իրավական կարգավիճակն ամրապնդված էր շահական մի շարք ֆարմաններով (հրովարտականերով) և այլ փաստաթղթերով: Ելնելով երկրի ներքին և արտաքին դրությունից՝ իրանական իշխանությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում հաշվի էին նստում համայնքի ինքնավարության մարմինների հետ, արձագանքում նրանց խնդիրներին ու միջնորդություններին: Դրանով իսկ ճանաչվել է համայնքի փաստական գոյությունը:

¹ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրությունը // «ՊԲՀ», 1969, թիվ 1, էջ 171: Նույն հեղինակն իրանահայ համայնքի պատմությանը նվիրված իր աշխատությունում ինքնավարության այդ ձևի՝ գաղութում երևան գալու սկիզբը համարում է V դարը, երբ Զարեհավանում (այժմյան Սալմաստ) ստեղծվեց հայկական առաջին բնակավայրը: Տե՛ս նաև **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, 2007, էջ 147:

² XII դարի սկզբից մինչև XV դարի 40-ական թթ.՝ Կիլիկիայի հայկական պետության անկումը, թեմերը ենթարկվում էին Հռոմկլային, որտեղ այն ժամանակ գտնվում էր կաթողիկոսությունը: 1441 թ., երբ կաթողիկոսական աթոռը կրկին հաստատվեց Էջմիածնում, Իրանի տարածքում գտնվող թեմերը ենթարկվեցին նրան:

Իրանի շահերի քաղաքականությունը համայնքի նկատմամբ միշտ եղել է երկրի կառավարող շրջանների շահերին համապատասխան և փոխվել ներքին ու արտաքին իրադրության համեմատ: Այդ պատճառով էլ միշտ չէ, որ կայուն է եղել իրանահայ համայնքի իրավական կարգավիճակը: Մինչև 1940-ական թթ. համայնքը բաժանված էր երկու թեմի՝ Թավրիզի (Ասրպատականի) և Իրանահնդկաստանի, որոնց կենտրոնները համապատասխանաբար Թավրիզն ու Նոր Զուղան էին: 1944 թ. Իրանահնդկաստանի թեմի մեջ մտնող բնակավայրերի մի մասից կազմվեց Թեհրանի թեմը, որի կենտրոնը Թեհրանն էր:

XX դարի սկզբին մշակվեցին թեմական կանոնադրություններ, հիմնվեցին ընտրովի թեմական խորհուրդներ¹, որի հետևանքով թեմական առաջնորդների իշխանությունը մասամբ սահմանափակվեց²: Ըստ կանոնադրությունների՝ ստեղծվեցին թեմական պատգամավորական ժողովներ: Ընտրովի այդ մարմինները որոշակի հաջորդականությամբ նորացվում էին: Դրանք դարձան թեմերի յուրահատուկ գերագույն օրենսդիր մարմիններ և իրավունք ունեին ընտրել թեմական խորհուրդներ, որոնք հանդես էին գալիս իբրև թեմերի գերագույն գործադիր մարմիններ:

Թեմական խորհուրդները բաղկացած էին աշխարհիկ անձերից: Խորհրդի նախագահը թեմական առաջնորդն էր: Նրա կրոնական հարցերի գծով տեղակալը խորհրդի նիստերին մասնակցելու ուներ լիազորություն, իսկ թեմական առաջնորդի բացակայության դեպքում՝ փոխարինելու վերջինիս:

Ի դեմս գործակալությունների՝ թեմական իշխանություններն ունեին իրենց ներկայացուցչությունը նահանգներում: Գործակալության նախագահն էր տեղի քահանան, որը տվյալ դեպքում կոչվում էր գործակալ: Թեմական առաջնորդներն ընտրվում էին թեմական խորհուրդների կողմից, որը հաստատում էր կաթողիկոսը: Իրանական պետությունը ճանաչում էր թեմական կանոնադրությունները, իսկ թեմական առաջնորդների ընտրությանն ու հաստատմանը չէր միջամտում³:

Թեմերի կառուցվածքներում առկա էին կանոնադրական և կազմակերպական բնույթի տարբերություններ: Իրանահայ ամենահին՝ Թավրիզի թեմը միավորում էր հյուսիսային նահանգներում բնակվող հայ ազգաբնակչությանը: Մինչև 1833 թ. այն կոչվում էր Ասրպատականի թեմ, որի կենտրոնը Մակուի Ս. Թադեոսի վանքն էր⁴: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով

¹ Տե՛ս **Փափկանյան Հ.**, Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 88:

² XI դարից սկսած՝ թեմական առաջնորդներն իրենց ձեռքն էին վերցրել համայնքի տնօրինությունը:

³ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, էջ 148:

⁴ Ս. Թադեոս առաքյալի վանքը, որը հայտնի է որպես Ս. Թադեի վանք, գտնվում է Իրանի Մակու գավառամասի Չալդորան դաշտի Ղարաքիլիսե գյուղում:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը տեղափոխվեց Թավրիզ, քանզի Ս. Թադեոսի վանքը գտնվում էր ռուս-պարսկական սահմանի մոտ: 1833 թ. այն վերանվանվեց Թավրիզի թեմ, որն ավանդաբար անվանում են նաև Ատրպատականի թեմ: Ազգային առաջնորդարանը Թավրիզ փոխադրվելուց հետո մինչև 1936 թ. գտնվում էր Ղալա (Բերդաթաղ) թաղամասի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում: Հետագայում այն տեղափոխվեց Հայոց ազգային կենտրոնական դպրոցի շենքը, որը գտնվում է Թավրիզի հարավային Շարիաթի պողոտայում¹:

Թավրիզի թեմի ներկայացուցչական բարձրագույն մարմինը՝ պատգամավորական ժողովը, ընտրվում էր չորս տարին մեկ անգամ և բաղկացած էր 17 անդամից: Այն նախագահում էր թեմական առաջնորդը կամ կրոնական հարցերի գծով նրա տեղակալը, ով օժտված էր խորհրդակցական ձայնի իրավունքով: Պատգամավորական ժողովի ընտրած թեմական խորհուրդը բաղկացած էր յոթ անդամից: Խորհրդի յոթերորդ անդամը նախագահն էր, որը թեմակալ առաջնորդն էր (կամ կրոնական հարցերի գծով նրա տեղակալը) և ուներ վճռական ձայնի իրավունք:

1912-1948 թթ. Թավրիզի թեմակալ առաջնորդն էր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, ով զգալի դեր է խաղացել իրանահայ համայնքի կյանքում: Նշենք, որ նա ոչ միայն հոգևոր, այլև հասարակական-քաղաքական գործչին բնորոշ գործունեություն իրականացրեց և իր հնարավորությունների սահմաններում արեց առավելագույնը՝ ի նպաստ հայ ժողովրդի ու իր հայրենիքի: Նա փորձում էր նորմալ հարաբերություններ պահպանել նաև Խորհրդային Հայաստանի կառավարության հետ, սակայն վերջինս՝ հանձին Պարսկաստանում Հայաստանի հյուպատոսի, միշտ խույս է տվել նրա առաջարկած օգնությունից և անգամ Պարսկաստանի կառավարությունից պաշտոնապես պահանջել, որ հայոց առաջնորդը «չխառնվի հայոց գործերին»²:

Խորհրդային Հայաստանի իշխանությունը Մելիք-Թանգյանին համարում էր թշնամի (այն է՝ դաշնակցական), ով զենք ու սննդամթերք էր մատակարարել Սյունիքում մարտնչող Նժդեհին և ստանձնել փետրվարյան ապրտամբության պարտությունից հետո Պարսկաստան անցած հայ տարագիրների խնամքի գործը: Ամեն ինչ արվում էր, որպեսզի Ատրպատականի հայոց թեմական առաջնորդին վերադարձնեին Էջմիածին, ուր հեշտությամբ հաշվեհարդար կտեսնեին նրա հետ: Այդ նպատակով 1921 թ. ամռանը Պարսկաստան են գործուղվում Հայաստանի արտակարգ հանձնաժողովի անդամ Հայկ Ղազարյանը և ժողկոմխորհի կողմից նշանակված կոմիսար

¹ Տե՛ս <http://www.housk.net/hy/armenians/armenian-church>

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 89, թ. 21:

Գր. Վարդանյանը¹: Նրանք այցելում են թեմի առաջնորդարան, անգամ ճաշում առաջնորդի հետ, սակայն վերջինս, չենթարկվելով նրանց ահաբեկումներին ու հորդորներին, հրաժարվում է վերադառնալ Էջմիածին:

Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը պարբերաբար բանավոր ու գրավոր նախազգուշացումներ էր ստանում Խորհրդային Հայաստանի իշխանությունից՝ Ներսես Մելիք-Թանգյանին ուղղված, և ի վերջո տեղի տալով իշխանությունների պահանջին, իր կամքին հակառակ՝ 1923 թ. նոյեմբերի 1-ի թիվ 336 հայրապետական կոնդակով Ներսես արքեպիսկոպոսին ազատում է Ատրպատականի թեմական առաջնորդի պաշտոնից և հրավիրում Ս. Էջմիածին:

Ներսես Մելիք-Թանգյանը, 1923 թ. դեկտեմբերի 30-ին Ատրպատականի հայոց թեմական պատգամավորական ժողովի 11-րդ նիստում հոտնկայս ընթերցելով հայրապետական սրբատառ կոնդակը, հայտնում է ժողովին, որ ենթարկվելով Վեհափառի հրահանգին՝ ներկայացնում է իր հրաժարականն և հեռանում ժողովից²:

Թեմական ժողովը քննության է ենթարկում հրաժարականի հարցը՝ կետ առ կետ նշելով այն բոլոր ծառայությունները, որ թեմակալը մատուցել էր Ատրպատականի հայությանն ու եկեղեցուն: Մասնավորապես նշվում էր, որ նա անբասիր ծառայել էր համայն ժողովրդին, ազգային մարմիններին և մանավանդ Ատրպատականի պատգամավորական ժողովին՝ մի քանի անգամ ստանալով վերջինիս վստահության քվեն, որ Պարսկաստանի քաղաքական պայմաններում տեղական իշխանությունների հետ նրա սերտ ու բարեկամական հարաբերությունները բխում են հայ ժողովրդի շահերից, և վերջապես կարևորվում էր երկարամյա պաշտոնավարության շնորհիվ տեղական կարիքներին ու պայմաններին նրա քաջատեղյակ լինելը: Ելնելով վերոհիշյալից՝ պատգամավորական ժողովը, օգտվելով Ատրպատականի թեմական սահմանադրության ընձեռած իրավունքից³, որոշել է միաձայն մերժել թեմակալ առաջնորդի հրաժարականը և վերահաստատել նրան նույն պաշտոնում⁴:

Հարկ է նշել, որ իրանական իշխանություններն իրենց հերթին ճնշում էին գործադրում թեմական առաջնորդի վրա՝ պահանջելով իրանական հպատակություն ընդունել, «դադարեցնել հարաբերություններն Էջմիածնի հետ, օտար երկրի հետ և թույլ չտալ օտարներին միջամտել իրանահայերի

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 3, գ. 517, թ. 13:

³ Ըստ 1903 թ. հաստատված Ատրպատականի թեմական սահմանադրության թիվ 30 և 35 հոդվածների՝ թեմական առաջնորդի ընտրությունը, հրաժարականի պահանջումը կամ մերժումը վերապահված էին թեմական պատգամավորական ժողովին:

⁴ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 57, ց. 3, գ. 517, թ. 13 և շրջ.:

եկեղեցական գործերին»¹: Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին հեռացրեց պաշտոնից 1929 թ. օգոստոսի 15-ի՝ իրանական կառավարությանն ուղղված ուղերձով: Սակայն իրանական իշխանությունները շարունակում էին նրան թեմակալ ճանաչել²:

Ընդհուպ մինչև 1930-ական թվականները Թավրիզի թեմը կարևոր դեր է ունեցել իրանահայության կյանքում: Սակայն աստիճանաբար այն կորցրել է իր գլխավոր դերակատարությունը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցել է նոր թեմի կենտրոն Թեհրանին:

XVII դարի սկզբին՝ Սպահանի շրջակայքում հայերի բնակություն հաստատելու առաջին տարիներին, ստեղծվեց Նոր Ջուղայի թեմը: XVIII-XIX դարերում իրանահայ բնակչության մի մասի՝ Հնդկաստան, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրներ տեղափոխվելու պատճառով թեմն անվանափոխվեց Իրանահնդկաստանի, որի կենտրոնը թեմակալ առաջնորդի աթոռանիստ՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքն էր³:

1909 թ. թեմը մշակեց իր կանոնադրությունը:

1920-ական թվականների սկզբին աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կողմնակիցների միջև բախումները հանգեցրին դրանց սահմանազատմանը: Դրանց հետևանքով իր գոյությունը դադարեցրած առաջնորդական խորհրդի⁴ փոխարեն 1922 թ. Նոր Ջուղայում ընտրվեց կրոնական խորհուրդ, որի անդամները կրկին ընտրվում էին տեղական քահանաներից⁵: 1923 թ. ստեղծվեց Նոր Ջուղայի համայնական խորհուրդը: Դրանով ավարտվեց հոգևոր իշխանության և համայնքային կազմակերպությունների լիակատար տարանջատումը: Հարկ է նշել, որ իշխանությունը շարունակում էր մնալ թեմակալ առաջնորդի ձեռքում: Վերջինիս նախագահությամբ համայնական և կրոնական խորհուրդները վարում էին Նոր Ջուղայի և նրա ենթակայության ներքո գտնվող գավառների գործերը⁶:

1920-1922 թթ. թեմի առաջնորդն էր Սահակ արքեպիսկոպոս Այվատյանը (նա այդ թեմը գլխավորել էր նաև նախկինում՝ 1902-1912 թթ.)⁷: Նրանից հետո թեմը գլխավորեց եպիսկոպոս Մեսրոպ (Մագիստրոս) Տեր-Մովսիս-

¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4120, թ. 1 շրջ.:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4120, թ. 1 շրջ.:

³ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 49:

⁴ Առաջնորդական խորհուրդը հիմնվել էր XIX դարի 90-ական թթ.: Այդ մարմինը որոշ չափով փոխարինում էր թեմական խորհրդին, քանզի կրոնական եկեղեցական հարցերի քննությունից զատ՝ իրավասու էր կարգավորել Նոր Ջուղայի և մերձակա գավառների հայ բնակչության միջև ծագած վեճերը և դատական որոշումներ կայացնել: Խորհրդի անդամներին նշանակում էր թեմակալ առաջնորդը:

⁵ Տե՛ս «Պարսկահայ տարեցույց», Երկրորդ տարի, Թեհրան, 1929, էջ 17:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

յանը (1926-1930 թթ.)¹: 1930 թվականից մինչև 1945 թ. թեմակալի պաշտոնը Նոր Ջուղայում թափուր էր: Իսկ 1945 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այստեղ ուղարկեց եպիսկոպոս Վահան Կոստանյանին, ով պաշտոնավարեց մինչև 1949 թ.:

Թեմական առաջնորդի բացակայության ժամանակ թեմական խորհրդի գործառույթները ձևականորեն կատարում էր Նոր Ջուղայի համայնական խորհուրդը, սակայն վերջինիս չէին ենթարկվում շրջանի բնակավայրերից և ոչ մեկը, նույնիսկ՝ Փերիան և Չհարմիալը²: Նոր Ջուղայի հետ նրանց կապն ուներ միայն կրոնակեղեցական բնույթ՝ ի դեմս կրոնական խորհրդի: Նոր Ջուղայում կար նաև դպրոցական հոգաբարձություն, որն ընտրվում էր համայնական խորհրդի կողմից: Համայնական և կրոնական խորհուրդները ևս ընտրովի մարմիններ էին: Առաջինն ընտրվում էր համայնական, իսկ երկրորդը՝ կրոնական ժողովի կողմից:

Կազմակերպական միասնական կառուցվածքի բացակայության պատճառով Իրանահնդկաստանի թեմի յուրաքանչյուր բնակավայր ինքնավարության իր մարմիններն ուներ: Եթե Նոր Ջուղայում դրանք էին համայնական ժողովը և համայնական խորհուրդը, ապա Ահվազում համայնքի գործերը վարում էր համայնական վարչությունը³: Աբադանում եկեղեցական ու դպրոցական հարցերով զբաղվող հոգաբարձությունն էր հանդես գալիս իբրև հասարակական մարմին⁴: Ռաշտում համայնական խորհրդի գործառույթները կատարում էր Մ. Ա. Հորդանանյան ազգային երկսեռ դպրոցի հոգաբարձությունը⁵: Նույնպիսի իրավունքներով էին օժտված նաև Համադանի, Փեհլիի⁶ և այլ քաղաքների դպրոցական հոգաբարձությունները:

Իրադարձությունների զարգացման ընթացքը հանգեցրեց տրամաբանորեն անխուսափելի իրողության. 1944 թ. սեպտեմբերին ստեղծվեց Թեհրանի թեմը, որն իրանահայ համայնքի ամենաերիտասարդն ամենամեծն է: Ըստ Թեհրանի հայոց թեմի առաջնորդարանի արխիվային փաստաթղթերի՝ դեռևս 1928 թ. որոշվել էր մինչ այդ Իրանահնդկաստանի թեմի մաս կազմող Թեհրանն առանձին թեմ հռչակել⁷: Սակայն ծրագիրը կյանքի կոչվեց ավելի ուշ:

¹ Այլ տվյալով՝ Մեսրոպ (Մագիստրոս) Տեր-Մովսիսյանը պաշտոնավարել է 1922-1931 թթ.: Տե՛ս Բրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Երևան, 2002, էջ 1012:

² Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, էջ 151:

³ Տե՛ս «Պարսկահայ տարեցույց», Առաջին տարի, Թեհրան, Փարոս, 1927, էջ 92:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 69:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 81, 84:

⁷ Տե՛ս <http://www.tehranprelacy.com/index.php/news-events/34-news/57-history>

Ստորև փորձենք հանգամանորեն ներկայացնել բոլոր այն նախադրյալները, որոնք խթան հանդիսացան նոր թեմի կազմավորման համար:

Թեհրանի հայ ազգաբնակչության թվական աճը (համաձայն պետական վիճակագրության՝ մինչև նոր թեմի ստեղծումը Թեհրանում ապրում էր մոտավորապես 25 հազար հայ), ըստ կանոնադրության, իրավունք էր տալիս Թեհրանի հայ հասարակությանը ստեղծել իր առանձին թեմը: Այնտեղ էին գտնվում մեջլիսը (պառլամենտը) և երկրի մյուս հաստատությունները: Թեհրանում էր որոշվում Իրանի¹ փոքրամասնություն կազմող ազգերին վերաբերող բոլոր իրավական հարցերն ու խնդիրները²:

Իրանահայերի հասարակական ու մշակութային հիմնական ներուժի՝ Թեհրանում կենտրոնանալը ևս կարևոր նախադրյալ էր Թեհրանի թեմի ստեղծման համար: Ճիշտ է, թեմի ստեղծումը պաշտոնապես հապաղեց, բայց հարկ է նշել, որ Թեհրանն արդեն իսկ խիստ կարևոր դեր էր խաղում համայնքի կյանքում: Այն ուներ իր մարմինները՝ ընդհանուր ժողով, համայնական վարչություն³ (ազգային խորհուրդ) և վերստուգիչ հանձնաժողով, որոնք կատարում էին թեմական մարմիններին բնորոշ գործառույթներ⁴:

1926 թ. տեղի ունեցավ Թեհրանի ինքնավարության մարմինների ընտրությունը: Երկու տարով ընտրվեցին հետևյալ երեք մարմինները՝ ներկայացուցչական մարմինը՝ բաղկացած 12 անդամից, համայնական վարչությունը՝ 7 անդամից և հոգաբարձությունը՝ կազմված 5 հիմնական և 2 փոխարինող անդամներից⁵:

1940-ական թվականների սկզբներին Հայ հեղափոխական դաշնակցության ղեկավար գործիչները փորձեցին Թեհրանում ստեղծել թեմական խորհուրդ, սակայն Էջմիածինը չճանաչեց այն⁶: Սակայն այդ փաստը ինքնին վկայում էր նոր թեմի ստեղծման անհրաժեշտության մասին, ուստի Թեհրանի թեմի ստեղծման նախաձեռնությունն այս անգամ իր վրա վերցրեց Ս. Էջմիածինը: Այդ նպատակով Ամենայն հայոց հայրապետության ազգընտիր տեղակալի պատվիրակ Աշոտ Աբրահամյանն ուղարկվեց Իրան: Զբաղվելով հարցի ուսումնասիրությամբ՝ պատվիրակն իր հերթին դրական գնահատեց Թեհրանն ու շրջակայքն Իրանահնդկաստանի թեմից զատելու և ինքնուրույն թեմ ստեղծելու իրողությունը⁷:

¹ 1935 թվականից երկիրը պաշտոնապես կոչվեց Իրան:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 409, ց. 1, գ. 4197, թ. 2 շրջ.-3:

³ Գործադիր մարմին հանդիսացող համայնական վարչությունն ուներ դեռևս 1912 թ. ընդունված իր կանոնադրությունը:

⁴ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրությունը, էջ 173:

⁵ Տե՛ս «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 112-113:

⁶ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 173:

⁷ Տե՛ս «Վերածնունդ», 12 նոյեմբերի 1944, թիվ 251 (1093):

Էջմիածինը, ընդառաջելով Թեհրանի հայության բուռն ցանկությանը, պատվիրակի միջոցով նոր թեմի ստեղծմանը տվեց իր հավանությունը: Այդ նպատակով կազմվեց Թեհրանի թեմի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներն իրականացնող հանձնաժողով, որի կազմի ու գործունեության մասին պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում հայ մամուլը¹: Հանձնաժողովի առաջնային աշխատանքն առաջնորդարանի կառուցումն էր: Այդ գործի իրականացման համար անհրաժեշտ նյութական միջոցներ հայթայթելու նպատակով հանձնաժողովը 1944 թ. հունիսի 5-ի իր նիստում որոշեց ձեռնարկել ընդհանուր հանգանակություն²:

Հանձնաժողովը, հավատարիմ մնալով հայ եկեղեցու կանոնական հիմունքներին, մշակեց Թեհրանի նորաստեղծ թեմի կանոնադրության նախագիծը³: Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այն հաստատեց 1945 թ. սկզբին: Սակայն թեմական կանոնադրությունն ուժի մեջ մտավ որպես ժամանակավոր կանոնադրություն, քանզի Էջմիածնում այդ ժամանակ նախապատրաստվում էր հայ եկեղեցու նոր կանոնադրության նախագիծ⁴:

Թեհրանի թեմի պաշտոնական հռչակումից հետո 1945 թ. հունվարին Ս. Էջմիածինը որպես թեմական առաջնորդ Թեհրան ուղարկեց Վահան ծայրագույն վարդապետ Կոստանյանին, որը, սակայն, պաշտոնավարեց մինչև հունիս և փոխադրվեց Նոր Զուղա՝ որպես Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ: Հատկանշական է, որ 1945 թ. հուլիսի 1-ին Վահան ծայրագույն վարդապետ Կոստանյանը ձեռնադրվեց Էպիսկոպոս⁵: Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նրան փոխարինեց Ռուբեն Դրամբյանը (1945-1948 թթ.):

Նկատի ունենալով այն փաստը, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Իրանի իշխանությունները չէին հաստատում թեմակալների պաշտոնում Էջմիածնի առաջադրած թեկնածությունները⁶, Մեսրոպ Էպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, ինչպես նաև Վ. Կոստանյանին ու Ռ. Դրամբյանին թեմական առաջնորդի պաշտոնում հաստատելը պետք է դիտել բացառություն:

Մեսրոպ Մագիստրոսն Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ դարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ռեզա շահ Փեհլևիի միջև կայացած համաձայնության արդյունքում: Ռեզա շահի կառավարման առաջին տարիներին նման միջոցառումը միանգամայն թույլատրելի էր: Սակայն 1930 թ. հոկտեմ-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Թեհրանի թեմի կազմավորումից երեք տարի հետո միայն կյանքի կոչվեց թեմական խորհուրդը: Վերջինիս և Հայ կանանց եկեղեցասեր միության միջոցներով Ս. Աստվածածին եկեղեցու բակում կառուցվեց փոքրիկ շենք, որը ծառայելու էր որպես առաջնորդարան:

³ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 409, ց. 1, գ. 4200, թ. 1:

⁴ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 174:

⁵ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 465, ց. 4, գ. 1, թ. 30:

⁶ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 175:

բերին եպիսկոպոս Տեր-Մովսիսյանն իր կամքին հակառակ Սպահանից ուղարկվեց Փեհլի¹: Այդ քայլը հետապնդում էր Իրանի սահմաններից նրան վտարելու նպատակ:

Իրանական կառավարության համար արդարացված քայլ էր նաև Էջմիածնի կողմից Իրան ուղարկված Վ. Կոստանյանի և Ռ. Դրամբյանի թեկնածությունների հաստատումը պատմական համապատասխան ժամանակահատվածներում:

Ստորև փորձենք քննության ենթարկել իրանահայերի ընտանեկան և ժառանգական իրավունքների հիմնախնդիրները:

Մինչև 1930-ական թվականներն ազգային փոքրամասնությունների իրավունքները, այդ թվում նաև նրանց ընտանեկան-ժառանգական իրավունքները, Իրանի օրենսդրության մեջ չեն արտացոլվել: Քանի որ հայերի իրավունքներն օրենսդրական կարգով սահմանված չէին, իրանական դատավորները հաճախ հրաժարվում էին քննել նրանց գործերը: Դրանք քննելու դեպքում անգամ Իրանի կրոնական ունեցվածքային իրավունքը հավասար մոտեցում չէր ցուցաբերում մուսուլմանների ու քրիստոնյաների նկատմամբ: Օրինակ՝ քրիստոնյայի վկայությունը մուսուլմանի դեմ անվավեր էր, տուրքերը գանձվում էին ոչ թե մուսուլմանից, այլ քրիստոնյայից և այլն: Այդ իսկ պատճառով քրիստոնյաներն իրանական դատարաններում դատավիճելու հնարավորություն չունեին²:

Դատարանակազմության օրենքի բարեփոխումից հետո³ հայերի, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքներն իրենց արտահայտությունը գտան երկրում գործող օրենսդրության մեջ: 1933 թ. հունիսի 22-ին մեջլիսը հաստատեց ոչ շիաների (սունիներ, քրիստոնյաներ, զրադաշտականներ, հրեաներ և այլն) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրական նախագիծը, համաձայն որի՝ ամուսնության կամ ապահարգանի դեպքում երկրի դատական մարմինները գործը պետք է քննեն ըստ ամուսնու կրոնական պատկանելության, իսկ կտակի կամ ժառանգության դեպքում՝ ըստ հանգուցյալի կրոնական դավանանքի: Որդեգրման հարցը պետք է քննարկվեր որդեգրող հոր կամ մոր կրոնական պատկանելությունից ելնելով⁴:

1935 թ. Իրանի արդարադատության նախարարության առաջարկությամբ հայկական համայնքի թեմական և ազգային մարմինները կազմեցին 74 հոդվածից բաղկացած «Իրանահայության ընտանեկան և ժառանգական օրենքների ժողովածու»: 1937 թ. մայիսի 21-ին այն հաստատվեց Ամենայն

¹ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 409, ց. 1, գ. 4120, թ. 1 շրջ.:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 88, թ. 44:

³ Դատարանակազմության օրենքը հրատարակվել է 1928 թ., իսկ լրացումներն ու փոփոխությունները արվել են 1936 թ.:

⁴ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Իրանահայ գաղութի պատմություն, էջ 152:

Հայոց Կաթողիկոսի կողմից, այնուհետև թարգմանվեց պարսկերեն ու հանձնվեց Իրանի արդարադատության նախարարությանը:

Համայնքի օրենքների ժողովածուն ուղեցույց փաստաթուղթ դարձավ իրանահայերի դատական գործերի քննության համար: Սակայն ժողովածուի երևան գալուց որոշ ժամանակ անց դատական պրակտիկայում մի շարք հակասություններ ի հայտ եկան սույն ժողովածուի և 1933 թ. հունիսի 22-ին ընդունված օրենքի միջև: Երկրի դատարանները հայերի գործերը քննում էին այդ օրենքով սահմանված միայն հինգ դեպքերում՝ ամուսնության, ապահարգանի, կտակի, ժառանգության և որդեգրման: Որոշակի դժվարություններ էին ծագում ընտանեկան-ժառանգական բնույթի այնպիսի հարցերի քննության ժամանակ, որոնք չկային այդ օրենքում, բայց նախատեսված էին համայնքի օրենքների ժողովածուով:

Հարկ է նշել, որ մինչև 1950-ական թվականները, ի տարբերություն արտասահմանի հայկական շատ համայնքների, Իրանի հայկական համայնքի թեմերն ընտանեկան-ժառանգական (հատկապես՝ ամուսնության և ապահարգանի) հարցերի վերաբերյալ տեղական եկեղեցական և ազգային խորհուրդների որոշումները ներկայացնում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառի հաստատմանը: Դա իրանահայերի՝ իրենց մայր հայրենիքի հետ ունեցած դարավոր կապի վկայությունն էր:

Իրանում հայկական ազգային դպրոցների գոյության իրավական երաշխիքը հաստատված էր իրանական շահերի մի շարք ֆարմաններով և փաստաթղթերով: XIX դ. 30-ական թվականներից մինչև 1936 թ. հայկական աշխարհիկ հանրակրթական դպրոցներն օգտվում էին ներքին ինքնավարության իրավունքից, որն արտահայտվում էր հետևյալում՝ հայկական դպրոցներն առաջնորդվում էին սեփական ուսումնական ծրագրերով, իսկ ուսուցման հիմնական լեզուն հայերենն էր: Դպրոցները կառուցվում ու պահպանվում էին ծխականների միջոցներով և համայնքի սեփականությունն էին՝ ի դեմս տեղական թեմական մարմինների: Դպրոցները ղեկավարվում էին թեմական կամ համայնական խորհուրդների ընտրած հոգաբարձությունների կողմից:

Իրանի սահմանադրությամբ երաշխավորվում էր ազգային դպրոցների գոյությունը, թեև՝ սահմանափակ ձևով: Այսպես՝ «Իրանի Հիմնական օրենքի լրացումների» 19-րդ հոդվածում նշվում էր ժողովրդական միջոցներով դպրոցներ հիմնադրելու մասին¹: Սակայն 1936 թ. Ռեզա շահի իրագործած պետության «իրանացման» քաղաքականության հետևանքով ինչպես հայկական, այնպես էլ ազգային այլ փոքրամասնությունների դպրոցները կառավարության կարգադրությամբ փակվեցին: Հայերին ըստ կրոնական մերձավորության հատկանիշի «իրանացնելու» համար հիմքեր չունենալով (դա

¹ St u Конституции государств Ближнего и Среднего Востока, М., 1956, с. 189:

կիրառվեց աղբբեջանցիների, քրդերի, արաբների և մուսուլման այլ ազգերի նկատմամբ՝ երկրի իշխանություններն ընտրեցին համայնքն ազգային դպրոցներ ունենալու իրավունքից զրկելու ուղին:

1941 թ. Ռեզա շահը հրաժարվեց գահից՝ հօգուտ որդու՝ Մոհամմադ Ռեզա Փեհլևիի: Ազգային դպրոցների վերաբացման հնարավորություն ստեղծվեց:

Դպրոցների վերաբացման պատճառը երկրում ստեղծված դրական տեղաշարժերն էին, որոնց ճնշման ներքո կառավարությունը հարկադրված էր վերացնել ազգային դպրոցների արգելքը: Սակայն հայկական դպրոցների վերականգնումը ձևականորեն իրականացվեց Թավրիզի թեմակալ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի՝ Իրանի նոր շահին հղած միջնորդության շնորհիվ:

1941 թ. նոյեմբերի 7-ին կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին հղած նամակում Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանն այդ առիթով գրում է. «Ազգի ներկայացուցիչների հետ միասին այցելեցինք վարչապետին, ներքին գործոց նախարարին, կրթական նախարարին և ապա ներկայացանք թագավորին... Հրամայեցին դպրոցները յետ տալ և նախկին ձևով հայերեն, կրօն և (այլ – Ա. Հ.) առարկաներ դասավանդել պարսկերենի հետ գուզընթաց»¹:

Պատմական գրականության մեջ Իրանում հայկական դպրոցների վերաբացման սկիզբը տրված է տարբեր թվականներով²: Ըստ երևույթին պատճառն այն էր, որ ազգային դպրոցների վրա դրված արգելքը հանելուց հետո ոչ բոլոր հայկական դպրոցները կարողացան անմիջապես մտնել բնականոն հունի մեջ: Թեհրանի դպրոցներին դա հաջողվեց 1941-1944 թթ., Աբադանի Ադաբ դպրոցն իր գործունեությունը վերսկսեց 1943 թ., Թավրիզի Արամյան դպրոցը՝ 1944 թ. և այլն³:

Վերականգնելով իրանահայ համայնքի իրավունքներն ազգային դպրոցների նկատմամբ՝ Իրանի կառավարությունը միաժամանակ դպրոցներում պարտադիր կարգով մտցրեց Իրանի լուսավորության նախարարության տարրական դպրոցների ծրագիրը, ըստ որի՝ հայկական դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն դարձավ պարսկերենը: Այլ կերպ ասած՝ հայկական դպրոցները «հայկական» էին միայն աշակերտների կազմով, իսկ տնօրենները և ուսուցիչների մեծ մասը պարսիկներ էին⁴: Հայկական դպրոց-

¹ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4183, թ. 5 շրջ.:

² Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 252, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 451, **Բայբուրդյան Վ.**, նշվ. աշխ., էջ 89 և այլն: Միայն 1943 թ. թույլատրվեց վերաբացել հայկական դպրոցները: Տե՛ս **Փահլևանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 110 և այլն:

³ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Իրանի հայկական դպրոցները // «ԼՀԳ», 1966, թիվ 10, էջ 72:

⁴ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, նշվ. աշխ., էջեր 89-90:

ներում ծրագրից դուրս թույլատրված էր միայն հայոց լեզվի և կրոնի ուսուցումը: Այդ երկու առարկաները դասվեցին ոչ պարտադիր առարկաների շարքը:

Փաստորեն, Ներսես Մելիք-Թանգյանին տված հավաստիացումներն ու խոստումները՝ պարսկերենի հետ զուգահեռ՝ հայոց լեզու, կրոն և այլ առարկաներ դասավանդելու թույլտվության վերաբերյալ, չէին համապատասխանում իրականությանը. թույլատրվում էր դասավանդել միմիայն հայոց լեզու ու կրոն, այն էլ՝ ուսումնական ծրագրից դուրս:

Իրանի հայ ազգաբնակչությունն իրանական մեջլիսում երկու պատգամավոր ունենալու իրավունք էր ստացել¹: Հայերի, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների պատգամավորների գործունեությունը, ի տարբերություն մեջլիսի մյուս պատգամավորների, սահմանափակված էր համայնքին վերաբերող հարցերի շրջանակով: Մյուս հարցերում հայ պատգամավորների դերն իրանական մեջլիսում ձևական բնույթ էր կրում: 1922 թ. չորրորդ գումարման մեջլիսում իրանահայերը հյուսիսային և հարավային շրջաններից ընտրեցին մեկական պատգամավոր²:

Հատկանշական է, որ 1927 թ. հարավային շրջանի իրանահայերի կողմից մեջլիսի պատգամավոր ընտրվեց Հովհաննես խան Մասեհյանը³: Սակայն նրա պաշտոնավարության ժամկետը կարճ տևեց. նույն թվականին Ռեզա շահ Փեհլևի կողմից Հովհաննես խան Մասեհյանը նշանակվեց Անգլիայում Իրանի դեսպան:

Մասեհյանի առաջարկով մեջլիսն ընդունեց օրինագծեր՝ պետական արժույթի և ազգային փոքրամասնությունների կենցաղային-մշակութային ինքնավար իրավունքների մասին, ինչպես նաև՝ այլ օրինագծեր⁴:

Չնայած մեջլիսում հայերի ներկայացուցչության ձևական բնույթին՝ այդ իրավունքը նրանց որոշ հնարավորություն էր ընձեռում անհրաժեշտության դեպքում իրենց շահերը այնտեղ պաշտպանելու: Օրինակ՝ հայերի պատգամավորներն օգտվում էին հայ բնակչության դիմումներն ու բողոքները քննարկելու, պետական ու վարչական մարմինների առաջ միջնորդելու,

¹ Մեջլիսում հայերի երկու պատգամավոր ունենալու հարցը քննարկվել էր դեռևս առաջին գումարման մեջլիսում, նորից արծարծվել ընտրական օրենքի մշակման ընթացքում, ապա երկրորդ գումարման մեջլիսում: 1909 թ. երկրորդ գումարման մեջլիսի ընդունած ընտրական իրավունքի համապատասխան հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր 50 հազար հոգուց ընտրվում էր մեկ պատգամավոր: Չնայած ընտրական իրավունքն ընդունելու տարում Իրանի հայ ազգաբնակչության թվական տվյալն իրավունք էր տալիս մեջլիսում երկու պատգամավոր ունենալ, այդ օրինական իրավունքն անտեսվեց: Միայն 1915 թ. այն վերանայվեց, և իրանահայերը մեջլիսում երկրորդ պատգամավորն ունենալու իրավունք ստացան:

² Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրությունը, էջ 179:

³ Տե՛ս «Ալիք», 3 դեկտեմբերի 1931, թիվ 31:

⁴ Տե՛ս «Վերածնունդ», 28 մարտի 1932, թիվ 7 (96):

համայնքի օրենքները երկրի օրենքների հետ համապատասխանեցնելու նախաձեռնության և այլ իրավունքներից: Համայնքի թեմական մարմինները երկրի նախարարությունների, գերատեսչությունների և շահական պալատի հետ հաղորդակցվում էին այդ պատգամավորների միջոցով:

Երկրում գոյություն ունեցող տարբեր ցենզերի (գրագիտություն, նստակեցություն, ունեցվածք և այլն) պատճառով իրանահայ աշխատավորների մեծ մասը զրկված էր մեջլիսի պատգամավորների ընտրություններին մասնակցելու իրավունքից: Դրա իրավունքն ունեին միայն 20 տարին լրացած, տվյալ ընտրատարածքում վեց ամսից ոչ պակաս բնակվող և հարկերը վճարած քաղաքացիները: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ, ի տարբերություն երկրի հիմնական մուսուլման բնակչության, հայ կանայք միշտ օգտվել են ընտրական իրավունքից¹:

Անդրադառնալով իրանահայ համայնքի իրավական կարգավիճակին՝ հարկ է անպայման նկատի ունենալ իրանական օրենսդրության առանձնահատկությունը, որն իրավական երաշխիքների հետ մեկտեղ իրանահայերի իրավունքների որոշակի սահմանափակումներ էր հարուցում: Եթե «Իրանի Հիմնական օրենքի լրացումների» 8-րդ հոդվածը բոլոր իրանցիներին, առանց սեռի ու դավանանքի խտրականության, օրենքի առաջ հավասար էր համարում, ապա 58-րդ հոդվածում նշվում էր. «Ոչ ոք չի կարող նշանակվել նախարար, եթե չի հանդիսանում մուսուլման, ծագումով իրանցի կամ իրանահպատակ»²:

Իսկ «Իրանի Հիմնական օրենքի լրացումների» 20-րդ և 21-րդ հոդվածներն իրանահայերին զգալի չափով զրկում էին միությունների, ժողովների և մամուլի ազատությունը երաշխավորող իրավունքներից³: 1920-1930-ական թվականներին հայկական գրեթե բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները զրկվեցին ազատ գործելու հնարավորությունից:

Նշելով բոլոր այս սահմանափակումները՝ չենք կարող դրանցում ազգային բնույթից զատ՝ չնկատել քաղաքական տարրեր: Անշուշտ, Իրանի օրենսդրությունը հետապնդում էր ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ իրանահայերի քաղաքական զարգացումը խաթարող նպատակ:

Հայտնի իրողություն է, որ Ռեզա շահի կառավարման շրջանը նշանավորվեց բարեփոխումների քաղաքականությամբ: Սակայն Ռեզա շահի՝ իշխող դասակարգի շահերը շոշափող բարեփոխումների անցկացման եղանակը մի շարք դեպքերում հակաժողովրդական բնույթ էր կրում: Այդ բարեփոխումների քաղաքականության հետևանքով փակվեցին հայկական դպրոցները, մի շարք կազմակերպություններ դադարեցրին իրենց գործունեու-

¹ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 180:

² Տե՛ս Конституции государств Ближнего и Среднего Востока, с. 188, 194.

³ Տե՛ս նույն տեղում, էջեր 189-190:

թյունը, հայկական մի շարք թերթերի ու ամսագրերի լույսընծայումն արգելվեց:

1941 թվականից հետո ռեգաշահյան քաղաքականության հետևանքները զգալի չափով վերացվեցին. վերաբացվեցին հայկական դպրոցները, տարբեր կազմակերպություններ վերականգնեցին իրենց գործունեությունը, լույս ընծայվեցին մի շարք նոր թերթեր և պարբերականներ:

**Астхик Акопян – *Органы самоуправления и правовой статус
Иранской армянской общины за 1921-1945 годы***

Основой правового статуса Иранской армянской общины является религиозно-церковное самоуправление в лице существующих епархий. Иранская армянская община имела свои органы самоуправления. Правовой статус общины укреплялся Шахскими манифестами и другими документами. В разные исторические периоды, исходя из внешнего и внутреннего положения страны, иранские власти считались с органами самоуправления армянской общины, отзывались на их ходатайства и прошения. Этим и признавалось фактическое существование общины.

Политика иранских шахов по отношению к общине всегда исходила из интересов руководящих кругов страны и была переменной, в соответствии с внутренним и внешним положением страны. В связи с этим, правовой статус иранской армянской общины не всегда был устойчивым.

Все эти события освещены в этой статье, охватывая период с 1921 по 1945 годы.

**Astghik Hakobyan – *Autonomous Bodies and Legal Status of Iranian-Armenian
Community (1921-1945s)***

The base of the legal status of the Iranian-Armenian community was the religious-ecclesiastical autonomy due to the resisting perishes. Iranian-Armenian community had its own autonomous bodies. The legal state of the community was strengthened with series of Shah rescripts and other documents. Based on the country's internal and external situation Iranian authorities reckoned with autonomous bodies of the community, responding to their issues and motions in different historical periods. Thereby was stated de facto existence of this community.

The policy of benefits of Iranian community was always appropriate with the benefits of the ruling circles of the country and changed appropriately with the internal and external situation.

For that reason, the legal status of the Iranian-Armenian community was not always steady. The coverage of this reality including the period of 1921-1945 found place in this article.

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻՑ (1950-1970-ական թթ.)

Բանալի բառեր – Բուլղարիա, ազգային փոքրամասնություն, արտագաղթ, սփյուռք, բուլղարահայ, ԱՆՉԱ, ԱՄՆ, հայ համայնք

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Բուլղարիայում տեղի ունեցան քաղաքական ու տնտեսական արմատական փոփոխություններ, որոնք անմիջականորեն ազդեցին նաև այստեղ բնակվող հայության վրա: Կոմունիստական համակարգի հաստատումը բացասական նշանակություն ունեցավ հայ համայնքի կենսագործունեության վրա, որի հետևանքով նրա մի շարք կառույցներ դադարեցին լիարժեքորեն կամ առհասարակ գործել: Դա հանգեցրեց հազարավոր հայերի արտագաղթին՝ սկզբնական շրջանում առավելաբար դեպի Հարավային Ամերիկա, իսկ 1950-ական թթ. վերջից՝ ԱՄՆ, ուր տեղափոխվեց Բուլղարիան լքող հայության հիմնական մասը:

1944-1946 թթ. Բուլղարիայում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ կան իրարամերժ տվյալներ՝ 20 հազարից¹ մինչև 35 հազար²: Ընդ որում, 35 հազար թիվը հավաստող սկզբնաղբյուրները մոտավոր են նույնիսկ տեղաբաշխման տվյալներում³: Այսպես, ըստ ՀԽՍՀ արտգործժողկոմատի քաղաքական ինֆորմացիայի բաժնի 1945 թ. տեղեկանքի՝ Բուլղարիայի հայերի թիվը հասնում էր 35 հազարի, որից 9 հազարը Պլովդիվում էր, 5 հազարը՝ Վառնայում, 4 հազարը՝ Սոֆիայում, 4 հազարը՝ Բուրգասում, 4 հազարը՝

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 10, թ. 1:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 89, թ. 22, նույն տեղում, ֆ. 709, ց. 1, գ. 20, թ. 5, նույն տեղում, գ. 51, թ. 26, նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 82, թ. 6: 1946 թ. Բուլղարիայից հայրենադարձվեցին 4383 հոգի, տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 241:

³ Ըստ որոշ տվյալների՝ Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին Բուլղարիայի հայ համայնքը բաղկացած էր 25-27 հազար հոգուց, սակայն պատերազմի ժամանակ Ռումինիայի առանձին տարածքներ միացվեցին Բուլղարիային, Հունաստանի հայերի մի մասը եկավ Բուլղարիա, որի շնորհիվ համայնքը կրկին ստվարացավ՝ հասնելով 32-35 հազարի (տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 35): 1940 թ. Պազարջիկը, ինչպես նաև Սիլիստրան, անցան Բուլղարիայի իշխանության տակ, որից հետո տեղի հայերի մի մասը տեղափոխվեց Ռումինիա: Պազարջիկի հայերի մի մասը 1946 թ. հայրենադարձվեց, իսկ մնացածների զգալի մասը տեղափոխվեց Սոֆիա և Վառնա: 1979 թ. այստեղ ապրում էր 40-50 հայ ընտանիք: Եթե 1954 թ. այստեղի դպրոցում կար ընդամենը 17 աշակերտ, ապա վեց տարի անց արդեն այն դադարել էր գործել (տե՛ս **Գալիպզեան Յ.**, Ռումանահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 30-31, 153):

Ռուսներ, 2 հազարը՝ Շումներ, 2 հազարը՝ Սլիվներ, 2 հազարը՝ Հասկովցիներ, 2 հազարը՝ Յամբուր, 500-ը՝ Հարմանլի, 500-ը՝ Կիրջալի, և շուրջ 1000-ը՝ գյուղական բնակավայրերում¹:

Մինչդեռ, ըստ 1945 թ. Բուլղարիայի հայկական ազգային փոքրամասնության ժամանակավոր կոմիտեի անցկացրած մարդահամարի, այստեղ կային 25-26 հազար հայեր, որոնցից շուրջ 4 հազարը՝ Սոֆիայում, 6825-ը՝ Պլովդիվում, 3477-ը՝ Վառնայում, 1627-ը՝ Բուրգասում, 972-ը՝ Հասկովցում, 784-ը՝ Շումներ, 783-ը՝ Սլիվներ և այլն: Զբաղվածության առումով, ըստ նույն սկզբնաղբյուրի, 4373 հայեր արհեստավորներ էին, 2847-ը՝ բանվորներ (հիմնականում մանածագործական արդյունաբերության, նաև շինարարության և այլ ոլորտներում), 1042-ը՝ առևտրականներ, 280-ը՝ գյուղատնտեսության ոլորտի աշխատողներ, 315-ը՝ բժիշկներ, փաստաբաններ և այլն²: 20 հազար հայերից (չհաշված Սոֆիան) մոտ 14 հազարը բուլղարահպատակ էր, իսկ 6 հազարը նանսենյան անձնագիր ուներ³:

Հայերի դրությունը Բուլղարիայում էապես փոխվեց 1946 թ., երբ երկրում հաստատվեց ամբողջատիրական վարչակարգ: Չնայած սկզբում Սո. Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցի ստեղծմանը՝ աստիճանաբար ազգային ճնշումները սաստկացան: Կասեցվեց հայկական կառույցների գործունեությունը, ստեղծվեց միակ թույլատրված «Երևան» միությունը, որին 1953 թ. ի վեր իշխանությունները արգելեցին զբաղվել համայնքի վարչատնտեսական և կրթական հարցերով՝ դրանք դարձնելով պետության մենաշնորհը: Դպրոցներն անցան պետության ենթակայության տակ և սկսեցին ղեկավարվել միասնական պետական ծրագրով, իսկ «Երևան» կազմակերպությունը վերափոխվեց «Երևան-մշակութային միության»: Պահպանվեց եկեղեցական թեմը, որը, սակայն, կարող էր զբաղվել միայն հոգևոր գործերով⁴:

Կոմունիստական վարչակարգի հաստատումը ոչ միայն կանխորոշեց տեղի հայերի զգալի մասի գաղթը, այլև ընդհանրապես անհնարին դարձրեց էթնիկ փոքրամասնությունների բնականոն ազգամշակութային գործունեությունը⁵: Սկսվեց իրականացվել ոչ միայն հայերի, այլև թուրքերի, հրեաների և ուրիշ ազգային փոքրամասնությունների ձուլման քաղաքականություն⁶: Արդյունքում վերջիններս ևս դիմեցին արտագաղթի: Միայն 1949-1951 թթ.

¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 326, ց. 1, գ. 55, թ. 3:

² Տե՛ս նույն տեղում, գ. 83, թ. 3-4:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 6:

⁴ Տե՛ս **Դավաթյան Կ.**, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 248:

⁵ Տե՛ս **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 495:

⁶ Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 35:

շուրջ 150 հազար թուրքեր տեղափոխվեցին Թուրքիա, դա շարունակվեց նաև 1960-1970-ական թթ.: 1940-ական թթ. վերջում և 1950-ական թթ. սկզբում շուրջ 32 հազար հրեաներ տեղափոխվեցին Իսրայել, մոտ 4 հազար չեխներ ու սլովակներ և 5 հազար ռուսներ ևս լքեցին Բուլղարիան¹: Ընդհանուր առմամբ 1946-1955 թթ. Բուլղարիան լքեց ավելի քան 200 հազար մարդ: Գաղթողների թիվն էապես նվազեց 1956-1965 (հատկապես 1961-1965 թթ.) և կրկին աճեց 1966-1980 թթ.²:

Հետաքրքրական է 1985-1991 թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Կարլեն Դավաթյանի նկատառումը. Բուլղարիայի օրինակով դիտելի է մի օրինաչափություն, որն առանց բացառության գործել է սոցիալիստական վարչակարգ հռչակած բոլոր երկրներում՝ ԽՍՀՄ-ում, Արևելյան Եվրոպայի պետություններում, նույնիսկ Սիրիայում, Եթովպիայում և այլուր: Իր ազգային պետության տարածքից դուրս գտնվող ազգաբնակչությունը, ուրիշ «սոցիալիստական» համակարգում կազմելով ազգային փոքրամասնություն, ենթակա էր արագ ուժացման: Հարկադիր ասիմիլյացիան պետական քաղաքականության մակարդակի էր բարձրացված, և առաջին հարվածը ուղղվում էր փոքրամասնության կրթական համակարգին³:

Բուլղարահայության գաղթը բացատրվում էր վերոնշյալ քաղաքական հանգամանքով, որին զումարվում էր տնտեսական ծանր դրությունը⁴: Արտագաղթի պատճառներից կարելի է առանձնացնել դաշնակցականների նկատմամբ բռնաճնշումները, դրանք ՀՅԴ համակիրներից և անկուսակցականներից շատերին մղում էին գաղթելու դեպի «ազատ աշխարհ»: Կարևոր էր նաև հեռանկարի և ապագայի խնդիրը, որը շատերը ցանկանում էին տեսնել ժողովրդավարական երկրներում⁵:

Խորհրդահայ պատմագրությունը, սակայն, անտեսում էր Բուլղարիայում կոմունիստական կարգերի հաստատման բացասական նշանակությունը հայկական համայնքի համար, ընդհակառակը՝ համարում էր, որ դա նպաստել է վերջիններիս զարգացմանը: Այսպես՝ Զ. Ղասաբյանը գրում է. «Բուլղարահայ գաղութի համար ստեղծվեցին բոլոր հնարավորություններն աննախընթաց զարգացման համար»⁶: ՌԱԿ առաջնորդներից Անդրանիկ Անդրեասյանը համերաշխում է այս տեսակետին՝ Բուլղարիայի և Ռումի-

¹ Տե՛ս **Mintchev V.**, External Migration and External Migration Policies in Bulgaria // South-East Europe Review for Labour and Social Affairs, 1999, n° 3, p. 126:

² Տե՛ս **Markova E.**, Optimising migration effects: A perspective from Bulgaria // A Continent Moving West? EU Enlargement and Labour Migration from Central and Eastern Europe, edited by R. Black, G. Engbersen, M. Okólski, C. Panfıru, Amsterdam, 2010, p. 211:

³ Տե՛ս **Դավաթյան Կ.**, նշվ. աշխ., էջ 249:

⁴ Տե՛ս «Հայրենիք», 1951, թիվ 1, էջ 96: Տե՛ս նաև «Հայրենիք» լրագիրը՝ 6.X.1971, էջ 3:

⁵ Տե՛ս «Հայրենիք», 17.I.1985, էջ 2:

⁶ **Ղասաբյան Զ.**, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1978, էջ 81:

նիայի հայ համայնքների մասին գրելով. «Ամենէն բարեբախտ պայմաններով նպաստուած համայնքներն են բովանդակ սփիւռքի մէջ: Որովհետեւ անոնք ամբողջապէս ապահով են հիւրընկալ իշխանութեանց կողմէ ճնշումի եւ հալածանքի որեւէ վտանգէ, իբրեւ «համայնավար գործակալ» կամ «ծպտուած ուղեկից» զրպարտութեան դէմ»¹: Եվ անհայտ է մնում, թե ինչու չօգտվելով այս աննախադեպ հնարավորություններից՝ բազմաթիվ բուլղարահայեր ընտրեցին գաղթի ճանապարհը:

1950-ական թթ. սկզբից բուլղարահայերը սկսեցին արտագաղթել՝ սկզբնական շրջանում առավելաբար Հարավային Ամերիկա: Միայն 1952-1953 թթ. Բուլղարիայից և Ռումինիայից Արգենտինա տեղափոխվեցին շուրջ հազար հայեր²: 1950-ական թթ. որոշ թվով բուլղարահայեր փոխադրվեցին Վենեսուելա³:

Ծանր կացության մեջ հայտնված բուլղարահայերի՝ դեպի այլ, ավելի բարենպաստ երկրներ տեղափոխման խնդիրը 1950-ական թթ. կեսերից ստանձնեց ԱՆՀԱ-ն (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians), որին այս խնդրում ամեն կերպ սատարում էր ՀՅԴ-ն⁴:

1956 թ. վերջից բուլղարահայերը, ելքի վիզա ստանալով, սկսեցին մեկնել Լիբանան: Ինչպէս և Ռումինիայում իշխանությունների կողմից դրա թույլատրման համար ընդունելի տարբերակը ընտանիքի միավորման պատճառն էր⁵, իսկ որոշ դեպքերում բուլղարահայերն ու ռումինահայերը Լիբանան էին գնում զբոսաշրջիկի կարգավիճակով⁶: Մեկնելու ցանկություն ունեցողները հաճախ մերժվում էին, բուլղարահայերը չունեին ազատ տեղաշարժի հնարավորություն, հակառակ պարագայում արտագաղթը էապէս ավելի մեծ ծավալներ կստանար:

Նորեկները ժամանում էին Բեյրութ՝ իրենց հետ չունենալով զրեթե ոչինչ, ուստի ապավինում էին հարազատների, իսկ նրանց բացակայության պարագայում՝ տեղի հայ համայնքի օգնությանը, որն աջակցում էր նրանց աշխատանք գտնելու հարցում: Բեյրութը գաղթողների համար տարանցիկ կետ էր դեպի մշտական բնակության նոր վայր ճանապարհին, որի նախընտրելի տարբերակը ԱՄՆ-ն էր⁷: Այնուամենայնիվ, բուլղարահայերի և ռումինահայերի մի մասը մնում էր Լիբանանում, ինչը (այլ մերձակա գաղութներից

¹ Անդրէասեան Ա., Սփիւռքը եւ հայրենիքը (Տպաւորութիւններ եւ դատումներ), Պէյրութ, 1962, էջ 44-46:

² Տէ՛ւ «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 100:

³ Տէ՛ւ Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 282:

⁴ Տէ՛ւ «Ազդակ», 23.VIII.1969, էջ 3:

⁵ Տէ՛ւ Zadoian H., Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), New York, 2012, p. 67:

⁶ Տէ՛ւ «Արարատ», 23.VIII.1969, էջ 2:

⁷ Տէ՛ւ Zadoian H., նշվ. աշխ., էջ 68:

ներհոսքի հետ միասին), ըստ Ս. Վարժապետյանի, կարևոր նշանակություն էր ունենում այստեղից արտագաղթին հակակշռելու առումով¹:

1957 թ. ԱՆՉԱ-ի փոխնախագահ Սուրեն Սարոյանը, գալով Բեյրութ, հանդիպեց փախստականների հետ և մշակեց մի ընթացակարգ, որը հետագայում պիտի ծառայեր տասնյակ հազարավոր գաղթողներին: Փախստականի կարգավիճակ ունեցող բուլղարահայերի ու ռումինահայերի՝ Լիբանանից ԱՄՆ ճանապարհածախսը հաճախ օգնում էին հոգալ մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք էին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Համաշխարհային եկեղեցական ծառայությունը, Եվրոպական միգրացիայի միջկառավարական կոմիտեն և այլն: Նրանց հետ բոլոր պայմանավորվածությունները իրականացնում էր ԱՆՉԱ-ն: Նորեկներին անհրաժեշտ էր ԱՄՆ-ում ունենալ երաշխավորներ, մինչդեռ քչերն այնտեղ ազգականներ կամ ընկերներ ունեին, ուստի այդ գործն էլ բաժին էր հասնում ԱՆՉԱ-ին և նրա կամավորներին: Սկսած 1973 թ.՝ Բուլղարիայից և Ռումինիայից ԱՄՆ հայերը սկսեցին տեղափոխվել ոչ միայն Բեյրութով, այլև Իտալիայով, որի պարագայում նրանց օժանդակում էր նաև «Տոլստոյ» հիմնադրամը²:

Ըստ «Զարթոնք» թերթի՝ Բուլղարիայից և Ռումինիայից արտագաղթը օրինակ էր ծառայում Մերձավոր Արևելքի գաղութների համար. «Շարժումը, որ սկսած էր Պուլկարիայեն եւ Ռումանիայեն, վարակեց վերջին տարիներուն արաբական կարգ մը երկիրներ եւս, ինչպէս Եգիպտոս, Սուրիա, ապա Լիբանան»³: Իսկ «Ազդակ» թերթը մեղադրում էր ՀԽՍՀ-ին անգործության մեջ. «Պեյրութի Անչան կարելիութեան սահմաններուն մէջ օգնեց Ռումանիայեն ու Պուլկարիայեն ձերբագատելու համար անհուն զոհողութիւններ ստանձնող հայրենակիցներու տեղափոխութեան և ազատ երկիրներ հաստատուելուն: Համայնավար վարչաձեւի ենթակայ այդ երկիրներու հայերը ինչո՞ւ կուզէին դուրս գալ այնքան տարիներու իրենց երկրորդ հայրենիքէն: Ինչո՞ւ Հայաստանի կառավարութիւնը տէր չդարձաւ անոնց»⁴:

Ելնելով այս վիճակից՝ 1965 թ. բուլղարահայ Հովհաննես Աճեմյանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանին առաջարկում էր առաջին հերթին Բուլղարիայից ու Ռումինիայից կազմակերպել հայրենադարձություն. «Անբնական է մանաւանդ, որ ներգաղթի համար փակին դռները մեր առջև, երբ մենք հոս ազգային տեսակետէ դիմանալու այլևս կռուաններ չունենք, մինչ ամէն օժանդակութիւն կ'ընձեռնուի ձուլման վտանգի անմիջական ենթակայ չեղող

¹ Տե՛ս «Արարատ», 20.III.1971, էջ 3:

² Տե՛ս **Zadoian H.**, Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), New York, 2012, p. 69-71, 74:

³ «Զարթոնք», 31.VIII.1969, էջ 2:

⁴ «Ազդակ», 19.IX.1972, էջ 4:

գաղութներու հայրենադարձութիւնը ապահովելու: Ինչո՞ւ զարմանալ ուրեմն որ այս պայմաններուն տակ Պուլկարիա և Ռումանիա բնակող մեր ազգակիցները կը հարկադրուին զանգուածօրէն լքել այդ երկիրները և կրկին գաղթականի ցուպը ձեռքներին առած կուղղուին դէպի օտար հորիզոններ (Լիբանան, Ա.Մ.Ն., Քանադա), որպէսզի իրենց ազգային գոյութիւնը, որ հազիւ փրկած էին թրքական բռնակալութեան ճիրաններէն, քիչ ևս քարշ տան...»¹: Մինչդեռ բուլղարահայերի հայրենադարձությունը ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարության նույն թվականի տեղեկանքում համարվում էր աննպատակահարմար²: Սա բացատրվում էր խորհրդահայ ղեկավարության պաշտոնական մոտեցմամբ բուլղարահայ համայնքի հանդեպ, որը համարվում էր Սփյուռքի ամենաբարենպաստներից մեկը: 1962-1982 թթ. Բուլղարիայից հայրենադարձվեց ընդամենը 10 հոգի³: Իրականում, փաստորէն, սա- ուր պատերազմի պայմաններում հազարավոր բուլղարահայեր լքեցին սոցիալիստական ճամբարը՝ նախընտրելով հաստատվել հակառակ բևե- ռում:

Այսպիսով՝ 1950-1970-ական թթ. բուլղարահայերը գաղթեցին Արգենտինա, Վենեսուելա, Կանադա, Ավստրալիա⁴, Արևմտյան Եվրոպայի երկրներ, բայց ամենամեծ թվով՝ ԱՄՆ: Սակավաթիվ բուլղարահայեր տեղափոխվեցին Ավստրիա⁵, Մարոկկո⁶, Նոր Զելանդիա⁷, Շվեդիա, Դանիա և Նորվեգիա⁸: Դժվար է նշել Բուլղարիայից արտագաղթած հայերի հստակ թվաքանակը: Այն ըստ Զ. Ղասաբյանի՝ հասնում էր երկու հազարի⁹, սակայն մեր կարծի- քով՝ արտագաղթածների թիվն իրականում ավելի շատ է եղել:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 5-6:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 2, գ. 101, թ. 1:

³ Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 301:

⁴ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 87, **Tchilingirian H.**, The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism // Armenian International Magazine (AIM), vol. 12, issue 3, April 2001, p. 35:

⁵ Տե՛ս **Գեորգեան Կ.**, Ամենուն տարեգիրքը 1966, ԺԳ. տարի, Պէյրուք, 1966, էջ 393:

⁶ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 391:

⁷ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 325:

⁸ Տե՛ս **Բախչինյան Ա.**, Հայությունը սկանդինավյան երկրներում. Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 208, 215, 220:

⁹ Տե՛ս **Ղասաբյան Զ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), Երևան, 1986, էջ 235:

Արտագաղթի հետևանքները Բուլղարիայի հայ համայնքում

1960-ական թթ. կեսերին, ըստ Բուլղարիայում գործող «Երևան» կազմակերպության Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին տրամադրած տեղեկությունների, Բուլղարիայում բնակվում էին 24 հազար հայեր՝ հետևյալ տեղաբաշխմամբ. Սոֆիա՝ 4500 հոգի, Պլովդիվ՝ 6000, Վառնա՝ 3500, Ռուսե՝ 1900, Բուրգաս՝ 1300, Հասկովո՝ 617, Սլիվեն՝ 428, Շումեն՝ 550, Թուրուխին՝ 390, Յամբոլ՝ 296, Ստարա Ջագորա՝ 250, Պագարջիկ՝ 250, Սիլիստրա՝ 220, Այաոս՝ 106¹, Պլենե՝ 100: Բացի այդ, «Փոքրաթիվ հայ գաղութներ կան ցրված մյուս քաղաքներու մեջ, ինչպես Կազանլըք, Լոմ, Սվիշտով, Հարմանլը, Նովա Ջագորա և այլն և շատ փոքր թիվ մը ցրված գյուղերը»²: Բուլղարիայի դպրոցներում հայոց լեզու սովորող հայ աշակերտների թիվն ըստ նույն աղբյուրի հասնում էր 1138-ի³: Ըստ Բուլղարիայում ԽՍՀՄ դեսպանի 1962 թ. տեղեկանքի՝ այդ երկրում բնակվող հայերի մեծ մասը հենց Բուլղարիայի, շուրջ 100-ը՝ ԽՍՀՄ-ի, իսկ ընդամենը մի քանիսը Թուրքիայի և Իրանի քաղաքացիներ էին⁴:

Բուլղարիայի մի շարք քաղաքներում գործում էին հայկական դպրոցներ. 1960-1961 ուսումնական տարում Բուլղարիայում հայկական ութամյա վարժարաններ էին գործում հետևյալ քաղաքներում՝ Պլովդիվ (582 աշակերտ), Սոֆիա (190 աշակերտ), Ռուսե (300 աշակերտ): Քառամյա վարժարաններ կային Բուրգասում (110 աշակերտ), Սլիվենում (48 աշակերտ), Հասկովոյում (23 աշակերտ), Կոլարովգրադում (22 աշակերտ)⁵: Սակայն 1961 թ. բոլոր դպրոցները, բացի Պլովդիվից, փակվեցին. «1961 թուին հակառակ գաղութիս բուռն բողոքներուն հաշուիյարդարի ենթարկեցին հայ դպրոցները, բացի Փլովտիվի վարժարանէն, որը սակայն լոկ անուանապէս հայկական է, քանի որ հոն բոլոր առարկաները պուլկարերէն լեզուով կը դասաւանդուին: Այս կերպով գաղութիս գոյութիւնը վտանգող ահաւոր հարուած մը ստացանք, որ ամլութեան կը դատապարտէ նոր սերունդը հայ մեծացնելու համար թափուած ջանքերը»⁶:

¹ Ըստ Բուլղարիայից ստացված տեղեկությունների՝ 1966 թ. այս քաղաքում բնակվում էր 30 հայ ընտանիք (տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 308, թ. 33):

² Տե՛ս նույն տեղում, գ. 266, թ. 25:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 30:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 320, թ. 1:

⁵ 1959-1960 թթ. հայկական դպրոցներ ունեին նաև Ստարա-Ջագորա, Պագարջիկ, Տուրուխին և Յամբոլ քաղաքները: Աշակերտների թիվը 20-ից նվազելու պատճառով այդ դպրոցները միացվեցին տեղի բուլղարական դպրոցներին՝ պահպանելով մայրենի լեզվի, Հայաստանի պատմության և աշխարհագրության դասավանդումը (շաբաթական 2-ից 6 ժամ) հայ աշակերտների համար (տե՛ս **Գասպարյան Ս.**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 189):

⁶ ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 3 շրջ.:

Բուլղարիայի հայերի թիվը ըստ տարբեր սկզբնաղբյուրների՝ 1950-1990 թթ. հիմնականում հաշվվում էր 25 հազար՝ երբեմն տատանվելով 15-24 հազարի միջև.

1950 թ.	25 հազ. ¹	1965 թ.	25 հազ. ²	1980 թ.	27 հազ. ³
1955 թ.	21 հազ. ⁴	1966 թ.	25 հազ. ⁵	1984 թ.	25 հազ. ⁶
1956 թ.	24 հազ. ⁷	1967 թ.	23 հազ. ⁸	1985 թ.	25 հազ. ⁹
1960-ական թթ. սկիզբ	25 հազ. ¹⁰	1968 թ.	25 հազ. ¹¹	1980-ական թթ. կեսեր	20 հազ. ¹²
1964 թ.	24 հազ. ¹³	1972 թ.	25 հազ. ¹⁴	1990 թ.	15 հազ. ¹⁵

Սոցիալիստական կարգերի հաստատումից հետո փոխվեց համայնքի զբաղվածությունը: Բուլղարահայ համայնքը գլխավորապես բաղկացած էր բանվորներից և մտավորականներից (արտադրության տարբեր ճյուղերի մասնագետներ, ծառայողներ, բժիշկներ, արվեստագետներ և այլն), միայն աննշան մասն էր զբաղվում հողագործությամբ¹⁶: Եթե նախկինում գերակշիռ մասը զբաղվում էր առևտրով ու արհեստներով, ապա 1980-ական 20 հազար

¹ Տե՛ս «Հայրենիք», 1950, թիվ 6, էջ 109:

² Տե՛ս **Խաթանասեան Ե.**, Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 28: Իսկ այլ աղբյուրի համաձայն՝ 24 հազար, տե՛ս «Հայրենիք», 27.I.1965, էջ 3:

³ Տե՛ս **Համազասպյան Վ.**, Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Երևան, 1980, էջ 19:

⁴ Տե՛ս «Զարթոնք», 30.VI.1955, էջ 2:

⁵ Տե՛ս «Մասիս», 18.XII.1966, էջ 5; **Տեմիրճեան Վ.**, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Անթիլիաս, 1980, էջ 502:

⁶ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 2-3:

⁷ Տե՛ս «Զարթոնք», 9.XII.1956, էջ 2: Նույնը տե՛ս «Արարատ», 13.XII.1956, էջ 2: Ըստ այլ աղբյուրի՝ 25 հազար (տե՛ս «Սովետական Հայաստան», 1956, թիվ 12, էջ 27):

⁸ Տե՛ս «Արարատ», 24.I.1967, էջ 2:

⁹ Տե՛ս **Ոսկանյան Ա.**, Սփյուռքահայության թվական կազմը, «ԼՀԳ», 1985, թիվ 9, էջ 48:

¹⁰ **Խուրշուդյան Լ.**, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, էջ 21:

¹¹ Տե՛ս «Արարատ», 10.IX.1968, էջ 3:

¹² Տե՛ս **Ղասաբյան Զ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), էջ 251:

¹³ Տե՛ս «Զարթոնք», 5.XII.1964, էջ 2; «Սովետական Հայաստան», 1964, թիվ 7, էջ 30:

¹⁴ Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 890: Ըստ ՀԽՍՀ արտգործ մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժնի վարիչի 1975 թ. տեղեկանքի՝ Բուլղարիայում ապրում էին 24 հազար հայեր (տե՛ս ՀԱՍ, ֆ. 326, ց. 1, գ. 573, թ. 1):

¹⁵ Տե՛ս **Ավագյան Գ.**, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1993, էջ 144: Ըստ այլ աղբյուրի՝ 20-22 հազար, տե՛ս «Սփիւռք», 1990, թիվ 11, էջ 11: 2001 թ. դրությամբ Բուլղարիայում մնացել էին 12 հազար հայեր, բայց ընդհանուր հայերի թիվը 40-50 հազար էր, մեծ մասը 1990-ական թթ. Հայաստանից գաղթածներն էին (տե՛ս **Tchilingirian H.**, նշվ. աշխ., էջ 32):

¹⁶ Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 35:

20 հազար հայերից շուրջ 1500-ը ունեին բարձրագույն կրթություն և գիտության ու արդյունաբերության ասպարեզում զրավում էին ակնառու դիրքեր: Ութ հազար հայեր պետական հաստատությունների, գործարանների, արհեստանոցների աշխատողներ էին, 1100-ը՝ բուլղարական կոմունիստական կուսակցության անդամներ¹:

Հ. Աճեմյանը Վ. Համազասպյանին է ներկայացնում բուլղարահայության ծանրագույն վիճակը, որը բուլղարական պետական քաղաքականության հետևանք էր. «Հայ եկեղեցին մասամբ մը հոս չէզոքացուած է և ալ դադրած է ձգողական ուժ մը ներկայացնելէ: ...հայ հանրային հասարակական կազմակերպութիւնները այլևս իրենց գոյութիւնը կորսընցուցած են: Կը մնայ միմիայն «Երևան» մշակութային միութիւնը, որուն գործունէութիւնը սակայն սահմանափակուած է, քանի որ անոր կողքին չէ կարելի ստեղծել նախապէս գոյութիւն ունեցող մարզական և այլ կազմակերպութիւններ, որոնք պիտի կարենային մեր մատաղ սերունդը ներգրաւել ու ազգային-հայրենասիրական զգացումներ զարգացնել իր մէջ»²:

Եթէ ամբողջ Բուլղարիայի հայության թիվը հաճախ ներկայացվում էր մոտավոր հաշվարկներով, ապա 1966-1976 թթ. ըստ բնակավայրերի թվաքանակի փոփոխությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ ընկալել արտագաղթը, ինչին, սակայն, խանգարում են ներքոշարադրյալ որոշ բնակավայրերի պարագայում կիրառված հնացած տվյալները և մոտավոր գնահատականները.

	1966 ³	1971 ⁴	1976 ⁵
Պլովդիվ	6000	5000	5500
Սոֆիա	4000	4000	4000
Վառնա	3500	3800	3200
Ռուսե	1880	1800	1700
Բուրգաս	1450	1300	1100
Հասկովո	800	-	680
Սլիվեն	700	-	465
Շումեն	600	-	490

¹ Տե՛ս **Կապուտիկյան Ս.**, Գույներ նույն խճանկարից, Երևան, 1989, էջ 109:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 875, ց. 2, գ. 265, թ. 3 շրջ.:

³ Տե՛ս «Մասիս», 18.XII.1966, էջ 5:

⁴ Մոտ 7 հազար հայեր էլ բնակվում էին Հասկովո, Յամբոլ, Սլիվեն, Պազարջիկ, Տոլբուխին և այլ քաղաքներում (տե՛ս **Ղասաբյան Զ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքների պատմության (1896-1970), էջ 235):

⁵ Մյուս տեղերում հայերի թիվը հետևյալն էր. Տոլբուխին՝ 200, Ստարա Զագորա՝ 350, Պազարջիկ՝ 200, Սիլիստրա՝ 180, Այաոս՝ 100, Քրճալի՝ 70 (տե՛ս ՀԱՍ, ֆ. 875, ց. 8, գ. 197, թ. 10):

«Երևան» կազմակերպության կենտրոնական վարչության նախագահ, Բուլղարիայի խորհրդարանի անդամ Տիրան Բարիկյանը շատ ավելի լավատես էր համայնքի ապագայի հարցում: Դատելով 1988 թ. նրա հնչեցրած հայտարարությունից՝ համայնքը ամենևին անկում չէր ապրում. «Եվ ես չեմ կրնա համաձայն ըլլալ որոշ շրջանակներու մեջ գոյություն ունեցող այն մտայնությանը, թե բուլղարահայ գաղութը հոգեվարք կապրի, ընդհակառակը, կրնամ վստահաբար ըսել, թե երթալով ան առավել կծաղկի, կլեցվի հայկականությամբ, ազգային որակներով ու հոգեբանությամբ»¹: Այսինքն՝ համայնքի ղեկավարությունը ևս, ինչպես խորհրդահայ իշխող շրջանակները, չէր ընդունում բուլղարահայ համայնքում առկա բացասական իրողությունները (ազգային կյանքի կազմակերպման դժվարությունները, արտագաղթը և այլն):

Բուլղարահայերը ԱՄՆ-ում

1962 թ. փորձելով որոշել ԱՄՆ եկած ռումինահայերի և բուլղարահայերի հստակ թվաքանակը՝ Կ. Գևորգյանն այն հասցնում էր 700-ի՝ դրա մեջ ներառելով նաև այդ տարի Բուլղարիայից ԱՄՆ գաղթողների հավանական թիվը²: Բուլղարահայերի թիվը մեծ էր հատկապես Լոս Անջելեսում: Եթե 1964 թ. Հոլիվուդի հայերի մեծ մասը պարսկահայեր և ռումինահայեր էին³, ապա 1970 թ. իրանահայեր, ռումինահայեր և բուլղարահայեր⁴: Չնայած դրան՝ 1981 թ. Կալիֆորնիայում անցկացված հարցման արդյունքում պարզվեց, որ ԱՄՆ գաղթած հայերի շրջանում Արևելյան Եվրոպայից գաղթած հայերը կազմում են ընդամենը 2 տոկոս, մինչդեռ 31 տոկոսը՝ Լիբանանից, 20 տոկոսը՝ Իրանից և այլն⁵: Արդեն 2007 թ. կատարված հետազոտության տվյալներով թե՛ Ռումինիայից և թե՛ Բուլղարիայից ԱՄՆ եկած հայերի թիվը տեղի հայ համայնքի մեկ տոկոսից պակաս էր⁶: Իսկ ըստ 2010 թ. մարդահամարի՝ Լոս Անջելեսի հայերից 490-ն այստեղ էին եկել Բուլղարիայից⁷:

¹ «Հայրենիքի ձայն», 27.I.1988, էջ 7:

² Տե՛ս **Գևորգեան Կ.**, Ամենուն տարեգիրքը 1963, Ժ. տարի, Պեյրուք, 1962, էջ 586:

³ Տե՛ս «Հայրենիք», 7.VIII.1964, էջ 3:

⁴ Տե՛ս «Մասիս», 15.XI.1970, էջ 5:

⁵ Տե՛ս **Takooshian H.**, Armenian Immigration to the United States from the Middle East // Journal of Armenian Studies, vol. 3, n° 1-2, 1986-1987, p. 153:

⁶ Տե՛ս Tourism Market Research on the Armenian-American Diaspora Community, February 2007, p. 8. http://www.armeniapedia.org/images/c/c1/Armenian_American_Diaspora_Survey_Report.pdf

⁷ Տե՛ս **Գոսազեան Ժ.**, Լոս Անձելեսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, խմբ. Ռ. Կարապետյան, Երևան, 2014, էջ 126:

Բուլղարահայերի և ռումինահայերի փոխադրման գործում, բացի ԱՆՉԱ-ից և ՀՕՄ-ից, կարևոր դեր ուներ նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, որը հոգաց տեղափոխման ծախսերը՝ ԱՆՉԱ-ի կողմից ապագայում մաս առ մաս վճարելու պայմանով¹: Հատկապես Լոս Անջելեսում 1960-ական թթ. ԱՆՉԱ-ի միջոցով ժամանած գաղթականները սկզբնական շրջանում բնակվում էին այդ կազմակերպության անդամների և աջակիցների բնակարաններում²: 1965 թ. ԱՄՆ ժամանածների ընդունելության մասին կարդում ենք. «Բազմաթիւ հայրենակիցներ, որոնք Նյու Եորք հաստատուած են վերջին մէկ-երկու տարիներու ընթացքին, եկած էին հանդիպելու իրենց բարեկամներուն, զանոնք հիւրասիրելու համար իրենց համեստ բնակարաններուն մէջ, խնայելով պանդոկի յաւելեալ ծախքերը»³:

Նորեկները ինտեգրվում էին բավականին արագ և սկսում աջակցել իրենցից հետո եկածներին. «Անչա»յի ներկայացուցիչները, ու նախապես եկած ընտանիքներ, իրենց կարելին կընեն նորեկները հիւրասիրելու եւ անոնց բնակարան ու գործ հայթայթելու համար: Ու քանի մը ամիսներ յետոյ, մեծագոյն մասը այդ երեկուան գաղթականներուն, կը դառնան ինքնաբաւ եւ գոհունակ՝ կուգան դիմաւորելու իրենց նորեկ հայրենակիցներն ու բարեկամները»⁴:

ԱՄՆ եկած բուլղարահայերը և ռումինահայերը կազմակերպում էին զանազան միջոցառումներ⁵: Ընդհանրապես հատկանշական է բուլղարահայերի համագործակցությունը ռումինահայերի հետ⁶:

Բուլղարահայերի գործունեությունը ստացավ նաև համակարգված ձևաչափ. Լոս Անջելեսում ստեղծվեց բուլղարահայ հայրենակցական միություն: Դա ընդգծում է այն, որ այստեղից նշանակալի թվով հայեր են եկել, որոնք պահպանել են ենթաէթնիկ ինքնության տարրեր, քանի որ բացի նրանցից Լոս Անջելեսում գործում են միայն իրանահայ, իրաքահայ, պոլսահայ, ռումինահայ և հունահայ հայրենակցական միություններ (նկատի ունենք Սփյուռքի ելքի այլ երկրները, քանի որ կան նաև դասական հայրենակցական միություններ՝ միավորող Հայաստանի տարբեր բնակավայրերի հայերին)⁷:

¹ Տե՛ս **Գեորգեան Կ.**, Ամէնուն տարեգիրքը 1963, Ժ. տարի, էջ 586:

² Տե՛ս «Հայրենիք», 3.VIII.1961, էջ 3:

³ Նույն տեղում, 25.VIII.1965, էջ 1:

⁴ Նույն տեղում, 7.XI.1963, էջ 2:

⁵ Օրինակ ամենամյա պարահանդեսներ, տե՛ս «Ազդակ», 23.V.1963, էջ 3:

⁶ 1987 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի՝ ԱՄՆ և Կանադա հովվապետական այցի շրջանակներում Նյու Յորքի «Հայկ և Ալիս Գալուքճյան» սրահում հանդիպմանը մասնակցում էին ոչ միայն ռումինահայերը, այլև բուլղարահայերը (մոտ հազար հոգի) (տե՛ս «Էջմիածին», 1988, թիվ 1-3, էջ 54):

⁷ Տե՛ս **Գոսազեան Ժ.**, նշվ. աշխ., էջ 145:

Այսպիսով՝ 1950-ական թթ. սկսած՝ հազարավոր բուլղարահայեր արտագաղթեցին Արևմուտքի մի շարք երկրներ: Այս երևույթը բազում զուգահեռներ ունեւո ռումինահայերի գաղթի հետ, քանի որ կազմակերպվում էր միաժամանակ և նույն կառույցի միջոցով: Չնայած բուլղարահայերի մի մասը տեղափոխվեց Հարավային Ամերիկա, եվրոպական տարբեր պետություններ, Կանադա, Ավստրալիա, սակայն նրանց մեծ մասը հաստատվեց ԱՄՆում: Այստեղ ռումինահայերի, Մերձավոր Արևելքի և այլ տարածաշրջաններից եկած հայերի հետ նրանք մասնակից դարձան հայ համայնքի բնականոն կենսագործունեությանը:

Тигран Ганалаян – Эмиграция армян из Болгарии (1950-1970 гг.)

После установления в Болгарии коммунистического режима, проводимая руководством страны политика привела к эмиграции национальных меньшинств, в том числе и армян. Если в первой половине 1950-х гг. армяне главным образом иммигрировали в Южную Америку, то со временем главным направлением эмиграционного потока стали США. Тысячи болгарских армян покинули Болгарию. Основным организатором переезда армян был комитет АНЧА (ANCHA – American National Committee to Aid Homeless Armenians). Большинство болгарских армян обосновались в США, в частности в Лос Анджелесе. Здесь они вместе с армянскими эмигрантами из других стран диаспоры, стали налаживать качественную жизнь местной общины. Между тем положение армянской общины, оставшейся в Болгарии, продолжало ухудшаться из-за национальной и экономической политики, а также продолжающейся эмиграции. Вследствие прекращения функционирования армянских организаций и закрытия армянских школ, вопрос сохранения национальной идентичности столкнулся с множеством трудностей. Существенные шаги по их преодолению стали возможны лишь после падения коммунистического режима.

Tigran Ghanalanyan – Emigration of Armenians from Bulgaria (1950-1970s)

The national policy of the Communist regime established in Bulgaria led to the emigration of the local ethnic minorities, including Armenians. If in the first half of the 1950s Armenians primarily emigrated to South America, gradually the USA became their main destination. Thousands of Bulgarian Armenians left Bulgaria. The transportation of Armenians was basically carried out by ANCHA (American National Committee to Aid Homeless Armenians). A large number of Bulgarian Armenians settled in the USA, particularly in Los Angeles. Here along with the diasporan Armenians arrived from other countries they got involved in managing the regular activity of the local Armenian community. In contrary, the stance of the Armenian community which stayed in Bulgaria deteriorated due to the national and economic policy as well as the subsequent emigration. As a result of the closure of the Armenian organizations and later also the schools the issue of preservation of the Armenian national identity faced a number of obstacles. Considerable steps towards overcoming those problems became possible to carry out only after the collapse of the Communist regime.

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆԻՆ ԿԵՄԻՆ**

*Բանալի բառեր – ծնելիություն, մահացություն, ընտանիքի միջին մեծության
գործակից, ժանտախտ, սով, բռնագաղթ*

Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում XVII դարում աչքի են ընկել մի շարք առանձնահատկություններով, որոնք պայմանավորված էին ռազմաքաղաքական իրադրության թելադրությամբ. մասնավորապես թուրք-պարսկական հերթական պատերազմի ժամանակ (1604 թ.) Սեֆյան շահ Աբաս Ա-ն (1587-1629) կազմակերպեց հայ բնակչության՝ նախադեպը չունեցող բռնագաղթ, իսկ XVI դարի վերջին տարիներից մինչև XVII դարի առաջին տասնամյակի ավարտը Հայաստանը և հարևան Փոքր Ասիան փոթորկվել էին ջալալիական շարժումներով¹: Քննարկվող ժամանակահատվածում ժողովրդագրական գործընթացների անբաժան գործոններ էին սովը, համաճարակները և մեծածավալ միգրացիան (բռնագաղթեր, գերեվարումներ և արտագաղթ), որոնք իրենց ազդեցությունն էին թողնում բնակչության ծնելիության և մահացության գործակիցների վրա:

XVII դարի սկզբին Հայաստանը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ: 1586 թ. սկսած՝ տեղ են գտել զանգվածային արտագաղթերի դեպքեր Արևելյան Հայաստանից, որտեղ մելիքական տները և բնակչությունը չեն հարմարվել օսմանյան հարկային վարչամեքենային²: Այս միտումը շարունակվել է նաև 1601-1603 թթ.: Նախիջևանի Խառն գյուղում ընդօրինակված Ավետարանի 1602 թ. հիշատակարանում ուշագրավ տեղեկություն կա այն մասին, որ «մեծ մայրաքաղաք գեղն Ճահուկի» բնակչությունը, չդիմանալով օսմանյան իշխանությունների հալածանքներին, «ելեալ փախան ի բնակչացն իւրեանց»³:

¹ Հաշվի առնելով այս գործընթացների պատճառով 1606-1609 թթ. բռնկված սովի ժողովրդագրական հետևանքների ծավալները՝ այդ շրջանի ժողովրդագրական և էթնոժողովրդագրական քննությունը թողնում ենք հետագային:

² Տե՛ս Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցույ (այսուհետ՝ Առաքել Դավրիժեցի), Վաղարշապատ, 1896, գլ. Գ, էջ 15-16:

³ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, հիշ. թիվ 78, էջ 66:

Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ հաճախակի էին հայերի զանգվածային գերեվարումների դեպքերը: XVII դարի սկզբին Կոստանդնուպոլսի շուկաներից մեկում Սիմեոն Լեհացին ականատես է եղել քրիստոնյա պատանի գերիների զանգվածային վաճառքի¹: Հաճախ են հիշատակվում հայ խոջաների, եկեղեցու և համայնքների կողմից գերիների փրկագնման դեպքերը. օրինակ՝ 1534 թ. խոջաները փրկագնել են նախիջևանցի մի ունիթորի, XVII դարի սկզբին՝ Օգոստինոս Բաջեցին՝ մի խումբ նախիջևանցի ունիթորների, 1620-1630-ական թթ.՝ Կարինի հայ մաքսապետ Սանոս Չելեպին՝ շուրջ հազար մարդու (ըստ Հակոբ Կարնեցու), 1630 թ. Մովսես կաթողիկոսը՝ 3-4 հազար մարդու Երևանից, Թավրիզից և այլ բնակավայրերից: Ա. Խառատյանը կարծում է, որ Հայ առաքելական եկեղեցին գերիներին փրկագնելու քաղաքականություն էր մշակել. օրինակ՝ 1638 թ. Արարատյան դաշտից և Երևանից գերվածներին հաջողվել է վերադարձնել Էրզրումի հայ վաճառականների օգնությամբ², իսկ Մովսես Գ Տաթևացուն (1629-1632) հաջորդած Փիլիպոս Ա Աղբակեցին (1633-1655) 1650 թ. շահ Արաա Բ-ից (1642-1666) փրկագնել է մի խումբ հայերի³:

Ռազմաքաղաքական իրադրությամբ պայմանավորված գործընթացների կողքին նկատելի են նաև մի քանի նոր միտումներ: XVII դարի առաջին կեսին Հայաստանում ժողովրդագրական գործընթացներին բնութագրական էր հետաքրքիր առանձնահատկություն՝ վանականների թվի կտրուկ աճ, ինչը պայմանավորված էր Հայ առաքելական եկեղեցու գործունեության ակտիվացմամբ, վանքերի վերաշինմամբ և նոր վանքերի հիմնմամբ: Ձեռագրերի հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում և անգամ թուրք հեղինակների աշխատանքներում քանիցս հանդիպում ենք այս կամ այն վանական կենտրոնում հոգևորականների թվի հիշատակմանը. Ս. Էջմիածնում՝ ավելի քան 500 հոգևորականներ, Մշո Ս. Կարապետ վանքում՝ 300, Վարազավանքում՝ ավելի քան 300, Աղթամարի Ս. Խաչ վանքում՝ ավելի քան 200 (և մոտ 300 ճգնավոր դերձակներ), Տաթևի վանքում՝ ավելի քան 100, Լիմ անապատում՝ 60-70, Հովհաննավանքում՝ 60⁴: Տարբեր

¹ Տե՛ս Սիմեոն դարի Լեհացույ Ուղեգրություն. տարեգրություն եւ յիշատակարանք, հրատ.՝ Ն. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 18-20:

² Տե՛ս **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 331-334:

³ Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. I, հրովարտական, պ. II (1601-1650 թթ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 39:

⁴ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 296, 356, 358: Թուրքական աղբյուրներ, հ. Գ, թարգմ.՝ Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 121, 170, 257, 259: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, թիվ 276, էջ 187-189, թիվ 298, էջ 199, թիվ 693, էջ 478-479, թիվ 773, էջ 523, թիվ 1189, էջ 811: **Ոսկեան Հ.,**

բնակավայրերում հիշատակվում են բազմաթիվ հոգևորականներ, օրինակ՝ Բաղեշում՝ 11¹, Ագուլիսում՝ 10², Խիզանում՝ ավելի քան 10³, Ղարամուրատում (Գանձակի Ձեզամի գավառ)՝ 7⁴: Ուշագրավ է այն փաստը, որ Փիլիպոս Աղբակեցին ձեռնադրել է ավելի քան 400 կուսակրոն հոգևորականներ⁵: Ձեռագրերի հիշատակարաններում գրիչի կամ ստացողի ընտանիքի անդամների թվարկումից շատ հաճախ պարզ է դառնում, որ նույն գերդաստանի մի քանի սերունդներում եղել են մի շարք հոգևորականներ: Այսպես, Մշո Եղիազարու (Առաքելոց) վանքում գրված Սաղմոսարանի 1636 թ. հիշատակարանում 3 սերունդում ներկայացված են 4 հոգևորականներ⁶: Սյունյաց Աջանան գավառի Եղինկյան գյուղում 1615 թ. գրված «Վարք Հարանց»-ի հիշատակարանում գրիչ Մինաս քահանան հիշատակում է քահանա հորը և քահանա եղբորը⁷: Դիզակի Թադասեռ գյուղում նորոգված Ավետարանի 1634 թ. հիշատակարանում թվարկված են Հովհաննես Եպիսկոպոսին արյունակից 4 եպիսկոպոսներ, 2 արեղաներ և 2 քահանաներ⁸: 1630-1660-ական թթ. վանական կյանքի աշխուժացմանը զուգահեռ աննախադեպ տարածում է ստացել նաև կուսակրոն կանանց թվի աճը. հատկապես աչքի էին ընկնում Երնջակ գավառի Շոռթթի, Առինջի, Վարանդայի Ավետարանոց գյուղի և Ագուլիսի կուսանոցները⁹:

XVII դարի առաջին կեսին հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ժողովրդագրական գործընթացներին առնչվող տեղեկություններ հայթայթելիս հանդիպելով գրիչների կամ ստացողների ընտանիքների անդամների հաճախակի թվարկմանը՝ մենք որոշեցինք դրանց միջոցով հաշվարկել տվյալ ժամանակաշրջանում ընտանիքի միջին մեծության գործակիցը (ընտանիքի անդամների միջին թիվը): Հաշվի ենք առել միայն այն հիշատակարանները, որոնք գրվել են բուն Հայաստանում և ունեն ձեռագրի ընդօրինակման վայրի հստակ տեղորոշում: Տվյալների դուրսբերման համար ընթերցել ենք շուրջ 3000 հիշատակարաններ, որոնցից դուրս ենք բերել շատ թեքիչ կանոնավոր թվարկմամբ մոտ 650 ընտանիքների վերաբերյալ տվյալներ: Այս գործում ոչ նպաստավոր գործոն է որոշ դեպքերում իզական սեռի

Վասպուրական-Վանի վանքերը, Գ. մաս, Վիեննա, 1947, էջ 978: **Զաքարիա Քանաքեղոցի**, Պատմութիւն, աշխ.՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, հ. II, էջ 188:

¹ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 808, էջ 603-606:

² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 624, էջ 423-432:

³ Նույն տեղում, թիվ 214, էջ 146-148:

⁴ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 459, էջ 362-368:

⁵ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 359:

⁶ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 946, էջ 640:

⁷ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 701, էջ 543:

⁸ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 829, էջ 557:

⁹ Տե՛ս **Սկրտչյան Հ.**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները կանանց մենաստանների և կուսակրոն կանանց վերաբերյալ, «Էջմիածին», 2013, թիվ Բ, էջ 89-101:

ներկայացուցիչների ոչ կանոնավոր թվարկումը կամ ընդհանրապես բացակայությունը¹. օրինակ՝ Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1623 թ. հիշատակարանում պարզապես գրված է՝ «և ամենայն դասերքն իւր», «և հանգուցեալ կանայքն իւր»²: Երբեմն թվարկման մեջ չեն նշվում ոչ միայն իգական սեռի հարազատները, այլև անգամ արական սեռի ներկայացուցիչները, օրինակ՝ Դիզակի Քամալեցիք գյուղում ծաղկված Ավետարանի 1639 թ. հիշատակարանում ծաղկող Ավետիսը հիշատակում է ծնողներին և «եղբայրքն իմ և քրւերքն իմ»³: Թվարկվող տվյալներն ի մի բերելուց հետո ստացել ենք ընտանիքի միջին մեծության 6.2 գործակիցը⁴: Հաշվի առնելով իգական սեռի ներկայացուցիչների թվարկման ժամանակ թույլ տրված հաճախակի բացթողումները (մեր կողմից ուսումնասիրված հիշատակարաններից ավելի քան 80 ընտանիքների պարագայում, այսինքն՝ 12,3 % դեպքերում)՝ կարծում ենք, որ ընտանիքի միջին մեծության գործակիցը ճիշտ կլինի 12,3 %-ով (եթե անորոշ գրված «քրւերք» կամ «դասերք» ձևակերպումների պարագայում իգական սեռի ներկայացուցիչների թիվը նվազագույն հնարավորն ենք դիտարկում՝ 2) ավելի բարձր համարել, այսինքն՝ 7: Փաստորեն, միանշանակ ճիշտ է վարվել Ա. Մելքոնյանը, որ շահ Աբասի բռնագաղթի վերաբերյալ ընտանիքների թվի հիշատակումները բազմապատկել է իր կողմից 19-րդ դարի սկզբին Էրզրումի նահանգի համար հաշվարկված 7-8 գործակցով⁵, ընդունելով, որ XVII դարի սկզբին գործակիցը նույնը պետք է լիներ: Հաշվարկները կատարելիս ուշադրություն ենք դարձրել, որ ընտանիքների անդամների միջին թիվն առանձնապես մեծ էր Վանա լճի ավազանում, Էրզրումի նահանգում, Արցախում, Արարատյան կուսակալության մեջ մտնող Կոտայքում և մի քանի այլ շրջաններում (միջինը՝ 7.5-8): Գործակիցը տասնամյակներով հաշվարկելիս

¹ Տե՛ս օրինակ՝ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 21, էջ 20-21:

² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 164, էջ 115:

³ Նույն տեղում, թիվ 1125, էջ 768-769:

⁴ Հաշվարկի տվյալների հիմքը (ընտանիքի անդամների թվարկումը) տե՛ս՝ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 9, 12, 13, 14, 16, 17, 18, 22, 25, 32, 43, 59, 60, 64, 66, 67, 70, 71, 78, 80, 81, 82, 83, 92, 95, 100, 105, 108, 144, 160, 163, 167, 169, 170, 171, 172, 173, 175, 180, 193, 208, 209, 218, 224, 230, 231, 237, 240, 254, 259, 272, 318, 321, 333, 353, 355, 364, 365, 366, 371, 378, 386, 395, 445, 459, 464, 478, 508, 533, 537, 606, 608, 611, 612, 614, 660, 665, 683, 690, 694, 718, 719, 724, 729, 731, 764, 791, 797, 798, 808, 815, 844, 851, 861, 863, 872, 894, 931, 932, 944, 951, 969, 980, 982, 987, հ. Բ, թիվ 1, 19, 29, 31, 49, 54, 64, 65, 66, 96, 158, 159, 164, 190, 204, 214, 267, 277, 290, 293, 311, 314, 318, 320, 335, 340, 353, 367, 368, 372, 378, 380, 381, 383, 435, 446, 485, 504, 505, 515, 549, 554, 561, 563, 581, 592, 603, 626, 628, 645, 654, 665, 685, 690, 692, 702, 733, 820, 823, 824, 825, 827, 835, 846, 861, 864, 874, 901, 911, 917, 923, 935, 946, 959, 960, 965, 967, 968, 972, 1004, 1018, 1028, 1030, 1077, 1081, 1083, 1085, 1090, 1097, 1098, 1117, 1121, 1140, 1150, 1155, 1178, 1187, 1188, 1189, 1195, 1207, հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, թիվ 22, 33, 61, 75, 83, 107, 115, 151, 166, 173, 175, 249, 298, 301, 303, 313, 315, 316, 329, 338, 358, 384, 421, 428, 442, 446, 463, 484, 485, 492, 495, 523, 524, 542, 554, 560, 575, 606, 618, 625, 630, 634, 637, 642, 652 և այլն:

⁵ Տե՛ս Հայոց պատմություն, հ. II, գ. II, Երևան, 2014, էջ 629:

ամենաբարձրը ստացել ենք 1601-1610 թթ.¹ 6.5, թեև մահվան մասին դեպքերի ամենաշատը հանդիպել ենք հենց այս տասնամյակում: Կարծում ենք, որ ընտանիքի անդամների թվի մեծությունը պայմանավորված է 16-րդ դարի վերջին երկու տասնամյակներում ծնվածների թվով: 1611-1620 թթ. գործակիցը նվազում է 8,3 %-ով, 1621-1630 թթ.² ևս 4,1 %-ով, ինչը պետք է պայմանավորված լիներ 1604 թ. բռնագաղթի և 1606-1609 թթ. սովի հետևանքով բնակչության բացարձակ թվի նվազմամբ, հետևաբար և ավելի քիչ թվով մարդկանցից ծնվածների թվով: Ժողովրդագրական «պայթյուն» է գրանցվում հաջորդ տասնամյակում՝ 1631-1640 թթ., երբ ընտանիքի անդամների միջին թիվն աճել է մոտ 8 %-ով, ինչը պետք է պայմանավորված լիներ նախորդող մեկ և կես տասնամյակներին Արևելյան Հայաստանում հայերի վերաբնակեցման՝ Ամիրգունա խանի ժողովրդագրական քաղաքականությամբ, իսկ Արևմտյան Հայաստանում ջալալիական շարժումների հաղթահարմամբ և մի շարք այլ գործոններով, որոնք առանձին ուսումնասիրության առարկա են: Մեր հաշվարկների համաձայն՝ 1641-1650 թթ. գրեթե պահպանվել է նախորդ տասնամյակի պատկերը՝ չնչին (2,4 %) նվազմամբ:

Հարկ ենք համարում շեշտել, որ ընտանիքի միջին մեծության գործակիցը հաշվարկելիս դիտարկել ենք միայն ամուսիններին և իրենց զավակներին: Միաժամանակ կարծում ենք, որ Լ. Սահակյանը¹ և տարբեր այլ ուսումնասիրողներ ճիշտ են վարվում ծխերի (տների) միջին մեծության գործակիցը շատ ավելի բարձր, օրինակ՝ 10 դիտարկելով, քանի որ, ինչպես նկատել է Մ. Կարապետյանը Ի. Շոպենի վիճակագրության ուսումնասիրությունից², տների և ընտանիքների համաժամանակյա վիճակագրության ժամանակ առաջինի մեջ ավելի շատ մարդիկ էին մտնում: Սա, իհարկե, բացատրվում է նահապետական ընտանիքով, այսինքն՝ մեկ ծխի մեջ կարող էին լինել տատիկն ու պապիկը կամ էլ ամուսինների մի քանի որդիների ընտանիքները: Սա, ինչպես և եվրոպական շատ երկրներում, երբեմն հետապնդում էր նաև վճարելիք որոշ հարկերի չափը նվազեցնելու նպատակ³: Զարքիա Քանաքեռցու տեղեկությունը՝ Կարբի գյուղաքաղաքում մեկ տանը

¹ Տե՛ս **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 60-63:

² Մ. Կարապետյանը Ի. Շոպենի վիճակագրության մեջ նկատել է, որ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո Երևանի 1730 տներում 2751 ընտանիք կար (տե՛ս **Կարապետյան Մ.**, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., ՊԲՀ, 1986, թիվ 2, էջ 103, իսկ նրա օգտագործած վիճակագրությունը տե՛ս **Шопен И.**, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852, с. 468, 543-546): Փաստորեն, XIX դարի 2-րդ քառորդի սկզբին 1 տանը բաժին էր ընկնում միջինը 1.59 ընտանիք:

³ Տե՛ս **Hollingsworth T.**, Historical Demography, London: Cambridge University Press, 1976, էջ 90-91:

30, իսկ Պետրոս Պետիկի հաղորդումը՝ Նախիջևանի Ապարաններ գյուղում՝ 20-25 (առնվազն՝ 5) անհատի մասին¹, ևս հաստատում են մեկ տան՝ մեկ ընտանիքից զգալիորեն մեծ լինելու հանգամանքը: Նման պարագայում կարծում ենք, որ ճիշտ է սկզբնաղբյուրներում հիշատակվող «ընտանիք» և «ծուխ» («տուն») հասկացությունների դեպքում միջին գործակից համարել համապատասխանաբար 7 և 10:

Ընտանիքների անդամների թվարկումից ակնհայտ է, որ բարձր է եղել մահացության գործակիցը հատկապես կանանց և երեխաների շրջանում: Բալու քաղաքում ընդօրինակված Ավետարանի 1623 թ. հիշատակարանում ներկայացված են ձեռագրի ստացող Աղաջանի հանգուցյալ 2 կանայք և ողջ կինը²: Այսօրինակ հիշատակումներից հստակ երևում է կանանց շրջանում մահացության բարձր գործակիցը, որը պայմանավորված էր ծննդաբերությունների ժամանակ մահացությամբ:

Կյանքի միջին տևողության վիճակագրություն կազմելու համար բավարար տվյալներ չունենք, քանի որ հազվադեպ են հանդիպում մահվան տարիքի հիշատակումները: Այդ եզակի օրինակներից մեկում՝ Որոտանի Գետաթաղ գյուղում ընդօրինակված Շարակնոցի 1639 թ. հիշատակարանում ձեռագրի գրիչ Ավետը հիշատակում է 3-ամյա հասակում վախճանված 2 եղբայրներին, 12 տարեկանում վախճանված քեռուն, ինչպես նաև ձեռագրի ստացող Մինաս քահանայի՝ 15 տարեկանում վախճանված եղբորը³: Հազվադեպ է հիշատակվում նաև մահվան պատճառը: 1619 թ. Կեցնա Եղեգիս գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Մարտիրոս գրիչը հաղորդում է, որ Ավետարանի պատվիրատու Հովհաննեսի որդի Կարապետը «տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս»⁴. մահվան պատճառը ժանտախտն էր: Հետաքրքիր տվյալներ է հաղորդում Հակոբ Կարնեցին: Նրա հավաստմամբ՝ իր հոր՝ Գևորգի հայրն ու մայրը 4 զավակ են ունեցել: Գևորգը ծնվել է 1583 թ. և մահացել 1655 թ.՝ ապրելով 72 տարի: Գևորգի ամուսնանալուց հետո՝ 1606 թ., վրա է հասել սովը, և նրա մայրն ու երկու եղբայրները մահացել են: Ունեցել է 7 երեխա (5 որդի և 2 աղջիկ), որոնցից 3-ը մանկահասակ մահացել են: Ավագ որդի Մելքոնը մահացել է հորը գրեթե զուգահեռ՝ 42 տարեկանում, աղիքների հիվանդությունից⁵: Փաստորեն, Հակոբ Կարնեցու՝ իր ընտանիքին վերաբերող տվյալներից երևում են սովի, հիվանդությունների և մանկամահացությունների ազդեցությունը կյանքի միջին տևողության վրա, ինչպես նաև դրանց շրջանցման պարագայում 70 տարեկանի շեմը հաղթա-

¹ Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 103:

² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 160, էջ 112-113:

³ Նույն տեղում, հ. Բ, թիվ 1121, էջ 765:

⁴ Նույն տեղում, թիվ 29, էջ 18:

⁵ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 242-243, 246, 247, 248, 249:

հարելու հավանականությունը ուշմիջնադարյան Հայաստանում:

XVII դարի հենց սկզբից ժողովրդագրական գործընթացներում իրենց անբաժան տեղն ունեին պատերազմական գործողություններին ուղեկցող սովն ու ժանտախտը: Խիզան քաղաքում ընդօրինակված Ավետարանի 1601 թ. հիշատակարանում ասվում է. «...յոյժ տղութին է հացի և այլ ամենայն իրաց: Եւ է [տա]րածամ մահ ի [տեղ]իս...»¹: Այսօրինակ հիշատակումները բազմաթիվ են շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթին և ջալալիական շարժմանը հաջորդող տարիներին՝ 1606-1609 թթ., որոնց կանդրադառնանք մեկ այլ հոդվածում: Բազմաթիվ են մահտարածամի դեպքերը նաև հաջորդող տասնամյակներին: Սկզբնաղբյուրներում հիշատակվում է, որ 1618 թ. «մահ անկաւ, հարիւր և քառասուն տղայ մեռաւ ի Գումիշխանէն ի մէկ օրն»²: Վարդան Բաղիշեցու ժամանակագրության (XVII դար) համաձայն՝ սա սաստիկ մարդամահ էր Գյումուշխանէի համար, «որ փոքր քաղաք մի է՝ երեք հարիւր տուն»³: Ըստ Հակոբ Կարնեցու՝ 1621 թ. «յոյժ մահ է անկեր Արգրում և շրջակա բոլորքն»⁴: Մեկ այլ սկզբնաղբյուրի համաձայն՝ 1621 թ. «մահ տարածեցաւ յարևելից մինչև ի մուտս արևու, անասելի և անպատմելի, մինչ զի փոս հատեալ Ի (20), Լ (30), Խ (40), Ծ (50) մարդ ի ներս լնուին և որոց ոչ գոյր տեարք, անկեալք յանցս ճանապարհաց»⁵: Ժանտախտի դեպքեր արձանագրվել են նաև 1623 թ.⁶: 1623 թ. Խիզանում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Հովհաննես քահանան հաղորդում է, որ Եգիպտոսից և Ստամբուլից սաստիկ մահտարածամը 2 տարվա ընթացքում հասել է Հալեպ, Ուռհա, Ամիդ, Բաղեշ, Վան, Խիզան և մոտակա գավառներ՝ օրական մինչև 100 կյանք խլելով (երբեմն՝ մեկ տնից միանգամից 2-3 մեռյալ)⁷: Տեղեկությունը հաստատում է նաև Ավնդանց գյուղի Կիրակոս քահանան՝ 2 շաբաթվա մեջ օրական 8-10 մահ արձանագրելով (ընդ որում՝ զոհվել է նաև գրչի Ստեփանոս որդին, և կարճ ժամանակ անց ծնվել է հաջորդ որդին՝ Մովսեսը)⁸: 1624 թ. Ավնդանց գյուղում ընդօրինակված Ավետարանի պատվիրատու Կարապետ Մոկացին ներկայացնում է շահ Աբասի բռնագաղթից հետո ստեղծված իրավիճակը՝ բռնագաղթյալների մի մասի մահը, համատարած սովը, մարդակեր գայլերի տարածումը, տարածամ մահը, որը, ըստ նրա, սկսել է «Լատինացոց աշխարհից» ու տարածվել մինչև Պարսկաստան:

¹ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 32, էջ 34:

² Առաքել Դավրիժեցի, գլ. ԾԶ, էջ 637: Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 268, 283:

³ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 394:

⁴ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 240:

⁵ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 356:

⁶ Նույն տեղում, էջ 520:

⁷ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 164, էջ 115:

⁸ Տե՛ս նույն տեղում, թիվ 214, էջ 148: Հմմտ. թիվ 881, էջ 597-598, հիշ. թիվ 937, էջ 635, թիվ 1071, էջ 725:

Այդուհանդերձ, ըստ նրա, մահտարածամի գլխավոր պատճառը 1601 թվից չդադարող պատերազմներն էին¹:

1630-ական թթ. առաջին կեսին ռազմական գործողությունները հիմնականում ընթանում էին Միջագետքում՝ օսմանյան ռազմերթերի ժամանակ մեծ նեղություններ պատճառելով Ամիդի (Դիարբեքի) հայությանը, որ ստիպված էր լինում ոչ միայն լրացուցիչ հարկային և աշխատանքային պարտավորություններ ստանձնել, այլև գորքին ապահովել պարենմթերքով և կացարան տրամադրել: Ամիդում ընդօրինակված Աստվածաշնչի 1635 թ. հիշատակարանում Մինաս գրիչը հաղորդում է, որ «տարածեաց յաշխարհս Միջագետաց մահ տարածամ, ի քաղաք և ի գեղ, ևս առաւել ի քաղաքս Համիթ», և վեզիր Մահմադ փաշայի գորքերի դուրսբերումից (մարտի 28) հետո մահտարածամը մեծ ծավալներ է ընդունել. ապրիլին վախճանվել են քաղաքի հայ հոգևորականներից Առաքել աբեղան և Հովհաննէս քահանան ու նրա կինը, իսկ հունիսին համաճարակն ավելի է սաստկացել՝ խլելով գրչի աշակերտի՝ Սաֆար դպիրի կյանքը, և միայն հուլիսի 5-ին՝ Վարդավառին, համաճարակը նահանջել է²: Հատկանշական է, որ Ամիդում 1635 թ. գրված հիշատակարանում խոսվում է մահտարածամի ժամանակ ոչ միայն մահացության ավելացում, այլև ընտանիքներ կազմելու և ծնելիության մակարդակի նվազում:

Պատերազմից հետո ևս հիշատակվում են մահտարածամի մի քանի դեպքեր: Ըստ Հակոբ Կարնեցու՝ 1643 թ. օգոստոսին Էրզրումում «մահ անկաւ», իսկ 1644 թ. ևս «տղայամահն եղև»³: Վերջին հիշատակումը խոսում է համաճարակների՝ նախևառաջ մանուկների և պատանիների կյանքի համար վտանգավորության բարձր աստիճանի մասին: Եվ իսկապես, հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրիչներն իրենց կամ ստացողների ընտանիքի անդամներին թվարկելիս շատ հաճախ հիշատակում են «տղայ» հասակում վախճանված եղբորը, քրոջը կամ զավակին: Հատկանշական է, որ մահտարածամի մասին տեղեկություններում հեղինակները, որոշ բացառություններով, մատնանշում են համաճարակի՝ արևմուտքից ներթափանցելու մասին:

Ի մի բերելով տվյալները՝ շատ դժվար է գնահատել ժանտախտից զոհվածների հանրագումարը Հայաստանում XVI դարում և XVII դարի առաջին կեսին, քանի որ վիճակագրական տվյալները խիստ սահմանափակ են:

Սովի և ժանտախտի պատճառած վնասներին հաճախ գումարվել է նաև մորեխների պոպուլյացիայի ակտիվացումը, ինչպես օրինակ՝ 1608 թ. Վանում⁴:

Պատերազմական գործողությունների, սովի ու համաճարակների

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

² Նույն տեղում, թիվ 881, էջ 597-599:

³ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 242, հ. 2, էջ 395:

⁴ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 365, էջ 300-301:

ուղղակի և անուղղակի ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների, մասնավորապես՝ մահացության գործակցի աճի վրա ակնհայտ է ոչ միայն ձեռագրերի հիշատակարանների, այլև XVII դարի առաջին կեսի թվակիր տապանաքարերի և խաչքար-մահարձանների ուսումնասիրությունից: Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում (ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, ԼՂՀ-ում և Գանձակ-Գարդմանում) հաշվարկել ենք XVII դարի առաջին կեսի՝ միայն հստակ թվագրում ունեցող ավելի քան 130 տապանագրեր ու խաչքար-մահարձանների վիճակագրեր՝ մոտ 150 հանգուցյալների տվյալներով¹: Մեր հաշվարկով դրանց ավելի քան մեկ երրորդը (38,2 %-ը) վերաբերում է դարի առաջին տասնամյակին, այսինքն՝ այն ժամանակահատվածին, երբ տեղի են ունեցել շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթը և 1606-1609 թթ. Մեծ սովը²:

Ժողովրդագրական գործընթացների վրա շարունակել են իրենց բացասական ազդեցությունը թողնել նաև բնական աղետները: 1636 թ. Սոխորդ գյուղը «վերուստ ի վայր իջաւ», և 1637 թ. բաղիշեցի մահտեսի Սիմոնը սողանքից տուժած գյուղի կարիքների համար աղբյուրը ևս իջեցրեց գյուղ³: Աղետալի են եղել հատկապես երկրաշարժերը: Զգալի արհավիրքներ է պատճառել 1646 թ. ապրիլի 2-ին Վանում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժը, երբ շատերը մնացել են փլատակների տակ⁴: Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ՝ զոհվել են հազարավոր մարդիկ, ավերվել են Վան քաղաքը, բազմաթիվ գյուղեր (Քարափոս, Նորագեղ և այլն), քաղաքի 4 եկեղեցիները և բոլոր մզկիթները (բացառությամբ մեկի): Ըստ նրա՝ Վանի գավառում փլուզվել են 15 վանքեր (այդ թվում՝ Վարագավանքը), որոնցից միայն 3-ն են

¹ Տե՛ս Դիվան հայ վիճակագրության, պր. II, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 68, 73-74, 76, 117, 122, 135, պր. III, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 19, 32, 43-44, 46, 47, 63, 65, 184, 200-202, պր. IV, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 15, 16-17, 28-29, 31-37, 42, 47-48, 105-106, 111-112, 129, 137-141, 144-145, 171-173, 178, 179-181, 192-193, 202-203, 206-207, 236-239, 244-247, 254-259, 269-275, 281-283, 285, 298-301, 312, 319-325, 329-332, 340, 342, 347-348, 351-352, 356-359, 361, 362, 369-371, 379, պր. V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 18, 57, 94, 95, 98, 103-104, 147, 162-164, 172, 173, 179, 185-186, 193, 195, 233-237, 240, 244-246, 248, 250, 253-254, 255, 257-264, 265, 268, 272-274, պր. VI, էջ 30, 55, պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 35, 103, 105, 106, 221, 223, 271, 275, 296-297, 320-321, 392, 421, 444-445, 448, 449, 457: Ազգագրական հանդես, գ. Ե, Թիֆլիս, 1899, թ. 1, էջ 262-263: ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին (տե՛ս ՀՀ կառ. որոշում թիվ 49-Ս, 29.01.2004 <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37965>):

² Կարծում ենք, որ 1606-1609 թթ. սովը պետք է անվանել «Մեծ սով», քանի որ իր տարածքային ընդգրկման սահմաններով, մարդկային զոհերի քանակով և տևողությամբ այն աննախադեպ էր:

³ Առաքել Դավրիժեցի, գլ. ԾԶ, էջ 643:

⁴ Նույն տեղում, էջ 644: Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 161, 355, հ. 2, էջ 483: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, թիվ 363, էջ 218:

այնուհետև վերականգնվել: Բոլոր գյուղերի եկեղեցիները ևս փլուզվել են: Բազմաթիվ աղբյուրներ ցամաքել են, որի պատճառով տեղի է ունեցել բերդաշինական համակարգի և տարաբնակեցման (բնակավայրերի) վերաբաշխում, օրինակ՝ Եղնաբերդի և Ներքին Փագախ գյուղի բերդը և գյուղը տեղափոխեցին Ղասրիկ (Խասրիկ): Ավան գյուղի աղբյուրները նույնպես ցամաքեցին: Վանքերի վերաշինման գործում ակտիվորեն ներգրավված են եղել Վանի խոջաներն ու չելեպիները՝ խոջա Ախիջանը, խոջա Ամրխանը, Մարխաս չալապին, խոջա Դիլանչին, խոջա Հովհաննեսը և այլք¹: Երկրաշարժի ավերիչ հետևանքների մասին ականատես Կարապետ Վանեցի գրիչը «Յայսմաուրք»-ի 1647 թ. հիշատակարանում հայտնում է 40 եկեղեցիների փլուզման և բազմաթիվ զոհերի մասին, ինչպես նաև հաղորդում, որ ողջ մնացածները «գրոհ տուեալ ելին ի քաղաքէն, քանզի ոչ դադարէր երկիրն ի շարժմանէն», իսկ Վանի Նորագյուղ գյուղը հիմնովին փլուզվել էր՝ խլելով 6-7 մարդու կյանք, ընդ որում՝ վերաշինումն էլ 2 տարի է տևել²:

Բնակլիմայական երևույթները ևս երբեմն ազդեցություն են ունեցել ժողովրդագրական գործընթացների վրա: Սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում են բնակլիմայական երևույթների մասին հիշատակություններ: Մի ճառընտիրի 1615 թ. հիշատակարանում ասվում է, որ օգոստոսի 10-ին «գետ մի վազեց», իսկ ձմռանը ձյուն չեկավ³: Երկու դեպքում էլ տեղումների բաշխումն իրենց սեզոնի համար բնորոշ չեն եղել, ուստի կարող էին բացասաբար ազդել մշակաբույսերի վեգետացիայի և գյուղմթերքի ստացման վրա: Մեկ այլ օրինակ ևս. Ղարաջալու գյուղում (Ուրմիայի մոտ) ոմն Պետրոս երեց 1631 թ. մի բնական աղետ է նկարագրում. «...պատուհաս երեկ ի վերայ աշխարհիս՝ ձուն եկաւ մեծ Զատկի Կանաչ կիրակին, և ամենայն պտղաբերքն չորացան, և ապայ Աստուած ողորմած էր՝ կէս մի կանաչեցաւ, և կէս մի անցաւ մինչև ի տակն չորացաւ»⁴: Մեկ այլ հիշատակարանում Մկրտիչ երեցը հաղորդում է, որ 1633 թ. Բաբերդում աղբյուրները ցամաքել էին, ճորոխ գետից էին քաղաքի ջուրը վերցնում, սակայն հաջորդ տարին խիստ ջրառատ է եղել՝ «աղբիւր չեղած տեղացն ջուր բոխէր»⁵: Վերջինիս նմանությամբ 1640-1648 թթ. Էվլիյա Չելեբին խոսում է «Չարշամբա բազարի անանցանելի գետի», այսինքն՝ Կըզըլ-Իրմաքի մասին, որն ավերում է Թոքաթը, այնուհետև ոռոգում Ամասիայի հողերը⁶: Հետաքրքրականն այն է, որ ներկա-

¹ Առաքել Դավրիժեցի, գլ. ԼԷ, էջ 489-494:

² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, թիվ 397, էջ 240-241:

³ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, թիվ 713, էջ 549:

⁴ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, թիվ 603, էջ 412-413:

⁵ Նույն տեղում, թիվ 833, էջ 559:

⁶ Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 38: 1653 թ. հուլիսին Թոխաթում մեծ ջրհեղեղ է եղել, որն ավերածությունների և զոհերի պատճառ է դարձել (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 161):

յումս Թոխաթում հուլիսյան տեղումները միջինը 11,5 մմ են¹, ինչի պարագայում ջրհեղեղի հավանականությունը խիստ նվազ է: XVII դարի 2-րդ քառորդից սկսած տեղումների առատությամբ պետք է բացատրել միգրացիոն ալիքների ուղղումը դեպի պատմական Փոքր Հայքի տարածք:

Այսպիսով, XVII դարի առաջին կեսին մեծ է եղել պատերազմական իրադրության ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա: Հաճախակի են կրկնվել բնակչության գերեվարումներն ու բռնագաղթերը, սովը և համաճարակները: Այդ իսկ պատճառով բարձր է եղել մահացության գործակիցը, իսկ հայկական ընտանիքի ավանդական կառուցվածքի պահպանումն ապահովել է նաև ծնելիության բարձր մակարդակը: Քննարկվող ժամանակաշրջանում ժողովրդագրական գործընթացների վրա ամենաէական ազդեցությամբ առանձնանում են շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթը և ջալալիական շարժումները, որոնց կանդրադառնանք մեր հետագա հրապարակումներում:

Микаэл Малхасян – Тенденции и особенности демографических процессов в Армении в первой половине XVII в.

Турецко-персидские войны в первой половине XVII в. отрицательно повлияли на демографические процессы в Армении. Армянское население часто подвергалось массовым депортациям со стороны воюющих сторон, а из-за непрекращающихся войн голод и чума были одними из главных причин высокой смертности. Несмотря на высокий уровень смертности, сохранялся также высокий уровень рождаемости. Опираясь на данные армянских рукописей, мы пришли к тому выводу, что среднее число членов армянской семьи (считая только супруг и их детей) в первой половине XVII века было 7, а среднее число жителей одного дома – как минимум 10. Это привело нас к выводу, что после массовых депортаций (как например, в 1604 г.) нужда в обработке больших сельскохозяйственных земель способствовала росту рождаемости, и численность местного населения быстро восстанавливалась.

Mikayel Malkhasyan – The Trends and Features of the Demographic Processes in Armenia in the First Half of the 17th Century

The Ottoman-Persian wars in the first half of the 17th century had a negative impact on the demographic processes in Armenia. The Armenian population faced massive deportations by fighting sides, and as a result of ongoing wars famine and plague were among the main reasons for high mortality. Despite the high mortality rate, the fertility rate was high, too. Based on the data from the Armenian manuscripts, we concluded that the average number of members of an Armenian family (counting only spouses and their children) in the first half of the 17th century was 7, and the average number of people living in a house – at least 10. These calculations lead us to a conclusion that after massive deportations (for example, in 1604) the need of cultivating vast agricultural territories helped to have much higher fertility rate, and the native population could reach the previous figures in a short period of time.

¹ Devlet Meteoroloji İşleri Genel Müdürlüğü, տե՛ս՝ <http://www.dmi.gov.tr/veridegerlendirme/il-ve-ilceler-istatistik.aspx?m=TOKAT>, հասանելի էր՝ 28.01.2016:

ՃԱԿԱՏԱԳՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՄՊԵԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ
ՕՐՀԱՆ ՓԱՍՏՈՒՔԻ «ԿԱՐՄԻՐ ՄԱԶԵՐՈՎ ԿԻՆԸ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր – պոստմոդերնիզմ, թուրքական գրականություն, ճակատագրապաշտություն, առասպել, ինքնության փնտրտուք

Հայրեր-որդիներ կամ վարպետներ-աշակերտներ/աշակերտներ հարաբերությունների թեմատիկան արևելյան գրականության մեջ բավական տարածում ունի և առավելապես հանդիպում է դրա կրոնական երանգավորում ունեցող տարբերակը՝ Ուսուցիչ (մյուրշիդ) և աշակերտ (մյուրիդ) կապը: Թուրք հայտնի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքը (ծնվ. 1952 թ.) ևս իր տարբեր վեպերում արծարծում է այդ թեմատիկան՝ փորձելով դա նաև դիտարկել որպես կատարելության ձգտելու ու հասնելու խնդիր: Լինելով պոստմոդերնիստ հեղինակ և թուրքական գրականության մեջ զարգացնելով այդ ուղղության տարբեր սկզբունքներ՝ Փամուքը իր ստեղծագործությունների հիմքում միշտ դնում է փնտրտուքի գաղափարը, որը շատ հաճախ կոնկրետանում է հերոսի ինքնության, սեփական Ես-ի փնտրտուքի շուրջ: Փամուքի մյուս կարևոր առանձնահատկությունը Արևելքի ու Արևմուտքի կամ Թուրքիայի և Եվրոպայի բախման խնդիրն է, որը նույնպես իր տարբեր վեպերում պատկերում է եվրոպական ու արևելյան ինքնությունների բախման համատեքստում: Հեղինակը առաջ է քաշում նաև այն հարցը, թե ինչպես պետք է գոյակցեն եվրոպական ու թուրքական ինքնությունները, կամ ինչպես ինտեգրվելով Եվրոպային՝ չկորցնել ինքնությունը: Փամուքի համար այս թեմայի պատասխանը, ըստ էության, չկա, և նրա համար կարևորը մտածելն ու բանավեճն է¹, կամ մեր ընկալմամբ՝ փնտրտուքը: Պոստմոդերնիստական ստեղծագործություններում որոշակիորեն արծարծվում է նաև ճակատագրապաշտության (ֆատալիզմի) թեման, իսկ Փամուքի պարագայում դա կրկին ներկայացվում է Ես-ի փնտրտուքի, այդ ճանապարհին ապրած ինքնության խառնաշփոթի, երբեմն՝ կորստի համապատկերում: Իր տարբեր վեպերում Փամուքը ակնարկում կամ հպանցիկ անդրադառնում է նաև որոշ առասպելների, ասքերի և էպիկական պատումների՝ դրանով մի կողմից կիրառելով ինտերտեքստայնության, իսկ մյուս կողմից այլաբանության տարրեր:

¹ Տե՛ս **Чижова Е.**, Аллаху принадлежит и Восток, и Запад..., «Вопросы литературы», 2010, № 3, с. 17.

Փամուքի նոր վեպը, որը հրատարակվել է 2016 թ. սկզբին, վերնագրված է «Կարմիր մազերով կինը» և նվիրված է ճակատագրապաշտությամբ պարտրված ինքնության փնտրտուքի թեմային, սակայն այստեղ հիշյալ խնդիրը տրված է արևելյան դասական ու հանրահայտ առասպելի՝ «Ռոստամ և Ջոհրայի» ու էպիկական պատումի տարրեր պարունակող արևմտյան ողբերգության՝ Սոֆոկլեսի «Էդիպ արքայի» միախառնումով և դրանցում առկա մոտիվների փոխակերպմամբ: Պոստմոդեռնիստական մեթոդների կիրառմամբ՝ բարդ սարդոստայնում են միավորված տարբեր իրողություններ, գաղափարներ և երևույթներ, սակայն երբեմն պարզ, երբեմն ենթատեքստում ու այլաբանորեն կրկին պատկերված է Արևելքի ու Արևմուտքի բախման խնդիրը: Փամուքի նոր վեպում պատահականությունների շղթան և ռեալ իրականությունը շաղկապված են միմյանց, սակայն առանցքում ունեն արևելյան առասպելի և արևմտյան ողբերգության պոթետային հստակ գծերն ու մոտիվները: Բացի այդ, ինչպես բոլոր պոստմոդեռնիստական վեպերում, այստեղ ևս կա դեդեկտիվ ուղղվածություն. տասնամյակներ առաջ գործած մեղքը հանգիստ չի տալիս հերոսին և նրա մեջ ստեղծում ֆատալիստական տրամադրություններ ու որոշակի վախ: Որպես վեպի բնաբան ընտրված երեք մտքերից մեկն էլ մեջբերում է հենց «Էդիպ արքա»-յից. «Շատ վաղուց գործված մեղքի հետքերը ինչպե՞ս կարող ենք գտնել»: Վեպում իրականը և առասպելականը հետզհետե միախառնվում են իրար և գլխավոր հերոսը, ըստ էության, դառնում է առասպելի գերի, ապրում դրա օրենքներով և ի վերջո ունենում համանման վախճան, որին կարծես թե գիտակցված գնում է իր ամբողջ կյանքում:

«Կարմիր մազերով կինը» վեպի մեծ մասը պատմվում է գլխավոր հերոսի կողմից, առաջին դեմքով. դասական պոթետային գիծը և գրեթե ռեալիստական նկարագրությունները ընդհատվում են պոստմոդեռնիստական հնարքով, երբ հերոսը պատմում է իր ամբողջ կյանքը՝ ընդհուպ մինչև մահը: Այսինքն՝ մետաֆիկցիոն տարբերակով մահացածը պատմում է վեպի հիմնական պոթեն և նկարագրում անգամ իր մահը: Ի դեպ, այդ հնարքը առավել շեշտված հանդիպում ենք Փամուքի նախորդ գրքերից մեկում՝ «Իմ անունը Կարմիր է» վեպում, երբ գլուխներից մեկը պատմում է մահացածը: «Կարմիր մազերով կինը» վեպի գլխավոր հերոսը մի պատանի է՝ Ջեմ անունով, ով իր պատմությունը սկսում է փամուքյան դասական մտքով կամ գաղափարով. «Իրականում ուզում էի գրող դառնալ, սակայն այն դեպքերից հետո, որոնց մասին պատմելու եմ, դարձա երկրաբան-ինժեներ»¹: Ինչպես դիպուկ նկատել է թուրք գրականագետ Ֆեթիի Դեմիրը. «Փամուքի բոլոր վեպերում

¹ **Pamuk O.**, Kırmızı Saçlı Kadın, İstanbul, 2016, s. 9. Այսուհետ այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ՝ նշելով միայն էջը:

կան, ավելին՝ վեպերը լի են գրականությամբ զբաղվող, գրող հերոսներով»¹: Հենց սկզբից պատմողը, ով նաև գլխավոր հերոսն է, երկխոսության մեջ է մտնում ընթերցողի հետ և, մինչև ժամանակ, հետևելով պոստմոդեռնիստական որոշ իրողությունների՝ նկատում է, որ այն պատմությունը, որը պատրաստվում է պատմել, դեռ չի ավարտվել, և թող ընթերցողները այդպես չկարծեն (էջ 9): Օրհան Փամուքը, խոսելով նորագույն շրջանի վեպի, գրողի և հերոսների հարաբերությունների մասին, կարծիք է հայտնում, որ ժամանակակից հեղինակը ձգտում է պատկերել ոչ թե հերոսի տեսանկյունը և մոտեցումները, այլ այն, ինչ կա նրա մտքում: Եվ զգալով, թե ինչ բարդ է ըմբռնել աշխարհի և դեպքերի էությունն ու տրամաբանությունը՝ «Հեղինակը որոշում է, որ ինքը սահմանափակ է և իրեն հետ է քաշում ու վեպը գրեթե հանձնում է հերոսին»²: Այս պոստմոդեռնիստական ընկալման մեջ որոշակի դեր է վերապահված նաև ընթերցողին, ով երբեմն դառնում է այդ ստեղծագործության ոչ թե պասիվ ընթերցողը, այլ ձևավորողներից մեկը:

Վեպում դեպքերը սկսվում են մոտավորապես 1980-ականներին և շարունակվում ընդհուպ մինչև 2010-ականները: Հերոսը՝ Ջեմը, լինելով դպրոցական, արձակուրդներին աշխատում է ջրհոր փորող վարպետ Մահմութի մոտ որպես աշկերտ այն ժամանակ Ստամբուլից ոչ շատ հեռու գտնվող Օնգյորեն գյուղաքաղաքում: Կարծում ենք, որ ընտրված արհեստը՝ ջրհոր փորելը, նույնպես պոստմոդեռնիստական փնտրտուքի խորհրդանիշ է պարունակում. պետք էր ճիշտ ընտրել հավանական ջրի տեղը, այնուհետ փորել և դժվարություններ հաղթահարելով՝ հասնել նպատակին, այսինքն՝ ջրին: Վեպում ներկայացվում է վարպետ-աշկերտ հարաբերությունների ձևավորման ընթացքը: Վարպետ Մահմութը ունենում է երկու առանձնահատկություն. մեկը ձգտում է լավ հարաբերություն հաստատել աշկերտի հետ և նրա հանդեպ խիստ հոգատար է, իսկ մյուսը սիրում է տարատեսակ պատմություններ պատմել, և դրանք մեծ մասամբ ուսուցողական, գաղափարական հենք պարունակող դեպքեր էին: Վեպում վարպետ-աշկերտ հարաբերությունները հավասարեցված են հայր ու որդի հարաբերություններին, և Մահմութը ասում է Ջեմին, որ վարպետ-աշկերտ հարաբերությունների գաղտնիքը հենց դրա մեջ է թաքնված (էջ 34): Ջրհոր փորելու աշխատանքները սկզբում նորմալ են ընթանում, սակայն որոշ ժամանակ անց սկսում են բարդություններ, քանի որ նախ ժայռային շերտի են հանդիպում, և բացի դրանից՝ ջուրը դեռ չեն կարողանում գտնել: Աշխատանքից հետո դեռահաս պատանի հերոսը շրջում է Օնգյորենի փողոցներում և հանդիպում շրջիկ

¹ Demir F., Orhan Pamuk'un Postmodern Bir Labirente Yazıyı Arayan Kahramanları, Turkish Studies, 2011, 6/3, p. 1812.

² Esen N., Modern Türk Edebiyatı Üzerine Okumalar, İstanbul, 3-üncü Baskı, 2012, s. 215, տե՛ս նաև, Pamuk O., Öteki Renkler, İstanbul, 1999, s. 115.

վրանային թատրոնի, որտեղ աշխատում էին ձախակողմյան քաղաքական խմբավորումների նախկին ակտիվիստներ, և այլաբանորեն փորձում է արժարժել իրենց դավանած գաղափարախոսության որոշ տարրեր և առաջնահերթություններ: Խաղացանկում ընդգրկված էին առասպելներից, ասքերից որոշ հատվածներ՝ գուգակցված սիրային և սուֆիական թեմաներով: Դերասանուհիներից մեկը մոտ 35 տարեկան, դուրեկան արտաքինով և կարմիր մազերով կին է լինում, ով անմիջապես գրավում է պատանի Ջեմի ուշադրությունը: Հեղինակը չի նշում կնոջ անունը, այլ ուղղակի նրա մազերի գույնը կիրառում որպես անձնանուն՝ Կարմիր մազերով կինը: Միայն ավելի ուշ՝ վեպի 67-րդ էջում է հեղինակը տալիս Կարմիր մազերով կնոջ իրական անունը՝ Գյուլջիհան, և իր այդ թաքցնելը բացատրում հետևյալ կերպ. «Հիմա էլ՝ տարիներ անց, նրա անունը անգամ ընթերցողներից ցանկանում եմ թաքցնել խանդից դրդված, սակայն պետք է իմ ամբողջ պատմությունը անկեղծորեն պատմեմ» (էջ 67): Թատերական ներկայացումներից մեկից հետո Ջեմը ծանոթանում է Կարմիր մազերով կնոջ հետ, ում բազմիցս հետևել է քաղաքի փողոցներում: Կարելի է ասել, որ վեպում կա նաև սիրային սյուժետային գիծ, որը թերևս դիպվածային է, սակայն ճակատագրական ու միևնույն ժամանակ պատված տարատեսակ պատահականություններով և համընկնումներով: Սակայն նկատենք, որ Օրհան Փամուքը ավելի վաղ կարծիք էր հայտնել, որ գրականությունը պետք է հնարավորինս հեռու մնա սիրո թեմայից: Եվ հենց Փամուքի խոստովանությամբ բավական բարդ է եղել, և ինքը ջանքեր է գործադրել միտումնավոր հեռու մնալու սիրո թեմայից¹, սակայն, մեր կարծիքով, դա չի ստացվել, և նրա գրեթե բոլոր գրքերում այդ թեման կա ուղղակի կամ տողատակերում: Քննարկվող վեպում, իհարկե, պատանի հերոսին իրենից տարիքով մեծ կնոջ նկատմամբ հետաքրքրությունը առաջին հերթին բխում է սեռական ցանկություններից, սակայն գրողը հետզհետե ներկայացնում է այդ հանդիպման ոչ պատահական, այլ ընդհակառակը՝ ճակատագրական լինելը: Վեպի այդ հատվածում են առաջին անգամ առասպելային տարրերը և իրական կյանքը միահյուսվում իրար: Խոսելով Կարմիր մազերով կնոջ հետ՝ Ջեմը պատմում է իր հորից, ով ձախակողմյան գործիչ է եղել, 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել է, կտտանքների ենթարկվել (էջ 68): Հարցնելով հոր անունը՝ Կարմիր մազերով կինը ընկնում է մտքերի մեջ և առաջարկում Ջեմին մի քիչ զբոսնել ու խոսել նրա հորից: Այդ գիշեր Կարմիր մազերով կնոջը ուղեկցելով տուն՝ 16-ամյա Ջեմը առաջին անգամ և շատ պատահականորեն սեռական հարաբերություն է ունենում նրա հետ, և դա

¹ St' u Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, 2011, 7, Baskı, s. 137.

տարիներ անց դառնալու էր առասպելի ոգով ապրող հերոսների կյանքում ճակատագրական:

Վեպի սյուժետային մյուս գիծը՝ ջրհոր փորելը, շարունակ ձգձգվում է, և ջուրը այդպես էլ չի գտնվում, սակայն վարպետ Մահմուդը հաստատական է և հույսը չկորցնելով՝ շարունակում է աշխատել: Եվ մի օր՝ աշխատանքի ընթացքում, հողով լի դույլը պոկվում է պարանից և ընկնում 25 մետր խորությամբ ջրհորի հատակում աշխատող Մահմուդի վրա: Աշկերտ Ջեմը նախ փորձում է ինչ-որ քայլեր անել, սակայն հետո հասկանում է, որ կարող են իրեն մեղադրել սպանության մեջ, և այդ դեպքում նրա բոլոր երազանքները՝ շարունակել կրթությունը, ջուրը կընկնեն: Ու հապշտապ հավաքելով իր իրերը և կարծելով, որ վարպետը մահացել է՝ արագորեն հեռանում է Օնգյորենից: Այսինքն՝ չի փորձում օգնել վարպետին, չի կանչում մարդկանց, որպեսզի ջրհորի հատակից բարձրացնեն Մահմուդին և գրեթե առասպելական մոտիվով սպանում կամ լքում է իր վարպետ-հորը:

Վեպի երկրորդ մասում դեպքերը շատ ավելի արագ են պատկերված. Ջեմը ընդունվում է համալսարան երկրաբան-ինժեներ մասնագիտությամբ, հաջողություններ արձանագրում ուսման մեջ: Նա անընդհատ փորձում է մոռանալ իր գործած հանցանքը՝ վարպետին լքելը, սակայն չի կարողանում, և միշտ նրան ուղեկցում է այն հարցը, թե ինչ եղավ վարպետին, արդյո՞ք նա փրկվեց, թե՞ ոչ: Պոստմոդեռնիստական պատկերումները ավելի ընդգծված բնույթ են ստանում, երբ սյուժեի մեջ է մտնում Մոֆոկլեսի գրած «Էդիպ արքա»-ի պատմությունը՝ որպես հերոսի մտասնեռում: Համալսարանական երրորդ կուրսում նա պատահաբար հանդիպում է «Էդիպ արքա»-ի թուրքերեն թարգմանությանը և անկախ իրենից կարդում, այնպես, «կարծես ուզում էի իմ կյանքի մասին մի գաղտնիք իմանալ» (էջ 95): Համալսարանն ավարտելուց հետո Ջեմը սկսում է աշխատել անշարժ գույքի կառուցապատման ոլորտում և կարճ ժամանակում մեծ հաջողությունների հասնում: Գործուղումներից մեկի ժամանակ՝ Թեհրանում, Ջեմը տեսնում է մի նկար, որը նրան ծանոթ է թվում. «Կարծես այդ թեման գիտեի, բայց ցանկացել էի մոռանալ» (էջ 105): Պարզվում է, որ այդտեղ հայտնի Շահնամեի «Ռոստամ և Ջոհրապ» առասպելի այն մասն է պատկերված, երբ Ռոստամը, չիմանալով սպանելով իր որդի Ջոհրապին, նրան գիրկն էր առել և գուրգուրում էր վերջինիս անշնչացած մարմինը: Ահա այստեղ Փամուքը առաջ է քաշում իր նախընտրած մյուս գիծը՝ Արևելքի և Արևմուտքի բախում այս անգամ «Ռոստամ և Ջոհրապ» առասպելի ու «Էդիպ արքա» ողբերգության միջոցով: Սակայն բախումը շատ ընդգծված և սուր չէ. երկու ստեղծագործությունները ավելի շատ լրացնում են միմյանց՝ դառնալով միևնույն պատկերի տարբեր կողմերը: Դրանից հետո հերոսի՝ Ջեմի մեջ «Ռոստամ ու Ջոհրապ»-ի և «Էդիպ արքա»-ի սյուժետային գծերը, մոտիվները միահյուսվում են. հերոսը այլևս չի կարողանում ազատվել դրանց ազդեցությունից և իր կյանքի

հետագա ընթացքը պայմանավորում է դրանցով՝ հետզհետե ավելի շատ տեղ տալով ֆատալիստական տարրերին:

Դիպաշարային մի դրվագ վեպի կեսերից սկսում է զարգանալ ու ինչ-որ մի պահից՝ լրացնել հիմնական գիծը. Ջեմը, ամուսնանալով իր սիրած աղջկա՝ Այշեի հետ, կազմում է ընտանիք, սակայն չի կարողանում երեխա ունենալ: Վեպում ժամանակ առ ժամանակ հեղինակը նշում է, որ գույգը շատ է ուզում երեխա ունենալ, դիմում է տարբեր մեթոդների, արտասահմանյան բժիշկների, սակայն անօգուտ: Ջեմը և Այշեն, լինելով բավական ապահովված, մարդիկ սկսում են շրջագայել աշխարհով, սակայն այդ շրջագայություններում անգամ առասպելները ուղեկցում են նրանց: Մասնավորապես՝ լինելով համաշխարհային ճանաչում ունեցող թանգարաններում՝ նրանք հատկապես կենտրոնանում են հոր կողմից որդուն սպանող կամ հակառակը պատմող ցուցանմուշների, նկարների վրա: Օրինակ՝ մոսկովյան Տրետյակովյան պատկերասրահում Իվան Ահեդի կողմից որդուն սպանելու նկարը նրանց մեջ անմիջապես զուգահեռներ է առաջացնում Ռոստամի կողմից Ջոհրապին սպանելու առասպելի հետ (էջ 122): Հեղինակը ի ցույց է դնում Ջեմի և Այշեի երջանիկ հարաբերությունները, և չնայած որ երեխա չեն ունենում, բայց նրանք դառնում են լավ ընկերներ, ամուսիններ: Այշեն նույնպես տարվում է Ջեմին տանջող պյուժեներով և պատումներով, ու նրանք միասին են դառնում այդ առասպելների ոգով ապրողներ՝ առասպելակենտրոն անձինք: Ջեմը, որոշ ժամանակ անց ի մի բերելով իր կյանքն ու ձեռքբերումները, նկատում է. «Իմ կյանքում ի՞նչ գեղեցիկ բան կա բացի կնոջս հետ լավ ընկերական հարաբերություններից և Ջոհրապի ու Էդիպի պատմությունների հանդեպ սիրողական հետաքրքրությունից» (էջ 125):

Մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելուց հետո՝ Ջեմը ստեղծում է իր սեփական շինարարական կազմակերպությունը և այն անվանում առասպելի հերոսի անվամբ՝ «Ջոհրապ»: Տարիներ անց էլ Ջեմի հոր թաղման ժամանակ նրան է մոտենում մի անծանոթ՝ Սըրրը անունով (այդ անունը նույնպես խորհրդանշական է, և կարելի է նմանեցնել *sir*՝ գաղտնիք բառին) և ներկայանալով որպես Օնգյորենի բնակիչ՝ դիմում է խնդրանքով ու խոսքի մեջ պատմում, որ վարպետ Մահմութը տարիներ առաջ, ի վերջո, այն ջրհորից ջուր է գտել: Այդ միջոցով Ջեմը իմանում է, որ տասնամյակներ շարունակ իրեն տանջած գաղտնիքը, թե արդյոք ջրհորն ընկած վարպետը ողջ է մնացել, թե ոչ, պարզվում է: Ավելին՝ ջուրը գտնելուց հետո այդ տարածքի տերը և պատվիրատուն Մահմութին շոալորեն վարձատրել է և ընկնելու պատճառով վիրավորված վարպետին հարգանքով են վերաբերվել. նա հաստատվել է Օնգյորենում, որտեղ համընդհանուր հարգանքի պայմաններում ապրել է և տարիներ հետո մահացել (էջ 137): Ահա հենց այս Սըրրը անունով մարդը, ով ծանոթ է լինում Ջեմի հորը, պատմում է, որ հոր մասին

տաքածված է մի ասեկոսե, համաձայն որի՝ հայրը, ով եղել է ձախակողմյան շարժումների ակտիվ անդամ, սիրահարված է եղել այդ շարժման մասնակից գեղեցիկ մի աղջկա, ում հետ որոշ ժամանակ համատեղ ապրել են: Սակայն այդ նույն աղջկան սիրել է շարժման ղեկավար կազմից մեկ ուրիշը, և ի վերջո աղջիկը ամուսնացել է նրա հետ: Որոշ ժամանակ անց հոր սիրելիի ամուսնուն սպանում են, ու նա այս անգամ ամուսնանում է վերջինիս կրտսեր եղբոր հետ: Սակայն ամենահետաքրքրականն այն է, որ այդ կինը, պարզվում է, եղել է Օնգյորենում շրջիկ վրանային թատերական խմբի դերասանուհին՝ Կարմիր մազերով կինը՝ Գյուլջիհանը, ով հերոսի՝ Ջեմի հոր փաստացի կինն է եղել և հետո սեռական մեկանգամյա կապ է ունեցել նրա որդու հետ: Այդ գրույցից հայտնի է դառնում, որ Կարմիր մազերով կինը որդի է ունեցել, ում հետ էլ ապրում է Օնգյորենում և որդին էլ աշխատում է որպես հաշվապահ (էջ 139): Փաստորեն, առասպելական որոշակի տարրեր արդեն իրականություն էին դառնում և հերոսն ու նրա հայրը սեռական կապ են ունեցել նույն կնոջ հետ, հայրը՝ տնական, իսկ որդին՝ դիպվածային:

Դրանից հետո, կապված «Ջոհրապ» կազմակերպության գործունեությունից առաջացած դժգոհությունների հետ, Ջեմը սկսում է ստանալ տաքատեսակ նամակներ, և դրանցից մեկը ուշագրավ է լինում ու մի կողմից ազդում հերոսի ներաշխարհի վրա, իսկ մյուս կողմից լրացնում առասպելական ընթացքը: Նամակում ասվում է. «Պարո՛ն Ջեմ, հարգանքներիս հավաստիքը, դու իմ հայրն ես: «Ջոհրապ» կազմակերպությունը Օնգյորենում սխալ բաներ է անում: Քեզ որպես քո որդի ուզում եմ նախազգուշացնել: Եթե այս հասցեով ինձ գրես՝ ամեն ինչ կպատմեմ: Որդուցդ մի՛ վախեցիր: Էնվեր» (էջ 142): Հատկապես ուշագրավ է վերջին նախադասությունը, որը նույնպես գալիս է լրացնելու առասպելական բնույթը՝ վախենալ որդուց, ով կարող է սպանել հորը՝ ըստ առասպելի տրամաբանության: «Ջոհրապ» կազմակերպությունից դժգոհությունները վերածվում են ավելի լայնամասշտաբ բողոքի գործողությունների Օնգյորենում, և Ջեմի գործընկերներն ու աշխատակիցները նրան խորհուրդ են տալիս գնալ Օնգյորեն, գրուցել տեղի բնակիչների հետ և ցրել վատ տրամադրվածությունը: Սակայն հետաքրքիր է, որ հերոսը չի համարձակվում գնալ Օնգյորեն մի քանի պատճառներով, որոնցից մեր կարծիքով, գերակա են հետևյալ երկուսը. նախ՝ նրա ենթագիտակցության մեջ այդ վայրը, ի վերջո, հանցանքի վայր է, որտեղ նա լքել է իր վարպետին: Իսկ մյուս խնդիրը ճակատագրապաշտական դրդապատճառներն են, ինչի մասին հերոսը խոստովանում է. «Էդիպի և Ջոհրապի պատմություններով տարիներ շարունակ տարվելը իմ սիրտը լցրել էր վախով, և դա անշուշտ ազդեցություն ուներ» (էջ 143): Դրանից հետո Ջեմի աշխատակիցը հայտնում է, որ Օնգյորենում իրոք հայտնվել է մի 26-ամյա երիտասարդ, ով պնդում է, թե նա Ջեմի որդին է, իսկ նրա մայրը դերասանուհի է՝ Կարմիր մազերով կինը, ում հետ տարիներ առաջ Ջեմը մեկանգամյա սեռական կապ է ունեցել:

Առաջարկվում է նաև կատարել ԴՆԹ թեստ, որն էլ կապացուցի այդ պնդման իսկությունը: Հեղինակը մի դետալ էլ է ավելացնում պատմությանը, որը կրկին աղերսներ ունի առասպելների հետ. նրա ենթադրյալ որդին՝ Էնվերը, հարում է ազգայնամոլ ու կրոնամոլ շրջանակներին և ասում է ձախակոդյաններին, ինչպես նաև ասում է հորը ու չարացած է կյանքի նկատմամբ (էջ 145): Այստեղ ուշագրավ է այն, որ Ջեմի հայրը, ինչպես նշվեց, եղել է ձախակոդյան, և փաստորեն թոռը ասում է իր պապի կոդմնորոշումը, և դրանով բերվում է առասպելի հետ ևս մեկ համեմատական՝ ասել իր սեփական հորը կամ պապին: Ի վերջո, ԴՆԹ-ի թեստը ապացուցում է, որ Էնվերը Ջեմի որդին է և բացի դրանից՝ իրավունք է ստանում հավակնել հոր ունեցվածքից մասնաբաժնի և նաև հոր ժառանգորդը ճանաչվելուն: Այդ նորությունից հետո հերոսը ներկայացնում է իր հոգեկան ներքին ապրումները՝ կրկին դրանք կապելով առասպելներից բխող իր մտասկզբունքի հետ և ֆատալիստական երանգավորմամբ եզրակացնում է. «Միթե՞ տասնամյակներով Էդիպ արքայի և Ռոստամի ու Ջոհրապի պատմությունները հենց սրա համար էինք ուսումնասիրում» (էջ 147): Հետաքրքրվելով իր ապօրինի տղայով՝ Ջեմն իր համար պարզում է շատ կարևոր մի հանգամանք. Էնվերը բանաստեղծություններ է գրում, այսինքն՝ գրող է, ինչպիսին ցանկանում էր դառնալ ինքը՝ Ջեմը, սակայն որդին գրում և տպագրում է իր բանաստեղծությունները կրոնական և պահպանողական ուղղվածություն ունեցող ամսագրերում (էջ 148-149):

Ի վերջո, երկար խուսափումներից հետո Ջեմը համաձայնվում է գնալ Օնգյորեն, մասնակցել «Ջոհրապ» կազմակերպության նիստին և հանդիպել տեղի բնակչությանն ու գործընկերներին: Հանդիպումից հետո տեղի ունեցած խնջույքի ընթացքում նա հանդիպում է նաև Կարմիր մազերով կնոջը, ով նրան պատմում է 1980-ականներից հետո իր կյանքի, Ջեմից ունեցած որդու մասին: Նաև տեղեկացնում է, որ տեղի երիտասարդներից, որոնք նաև իր որդու ընկերներն են, ստեղծել է թատերական սիրողական խումբ, և ցանկանում են բեմադրել «Էդիպ արքա»-ն: Ֆատալիստական երանգավորումները վեպի վերջում էլ ավելի ցայտուն են դառնում. մասնավորապես՝ Ջեմը հայտնում է, որ իր գլխավոր և միակ ցանկությունը վարպետ Մահմութի հետ իրենց փորած ջրհորը տեսնելն է: Կարմիր մազերով կինը առաջարկում է, որ թատերասեր երիտասարդների խմբից Սերհաթ անունով մի երիտասարդ ուղեկցի Ջեմին և ցույց տա ջրհորի տեղը: Երիտասարդի անունը ևս որոշակի այլաբանական իմաստ ունի. Սերհաթ նշանակում է սահման, եզրագիծ: Որոշ ժամանակ անց Ջեմը և Սերհաթը աննկատ դուրս են գալիս ռեստորանից և հեղինակի բնորոշմամբ՝ «սովերների, մթության և հիշողությունների միջով լուռ քայլում» (էջ 158) դեպի ջրհորը: Ճանապարհին Ջեմի ֆատալիստական և այլաբանական փնտրտուքների տրամաբանությունը շարունակվում է, ու հերոսը նկատում է. «Ես զգում էի, որ մոտենում էինք

ջրհորին, և ավարտին էր մոտենում տասնամյակներ տևած իմ փնտրտուքը» (էջ 161):

Ջրհորը գտնվում էր մի գործարանի պարսպից ներս, և մինչ Սերհաթը փնտրում է այնտեղ մուտք գործելու ճանապարհ, Ջեմին է զանգահարում կինը՝ Այշեն, և լսելով պատմությունը՝ խնդրում անմիջապես ետ դառնալ, քանի որ Սերհաթը իրականում կարող է լինել նրա ապօրինի որդին՝ Էնվերը, և որպես դրա ապացույց հավելում ամուսիններին տասնամյակներով ուղեկցած մտասնեռումից մի դրվագ. «Մենք տարիներով քեզ հետ ո՞ր պատմություններն էինք կարդում» (էջ 163): Սակայն անգամ այս երկխոսության մեջ սկսում են գերիշխել արևելյան և արևմտյան առասպելների մոտիվները. Այշեն նկատում է, որ եթե այդ երիտասարդը Ջեմի որդին է, ապա նա կսպանի Ջեմին, ինչպես «արևմտյան մի խոովարար» (էջ 163), այսինքն՝ ասոցացնելով Էդիպ արքայի հետ: Սրան Ջեմը զրույցի նույն տրամաբանությամբ պատասխանում է. «Այդ ժամանակ ես էլ Ռոստամի նման ասիացի մի բռնակալ հայր կդառնամ և այդ անհարգալից զավակից շուտ ես նրան կսպանեմ» (էջ 164): Որոշ ժամանակ անց նրանք մոտենում են հին ջրհորին, միասին բացում կողպեքը և վրայի ժանգոտած ծանր կափարիչը: Հերոսը, թվում է, թե ի վերջո հասնում է իր երազանքին՝ տեսնում է տասնամյակներ առաջ իրենց փորած ջրհորը, իր հանցանքի վայրը, սակայն անմիջապես սկսվում է նախ կրոնական հողի վրա բանավեճ մինչ այդ իրեն շատ ավելի հարգալից պահող Սերհաթի հետ: Բանավեճի ընթացքում նրանք անդրադառնում են նաև մոդեռնին, ու Սերհաթը ասում է, որ ինքը մոդեռն լինելու հետ է կապում սեփական զավակից հրաժարվելու և հայրություն չանելու խնդիրը, որպեսզի այդ կերպ երեխաները մոդեռն դառնան: Այնուհետ հանկարծակի հարցնում է Ջեմին. «Դու էլ ես ինձ լքել, որպեսզի ես մոդեռն դառնամ» (էջ 167): Ահա այսպես հեղինակը բացահայտում է, որ իրականում Սերհաթը Ջեմի ապօրինի որդի էնվերն է, ով հարցնում է Ջեմին, թե ինչու չի պատասխանել իր նամակին և շարադրում իր մտքերը ընդհանրապես հայրերի և իր ընկալումների մասին: Վերադառնալով առասպելականություն թեմային՝ Էնվերը հանկարծ հարցնում է Ջեմին, թե արդյոք չի վախենում ջրհորը ընկնելուց, կամ որ ինքը Ջեմին կզցի ջրհորը: Դրա համար նա թվարկում է պատճառները. «Վարպետ Մահմութի վրեժը լուծելու համար, ինձ լքելու համար, ամուսնացած մորս խաբելու համար, տարիներ անց որդուդ նամակը անպատասխան թողնելու համար...» (էջ 170): Նաև հավելում է, որ միշտ ցանկացել է հորը կուրացնել: Երբ զրույցը էլ ավելի է թեժանում, Էնվերը քայլ է անում դեպի Ջեմը, իսկ նա, գրպանից հանելով ատրճանակը, զգուշացնում է, որ կկրակի: Դրան ի պատասխան՝ Էնվերը հարձակվում է Ջեմի վրա, նրան տապալում գետնին, ու սկսվում է հայր ու որդու կռիվը ընդ որում՝ Ռոստամի և Ջոհրապի նման. «Սկզբում Էնվերը ինձ գետնով տվեց, հետո՝ ես նրան, հետո՝ կրկին նա և

ատրճանակը վերցնելու համար ձեռքիցս բռնեց ու սկսեց հարվածել ջրհորի բետոնին...» (էջ 171):

Վեպի երրորդ մասը պատմում է Կարմիր մագերով կինը, ով նախ անդրադառնում է 1980 թ. ռազմական հեղաշրջումից առաջ և հետո իրենց ձախակողմյան գործունեությանը, իր սիրելիի, այսինքն՝ Ջեմի հորը: Կինը խոստովանում է, որ տարիներ հետո, երբ Օնգյորենում տեսել է Ջեմին, անմիջապես նմանեցրել է հորը և հետաքրքրվել պատանիով: Ծանոթանալուց հետո լսելով Ջեմի պատմածները՝ լիովին համոզվել է, որ նա իր սիրելիի որդին է: Կարմիր մագերով կինը նույնպես առասպելականություն և ճակատագրապաշտական պահվածք է դրսևորում. «Ինչքան շատ ես կարդում, ինչքան շատ ես հավատում առասպելներին, այնքան շատ եմ դրանք քո գլխին գալիս» (էջ 181): Կարմիր մագերով կինը պատմում է Ջեմի սպանվելու մանրամասները՝ նշելով, որ տղան՝ Էնվերը, պատահաբար է սպանել հորը: Երկու օր հետո ջրհորի հատակից հանում են Ջեմի դին, և դատաբժշկական քննությունը պարզում է, որ նա մահացել է մինչև ջրհորը ընկնելը, սակայն մահվան մեթոդի մեջ նույնպես կա «Էդիպ արքա»-ի ողբերգության հետ զուգահեռ. Ջեմը մահացու վիրավորում է ստացել աչքից, իսկ հայտնի է, որ Էդիպ արքան վերջում կուրացնում է ինքն իրեն: Այսինքն՝ Էնվերի ցանկությունը՝ հորը կուրացնել, և ի վերջո՝ կրակելը նրա աչքին, նույնպես ֆատալիզմի տրամաբանական շարունակությունն է: Կարմիր մագերով կինը, անդրադառնալով Ջեմի սպանությանն ու իր թատերական գործունեությանը, բերում է հետևյալ զուգահեռը. տասնամյակներ առաջ իր շրջիկ թատերախմբում նա մասնակցում էր «Էդիպ արքա»-ի և «Ռոստոմ ու Ջոհրապ»-ի բեմադրմանը ու որոշակի տեղում սկսում ողբալ սպանված հերոսի համար: Ճիշտ այդպես էլ տարիներ հետո ջրհորի մոտ նա ողբում է իր որդու և նրա կողմից սպանված հոր՝ Ջեմի համար և եզրակացնում. «Առասպելների և կյանքի միջև պարտադրված զուգահեռ կար» (էջ 190): Վեպի վերջում բանտում գտնվող որդուն այցելող Կարմիր մագերով կինը հայտնում է, որ Էնվերը պատրաստվում է գրել վեպ, որտեղ պատմելու է «ամեն ինչի մասին». նկատի ունի հայր-որդի հարաբերությունները, առասպելները, հայրազրկությունը և այլն: Փամուքը նաև նշում է, որ պեսոփ Էնվերը կարողանա գրել այդ գիրքը, պետք է «Հոր նման գրքեր կարդա, փորձի հասկանալ, թե հայրը ինչպես է մտածել երիտասարդ տարիներին, իրեն պետք է դնի նրա տեղը» (էջ 194): Այսինքն՝ կրկին պոստմոդեռնիստական ինքնության որոնման ձևը, համաձայն որի՝ եթե ուզում ես գտնել քեզ, ապա պետք է դառնաս ուրիշը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Օրհան Փամուքի նոր վեպում պահպանված են փամուքյան և պոստմոդեռնիստական որոշ մեթոդներ ու առանձնահատկություններ, սակայն, ի համեմատություն գրողի նախորդ գրքերի, այստեղ ավելի քիչ են հանդիպում քառասյին և հաճախ արհեստա-

կան տպավորություն թողնող պատկերումները: Այս վեպում փորձ է արված ավելի շատ ճակատագրապաշտության համապատկերում ներկայացնել մի կողմից Արևելք-Արևմուտք բախումը, մյուս կողմից ինքնության փնտրտուքը և այդ պատճառով իրականն ու միֆականը երբեմն բավական վարպետորեն միահյուսված են իրար: Նկատենք նաև, որ փամուքյան բարդ ոճին ծանոթ ընթերցողների համար այս վեպում այլաբանական գաղտնանշանները ավելի հեշտ ընկալելի են: Սակայն, այնուամենայնիվ, վեպը ընթերցելուց հետո մի շարք հարցականներ շարունակում են մնալ, և պոստմոդերնիստ հեղինակի ձգտումը՝ ամեն ինչ ներկայացնել ցայտուն կամ թույլ արտահայտված քառսի շրջանակներում և առիթ տալ բազմաթիվ եզրակացությունների, ստացվել է: Անգամ հայտնի չէ, թե արդյոք գրողը մեղադրում է որդուն հորը սպանելու համար, և ինչպես նկատել է թուրք գրականագետ Յըլդըզ Էջնիթը, Օրհան Փամուքի ստեղծագործություններում անորոշությունը չի շրջանցում ոչ մի ոլորտ ու անգամ «հանցագործն էլ, զոհն էլ ճիշտ են, միակ ճիշտ լուծում չկա»¹:

**Геворг Саакян - Сочетание фатализма и мифов в романе Орхана Памука
«Рыжеволосая женщина»**

Проблема отцов и сыновей или учителей и учеников довольно распространена в восточной литературе, в особенности религиозная вариация отношений учителей (мюршид) и учеников (мюрид). Известный турецкий писатель, лауреат Нобелевской премии Орхан Памук, использовал эту тему в ряде своих романов, пытаясь представить его как проблему поиска и достижения совершенства. Будучи постмодернистическим автором и выступая за развитие различных компонентов этого направления, Памук использовал эту идею поиска совершенства в качестве основы его романов, которые в основном концентрируются на личности героя и поиски своего "я". В постмодернистских произведениях, тема фатализма обсуждается также в некоторой степени.

Последний роман, написанный Памуком и опубликован в 2016 году под названием "Рыжеволосая женщина" посвящена поиску своей идентичности сопровождаемая фатализмом. Тем не менее, он рассматривает тему поиска в этой работе в контексте сочетания компонентов классического и популярного восточного мифа о Ростаме и Сохраби с западной трагедией Софокла Царь Эдип, путем преобразования существующих мотивов в работах.

¹ Ecevit Y., նշվ. աշխ., էջ 165.

**Gevorg Sahakyan - *The Combination of Fatalism and Myths in Orhan Pamuk's Novel
"The Red-Haired Woman"***

The topic of the relationship between fathers and sons or master and students is widely spread in eastern literature, especially the topic's religious variation with Masters (Myurshid) and students (myurid). Famous Turkish author, Nobel Prize winner, Orhan Pamuk (born in 1952), uses this theme in a number of his novels, trying to envision it as a problem of desire and attainment of perfection. Being postmodern author and advocating for the development of a different component of this direction, Pamuk used this idea of the search for perfection as the basis of his novels, which mostly concentrates on the hero's identity and myurid. In the post-modern works, the theme of fatalism is also discussed to some extent.

The last Novel written by Pamuk and published in 2016 is entitled "The Red-Haired Woman" and is dedicated to the search of one's identity accompanied with fatalism. Nevertheless, Pamuk views the theme of the search for this work in the context of the combination of the classic and popular eastern myth of Rostam and Sohrab's components and western tragedy by Sophocles Oedipus the King, by transforming the existing motives in the works.

ՄԻ ԼՐԱՅՈՒՄ ՄԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

***Բանալի բառեր** – Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Արշակ Չոպանյան, Նադաշ Նովնաթան, Պարույր Սևակ, Գևորգ Ախվերդյան, սայաթնովագիտություն, քննական-համեմատական մեթոդ, գրական ավանդույթներ, գեղարվեստական պատկեր, գրական ազդեցություն, հայ միջնադարյան տաղերգություն*

Հայոց միջնադարյան տաղերգությունը, որ ռուս ականավոր բանաստեղծ, համաշխարհային պոեզիայի մեծ գիտակ Վ. Բրյուսովի իրավացի բնորոշմամբ «մեկն է մարդկային ոգու այն սքանչելի հաղթանակներից, ինչպիսիք գիտի բովանդակ աշխարհի տարեգրությունը»¹, կտակել է սքանչելի շատ էջեր, որոնց մեջ իր կայուն տեղն ունի Սայաթ-Նովայի ստեղծագործությունը։ Սայաթ-Նովայից մեզ հասած ժառանգության ուսումնասիրությունն արդեն ունի ավելի քան հարյուր վաթսու տարվա պատմություն։ Այդ ժամանակաշրջանում սայաթնովագիտությունը ստեղծել է մի պատկառագրու գրականություն², որը թեև, ճիշտ է, լեցուն է իրարամերժ կարծիքներով ու հակասություններով, ենթադրություններով ու շփոթություններով, շատ դատումներ էլ արդեն հնացած են և անընդունելի, այնուամենայնիվ վստահորեն կարող ենք ասել, որ սայաթնովագիտությունը արձանագրել է էական նվաճումներ թե՛ բանաստեղծի կենսագրության և թե՛ նրա ստեղծագործության գրականագիտական վերլուծության ասպարեզում։ Այդ քննությունների մի հիմնական մասը հաճախ ունի թուուցիկ բնույթ. կա՛մ, ասենք, գրված է առաջաբանների սահմանում, բանախոսությունների ոճով, կա՛մ ընդհանուր գնահատանքի մակարդակով։ Սակայն գրականագիտության պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ անգամ ծավալով փոքր հոդվածներում երբեմն առավել բնութագրական գնահատականներ են տրվում այս կամ այն գրողին կամ որևէ ստեղծագործությանը։ Հաճախ էլ կողմնակիորեն արված մի դիտողություն կամ ակնարկ, մի դատում կամ ասույթ հատուկ հնչեղություն են առնում, առանցքային դառնում տվյալ հեղինակի ստեղծագործությունը ճիշտ ընկալելու, առանձին հատկանիշներ մեկնելու կամ գնահատելու համար։ Հենց այս առումով ուշագրավ են այն գնահատականները, որակումները, որոնք հայ միջնադարյան քնարերգության մեծ գիտակ Արշակ Չոպան-

¹ «Поэзия Армении», М., 1967, с. 7.

² Տե՛ս **Սևակ Պ.**, Սայաթ-Նովա, Մատենագրական ցանկ, Երևան, 1987, էջ 384-397, **Բախչինյան Հ.**, Սայաթ-Նովա, կյանքը և գործը, Երևան, 1988, էջ 341-350:

յանը տվել է Սայաթ-Նովայի ստեղծագործությանը: Թեպետ նա հատուկ ուսումնասիրություն չի գրել մեծ տաղերգուի և նրա ստեղծագործության մասին*, սակայն տարբեր առիթներով, ավելի հաճախ շատ հակիրճ բնութագրումներով անդրադարձել է Սայաթ-Նովայի բանաստեղծությանը, արել հետաքրքիր մի շարք նրբին դիտարկումներ, որոնք, սակայն, անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել: Սակայն հենց միայն այն փաստը, որ առաջին անգամ Ա. Չոպանյանն է Սայաթ-Նովային, Նաղաշ Հովնաթանին ու Նահապետ Քուչակին դրել համեմատության մեջ, նրանց քնարերգության մեջ մատնանշել ինչպես էական տարբերակիչ, այնպես էլ որոշ ընդհանուր հատկանիշներ, արդեն բավական է, որ նրա գնահատականները Սայաթ-Նովայի քնարերգության վերաբերյալ պատշաճ ուշադրության արժանանան:

1910 թ.՝ սայաթնովագիտության մի նոր, աննախադեպ վերելքի շրջանի հենց նախաշեմին, երբ դեռ լույս չէր տեսել Հովի. Թումանյանի «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» հայտնի ուսումնասիրությունը, Ա. Չոպանյանը հրատարակեց «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գիրքը:

Գիրքը պարունակում է Նաղաշ Հովնաթանի տաղերը և Հովնաթան Հովնաթանյանի որմնանկարների և գեղանկարների լուսանկարչական վերարտադրությունները, վերջանում է Նաղաշ Հովնաթանի Հակոբ որդու ողբերգով՝ ասված հոր մահվան կապակցությամբ: Այն ունի նաև համառոտ մի առաջաբան, որտեղ Ա. Չոպանյանը գնահատում և խնամքով վեր է հանում թե՛ բանաստեղծի (Ա մաս) և թե՛ նկարչի (Բ մաս) ստեղծագործությունների արժանիքները:

Այս հատորը դարձավ Նաղաշ Հովնաթանի վերաբերյալ առաջին գիտական ուսումնասիրությունը, որի լույս տեսնելուց հետո մեր բանասիրության մեջ բանաստեղծի երգերի հրատարակության, մասամբ և ուսումնասիրության գործում սկսվեց մեծ աշխուժացում: Պարբերական մամուլում՝ թերթերում, հանդեսներում, ամսագրերում, ինչպես նաև առանձին գրքերով լույս տեսան ուսումնասիրություններ և գրախոսություններ՝ նվիրված Նաղաշ Հովնաթանի կյանքին և ստեղծագործությանը¹: Վերջիններս, ճիշտ է, թեև ունեն նյութի ավելի լայն ընդգրկում և ավելի ամբողջական են քննության տեսակետից, սակայն պետք է ասել, որ բանաստեղծի ստեղծագործության վերլուծության և գնահատման այն ընդհանուր ելակետային սկզբունքները,

* Պետք է ավստոսալ, որ ականավոր բանասերն ու գրականագետը, որ բազմաթիվ ուսումնասիրություններ ունի ժամանակով հեռու ու մոտիկ հայ միջնադարյան շատ հեղինակների մասին՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Նաղաշ Հովնաթան, առանձին ուսումնասիրություն կամ հոդված չի նվիրել Սայաթ-Նովային: Դժվար է ասել, թե որն է եղել «ձեռնպահ մնալու» պատճառը:

¹ Այդ մասին տե՛ս **Մկրտչյան Մ.**, Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 14-18:

որոնք առաջադրել էր Չոպանյանը, այնուհետև հիմք ծառայեցին Ն. Հովնաթանի ժառանգության գրեթե բոլոր ուսումնասիրողների համար:

Մեզ համար, սակայն, Ա. Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գրքի առաջաբանում ուշագրավն այն է, իհարկե, որ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության վերլուծությունը Չոպանյանը կատարել է ոչ թե ինքնամփոփ ձևով, այլ ընդհանուր արևելյան և հայ միջնադարյան բանաստեղծության տեսադաշտում անհրաժեշտ գու-գահեռներով ու զուգորդումներով՝ մասնավորապես Ն. Հովնաթանի բանաստեղծությունը համեմատելով Ն. Քուչակի ու Սայաթ-Նովայի գործերի հետ:

Չնայած այդ համեմատությունները կատարվում են առաջաբանի ընդամենը մի քանի էջում, սակայն տված գնահատականները ունեն գիտական լրջություն ու խորություն և ցույց են տալիս, թե ըստ ամենայնի որքան ճիշտ է Չոպանյանը ըմբռնել ու հասկացել բանաստեղծներից յուրաքանչյուրի ստեղծագործության առանձնահատկությունները, նրանց երգերի բնավորությունը: Քննական-համեմատական այդ մեթոդով գրականագետը ուղղակի թե անուղղակի պարզում է նաև սայաթնովյան երգերի և արևելյան քնարերգության միջև եղած գեղարվեստական-տիպաբանական ընդհանրությունները, հատկապես Հովնաթանի քնարերգությանը տված գնահատականների դիրքից բացահայտում Սայաթ-Նովայի երգերի առանձին կողմեր: Երկու բանաստեղծների ստեղծագործության վրա էլ Չոպանյանը նկատում է արևելյան, մասնավորապես թուրքական ու պարսկական բանաստեղծության ազդեցությունը. «Յովնաթանի բանաստեղծութիւնը չի կրնար Քուչակին հետ բաղդատուիլ: Չունի անոր չափ ցեղային ինքնատիպութիւն: Սայաթ-Նովայի պէս՝ Յովնաթան ալ տոգորուած է պարսիկ ու թուրք բանաստեղծութեան ազդեցութեամբ. և որքան ալ խորքին մէջ հայկական շէշտն զգալի ըլլայ, իր ձևին մէջ մահմետական գեղեցկագիտութենէն շատ տարբեր կը մտնեն»¹: Ավելի քան կես դար առաջ ոչ միայն Սայաթ-Նովայի, այլև ընդհանրապես հայ աշուղական բանաստեղծության վրա արևելյան քնարերգության ազդեցության մասին խիզախել էր խոսել Գ. Ախվերդյանը. «...Մեր երգիչներն (նկատի ունի հայ աշուղներին – Վ. Ա.) չեն մնացել զուրկ ներգործութենից Օսմանցոց, Թուրքաց, մանաւանդ Պարսից, որք առաջնորդել են մեզ ճաշակումն, ու առհասարակ միշտ ունեցել են մեծ ազդեցութիւն մեր կենցաղավարութեան վրայ: Հայերէն ասած խաղերու երաժշտական եղանակներն, բանաստեղծական ձևերն, խօսքի դարձուածն միշտ պատահում են Պարսից ու Թուրքաց մէջ. սրանցմէն հաւաստեալ փոխ առած պիտի ըլի մեր աշուղն (Սայաթ-Նովան – Վ. Ա.) իր ձևերն»: Խիզախել էր, բայց բանը չէր հասցրել ավարտի. «Բայց էս կարծիքն, որն որ երեսանց ապացույցի կարօտ չէ, ստու-

¹ **Չոպանեան Ա.**, Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 13:

¹ Согласно распространенному в славяноведении мнению, основой старославянского языка были македонские говоры болгарского языка IX в., которые относились к южнославянской группе (Горшков А. И., указ. соч., с. 34-35, Вайан А., указ. соч., с. 15). Н. Толстой ограничивает этот период, считая основой старославянского южнославянский солунский диалект (Толстой Н. И., Старославянский язык // Лингвистический энциклопедический словарь (далее – ЛЭС), М., 1990, с. 491-492).

² Ср.: «Гласный Ъ также имел дифтонгический, но не сужающийся, а расширяющийся характер (отход от сильной палатализации к менее напряженной, увеличение раствора или уменьшение подъема: дѣло произносилось как [д^{нѣ}ло])» (Широков О. С., указ. соч., с. 218).

³ Вайан А., указ. соч., с. 35, Горшков А. И., указ. соч., с. 90.

⁴ Селищев А. М., указ. соч., с. 260.

⁵ «Новый словарь древнеармянского языка», ч. I, Ереван, 1979, с. 758-760 (на арм. яз.). «Новый словарь древнеармянского языка» впервые был издан в 1836-1837 гг.

⁶ Казарян Р. С., Словарь древнеармянского языка, т. А., Ереван, 2000, с. 455-456 (на арм. яз.).

среднего рода с указанными основами показатель -*Ѣ* есть в двойственном числе номинатива и аккузатива (ср.: сел*Ѣ* «два села», жен*Ѣ* «две жены»)¹.

Вышеупомянутые характеристики древнеармянского *ġ* и старославянского *Ѣ* позволяют с помощью типологических обобщений ответить на связанные с этими двумя фонемами вопросы или хотя бы предложить достоверные гипотезы. Соответственно:

1) Если в древнеармянском вышеупомянутые процессы завершились до V века, то в старославянском они, судя по всему, растянулись на протяжении всего существования языка (IX–XII вв.) и в том или ином виде (звукоизмененном или нет) перешли в другие славянские языки. С точки зрения типологии неважно, в каком языке и когда произошли данные процессы, важно, что они в целом имели общие тенденции развития. Соответственно, как в древнеармянском есть и дифтонгический, и восходящий к простому гласному *ġ*, так и в старославянском есть и дифтонгический, и восходящий к простому гласному *Ѣ*. В обоих языках значительно преобладают *ġ/Ѣ* дифтонгического происхождения, то есть *ġ₂/Ѣ₂*. Но, что более важно, как для *ġ₂* дифтонгического происхождения, так и для *Ѣ₂* реконструируются те же индоевропейские праформы **oi(*ai)* и **ei*. Восходящие к гласным *ġ(ġ₁)/Ѣ(Ѣ₁)* по сравнению с дифтонгическими появились раньше. Если разногласия по поводу звуковой сущности древнеармянского *ġ* (дифтонг или простой гласный) относятся к периоду до середины V века (а по нашему убеждению, к дописьменному периоду армянского – до 405 г., в течение которого, надо думать, *ġ* превратился в простой гласный, артикуляционно противопоставившись *ġ* (е), как долгий гласный – краткому), то в случае со старославянским этот период длится, по меньшей мере, до середины IX века (855/863 гг.), до создания глаголицы и кириллицы². И раньше этого говорить о звуковой сущности *Ѣ*, естественно, затруднительно, и мнения могут иметь только характер гипотезы. Пожалуй, именно это является причиной того, что в славяноведении данный вопрос, в основном, остается открытым. В период старославянского языка приписыванию *Ѣ* происхождение от простого гласного препятствует то, что некоторые фонемы, обозначенные письменными знаками ю, љ, а [ja], ю, љ, считаются дифтонгами³. Но, по нашему мнению, более достоверна точка зрения, согласно которой в результате закона *открытого слога* в старославянском прежние дифтонги подверглись монофтонгизации, то есть превратились в простые гласные. В частности, «дифтонги ai, āi перешли в долгое e, которое потом изменилось так же, как и исконное ē, т. е. дало Ѣ: **вѣдѣ** «знаю» – из **voidai...*, **снѣгъ** из **snoigʷos* → из **snaigas...*, цѣна из **kʷoina* → из **kaina...*»⁴. Следовательно, можно сказать, что вышеупомянутое ограничение скорее кажущееся, чем реально существующее. Если не в старославянский период, то

¹ Вайан А., указ. соч., с. 106–120, Горшков А. И., указ. соч., с. 125–130.

² Князевская О. А., Кириллица // ЛЭС, с. 222.

³ Вайан А., указ. соч., с. 40.

⁴ Савченко А. Н., указ. соч., с. 124–125.

встарорусский период- XV-XVIII вв.¹ – Ъ(Ъ₂) дифтонгического происхождения несомненно трансформировался в простой гласный. Доказательством можно считать случаи путаницы Ъ с є[е] и и[i], содержащиеся в древнерусских рукописях начиная с XIVв. С точки зрения типологии, что достаточно для прояснения нашей задачи: *старославянский Ъ₂ в письменный период или через некоторое время трансформировался в простой гласный.*

2) В связи с фонетическим описанием грабаровского Ъ, Р. Ачарян, ссылаясь на переход древнегреческого долгого η и староанглийского двойного ee в [i], высказал мнение, что, будучи, по сравнению с Ъ, более закрытым гласным, в V в. он произносился как ħ [i] или имел очень близкую ему артикуляцию². Конечно, Ъ мог иметь и такое развитие, если учитывать как типологические параллели, на которые указал Ачарян, так и то обстоятельство, что в генеологии звукового качества Ъ, по сути, был также i (ср.: *oi, *ai, *ei), но, по нашему мнению, помехой для принятия данной точки зрения являются следующие положения:

А) Почему в этом случае древнеармянский Ъ в дальнейшем – в ашхарабаре (новоармянском) уподобился Ъ [e], а не ħ [i] (ср.: գէր [gēr] – գէր [ger] «толстый», ծէւ [cēs] – ծէւ [ces] «обряд», շէն [šēn] – շէն [šēn] «поселение», հանդէւ [handēs] – հանդէւ [handes] «торжество», մարգարէ [margarē] – մարգարէ [margare] «пророк» и др.), в том случае, когда при словообразовании древний Ъ трансформируется в ħ, то есть ему было свойственно превращаться в ħ [i] (ср.: գէր (գէր) – գիրանալ [giranal] «растолстеть, ожиреть», ծէւ (ծէւ) – ծիսակալ [cisakan] «обрядовый», շէն (շէն) – շինակալ [šinakan] «крестьянин», հանդէւ (հանդէւ) – հանդիսակոր [handisawor] «торжественный» и др.). А в позиции на конце слова – Ъ никогда не переходит в -ħ (ср.: բազէ [bazē] «сокол» – բազէակոր [bazeakir] «сокольник», րոպէ [ropē] «минута» – րոպէակալ [ropeakan] «минутный», մարգարէ «пророк» – մարգարէակալ [margareakan] «пророческий»). Более того, древнеармянские глаголы со спряжением на ħ в ашхарабаре (новоармянском) переходят в спряжение на Ъ (ср.: բազմիմ [bazzim] «усаживаюсь» – բազմել [bazzimel] «усаживаться», ծածանիմ [cacanim] «развеваю» – ծածանել [cacanel] «развевать», նստիմ [nstim] «сажусь» – նստել [nstel] «сесть», երկնչիմ [erknč'im] «боюсь» – երկնչել [erknč'el] «бояться», մարտնչիմ [martnč'im] «сражаюсь» – մարտնչել [martnč'el] «сражаться», սուսնիմ [usanim] «учусь» – սուսնել [usanel] «учиться» и др.)³. По сути, с точки зрения фонемного

¹ О периодизации истории русского языка см.: Борковский В. И., Кузнецов П. С., Историческая грамматика русского языка, М., 1965, с. 33, Иванов В. В., Древнерусский язык // ЛЭС, с. 143.

² Ачарян Р., Армянские письмена, с. 574-575.

³ Конечно, мы подразумеваем закономерности двух литературных языков: древнего литературного армянского – грабара и восточноармянского, имея в виду, что оба языка в основном сформировались на базе разговорного армянского Араратской области (читай – Араратского диалекта), а фонемная система литературного восточноармянского, по сравнению как с среднеармянским, западноармянским, так и с западноармянскими и восточноармянскими диалектами, самая близкая фонемной системе грабара (Джаукян Г. Б., Среднеармянский как языковое качество // «Вестник

перехода, насколько армянскому присущ переход $\zeta(\zeta) > h$ в образовании имен (словообразовательный механизм), настолько же ему присущ переход $h > \zeta$ в образовании глаголов.

Б) Никто не сомневается, что в V в. ζ и h были самостоятельными фонемами, следовательно, они различались некими фонологическими качествами. Если эти фонемы имели очень близкую фонацию, то какого же то фонологического качества, которым они, тем не менее, отличались друг от друга. Противопоставление $\zeta \sim h$ может быть обусловлено закрытой или открытой артикуляцией, как предполагал Р. Ачарян, примеры чего мы наблюдаем в современном французском (ср.: *fée* [fe] «фея» – *fait* [fɛ] «факт», *pré* [pre] «луг» – *prêt* [pʁɛ] «готовый»), но едва ли можно утверждать, что ζ и h противопоставлялись по свойству открытости/закрытости или что это свойство было для них различием фонологическим. Нам более убедительным кажется предположение, что в V в. противопоставление $\zeta \sim h$ носило количественный характер, то есть противопоставление ζ и h было противопоставлением долгого и краткого вариантов одной гласной [ɛ], а не противопоставлением [ɛ] и [ɪ]. Соответственно, ζ был долгим, а h кратким. Это противопоставление, судя по всему, длилось несколько сотен лет (это время может приблизительно совпасть с упрощением (монофтонгизацией) индоевропейских дифтонгов в латинском, а латынь, согласно одной из точек зрения, «пришла к этому к сер. 2-го века до н.э.»¹). В период грабара артикуляционное различие между ними сохранялось недолго. Причиной исчезновения отмеченного противопоставления стало, возможно, то обстоятельство, что ζ был единственным долгим гласным древнеармянского языка, то есть, не образовывал систему, и, следовательно, не оставил глубокого следа в развитии армянских фонем. В пользу нашей гипотезы свидетельствует также то обстоятельство, что, как уже отмечалось, в рукописях нередко путались ζ и h .

Считаем, что в основном подобный путь развития прошел и старославянский Ъ еще в праславянский период, возможно и накануне формирования старославянского языка как письменного (VIII-IX вв.), судя по всему, Ъ и ь противопоставлялись как дифтонг/дифтонгоид и краткий гласный, а затем это противопоставление в результате упрощения дифтонгического Ъ(Ъ₂) превратилось в количественное противопоставление долгого и краткого гласного. После этого между ними исчезло количественное различие, и произошло фонемно-фонетическое уподобление, сохранив отличие только на письме, как в случае с ζ и h в традиционном правописании армянского языка.

Ереванского университета», 1993, № 1, с. 14-21 (на арм. яз.). Другими словами, в диалектах встречаются как звуковые переходы $\zeta \sim (\zeta \sim) h$ (ср.: Шапин-Караисар, Зейтун, Мараш, Бейлан, Тбилиси и др.), так и переход в обратном направлении $h \sim \zeta$ (ср.: Зейтун, Мараш, Кесаб, Мегри, Карчеван, Агулис и др.) (Джаукян Г. Б., Введение в армянскую диалектологию, Ереван, 1972, с. 63-81 (на арм. яз.).

¹ Семереньи О., указ. соч., с. 52.

Վարդան Պետրոսյան – Հին հայերենի է և հին սլավոներենի ֆ հնչյունների տարածամանկյա տիպաբանությունը

Հին հայերենի է և հին սլավոներենի ֆ տառերով նշանակված հնչյւնների հնչյունական արժեքների և դրանց կրած փոփոխությունների միջև կան տիպաբանական որոշակի ընդհանրություններ: Այն է. 1) երկու լեզուներում էլ այդ հնչյւններն ունեցել են երկբնույթ ծագում՝ պարզ ձայնավորական և երկբարբառային: Չայնավորական ծագման է₁/ֆ₁-ը սերում են հ.-ե. երկար *ē-ից, իսկ երկբարբառային ծագման է₂/ֆ₂-ը՝ հ.-ե. *oi, *ai, *ei երկբարբառներից. 2) երկու լեզուներում էլ գործածության բարձր հաճախականություն ունեն է₂/ֆ₂-ը. 3) երկու լեզուներում էլ է/ֆ-ն համեմատաբար քիչ է հանդիպում բառասկզբի դիրքում և, ընդհակառակը, հաճախակի է հանդիպում բառամիջում և բառավերջում: Բառասկզբի դիրքում («վանկասկզբում») խիստ սահմանափակ է հատկապես ֆ-ի կիրառությունը. 4) և՛ հայագիտության, և՛ սլավոնագիտության մեջ այդ հնչյւնների հնչյունական բնույթի հարցը ստացել է տարբեր մեկնաբանություններ՝ պարզ ձայնավոր, երկբարբառ, երկբարբառակերպ. մեր կարծիքով, նախքան այդ լեզուների գրի առնվելը նշված հնչյւններն առավելապես ունեցել են երկբարբառային բնույթ, սակայն գրի առնվելու նախօրյակին նրանք արդեն վերածվել էին երկար ձայնավորների, որոնք էլ ավելի ուշ վերածվել են համապատասխան կարճերի. զարգացումների այդպիսի ընթացքի մասին են վկայում ինչպես հերթագայական դրսևորումները համապատասխան լեզուներում, այնպես էլ տիպաբանական զուգահեռները ցեղակից այլ լեզուների հետ. 5) հին հայերենում՝ V դարի սկզբներին, է-ի հնչյունական արժեքն էր [ē]. հին սլավոներենի ֆ-ն սլավոնական տարբեր լեզվախմբերում՝ հարավային, հյուսիսային և արևմտյան, ունեցել է հնչյունական տարբեր զարգացումներ. մասնավորապես՝ արևելասլավոնական լեզուներից ռուսերենի որոշ բարբառներում այն վերածվել է [ē]-ի:

Vardan Petrosyan – The Diachronic Typology of the Old Armenian է and the Old Church Slavonic ҆ Phonemes

The present work analyzes the Old Armenian and Old Church Slavonic phonemes that are introduced by է and ҆ graphemes, respectively. There appear to be common typological features between the phonetic values of these phonemes and the changes they have undergone. The above mentioned common features are as follows:

1. In both languages, the relevant phonemes had twofold origin – simple vocalic/monophthongal and diphthongal. The է₁/҆₁ sounds of simple vocalic nature originate from Indo-European long /e/ → *ē, and է₂/҆₂ originate from Indo-European diphthongs *oi, *ai and *ei.
2. Both in Old Armenian and in Old Church Slavonic է₂ and ҆₂ are the more frequently used phonemes (as compared with է₁ and ҆₁).
3. While in word-initial position է/҆ have a relatively lower probability of occurrence, in word-medial and word-final positions the frequency of their occurrence is considerably high. In the word-initial (syllable-initial) position the use of ҆ is particularly restricted.
4. Both in Armenological and in Slavonic Studies the phonetic nature of these phonemes is interpreted in several ways – they are considered simple vowels (monophthongs), diphthongs or diphthongoids. The present study assumes that during the pre-written language establishment period է and ҆ phonemes were primarily of diphthongal nature; however, before they

became written symbols they had already evolved into long vowels, which in turn, had later been altered by their short counterparts. This hypothesis is based on the analysis of vowel shift in the languages discussed, as well as on the results of parallel typological studies of other genetically related languages.

5. In Old Armenian, at the beginning of the 5th century, the phonetic value of Է was [ē]. The Old Church Slavonic ѣ had different phonetic developments in different (South, North, East and West) Slavic language groups. In particular, in some Russian dialects belonging to East Slavic languages, ѣ has changed into [ē].

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋ

***Բանալի բառեր** – համաստրադասություն, ենթաստրադասություն, տարաստրադասություն, հանրաստրադասություն, ստորահամադասություն, համասեռ, տարասեռ, անմիջական բաղադրիչներ*

Ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը սովորաբար ավարտվում է նրա վերին եզրային միավորի՝ բարդ նախադասության քննությամբ (եթե զանց առնենք տեքստի (հենքի) մակարդակը): Որպես ելակետային կառույց ընդունվում է բարդ նախադասության երկբաղադրիչ կաղապարը. սրա բաղադրիչ մասերի միջև հնարավոր իմաստային և քերականական կապերի, դրանց դրսևորման տարբեր ձևերի հաշվառումով էլ առանձնացվում են բարդ նախադասության տարբեր տեսակներ՝ համադասական, ստորադասական, գողվածական (շաղկապավոր), շարահարական (անշաղկապ) և այլն:

Բնական է, որ հայերեն խոսքի տարբեր ոճերում լայնորեն կիրառվում են նաև երկուսից ավելի բաղադրիչ մասերից կազմված բարդ նախադասություններ, որոնք ևս չեն անտեսվել շարահյուսագիտական աշխատություններում՝ անվանվելով բազմաբարդ (Մ. Աբեղյան), բազմաբաղադրիչ (Ս. Աբրահամյան), հարաբարդ (Գ. Ջահուկյան) տերմիններով¹:

Երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ կառույցների իրացումները մասերի շարահյուսական հարաբերությունների բնույթի և դրանց դրսևորման ձևերի առումներով միմյանցից էապես չեն զանազանվում, ուստի բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները հաճախ շարահյուսագիտական աշխատանքներում առանձին քննության չեն էլ արժանանում: Բազմաբաղադրիչ նախադասությունների տարբեր տեսակների առանձնացումը հիմնված է լինում բաղադրիչ մասերի միջև առկա հարաբերությունների տարբեր համակցությունների վրա: Այդ համակցություններն էլ զուգահեռվում են պարզ նախադասությունը կազմող բառերի՝ նախադասության անդամների միջև գոյություն ունեցող շարահյուսական հարաբերությունների հետ²: Սակայն

¹ Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը *հարաբարդ* տերմինով նշում է միայն ստորադասական կառույցները: Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 536:

² Հմմտ. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, էջ 32-33:

պետք է նկատի ունենալ, որ այդպիսի գուգահեռականությունը բացարձակ չէ. բարդ կառույցներ բաղադրող նախադասությունները, իրենք արդեն իսկ օժտված լինելով առանձին կառուցվածքներով, տարբեր կարգի լրացումներ ստանալու և զուգորդման տարբերակների ավելի մեծ բազմազանություն են ենթադրում: Դրանց նկարագրությունն ու դասակարգումն էլ տեսական և ուսուցողական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Մեր շարահյուսագիտության մեջ, ինչպես հայտնի է, բարդ նախադասության տեսական համակարգված քննությունը սկիզբ է առել Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունից»: Հենց այստեղ էլ «բազմաբարդ խոսքերը» հստակորեն տարաբաժանվում են երկու՝ համադասական և ստորադասական տեսակների, սրանց ներսում էլ առանձնացվում են զուգորդային տարբերակները: Ահա այդ բաժանման ամբողջական պատկերը.

«I. **Համադասությունը** (ընդգծումները բնագրում են – *Հ. Թ.*) բազմաբարդ է լինում՝

1. Երբ կազմված է լինում երկուսից ավելի պարզ անկախ խոսքերից....:

2. Երբ համադաս խոսքերից մեկը կամ մի քանիսը կամ ամեն մեկը ինքը բարդ է, կազմված լինելով՝ ա) երկու կամ ավելի համադաս խոսքերից և բ) մի գլխավոր և մի կամ ավելի երկրորդական խոսքերից, որոնք իրենց կողմից նույնպես կարող են երկրորդ կարգի երկրորդական խոսքեր ունենալ....:

II. **Ստորադասությունը** բազմաբարդ է լինում՝

Ա. Երբ գլխավոր խոսքն ունի երկու և ավելի երկրորդական խոսքեր, որոնք կարող են վերաբերել

1. Գլխավոր խոսքի տարբեր մասերին....

2. Գլխավոր խոսքի միևնույն մասին, այն էլ՝

ա) Իբրև տարբեր տեսակի (իմա՝ տարբեր պաշտոններ կատարող – *Հ. Թ.*) երկրորդական խոսքեր....:

բ) Իբրև նույն տեսակի երկրորդական խոսքեր կամ համաստորադաս խոսքեր....:


Բ. Երբ երկրորդական խոսքերն ևս իրենց կողմից, ինչպես մի գլխավոր խոսք, ունին երկրորդական խոսքեր վերնում նշված ձևերով,՝ երկրորդ կարգի երկրորդական խոսքեր և այլն....»¹:

Աբեղյանական այս սխեման (ինչպես և նրա շարահյուսագիտական շատ այլ գաղափարներ) իր հիմնական գծերով կրկնվում է հետագա հեղինակների կողմից՝ անշուշտ, որոշ մասնավորումներով կամ հավելումներով, տերմինային համապատասխան հանդերձավորմամբ:

Ակադեմիկոս Գ. Սևակն իր հեղինակած շարահյուսության դպրոցական դասագրքում հատուկ անդրադառնում է Աբեղյանի կողմից «համաստորադաս խոսքեր» անվանված նախադասություններին, սահմանում է դրանք

¹ **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 671-673:

և բերում համապատասխան օրինակներ: Բազմաբարդ խոսքերի կառուցվածքային մյուս տարբերակներին առանձին անդրադարձ չկա այս դասագրքում, սակայն «Համաստորադաս նախադասություններ» վերնագրի տակ ներկայացվում են նաև այլ բնույթի կառուցվածքներ, որոնց հեղինակային բնութագրումները սկզբունքային առումով բավական հետաքրքիր են: «Բարդ ստորադասական նախադասության մեջ, – գրում է Գ. Սևակը, – համադաս նախադասություն կարող են ունենալ ոչ միայն երկրորդական, այլև գլխավոր նախադասությունները: Գլխավոր նախադասության համադաս նախադասությունը ինքն էլ դառնում է գլխավոր, եթե երկրորդական նախադասությունը հավասարապես լրացնում է երկու գլխավոր նախադասությունների միտքը. Օրինակ՝ *Երբ զանգը տրվում է, բոլորս մտնում ենք դասարան, և դասն սկսվում է: Շատերը գիտեին, բայց ես վերջերս իմացա, որ ռադիորնդունիչների մեջ լամպերի փոխարեն օգտագործվում են կիսահաղորդիչներ*»¹: (Այս կառույցի մասին խոսք կլինի ստորև): Շարունակության մեջ Գ. Սևակը ներկայացնում է մի այլ կառույց ևս, որը, ինչպես երևում է, նախորդի տարբերակն է համարում և նրա հետ միասին էլ հատկացնում է ստորադասական տիպին: «Լինում են սակայն և այնպիսի դեպքեր, երբ գլխավոր նախադասությանը ստորադասված երկրորդական նախադասությունը բոլորովին չի վերաբերում գլխավորին համադաս նախադասությանը: Օրինակ՝ *Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին, և ուսուցիչը ինձ գովեց: Այստեղ որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին* երկրորդական նախադասությունը լրացնում է միայն *ես պատասխանեցի* նախադասության միտքը (*ի՞նչ պատասխանեցի*), բայց կապված չէ *ուսուցիչը ինձ գովեց* նախադասության հետ: Հետևաբար, թեև *ուսուցիչը ինձ գովեց* նախադասությունը համագոր է գլխավոր նախադասությանը, բայց գլխավոր չէ երկրորդական նախադասությանը, այլ միայն գերադաս է նրա համեմատությամբ»²: Սույն օրինակը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Բերված երկու կառուցատիպերն էլ Գ. Սևակը ստորադասական է համարում և որպես ընդհանուր եզրահանգում գրում է. «Գլխավոր և

¹ Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1982, էջ 111:

² Նույն տեղում, էջ 112:

երկրորդական նախադասությունների փոխադարձ հարաբերության այս տարբերությունները, ինչպես և համաստորադաս նախադասությունների առկայությունը, բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի էական փոփոխություն չեն ստեղծում, ուստի և քերականական տարբեր անուններով կոչելը սխալ է:

Կա միայն բարդ ստորադասական նախադասություն՝ անկախ գլխավոր և երկրորդական նախադասությունների քանակից և հարաբերություններից, կան համադաս գլխավոր նախադասություններ, գլխավորին համադասվող գերադաս նախադասություններ, կան համաստորադաս երկրորդական նախադասություններ, բայց չկա բարդ համաստորադասական նախադասություն, բարդ համագերադասական նախադասություն, բարդ համաստորագերադասական նախադասություն:

Շատ ճյուղավորված և բարդ նախադասությունը կարելի է կոչել բազմաբարդ»¹:

Դժվար է դպրոցական դասագրքի այս հատվածը բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների շատ թե քիչ ամբողջական դասակարգում համարել. վերոբերյալ դիտարկումները, ինչպես նշեցինք, արված են համաստորադաս նախադասությունների առնչությամբ և վերաբերում են ստորադասական տիպին: Սակայն Գ. Սևակի բերած օրինակներից գոնե մեկը (*Ես պատասխանեցի, որ կիսահաղորդիչները փոխարինում են լամպերին, և ուսուցիչն ինձ գովեց*) միանշանակորեն համադասական նախադասություն է (տե՛ս գծապատկերը):

Բազմաբաղադրիչ բարդ նախադասություններին անդրադարձել են նաև հետաքեղյանական շրջանում բարդ նախադասության շարահյուսությունն ուսումնասիրող մյուս հեղինակները:

Այսպես, Գ. Գարեգինյանի և Մ. Աբեղյանի դասակարգումների միջև կարելի է նշել հետևյալ մասնակի անհամապատասխանությունները. ա) Գարեգինյանը գործածում է «խառը տիպ» անվանումը համադասական այն կառույցների համար, որոնց համադասվող բաղադրիչները իրենց հերթին բարդ ստորադասական նախադասություններ են և բ) ստորադասական կառույցների մեջ որպես ինքնուրույն տեսակ նշում է մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով տարբերակը (որը, ինչպես տեսանք, նշվել է նաև Սևակի դասագրքում): Բազմաբաղադրիչ ստորադասական մյուս կառուցատիպերը անվանվում են **համաստորադասում** (երկու տիպի՝ համասեռ և անհամասեռ երկրորդականներով) և **ենթաստորադասություն** կամ **հաջորդական ստորադասություն**²:

¹ Նույն տեղում:

² Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984, էջ 319-340:

Ա. Պապոյանը, նույնպես հետևելով Աբեղյանի դասակարգմանը, ավելի մանրամասնում է այն. համադասական կառույցը, օրինակ, ենթատեսակների է բաժանում ըստ բաղադրիչ նախադասությունների միջև առկա նույնաբնույթ (ասենք՝ միայն միավորական, միայն ներհակական և այլն) և տարաբնույթ (օրինակ՝ միավորական և ներհակական և այլն) իմաստային հարաբերությունների, նաև ըստ բաղադրիչների «կառուցվածքային արտահայտության» (բաղադրիչներն առանձին պարզ նախադասություններ են կամ էլ բարդացված են ստորադասությամբ): Ստորադասական տիպի ներսում էլ նշվում են նույն տարբերակները, որոնք քննվել են Գարեգինյանի գրքում. այստեղ, սակայն, տերմինային էական նորամուծություն է կատարվում. մեկից ավելի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կապակցությունը կոչվում է **հանրաստորադասություն**¹:

Բազմաբաղադրիչ նախադասությունների դասակարգման, այլև դրա տեսական հիմնավորման և առանձնացվող տեսակների գիտական տերմինավորման հարցերը ըստ պատշաճի ներկայացված են նաև ակադ. Ս. Աբրահամյանի շարահյուսագիտական աշխատություններում, առավել ամփոփ ու ամբողջական՝ շարահյուսության բուհական ձեռնարկում: Այստեղ բարդ նախադասությունները նախապես բաժանվում են **համասեռ** և **տարասեռ** տեսակների. «Համադասական և ստորադասական հարաբերությունները բարդ նախադասության կառուցվածքում կարող են հանդես գալ միայնակ և զուգորդված: Ըստ այդմ՝ բարդ նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ **համասեռ** և **տարասեռ**: Սա վերաբերում է բարդ նախադասության երկու տեսակներին՝ թե՛ համադասական, թե՛ ստորադասական: Հասկանալի է, որ երկբաղադրիչ բարդ նախադասությունները կարող են լինել միայն համադասական կամ ստորադասական: Ուրեմն՝ հիշյալ բաժանումը կարող է վերաբերել բազմաբաղադրիչ (երեք և ավելի բաղադրիչ ունեցող) բարդ նախադասություններին»²: Ի՞նչ սկզբունքով պետք է առաջնորդվել տարասեռ բարդ նախադասությունը համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելիս: «Այս հարցում,- գրում է Ս. Աբրահամյանը,- մեզ օգնում է նախադասության (կառույցի) **անմիջական բաղադրիչներ** հասկացությունը՝ ի տարբերություն **միջնորդավորված բաղադրիչների**»³: Վերլուծության այս եղանակը, հայտնի է, կիրառելի է լեզվական այլ մակարդակների միավորների նկատմամբ: Համեմատության համար հեղինակը վերլուծում է «անցուդարձ անել» հարադրությունը, որի անմիջական բաղադրիչները (**անցուդարձ** և **անել**) կապված են ստորադասական հարաբերությամբ, իսկ դրանք էլ իրենց հերթին վերլուծվում են (**անցուդարձ**՝ համադաս բաղադրիչ-


¹ Տե՛ս Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 377-406:

² Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Շարահյուսություն, Երևան, 2012, էջ 106:


³ Նույն տեղում:

ներով կցական բարդություն, **անել**՝ բայահիմքով և **-ել** ձևությամբ կազմված համադրական բայածին): Վերլուծության երկրորդ աստիճանում ստացվող բաղադրիչները կառույցի տեսակը որոշելու հիմք չեն ծառայում. «անցուդարձ անել» հարադրության բաղադրիչների համար գերակա է ստորադասական հարաբերությունը, որով կապակցվել են դրա անմիջական բաղադրիչները (հմմտ. «հիմնակաղապար» և «ենթակաղապար» հասկացությունները Գ. Ջահուկյանի տերմինաբանությամբ):

Այսպիսով, տարասեռ բազմաբաղադրիչ կառույցները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել անմիջական բաղադրիչների միջև առկա հարաբերությունը, որը գերակա է միջնորդավորված բաղադրիչների (ենթակաղապարային միավորների) միջև առկա հարաբերության նկատմամբ: «Արամը գնաց գյուղ, որպեսզի մի քանի օր հանգստանա, բայց նրան հետ կանչեցին, որպեսզի լուծի անհետաձգելի մի հարց» նախադասությունը ներկայացնում է տարասեռ համադասական կաղապար.



«Ես տեսա, որ նա կարդաց այդ նամակը, և նրա աչքերը խոնավացան» նախադասությունը տարասեռ ստորադասական կառույց է ներկայացնում.



«Այսպիսով,- եզրակացնում է Ս. Աբրահամյանը,- բազմաբաղադրիչ նախադասություններում տարբեր հարաբերությունների առկայությունը բնավ չի նշանակում, թե դրանք խառը նախադասություններ են: «Խառն» անվանումը ճիշտ չի արտահայտում այդ նախադասությունների կառուցվածքը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ որոշել տարբեր հարաբերությունների ստորակարգությունը, հարաբերությունների մեջ գերադասն ու ստորադասը և նրանց զուգորդումը: Լեզվի մեջ խառը ոչինչ չկա: Ամեն ինչ օրինաչափական է:

Այս դեպքում պարզապես պետք է ճիշտ որոշել համադասության և ստորադասության ստորակարգությունը և դրանց տարբեր զուգորդումները նույն նախադասության մեջ:

Դրանք կամ ստորադասական են՝ համադասության զուգորդումով (զուգորդումներով), կամ համադասական են՝ ստորադասության զուգորդումով (զուգորդումներով):

Առաջին տեսակը կոչվում է **բարդ համաստորադասական նախադասություն** (հարաբերություն): Թերևս նույն սկզբունքով երկրորդ տեսակը կարելի է կոչել **բարդ ստորահամադասական նախադասություն** (հարաբերություն)՝ նկարագրական ձևակերպումով՝ բարդ համադասական նախադասություն՝ ստորադասության զուգորդումով¹:

Համաստորադասական կապակցությունը այդ տերմինով հայտնի է Աբեղյանի հիշյալ գրքից սկսած, մինչդեռ **ստորահամադասություն** ձևակերպումով առաջին անգամ բնութագրվող կապակցությունը, Ս. Աբրահամյանի կարծիքով, «դեռևս կարիք ունի վերլուծման ու գնահատության»:² Բազմաբաղադրիչ ստորադասական կառույցների համար Աբրահամյանը առանձնացրել է համաստորադաս, ենթաստորադաս, տարաստորադաս (սա վերոհիշյալ հեղինակների կողմից «անհամասեռ ստորադասություն» է կոչվում), երկրորդականներով տարբերակները, որոնցից առաջինը տարասեռ ստորադասական, իսկ երկրորդն ու երրորդը համասեռ ստորադասական կառույցներ են:

Կարծում ենք՝ բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի հարաբերությունները նշելու համար **համասեռ** և **տարասեռ** տերմինների՝ այս իմաստով կիրառությունը նպատակահարմար է նախ և առաջ դրանք միանշանակորեն համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելու և մասնավորապես «խառը տիպ» որակումից հրաժարվելու առումով: Այս առնչությամբ ավելորդ չենք համարում նշել, որ գործնական-ուսումնական և այլ բնույթի հրատարակություններում սակավադեպ չեն բազմաբաղադրիչ նախադասությունների անճիշտ գնահատումները: Հայոց լեզվի և գրականության պետական ավարտական և միասնական քննության «Շտեմարանում», օրինակ, «Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար» նախադասությունը³ համարված է ստորադասական, մինչդեռ այն համադասական (տարասեռ) կառույցի նմուշ է:


Բազմաբաղադրիչ նախադասությունների՝ ըստ անմիջական կազմիչների գնահատման տեսակետից, կարծում ենք, անհրաժեշտ է անդրադառնալ այն կառույցին, որը որպես առանձին ենթատեսակ Աբեղյանը չի նշել, որի նմուշներ բերել է Գ. Սևակն իր դասագրքում: Դրան հատուկ ձևով չի անդրադարձել նաև Ս. Աբրահամյանը, սակայն հանգամանորեն քննել են Գ. Գարեգինյանը և Ա. Պապոյանը: Խոսքը վերաբերում է մեկից ավելի գերադաս նախադասություններին ստորադասվող ընդհանուր երկրորդականով (կամ

¹ **Աբրահամյան Ս.**, նշվ. աշխ., էջ 107:


² Նույն տեղում, էջ 106:

³ «Շտեմարան», մաս 1, Երևան, 2014, էջ 87:



երկրորդականներով) կառույցին, որը Գ. Գարեգինյանի գրքում անվանվում է նկարագրորեն՝ «մի քանի գլխավորներով և ընդհանուր երկրորդական(ներ)ով կառույցներ», իսկ Ա. Պապոյանը բաղադրիչների այդ կարգի հարաբերությունը կոչում է «համաօտորադասություն» տերմինով: Մրանվագագույն կառուցվածքի գծապատկերն է՝



Սա, ինչպես պարզ երևում է, համաօտորադասության «գլխիվայր» շրջված տարբերակն է, ուստի, թվում է, բաղադրիչների հարաբերությունն էլ կարելի է բնորոշել որպես «ստորահամադասություն» և հատկացնել ոչ թե ստորադասական (ինչպես որ վերը նշված գրքերում արվում է), այլ տարասեռ համադասական կառույցներին: Ահա մի օրինակ Հ. Մաթևոսյանի «Մեսրոպ»-ից. «Եթե լսող էր ունենում, մի քիչ հնարում էլ էր, երեկվա պատմածն այսօր սուտ էր համարում, հայոց պատմության սկիզբը մեկ քշում, տանում, չորս հազար տարվա խորք էր իջեցնում, մեկ ծլեցնում էր երեկվա միջից....»:



Նման կառույցները ստորադասական համարելու դեպքում բնական է, որ անմիջական բաղադրիչներ են դիտվում մի կողմից՝ համադասությամբ կապված նախադասությունները, մյուս կողմից՝ սրանց միասնաբար ստորադասված բաղադրիչ(ներ)ը: Կարծում ենք, սակայն, հնարավոր է կառույցի այլ մեկնաբանություն, այն է՝ **ընդհանուր ստորադաս բաղադրիչը առանձին-առանձին լրացնում է գերադաս համադաս բաղադրիչներին, այսինքն բազմաբաղադրիչ տարասեռ կառույցը ըստ էության երկու կամ ավելի բարդ ստորադասական նախադասությունների՝ որպես անմիջական բաղադրիչների համադասական կապակցությունից բաղադրված «խորքային» կառույցի դրսևորում է:** Այսինքն՝



Կառույցի այսպիսի մեկնաբանության հիմնավորում կարող են լինել բազմաթիվ այնպիսի օրինակները (որոնք նաև վերոհիշյալ գրքերում են վկայակոչվում), որոնցում ստորադաս բաղադրիչը միաժամանակ մեկից ավելի շարահյուսական գործառույթ է կատարում՝ տարբեր կարգի լրացական հարաբերություններ արտահայտելով գերադաս համագոր բաղադրիչներից յուրաքանչյուրի նկատմամբ: Սա թերևս կարելի է դիտարկել որպես սինկրետիզմի (միաձուլության) յուրատեսակ դրսևորում շարահյուսական մակարդակում: Ահա օրինակներ. «Լրագրողական հետաքննությունից հայտնի դարձավ, հետո իրավապահ մարմիններն էլ պարզեցին, որ հանցագործին այլ տեղ պետք է փնտրել» (ստորադաս բաղադրիչն առաջին գերադասի համար ենթակա, երկրորդի համար ուղիղ խնդիր երկրորդական նախադասության պաշտոն է կատարում), կամ՝ «Այնպիսի հմայիչ ձայն ուներ, այնպես ներշնչված էր իր արվեստով, այնքան հոգեթով էր երգում, որ դահլիճը քարացած լսում էր նրան» (ստորադաս բաղադրիչը առաջին գերադասի համար որոշիչ է, երկրորդի համար՝ ձևի պարագա, երրորդի համար՝ չափի պարագա): «Ես հավատում եմ, ես հաստատ գիտեմ, որ նա ազնիվ է» (հանգման խնդիր և ուղիղ խնդիր):

Մոտավորապես նույն ընթացքով է մեկնաբանում Ա. Պապոյանը Պ. Սևակից առնված հետևյալ օրինակը. «Ինչքան որ սիրտդ տա, սաղարթի՛ց խոսիր, ու վարդի՛ց խոսիր մայիսյան»: Նա գրում է. «Ունենք *Ինչքան որ սիրտդ տա* կախյալ նախադասությունը, որը լրացնում է *Սաղարթից խոսիր* գերադաս եզրին: Երկուսը միասին, առանձին վերցրած, կազմում են ստորադասական կապակցությամբ երկբաղադրիչ նախադասություն՝ *Ինչքան որ սիրտդ տա*, սաղարթից խոսիր: Բայց ընդգծված կախյալ եզրը բնագրային վկայության մեջ հավելյալ կերպով լրացնում է նաև (*Ու*) *վարդից խոսիր մայիսյան* նախադասությանը, ինչպես՝ *ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան*: Հեղինակային օրինակի և մեր տրոհած տարբերակների իմաստները նույնական են, որպես թե ասվեր՝ *Ինչքան որ սիրտդ տա, սաղարթի՛ց խոսիր, և ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան*: Սակայն միտքը ձևակերպվել է ոչ թե այսպես, ըստ որում՝ ապաշնորհ, այլ շնորհալի արտահայտությամբ, ինչպես որ է՝ բնագրում»¹: Այսպիսի ստույգ և

¹ Պապոյան Ա., Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 397:


հանգամանալի վերլուծությունը, թվում է, կառույցի համադասական, ոչ թե ստորադասական բնույթի հիմնավորում կարելի է համարել:

Քննվող կառույցի այսպիսի սկզբունքային գնահատականը վերաբերում է նաև սրա այլ տարբերակային իրացումներին, ասենք՝ մեկից ավելի ընդհանուր ստորադաս եզրերով նախադասություններին, ինչպես՝

Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,

Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից (Տերյան):

Գծապատկերն է՝



Կարծում ենք, այս առնչությամբ ավելորդ չի լինի վկայակոչել պարզ նախադասության անդամների և բարդ նախադասության բաղադրիչների գործառական արժեքների զուգահեռականությունը, որի մասին վերևում խոսք եղավ: Այսպես, «Ճանաչում է Գրիգորին և Հակոբին» նախադասության անդամների միջև առկա է համաստորադասական (տարասեռ ստորադասական) հարաբերություն, իսկ «Ճանաչեց և խորապես ասեց մարդուն» նախադասության մեջ՝ համագոր նախադասությունների (ստորոգյալների) կապակցություն՝ «մարդուն» ընդհանուր լրացմամբ («ստորահամադասական» հարաբերություն): Այլ օրինակ. «Ցերեկը բուն քնում է, արծիվը որս է անում» համադաս նախադասությունների համար ընդհանուր անդամ է «ցերեկը» ժամանակի պարագան: Եթե սա արտահայտվի երկրորդական նախադասությամբ, ապա գերադաս նախադասությունների շարահյուսական հարաբերությունը չի փոխվի, այլ կմնա համադասական. «Երբ ցերեկ է լինում, բուն քնում է, իսկ արծիվը որս է անում»: Ընդհանուր անդամի գաղափարի կիրառման օրինակ է նաև այսպես կոչված «միավորյալ» նախադասությունների առանձնացումը:

Այսպիսով, կարծում ենք՝ նպատակահարմար կլինի շրջանառության մեջ դնել «ստորահամադասություն» տերմինը՝ դրա մի մասնավոր դրսևորում համարելով վերևում քննված՝ ընդհանուր երկրորդական(ներ)ով կառույցը:

Леонид Телян – *О классификации многосложных предложений*

В армянской синтаксической традиции, начиная с М. Абегяна, выделялись разные виды многосложных предложений – сочинительные, подчинительные, иногда и смешанные. В числе подчинительных обычно отмечаются конструкции с соподчинением (однородным подчинением), неоднородным //параллельным и последовательным подчинением. К подчинительному типу относят также конструкции с несколькими главными и общим(и) придаточным(и). В статье делается попытка обосновать иной подход к оценке данной конструкции, а именно отнести ее к сочинительному типу многосложных предложений.

Leonid Telyan – *On the Classification of Multi-Clause Sentences*

M. Abeghyan was the first to classify multi-clause sentences in Armenology. Subsequent researchers have mainly followed the classification of Abeghyan making some additions only. The structure with several main clauses and one common subordinate clause, which was included in the complex type, has particularly been singled out. The article is an attempt to substantiate the viewpoint of considering the mentioned structure to be compound.

**ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԸՍՏ
ՀԱՅ ԵՎ ԻՄՊԱՆԱՑԻ ՔԵՐԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԻ**

Բանալի բառեր – զուգադրական լեզվաբանություն, հոլովական համակարգ, հոլովական հարաբերություններ, հասկացական հարաբերություններ, տարածական հարաբերություններ, նախդրային համակարգ, նախդրավոր կապակցություններ

Հայերենը հոլովների հարցում պահպանողական է և պահպանել է հոլովների զգալի քանակություն: Հայերենում հոլովը *հիմք + հոլովական վերջավորություն* կադապարով կազմվող արտահայտություն է, գոյականի՝ առարկայի վերաբերական հարաբերություններ արտահայտող քերականական փոփոխություն:

Այլ է «հոլով» հասկացության ըմբռնումն իսպաներենում, որ զուգորդվում է *բառ + նախդիր + բառ* կադապարի հետ և ներկայացնում դասական լեզուների հոլովական վերջավորությունների՝ իսպաներենում նախդիրներով փոխարինվելու վերջնական և կատարյալ պատկերը:

Ըստ հայ քերականագետների՝ «հոլով» հասկացության ըմբռնումը պահանջում է հույների հիմնած փիլիսոփայական քերականության ուսումնասիրություն, քանզի հունարենի 5 հոլովների հիման վրա ստեղծված տեսությունն է, որ ժամանակի ընթացքում հունարան, լատինարան քերականների ծավալուն գործունեության շնորհիվ նոր մեկնություններ է ստացել, էական դեր խաղացել հայերենի հոլովների որոշման, ճշգրիտ ըմբռնման ու որոշակի ինքնությունության ձեռքբերման գործում՝ դառնալով տարաբնույթ մեկնությունների ու վիճահարույց քննարկումների թեմա: Քերականագետների մեծ մասի տարակարծություններն առաջին հերթին վերաբերել են հոլովների վերջնական և ճշգրիտ քանակի որոշմանը, ապա՝ հոլովը բնութագրող բազմաթիվ սահմանումներին¹: Նման տարաձայնությունները հիմնականում բխել են հոլովի ձևային և իմաստային անխզելի հատկանիշների գնահատումից:

Իսպանացի քերականագետները զարգացման երկարատև ուղի անցած նախդրային համակարգի վերջնական ձևավորման գործում մեծ տեղ են տվել Ոսկեդարում (XVI–XVII դդ.) կատարված քերականական փոփոխու-

¹ Տե՛ս **Адонц Н.**, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915, с. 1-56, **Ջահուկյան Գ.**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

թյուններին: Սա այն ժամանակաշրջանն է, երբ իսպանագիտության մեջ ցանկացած բնագավառում փոփոխություններ ու նորամուծություններ կատարելու համար օրինաչափ երևույթ է դիտվել դասական լեզուներում արդեն առաջադրված կանոններից օգտվելը, որն անհետևանք չի մնացել. ավանդական քերականությանը բնորոշ առանձնահատկությունները գործադրվել են իսպաներենի քերականության մեջ և տեղիք տվել բազմաթիվ փոփոխությունների ու քերականության դիրքորոշման նորովի գնահատման¹: Ինչպես ասել է Լեմանը, «Փոփոխության շարժիչը լեզվական ստեղծագործականությունն է, որ նպաստում է, որ զրուցակիցն արտահայտության խնդիրների համար նոր լուծումներ փնտրի. լեզուները փոփոխվում են, որովհետև զրուցակիցները ցանկանում են դրանք փոփոխել»²: Ռոմանական լեզուների ստեղծման ժամանակաշրջանում նախդիրը դարձել է շարահյուսական կապի արտահայտման գերիշխող միջոց և ստանձնել բառերի միջև հարաբերություններ հաստատող, հոլովների իմաստային արժեքներն արտահայտող միավորի դերը: Ինչպես ասել է Վ. Կոդուխովը, «Նախդիրները կատարում են այնպիսի ձևակազմավորական դեր, ինչպիսին թեքությունները՝ հոլովական ձևի կազմում»³:

Հայերենի հոլովների վերջնական քանակի և կատարյալ սահմանման վերաբերյալ արված դիտարկումները, իրենց ընդհանրություններով հանդերձ, հաճախ դրսևորում են նաև տարբերություններ՝ պայմանավորված քերականների անհատական դիրքորոշումներով. հինգ հոլովի կոդմանակիցներն առաջնություն են տալիս հոլովի ձևային հատկանիշներին և գտնում, որ բառերի ձևափոխության միջոցով բառերի միջև կապերն ու հարաբերությունները տարբեր կերպ են արտահայտվում⁴, մինչդեռ յոթ

¹ Հոլովական համակարգում կատարված էական փոփոխություններն են. 1) հոլովական հարացույցը կրճատվում է, 2) հոլովների կրճատման հետևանքով կատարվում է հոլովների համադրում, 3) նկատվում է հոլովների նախդրավոր կիրառման միտում, 4) հոլովների ավանդական անվանումները փոխարինվում են դասական թվականներով, 5) փոփոխվում է հոլովական հարացույցը ձևավորող օրինակների մատուցման ձևը (տպագրության ի հայտ գալը մեծապես փոխում է քերականական նկարագրության ձևը և նպաստում ուղղաձիգ հարացույցի կիրառությանը), 6) տեղի է ունենում հոլովի քերականական կարգի բովանդակության պլանի էական վերաիմաստավորում (տե՛ս **Колтунова С. В., Михайлова Е. Н.**, Типология испанских грамматик Золотого века // Вопросы филологической науки: Материалы III Международной научной конференции, ЛГУ, 2012, с. 21-26, **Михайлова Е. Н.**, Категория падежа в лингвистических концепциях эпохи Возрождения // Научные чтения Петербургского Лингвистического общества, СПб., 2008, с. 162, **Степанова Л. Г.**, Итальянская лингвистическая мысль XIV-XVI веков, СПб., 2000, с. 191, 396, **Раевская М. М.**, Испанское языковое сознание Золотого века, М., 2006, с. 304):

² **Christian L.**, Grammaticalization: synchronic variation and diachronic change, *Lingua e Stile*, 1985, p. 315.

³ **Кодухов В. И.**, Введение в языкознание, М., 1979, с. 242.

⁴ Տե՛ս **Աբելյան Ս.**, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Զ, Երևան, 1974, էջ 340-399, **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, **Զահուկյան Գ.**, Ժամանակա-

հոլովի կողմնակից լեզվաբանները, որոնք անվան ձևը և նշանակությունը չեն գատում իրարից և հիմք են ընդունում հոլովների արտահայտած հարաբերությունը, հոլովները որոշում են անվան փոփոխված ձևով արտահայտվող հարաբերությամբ, ընդգծում այն հանգամանքը, որ անկախ լեզվական պատկանելությունից՝ աշխարհի բոլոր մարդկանց բնորոշ է լեզվական տարբեր ձևերով ու տարբեր հնչյուններով միանման գաղափարներ հաղորդելը:

Հ. Թումանյանը՝ որպես յոթ հոլովի տեսության կողմնակից, հոլովները որոշել է առարկաների միջև դրսևորվող հարաբերություններով և նշել, որ «Առարկաների միջև եղած հարաբերությունները ցույց տալու համար՝ գոյականները փոփոխում են իրանց վերջավորությունները. այդ վերջավորությունները կոչվում են **հոլով** (падеж), իսկ հոլովները յոթն են»¹:

Ժամանակակից հայոց լեզվի հոլովները յոթն է համարել Ա. Մարգարյանը. «Յոթ հոլովի փոխարինումը հինգով անխուսափելիորեն աղճատում է հայերենի հոլովական համակարգի իրական պատկերը և մթագնում սեռականի ու հայցականի ինչպես քերականական, այնպես էլ իմացաբանական-ճանաչողական արժեքն ու նշանակությունը»²:

Իրենց գրքերում յոթ հոլովի տեսությունն են հավաստել նաև Հ. Դադբաշյանը³, Վ. Առաքելյանը⁴ և շատ ուրիշ քերականներ: Գրեթե բոլոր սահմանումներում հոլովը ներկայացվում է որպես քերականական կարգ՝ իր արտահայտած որոշակի իմաստով և այդ իմաստի արտահայտության համար համապատասխան լեզվին բնորոշ որոշակի ձևով, իսկ այդ սահմանումներում նկատվող տարբերությունները պայմանավորված են հոլովի քերականական և իմաստային տարբեր արժեքների շեշտադրումով:

Իսպաներենի քերականության մեջ բառահարաբերաստեղծ միավորների վերջնական և կատարյալ սահմանումը ևս բազմաթիվ տարակարծությունների տեղիք տվող խնդիրներից է: Չնայած այն հանգամանքին, որ գրեթե բոլոր ձևակերպումներում նախդիրը համարվում է երկու և ավելի միավորների միջև հարաբերություններ հաստատող միջոց, այդուհանդերձ յուրաքանչյուր քերական յուրովի է գնահատում այն՝ ձևակերպման հիմք ընդունելով տարբեր չափանիշներ⁵:

կից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, **Շարափխանյան Պ.**, Արդի հայերենի հոլովները, «Սովետական դպրոց» // 1966, թիվ 3:

¹ **Թումանյան Հ.**, Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ ստուգաբանություն, Թիֆլիս, 1915, էջ 30:

² **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 118:

³ Տե՛ս **Դադբաշյան Հ.**, Արևելահայ աշխարհաբարի քերականությունը, Թիֆլիս, 1913, էջ 40-41:

⁴ Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 11-171:

⁵ Տե՛ս **Деев М. Н.**, Предлоги современного испанского языка, М., 1973, с. 8:

Սույն հոդվածում անդրադառնում ենք միայն ժամանակակից քերականների բնորոշումներին: Նրանցից առավել նշանավորներն են (հաշվի ենք առնում կոնկրետ նախդրային համակարգի ուսումնասիրության մեջ կատարած նրանց ներդրումները) Ռ. Սեկոն, Խիլի Գայան, Կրիադո դը Վալը, Ռոկա Պոնսը, Ալֆինսա Ֆրանչը և Խ. Մ. Բլեկուան, Ալարկոս Լյորախը, Էռնանդես Ալոնսոն և այլք:

Ռ. Սեկոն, իսպաներենի քերականության մեջ նախդիրը բնութագրող ամենաընդունելի ձևակերպումն ընդունելով հանդերձ, իր շարահյուսական ուսումնասիրության մեջ մի կողմից՝ կարևորում է *նախդիրի կառուցվածքային և գործառական արժեքը*, իսկ մյուս կողմից՝ *նախդիրի ձևական առանձնահատկությունը*: Եթե նախդիրի կառուցվածքային և գործառական արժեքի կարևորման դեպքում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ նախդիրը՝ որպես արտահայտված իմաստին հաստատուն արժեք տվող բառ, չի կարող կիրառվել այլ եղանակով և գրեթե երբեք չի փոխարինվում, ապա երկրորդ դեպքում շեշտադրվում է այն փաստը, որ նախդիրը կանոնավոր ձևով նախորդում է հարաբերվող միավորին¹: Բայց այս սահմանումը քերականագետների կողմից չի ընդունվում որպես նախդիրի կատարյալ և վերջնական բնորոշում, քանզի այն թույլ չի տալիս բացահայտելու նախդիրների և շաղկապների միջև եղած տարբերությունը, ինչպես՝ *Juan con su hermano – Խուանն իր եղբոր հետ* և *Juan y su hermano – Խուանն ու իր եղբայրը*: Այլ է Խ. Գայայի մոտեցումը, որ կարևորում է հարաբերվող միավորների դերը և նախդիրի՝ համապատասխան հարաբերություններում կապի հաստատման միջոց ծառայելու հիմնական գործառույթը: Այսինքն՝ մի կողմից՝ շեշտը դրվում է նախդիրների գործառական դերի վրա (նախդիրները ծառայում են իբրև նախադաս և հետադաս միավորների կապի հաստատման միջոց), իսկ մյուս կողմից՝ ցույց է տրվում նախդիրի՝ հարաբերվող միավորների նկատմամբ ունեցած հակումը. այդ միավորների հետ միասին նախդիրը ձևավորում է իմաստային ամբողջություն²: Կրիադո դը Վալը, որը նախդիրները միավորում է «կապ» անունով, գտնում է, որ նախդիրների կիրառությունն ավարտին է հասցնում քերականական կազմակերպումը՝ միահյուսելով նախադասության քիչ թե շատ էական միավորները³: Ռ. Պոնսի համար նախդիրը հիմնական բառը նրա լրացումների հետ կապող և միաժամանակ ստորադասող միավոր է⁴: Այս առումով Պոնսը հեռանում է դեռևս Սալվայի և Բելյոյի կողմից ընդունված այն դիրքորոշումից, որտեղ

¹ Տե՛ս **Seco R.**, Manual de gramática española, Madrid, 1960, p. 156:

² Տե՛ս **Gili Gaya S.**, Curso superior de sintaxis española, Barcelona, 1943, p. 246:

³ Տե՛ս **Criado de Val M.**, Gramática española y comentario de textos, Madrid, 1958:

⁴ Տե՛ս **Roca Pons J.**, Introducción a la gramática, Barcelona, 1972, p. 323-331:

շեշտը դրված էր նախդիրների ձևափոխող և մասնավորող արժեքների վրա¹: Ալարկոսը նախդիրները համարում է կախյալ միավորներ, որոնք դրվում են գոյականների, ածականների և մակբայերի կողքին²: Է. Ալոնսոն նախդիրը բնորոշում է որպես ցուցիչ կամ նախաանվանական նշույթ, որ լրացնում, սահմանագատում և ճշգրտում է հարաբերվող առաջին միավորի բովանդակությունը³: Վ. Բրյոնդալը նախդիրը սահմանում է որպես բառ, որի կիրառության հիմնական նպատակը հարաբերությունների արտահայտությունն է՝ առանց կոնկրետ առարկաների կամ իրականության երևույթների հետ անմիջական կապի: Տալով նախդիրի սահմանումը լեզվի մեջ, որտեղ նախդիրն ունի ընդամենը մեկ, առավել վերացական նշանակություն (այս գաղափարի կողմնակից է եղել նաև Մ. Լոպեսը⁴)՝ նա միաժամանակ կարևորում է ներմբոնումը որպես այն միակ գործիքը, որը թույլ է տալիս հաստատելու այս կամ այն նախդիրի ճշգրիտ կիրառությունը⁵: Այս վերջին տեսակետը քերականագետները թերի են համարել, քանզի նախդիրի ճշգրիտ կիրառության համար անհատի ներմբոնումը պարտադիր պայման չեն դիտել. անհատը կարող է ճիշտ կիրառել նախդիրը նաև նախդրային առանձին կառույցների առանձնահատկությունների և խնդրառության կաղապարների յուրացման միջոցով⁶: Բ. Պոտիեն տվել է խոսքի մեջ նախդիրի լավագույն ձևակերպումներից մեկը, որում նախդիրը սահմանվում է որպես երկու միավորների կապի հաստատման միջոց, կարևորվում է նախդիրի բազմաթիվ նշանակություններ ունենալու հանգամանքը (խոսքը վերաբերում է նախդիրի բոլոր կոնկրետ կիրառություններին)⁷: Դեմ դուրս գալով վերոնշյալ քերականագետներին՝ Լ. Կարետերն իր «Բանասիրական տերմինների բառարանում» նախդիրը սահմանում է որպես բառին կամ անկախ նախադասությանը նախորդող ձևույթ⁸: Այս սահմանումը նույնպես գերծ չի մնում քննադատություններից, քանզի քերականագետների մեծ մասը նախդիրն իրականում ձևույթ չի համարում և գտնում է, որ նախդիրը ձևույթ է դառնում միմիայն մակբայի արժեք ունեցող կապակցություններում, որտեղ որպես

¹ Տե՛ս **Salvá V.**, Gramática de la lengua española según ahora se habla, Madrid, 1988, p. 288, Bello A., Gramática de la lengua castellana, Caracas, 1995, p. 32-35: Տե՛ս նաև <http://www.cervantesvirtual.com/FichaObra.html?Ref=7170>:

² Տե՛ս **Alarcos Llorach E.**, Gramática de la lengua española, Madrid, 1994, p. 214:

³ Տե՛ս **Hernandez Alonso C.**, Gramática funcional del español, Madrid, 1996, p. 646:

⁴ Տե՛ս **Luisa López M.**, Problemas y métodos en el análisis de preposiciones, Madrid, 1970, p. 102:

⁵ **Brøndal V.**, Théorie des prépositions. Introduction à une sémantique rationnelle, Copenhague, 1950. Մեջբերված է ըստ **Դեբ Մ. Ի.**, նշվ. աշխ., էջ 3, 8:

⁶ Տե՛ս **Шепёва Л. В.**, Предподавание иностранных языков в средней школе // Общие вопросы методики, М.-Л., 1947, с. 93, **Gili Gaya S.**, Curso superior de sintaxis española, Barcelona, 1961, p. 187:

⁷ **Pottier B.**, Systématique des éléments de relation. Etude de morphosyntaxe structural romane, Paris, 1962, p. 18. Մեջբերված է ըստ **Դեբ Մ. Ի.**, նշվ. աշխ., էջ 8:

⁸ Տե՛ս **Lázaro Carreter F.**, Diccionario de términos filológicos, Madrid, 1953, p. 82-85:

այդպիսին իրականում գոյություն չունի և երկու ինքնուրույն բառերի միջև ոչ մի կապ չի հաստատում, ինչպես՝ *a tientas* «խաբխափելով», *a ciegas* «կուրորեն», *de balde / en vano* «զուր, ապարդյուն» ևն: Նախդիրը բառային իմաստն ամբողջությամբ կորցրած քերականական միավոր դիտելով՝ Լ. Կարետերը չի ընդունում, որ գրեթե բոլոր նախդիրները (ներառյալ նախդրավոր կապակցությունները) ունեն իրենց իմաստները:

Այսօր իսպաներենում նախդիրները չեն համարվում բառային իմաստից զուրկ միավորներ, և ընդունված չէ այն դիտարկումը, որ նախդիրները պատկանում են զուտ քերականական ոլորտին. ընդունելի է համարվում պարզապես այն, որ քերականական իմաստը նման կարգի բոլոր միավորների համար ընդհանրական բնույթ է կրում, մինչդեռ դրանք բոլորն էլ իրենց բառային իմաստներով տարբերվում են միմյանցից, ինչպես՝ *ir a Moscú* «մեկնել Մոսկվա», *ir de Moscú* «հեռանալ Մոսկվայից» և այլն:

Իսպաներենի ակադեմիական քերականությունը տալիս է «նախդիր» հասկացության հետևյալ ամբողջական բնութագիրը. «Նախդիրը լատինական ծագում ունեցող բառի մի տեսակ է (լատ.՝ *praepositio*), որ աչքի է ընկնում իր *անփոփոխ ձևով* (անկախ այն հանգամանքից, թե որտեղ է դրվում նախդիրը՝ գոյականից, թե բայից առաջ, այն միշտ մնում է անփոփոխ), *անշեշտ կիրառությամբ* (բացառություն է *համաձայնության* իմաստ նշանակող *según* նախդիրը) և *տարատեսակ հարաբերություններ հաստատող բնույթով* (նախդիրներում հիմնական նշանակությունների անորոշությունն ավելի ակնհայտ է, քան այլ բառերում)»¹:

Վերը նշված սահմանումների բազմազանությունը թերևս, մեր կարծիքով, ամենին չի սահմանափակում նախդիրի մասին ունեցած այն ընդհանուր պատկերացումը, ըստ որի՝ սահմանափակ քանակով բնորոշվող քերականական այս միջոցը երկու միավորների միջև հարաբերության արտահայտման լավագույն ձևն է:

Այսօր հայերենի քերականության մեջ հոլովների պակասը լրացնում են *կապերը* (անգամ կարող են նրանց փոխարեն կիրառվել), որոնք, ինչպես և հոլովները, ցույց են տալիս ստորադասական հարաբերություններ, որոշում բառի պաշտոնը: Արտահայտելով նույն հարաբերությունները՝ այս երկու միջոցները ցուցաբերում են ընդամենը ոճական-նրբերանգային տարբերություն:

Իսպաներենի քերականության մեջ կապերի նման ցանկացած մակարդակի հարաբերության կոնկրետության երանգ հաղորդող լրացուցիչ միջոցները բարդ նախդիրներն ու նախդրային կապակցություններն են²: Նրանց

¹ St' u El Real Academia Española y Asociación de Academia de la Lengua Española. Nueva gramática básica de la lengua española, Barcelona, Espasa, 2011, p. 25-165: St' u նաև Definición de preposición - Qué es, Significado y Concepto <http://definicion.de/preposicion/#ixzz3Vsv33BIY>:

² St' u **Jaime Cisneros L.**, Lengua y estilo, Lima, 1959, p. 79:

առաջացումն անհրաժեշտորեն կատարվող փոփոխություն է, ինչպես ժամանակին նշել է Ռ. Կուերվոն. «Դարերի ընթացքում պարզ նախդիրներով ձևավորված բարդ նախդիրների ու նախդրային կապակցությունների լայն զարգացման և պահպանման գործընթացի մեջ պետք է տեսնել միայն լեզվի զարգացման միտում, որ թույլ է տալիս ժամանակակից իսպաներենում արտահայտելու ցանկացած մակարդակի ճշգրիտ հարաբերություն: Եվ ինչքան «բազմահարկ» են պարզ նախդիրներով ձևավորված կառույցները, այնքան ճշգրիտ և կոնկրետ են նրանցով արտահայտվող հարաբերությունները»¹:

Ստորև ներկայացնում ենք զուգադրվող լեզուների բովանդակության պլանի շրջանակներում տեղ գտած իմաստային հարաբերությունները: Հայերենի քերականության մեջ հոլովական համակարգի ըմբռնումը ենթադրում է **յոթ** հիմնական և մի շարք մասնավոր իմաստների արտահայտում, որոնց համարժեքներն իսպաներենում դուրս չեն գալիս **տարածական, ժամանակային և հասկացական** ոլորտներում տեղ գտած իմաստային հարաբերությունների սահմաններից: Իսպաներենի քերականության մեջ իմաստային հարաբերությունները նշանակվում են *26 պարզ նախդիրների* և նրանցով ձևավորված *բարդ նախդիրների* ու *նախդրային կապակցությունների* միջոցով²:

Հայերենի հոլովական իմաստների համարժեքներն ու տարբերություններն իսպաներենից ունեն հետևյալ ընդհանուր պատկերը.

1. «Անկախ, ներունակական հարաբերություն»³, ուղղական հոլովի գլխավոր գործառույթը, օր.՝ *Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը*: Իրացվում է մի շարք մասնավոր դրսևորումներով, որոնք են՝

- **փոխակերպված ենթակայի իմաստ.** *Դեռ լույսը չբացված՝ գործը ներխուժեց քաղաք,*
- **ստորոգելիի իմաստ.** *Հրաշագործ մանուկ էր,*
- **որոշիչի իմաստ.** *Դատավոր Ալավերդյանն ավարտեց դատավարությունը,*
- **անվանական անդեմ նախադասության գլխավոր անդամի արտահայտած իմաստ.** *Երևան: Միրզ ու բանջարեղեն,*
- **կոչական.** *Երեխանե՛ր, դո՛ւրս եկե՛ք դասարանից* ևն:

Իսպանագիտության մեջ անկախ, ներունակական հարաբերությունը բառի ուղիղ ձևով նշանակվող իմաստների ամբողջություն է՝ որպես

¹ Cuervo R. J., Notas a la gramática de A. Bello, Madrid, 1988, p. 143.

² St´u El Real Academia Española y Asociación de Academia de la Lengua Española. Nueva gramática básica de la lengua española. Barcelona, 2011, p. 25-165, **Bosque I. y Demonte V.**, Gramática de la lengua española, Madrid, Espasa, 1999, p. 567-700:

³ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 399:

աշխարհի մասին ունեցած մեր պատկերացումների պարզագույն արտահայտում: Այդ իմաստներն են՝

- **ակնհայտ ենթակայի իմաստ.** *El Sol es la estrella más cercana a la Tierra* «Արևը Երկիր մոլորակին ամենամոտ աստղն է»,
- **ինքնին ենթադրվող կամ զեղչված ենթակայի իմաստ.** *Corrí hasta la casa – «Վազեցի մինչև տուն»*
- **մաքուր անվանական նշանակում.** *!Bobadas; – Հիմարություն,*
- **տաքածական ընդլայնում ցույց տվող իմաստ.** *El ejército recorrió diez pies «Զորքը տասը քայլ առաջ անցավ»* (հայ.՝ *հայց. հոլով*),
- **Ժամանակահատված ցույց տվող իմաստ.** *El padre veló toda la noche – «Հայրիկն ամբողջ գիշեր աշխատեց»,*
- **կոչական.** *Madre, dame ese libro «Մայրի՛կ, տո՛ւր ինձ այն գիրքը»,*
- **վերնագրային կամ անվանումի հարաբերություն.** *El río «Գետը»:*

2. **Պատկանելության հարաբերություն, սեռական հոլովի** գլխավոր գործառույթը, ցույց է տալիս **առարկայական հատկացում**, ինչպես՝ *արևի ջերմություն:* Իրացվում է մի շարք մասնավոր դրսևորումներով և արտահայտում՝

- **որոշիչի իմաստ.** *կյանքի դաս,*
- **ենթակայի իմաստ.** *Ուսուցչի բարկանալն ակնթարթ տևեց,*
- **ստորոգելիի իմաստ.** *Նա մեծ պաշտոնի էր,*
- **բաղկացության իմաստ.** *Երեխաների մի խումբ անդադար աղմկում էր,*
- **ծագման իմաստ.** *Երեխայի ծնողները,*
- **Ժամանակի իմաստ.** *հնադարի գրողները,*
- **Ժամանակի իմաստ՝ արտահայտված կապական կապակցություններով.** *առավոտվա կողմ, արևամուտի հետ,*
- **տաքածական իմաստ՝ արտահայտված կապական կապակցություններով.** *տան առաջ:*

Կապական կապակցություններով են արտահայտվում նաև վերաբերության (օր.՝ *առողջության մասին, հարազատների նկատմամբ*), նպատակի (օր.՝ *քննության նպատակով*), պատճառի (օր.՝ *ծանր հիվանդության պատճառով*), միասնության (օր.՝ *հարազատների հետ*) և փոխարինման (օր.՝ *Լավության դիմաց վատություն արեց*) իմաստները:

Իսպաներենում վերոնշյալ իմաստները (բացի ժամանակ և տաքածություն ցույց տվող իմաստներից) ներկայացնում են հասկացական ոլորտը և միաժամանակ զուգադրելի եզրեր գտնում հայերենի մյուս հոլովները ներկայացնող հարաբերությունների հետ: Այսպես՝

- **ստացականության կամ պատկանելության հարաբերություն.** *el libro de Juan «Խուանի գիրքը»,*

- **որոշիչի իմաստ.** el chico **de** ojos grandes «մեծ աչքերով տղան» (հայ.՝ **գործ.** հոլով), el mes **de** noviembre «նոյեմբեր ամիսը» (հայ.՝ **ուղղ.** հոլով),
- **ստորոգելիի իմաստ.** Son **de** diferentes familias «Տարբեր ընտանիքներից են» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **մասնականության իմաստ.** los tres **de** los niños «երեխաներից երեքը» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **ծագման իմաստ.** los escritores **del** mundo «աշխարհի գրողները»,
- **կեղծ ստացականության կամ վերաբերության իմաստ.** eco **del** reloj «Ժամացույցի արձագանք»,
- **թեմայի հարաբերություն.** hablar **de** (sobre, acerca **de**) alguien «խոսել ինչ-որ մեկի մասին» կամ «ինչ-որ մեկից» (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ** կամ **բաց.** հոլով),
- **նպատակի իմաստ.** Voy a la universidad **para** el examen «Գնում եմ համալսարան քննությանն» (հայ.՝ **տր.** հոլով),
- **պատճառի իմաստ.** Todo es **por** tu culpa «Ամեն ինչ քո մեղքով է (հայ.՝ **գործ.** հոլով), tiritar **de** frío «ցրտից դողալ» (հայ.՝ **բաց.** հոլով),
- **Ժամանակի իմաստ.** siglo **del** renacimiento «վերածննդի դարաշրջան», en enero «հունվարին» (հայ.՝ **տր.** հոլով), hacia las dos «(մոտավորապես) ժամը երկուսին» (հայ.՝ **տր.** հոլով),

3. Հանգման կամ մատուցման հարաբերություն, տրական հոլովի գլխավոր գործառույթ: Ցույց է տալիս գործողության հանգում, անմիջական ձևով նշվում է առարկաների միջև գործող հարաբերություն, որտեղ մեկը մոտենում, տրվում, հանգում է մյուսին, ինչպես՝ *մոտենալ ծառին*: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **մատուցման իմաստ.** *Ողջ գումարը նվիրաբերեց աղքատներին,*
- **կապի իմաստ.** *Մերվել է իր նոր ընտանիքի անդամներին,*
- **հաղորդման իմաստ.** *Ամեն քայլի համար բացատրություն է տալիս ամուսնուն,*
- **ստացականության իմաստ.** *Վթարի ենթարկված ավտոմեքենան ուրիշին էր պատկանում,*
- **տարածական իմաստ.** *նստել տանիքին,*
- **Ժամանակի իմաստ.** *լուսաբացին, հոկտեմբերին, դժվար պահերին,*
- **փոխարինման իմաստ.** *Վատ օրերին փոխարինեցին լավ օրերը,*
- **համապատասխանության իմաստ՝** *արտահայտված կապական կապակցությամբ. հագնվել և խոսել տարիքին համապատասխան,*
- **ուղղության իմաստ.** *հայացքն ուղղել պատին:*

Իսպաներենում հանգման կամ մատուցման հարաբերությունը կապվում է **երկու** կարևոր հիմնահարցերի հետ. մի կողմից՝ առաջ է գալիս

անուղղակի խնդրի հարցը, իսկ մյուս կողմից՝ մի շարք պարագայական լրացումների¹: Առաջին դեպքում իսպաներենը զուգադրելի եզրեր է գտնում հայերենի բուն հանգման կամ մատուցման իմաստի հետ և արտահայտում **ընդունման** (օր.՝ *Regalé flores a² mi novia* «Իմ հարսնացուին ծաղիկներ նվիրեցի» կամ **նպատակակետին հասնելու իմաստ** (օր.՝ *ir a Moscú* «մեկնել Մոսկվա», *apartarse a un lado* «մի կողմ քաշվել» (հայ.՝ **հայց.** հոլով), *cercarse a la pared* «մոտենալ պատին» (հայ.՝ **տր.** հոլով), *llegaré hasta la capital* «կհասնեմ մինչև մայրաքաղաք» (հայ.՝ **կապ + հայց.** հոլով)):

Երկրորդ դեպքում իսպանագետներն առանձնացնում են հետևյալ մասնավոր իմաստները՝

- **ստացականության իմաստ.** *Le besé la mano* «համբուրեցի նրա ձեռքը» (հայ.՝ **սեռ.** հոլով),
- **հետաքրքրության կամ հարմարավետության – անհարմարավետության իմաստ** (լրացում, որ օգուտ է ստանում կամ վնաս է կրում). *Cortó una rama de roble que le nublaba el sol* «կաղնու մի ճյուղ կտրեց, որ ծածկել էր նրան արևից»,
- **անջատման իմաստ.** *Le robaron la bicicleta a José* – Նրանից՝ Խոսեից, գողացան հեծանիվը (հայ.՝ **բաց.** հոլով),
- **արդյունավետության իմաստ** (լրացում, որ ցույց է տալիս բավարարություն, անբավարարություն, պակասություն կամ ավելցուկ). *A Kiko le falta un millón para construir la piscina* – Ջրավազանի կառուցման համար **Կիկոյին** մեկ միլիոն է պակասում,
- **փոխադարձ հարաբերության իմաստ** (լրացում, որի համար ընդունելի է այն, ինչ ցույց է տալիս բայը). *A Juan le pareció buenísima la idea de Ana* «Խուանին Աննայի գաղափարն ամենալավը թվաց»³:

¹ Իսպաներենի քերականություններում պարագայական լրացումները, ինչպես ասել է Ա. Բելյոն, ոչ այլ ինչ են, եթե ոչ «հավելուրդային տրականներ» (**Bello A.**, Gramática de la lengua castellana, Madrid, 1988, p. 757): Է. Ա. Լյորախը դրանք անվանել է «սահմանային տրականներ» (**Llorach E. A.**, Gramática de la lengua española, Madrid, 1994, p. 220), Ս. Ֆ. Ռամիրեսը՝ «*հետաքրքրության տրականներ*» (**Fernández S.**, Ramírez. Gramática española, Madrid, 1951, p. 193):

² *Մատուցման* իմաստի արտահայտության համար հիմնական **a** նախդիրը փոխարինվում է **para** նախդիրով, ինչպես՝ *Compré flores a (para) mi madre* – Իմ մայրիկին (մայրիկիս համար) ծաղիկներ գնեցի: Բայց խոսքը չի վերաբերում լիակատար փոխարինմանը, քանզի այս երկու նախդիրները շատ հաճախ կիրառվում են միևնույն նախադասության մեջ և արտահայտում երկու տարբեր՝ *մատուցման* և *նպատակի* իմաստներ, ինչպես՝ *La señora les dio unos bombones a los García para sus hijos* – Տիկինը նրանց՝ Գարսիաներին, կոնֆետներ տվեց երեխաների համար (հայ՝ **տր.** հոլով – **սեռ.** հոլով + **կապ**) (տե՛ս **Ordóñez G.**, Salvador. Los dativos // **Bosque I.**, **Demonte V.**, Gramática descriptiva de la lengua española, Madrid, 1999, § 30.6.3. p. 1895-1906):

³ Պարագայական լրացումների մասին մանրամասն Տե՛ս **Varó Enrique A.**, **Linares M.**, **Antonia M.**, Diccionario de lingüística moderna. Barcelona, 1997, p. 157-158, **Raimondo G.**, **Cardona**, Diccionario de lingüística, Barcelona, 1991, p. 71, **Demonte V.**, Datives in Spanish, University of Venice, Working Papers in Linguistics 4:1, 1994a, p. 73-96:

4. Ուղիղ խնդիր ձևավորող հարաբերություն, հայցական հոլովի առաջնային գործառնություն, որոշակի է դարձնում բայիմաստը, ինչպես՝ *Հուժկու հարվածով դռները ջարդեց*: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **չափի ու քանակի իմաստ**. *Ստիպված էին մի քանի կիլոմետր ոտքով գնալ, Վերջերս գրեթե միշտ երկու ժամ ուշ է տուն գալիս,*
- **գնի կամ արժեքի իմաստ**. *Գիրքն արժե երկու հազար դրամ,*
- **ժամանակի իմաստ**. Առավոտից գիշեր աշխատում է, Ողջ ամառ հանգստացավ,
- **ժամանակի իմաստ՝ արտահայտված կապական կապակցությամբ**. *Մինչև ամուսնու վերադարձը ձայն անգամ չէր հանում,*
- **տեղի իմաստ**. Շնչակտուր հասավ **տուն**, Երկար տարիներ անց վերադարձավ **հայրենիք**:

Ժամանակակից իսպաներենի քերականություններում ուղիղ խնդրի¹ քննության համար առանձնացված են հետևյալ հստակ սահմանները՝

- **անցողական բայերով պահանջվող գոյականական լրացում**. El lee un **libro** «Նա գիրք է կարդում»,
- **անցողական բայերով պահանջվող դերանվանական լրացում**. Mi hermana **lo** ha perdido «Իմ քույրը **դա** կորցրել է»,
- **անվանական շարույթով ձևավորված լրացում**. El agricultor corta **las ramas del árbol** «Հողագործը կտրում է **ծառի ճյուղերը**»:

Հայերենի հայցական հոլովին բնորոշ մասնավոր իմաստները իսպաներենի քերականություններում կազմում են հասկացական ոլորտի բաղկացուցիչ մասերը, ինչպես՝ **չափի ու քանակի իմաստ**, օրինակ՝ Ella tarda **media hora** en llegar a la oficina «Նա **կես ժամ** է ծախսում աշխատանքի հասնելու համար», Ni siquiera se oye **alguna palabra** de su boca «Նույնիսկ **մի բառ** չի լսվում նրա բերանից» (հայ.՝ **ուղղ. հոլով**), **գնի ու արժեքի իմաստ**, օրինակ՝ Ganar el premio mayor que vale **dos mil euros** – Շահել լավագույն մրցանակը, որ արժե **երկու հազար եվրո** (հայ.՝ **ուղղ. հոլով**):

5. **Անջատման հարաբերություն, բացառական հոլովի գլխավոր գործառնություն**, որ արտահայտում է **եղակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման** իմաստներ, ցույց տալիս այն անձը կամ իրը, որից մի բան զատվում ու անջատվում է, ինչպես՝ հեռանալ **տնից**, հարազատներից: Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

¹ Իսպաներենի քերականություններում ուղիղ խնդրի հարցը միաժամանակ սերտորեն կապված է շնչավորի և անշունչի քերականական կարգի հետ. անշունչի դեպքում գործում է «**Օ նախդիր + գոյական**» կառույցը, ինչպես՝ Los estudiantes vieron **película** «Ուսանողները **ֆիլմ** դիտեցին» (հայ.՝ **հայց. հոլով Օ** վերջավորությամբ = **ուղղական հոլովաձև**), շնչավորի դեպքում **Օ** նախդիրը փոխարինվում է **a** նախդիրով, ինչպես՝ Esperamos **a tu hijo** «Սպասում ենք քո տղային» (հայ.՝ **հայց. հոլով՝ -ին** վերջավորությամբ = **տրական հոլովաձև**) (տե՛ս Matte Bon F., Gramática Comunicativa del español, España, 2005, p. 297, 301-303):

- **պատճառի ու հիմունքի իմաստ.** Հուզմունքից լալիս էր, Երեխային ձայնից ճանաչեց,
- **ներգործող խնդրի իմաստ.** Նա արհամարհված էր ծնողներից,
- **տարածական իմաստ.** Աշխատանքից միշտ ժամանակին է տուն վերադառնում,
- **Ժամանակի իմաստ.** Մանկությունից ընկերություն էին անում,
- **բաղդատության իմաստ.** Փոքրիկները մեկը մյուսից գեղեցիկ էին,
- **ծագման կամ սերման իմաստ.** Հայտնի նկարիչների ընտանիքից էր,
- **նյութի կամ բաղկացության իմաստ.** *Մեկ սենյակից բաղկացած արհեստանոցում ոսկուց ու արծաթից զարդեր էր պատրաստում,*
- **մասի և ամբողջի իմաստ.** *Ողջ ընտանիքից միայն մեկը ողջ մնաց,*
- **վերաբերության իմաստ.** *Անդադար խոսում էին անցած-գնացած օրերից,*
- **սահմանափակման իմաստ.** *Աշակերտը բնագիտական առարկաներից գերազանցիկ էր,*
- **բացառման իմաստ.** *Ամուսնացել էր ծնողների կամքից անկախ:*

Իսպաներենի քերականություններում անջատման հարաբերության քննությունը կատարվում է հետևյալ հիմնական իմաստների շրջանակներում.

- **մեկնակետի իմաստ.** Vengo **de** la universidad «Համալսարանից եմ գալիս», Vuelvo **de** España «Վերադառնում եմ Իսպանիայից»,
- **անջատման իմաստ.** alejarse **de** la familia «ընտանիքից հեռանալ», apartarse **del** camino «ճանապարհից շեղվել», Los germanos se diferenciaban mucho **de** los franceses «Գերմանացիները ֆրանսիացիներից շատ են տարբերվում»,
- **ծագման իմաստ.** Son **del** noble linaje «Ազնվազարմ տոհմից են»,
- **բաղդատության իմաստ.** El álamo es alto **de** la encina «Բարդին կաղնուց բարձր է»,
- **մասի և ամբողջի իմաստ.** Los dichos diputados eran **de** los elegidos «Վերոհիշյալ պատգամավորները ընտրվածներից են»,
- **բաղկացության իմաստ.** Tu corazón es **de** piedra «Քո սիրտը քարից է»,
- **Ժամանակի իմաստ.** Después **de** levantarme, bebo un café «Արթնանալուց հետո սուրճ եմ խմում», Está aquí **desde** ayer «Երեկվանից այստեղ է», De una **a** dos estoy comiendo «Մեկից երկուսը ճաշում եմ» (հայ.՝ բաց., հայց. հոլով):

6. **Միջոցի հարաբերություն, գործիական հոլովի** գլխավոր գործառույթ, ցույց է տալիս այն առարկան, որով կամ որի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ կատարվում է մի բան, ինչպես՝ *Իր վարքուբարքով գերում է բոլորին:* Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **ներգործող խնդրի իմաստ.** *Գետինը ծածկվեց անձրևի կաթիլներով,*
- **հիմունքի իմաստ.** *Նրան օրենքով դատեցին,*

- **ձևի իմաստ.** *Ողջ հոգով* ու *սրտով* նվիրված էր աշխատանքին,
- **չափի ու քանակի իմաստ.** *Սևանի ավազանը խորացել է հիսուն մետրով (հիսունով),*
- **սահմանափակման իմաստ.** *Դեմքով* գեղեցիկ չէր, բայց *հոգով* շատ բարի անձնավորություն էր, *Ծագումով* հայ էր, բայց *վարքուքարքով* թուրքի էր նման,
- **տարածական իմաստ.** *Այնպես կամացուկ էր անցնում փողոցով,* որ ոչ ոք չէր նկատում,
- **Ժամանակի իմաստ.** *Գիշերով* տնից դուրս էր գալիս և *Ժամերով* անհետանում,
- **բաղկացության իմաստ.** *գույնզգույն քարերով* կառուցված տներ,
- **փոխարինության իմաստ.** *ատելությունը փոխարինել սիրով,*
- **գնի իմաստ.** *Ողջ ունեցվածքն ընդամենն իննսուն հազարով վաճառեցին,*
- **ամփոփման իմաստ.** *մի խոսքով, այսպիսով:*

Իսպաներենի քերականություններում միջոցի հարաբերության արտահայտության համար կարևորվում են **երեք** հիմնական առանձնահատկություններ՝

- **ինչ-որ մի բան կատարելու միջոցի կամ եղանակի արտահայտում.** *escribir a máquina* «գրամեքենայով մեքենագրել», *escribir a (con un) lápiz* «մատիտով գրել», *ir a pie (en bicicleta)* «գնալ ոտքով (հեծանիվով)»,
- **գործողության կատարում միջոցի բացակայությամբ.** *Come sin cuchillo ni tenedor* «ուտում է առանց դանակի ու պատառաքաղի» (հայ.՝ **կապ + սեռ.** հոլով):

7. Պարունակության հարաբերություն, ներգոյական հոլովի գլխավոր գործառույթ, ինչպես՝ *Կնոջ սրտում այլևս տեղ չունեի:* Իրացվում է հետևյալ մասնավոր դրսևորումներով՝

- **Ժամանակի իմաստ.** *Մեկ ամսում* այնքան էր հյուծվել, որ *անճանաչելի էր դարձել,*
- **տարածական իմաստ.** *Ամբողջ օրն այգում էր:*

Իսպաներենի քերականություններում պարունակության իմաստը տեղայնացման կամ դիրքավորման և ժամանակի իմաստների արտահայտություն է, որոնք իրենց հերթին արտահայտում են շարահյուսական մի շարք մասնավոր իմաստներ և ցույց տալիս առարկաների ու մարդկանց գտնվելու կոնկրետ տեղ ու ժամ: Մասնավոր իմաստները ցույց են տալիս՝

- **ներքին դիրք.** *Me quedé en casa* «Մնացի տանը» (հայ.՝ **տր.** հոլով),
- **բարձր դիրք.** *en (sobre, de sobre, encima de) la cama* –անկողնու վրա (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ**),
- **ցածր դիրք.** *estar bajo (debajo de, abajo) la mesa* –սեղանի տակ գտնվել (հայ.՝ **սեռ.** հոլով + **կապ**),

- տաքածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած ճշգրիտ ու կոնկրետ դիրք. *En el norte de España llueve mucho* «Իսպանիայի հյուսիսում շատ է անձրևում»,
- տաքածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած ոչ կոնկրետ, մոտավոր դիրք. *a la orilla del río* «գետափին» (հայ.՝ տր. հոլով),
- տաքածության մեջ առարկաների կամ մարդկանց զբաղեցրած մերձակից կամ հարակից դիրք, որ ցույց է տալիս տաքածության մեջ մի կետի հարաբերությունը մյուսի նկատմամբ. *a la puerta de la casa* «տան դռան մոտ» (հայ.՝ սեռ. հոլով + կապ), *a la derecha de este edificio* «այս շենքի աջ կողմում»,
- տաքածության մեջ ինչ-որ բանի երկայնքով առարկաների կամ մարդկանց զբաղեցրած դիրք. *La carretera ha sido construida a lo largo de (por) la vía del tren* «Մայրուղին գնացքի ճանապարհի երկայնքով է կառուցվել»,
- տաքածության մեջ մեծ հեռավորության վրա առարկաների կամ մարդկանց զբաղեցրած դիրք. *a la altura de 200 metros* «երկու հարյուր մետր բարձրության վրա» (հայ.՝ սեռ. հոլով + կապ),
- առջևի դիրք. *delante de (frente a, enfrente de, al frente de) mi casa* «իմ տան դիմաց» (հայ.՝ սեռ. հոլով + կապ),
- հետին դիրք. *detrás de (tras) la montaña* «սարի հետևում»,
- միջին դիրք. *entre Francia y Holanda* «Ֆրանսիայի և Հոլանդիայի մեջտեղում»,
- նշված տաքածությունից դուրս գտնվող մեկ այլ տաքածություն. *fuera de la oficina* «գրասենյակից դուրս» (հայ.՝ բաց. հոլով),
- ժամանակային հաճախականություն, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն. *20 kilómetros por hora* «ժամում քսան կիլոմետր»,
- երկու տարբեր իրադարձությունների կատարման ընթացք. *Durante la guerra la gente pasaba hambre* «Պատերազմի ժամանակ ժողովուրդը սովամահ էր լինում»,
- սահմանված ժամանակամիջոց. *Dentro de dos horas hizo todas las tareas* «Երկու ժամում բոլոր հանձնարարությունները կատարեց»,
- որևէ գործողության ավարտ ցույց տվող ժամանակ. *Al final de la clase todos fueron al cine* «Դասերի վերջում բոլորը կինո գնացին»:

Իսպաներենում նախադասության անդամների միջև տարաբնույթ հարաբերությունների հաստատման գործընթացն իրականանում է սպասարկու բառերի, այն է՝ նախդիրների միջոցով **երեք** հիմնական իմաստային ոլորտների և նրանցից յուրաքանչյուրին բնորոշ **մի շարք** մասնավոր իրացումների սահմաններում:

Ուսումնասիրության համար ընտրված տվյալ ուղին լայն հնարավորություն է տալիս ընդգծելու այն հանգամանքը, որ տարբեր լեզուների քերական-

նագետները միևնույն իմաստները, լեզվի միևնույն նյութը ներկայացնում են տարբեր եղանակներով, որոնց միջև հնարավոր է որոշակի հարաբերակցություն սահմանել:

Нарине Мелконян – *Выражение падежных значений согласно армянским и испанским грамматикам*

Данная статья посвящена исследованию общего понимания падежных отношений в армянском и испанском языках. С точки зрения сопоставительной лингвистики выявляются такие вопросы, которые в армянском и испанском языках с одной стороны связаны с разделением различных отношений, образующихся между объектами, событиями, фактами, а с другой стороны – с выявлением роли и значения, которые имеет каждый из них в грамматической структуре языка.

Narine Melkonyan – *Expression of Declensional Significance According to the Armenian and Spanish Grammarians*

The current article focuses on the investigation of common understanding of the means of expression of case relations in the Armenian and Spanish languages. In terms of comparative linguistics in the Armenian and Spanish languages such issues, that on the one hand are related to the separation of different relationships formed between objects, events, facts, and on the other hand, to the identification of the role and significance that each of them has in the grammatical structure of the language, are revealed.

**ԽՈՍՈՂ ԱՆՀԱՏԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ՀԻՄՔ**

Բանալի բառեր – խոսող անհատ, լեզվական անհատ, լեզվական գիտակցություն, հաղորդակցական իրավիճակ, կանխենթադրության հենք, իրականություն, աշխարհ, արտացոլում, աշխարհի պատկեր

XX դարի երկրորդ կեսը նշանավորվեց մարդու, նրա ներաշխարհի, գիտակցության և ենթագիտակցության նկատմամբ գիտության մեծ հետաքրքրությամբ: Կատարվեցին գիտական խոր հետազոտություններ մարդու ֆիզիոլոգիայի, ուղեղի աշխատանքի, հոգեբանության և մտավոր գործունեության ոլորտներում: Զարգացավ փիլիսոփայական միտքը, հետաքրքրություն առաջացավ դեպի արևելյան փիլիսոփայությունը, արվեստը, հետմոդեռնիզմի փիլիսոփայությունը, «գիտակցության հոսքի» արվեստը, ֆրեյդիզմը և այլն: Հնարավոր է, որ դա մարդու և նրա աշխարհայացքի նկատմամբ հետաքրքրության «վերածնունդ» է, որի կենտրոնում բնականաբար գտնվում է մարդ անհատը: Սակայն հատկանշական է, որ այս հետաքրքրության կենտրոնում ոչ թե ուղղակի մարդն է (*homo sapiens*), այլ մարդ անհատը, որն ունի գիտակցություն և բարդ ներաշխարհ:

Նախքան գիտակցության հասկացության քննությունը կցանկանայինք հակիրճ ներկայացնել, թե ինչ է «խոսող անհատը», և դրանով ինչ են հասկանում գիտության մեջ: Հատկանշական է, որ ի սկզբանե լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում էր «լեզվական անհատ» եզրույթը, որը ներմուծվել է գիտական բառապաշար Յու. Կարաուլովի կողմից¹, ապա այն իր զարգացումն է գտել նաև Բ. Ջոնսթոնի աշխատություններում²: Լեզվական անհատը, մեր ընկալմամբ, լեզվակիրն է: Յու. Կարաուլովը տալիս է դրա եռամակարդակ կառուցվածքը. 1) Բառային-իմաստաբանական, որը ենթադրում է, որ լեզվակիրը պետք է պատշաճ մակարդակով տիրապետի բնական լեզվին, իսկ հետազոտողի համար դա որոշակի իմաստների արտահայտման ձևական միջոցների ավանդական նկարագրությունն է: 2)

¹ Ст'ю Караулов Ю. Н., Роль прецедентных текстов в структуре и функционировании языковой личности // VI Международный конгресс МАПРЯЛ. Современное состояние и основы проблемы изучения и преподавания русского языка и литературы. Доклады советской делегации, М., 1982:

² Ст'ю Johnstone B., The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, Oxford University Press, 1996:

Ճանաչողական, որի միավորները հասկացություններն են, գաղափարները, հասկացությունները, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր լեզվական անհատի մեջ քիչ թե շատ համակարգված աշխարհի պատկերում, որն արտացոլում է արժեքների համակարգ: Լեզվական անհատի կառուցվածքի ճանաչողական մակարդակը և դրա վերլուծությունը ենթադրում են իմաստի ընդլայնում և անցում դեպի գիտելիքները, այսինքն՝ դեպի անհատի մտավոր ոլորտ՝ լեզվի, խոսելու և ընկալելու գործընթացների միջոցով հետազոտողին հնարավորություն տալով դուրս գալ դեպի մարդու գիտելիքները, գիտակցությունը և գիտակցական գործընթացները: 3) Գործաբանական մակարդակ, որը ներառում է նպատակները, հետաքրքրությունները և դիրքորոշումները: Այս մակարդակը լեզվական անհատի ուսումնասիրության մեջ ապահովում է օրինաչափ և հիմնավորված անցում խոսքային գործունեության գնահատականներից դեպի իրական գործունեության իմաստավորում աշխարհում: Առաջին մակարդակը լեզվի ուսումնասիրության ավանդական քերականական ուսումնասիրության եզրն է, մինչդեռ վերջին երկուսը ուսումնասիրության համեմատաբար նոր ոլորտներ են՝ պայմանավորված նրանով, որ վերջին ժամանակներս մեծ զարգացում են ապրում մարդաբանական մի շարք գիտակարգեր՝ հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, գործաբանություն և այլն:

Հատկանշական է, որ խոսող անհատ և լեզվական անհատ հասկացությունների տարանջատումը հանգում է դեռ Ֆ. դը Սոսյուրի՝ լեզու, լեզվական ունակություն և դրանց ամբողջությունը կազմող լեզվական գործունեություն եռանդամությանը²: Այլ կերպ ասած՝ առանձնացվում են լեզվախոսողության չորս բաղադրիչ՝ լեզու, լեզվական ունակություն, լեզվական գործունեություն և խոսք: Կարծես թե նույն բաժանումն է առաջարկում նաև Ա. Լեոնտևը՝ լեզուն՝ որպես առարկա, լեզուն՝ որպես գործընթաց, և լեզուն՝ որպես ունակություն³: Ա. Լեոնտևի բաժանումը նույնպես լեզվախոսողության մեջ առանձնացնում է չորս կողմ. լեզուն՝ որպես առարկա, լեզուն՝ որպես գործընթաց, լեզուն՝ որպես ունակություն, և այդ երեքի համատեղ գործառման արդյունքում առաջացած խոսքային գործունեությունը: Ֆ. դը Սոսյուրի և Ա. Լեոնտևի այս քառանդամության բաղադրիչներից առաջինին և երրորդին համապատասխանում են **լեզվական անհատ** և **խոսող անհատ** հասկացությունները: Ընդ որում, լեզվական անհատ և խոսող անհատ հասկացությունները հարաբերակցվում են հարացուցային հարաբերություններով. եթե լեզվական անհատը անփոփոխակն է, ապա խոսող անհատը՝ տարբերակը: Այսինքն՝ ասվածից կարող ենք ենթադրել, որ լեզվական անհատը հանդես է

¹ См. у Караулов Ю. Н., Русская языковая личность и задачи ее изучения // Язык и личность, М., 1989, с. 5.

² См. у Соссюр Ф. де, Курс общей лингвистики, М., 1933:

³ См. у Леонтьев А. А., Язык, речь, речевая деятельность, М., 1969, с. 23.

գալիս որպես լեզվախոսողության հնարավորություն, իսկ խոսող անհատը՝ իրականություն, դրա առկայացում: Խոսող անհատը նաև գործառական միավոր է, քանի որ նա իր լեզվական գիտելիքների համալիրից պետք է ընտրություն կատարի և իր խոսքը՝ տեքստը, կառուցի այնպես, որ այն լինի տեղին և պատշաճ տվյալ հաղորդակցական իրավիճակում, ծառայի հաղորդակցության նպատակներին և խոսքի ռազմավարություններին: Ասվածը կարելի է ամբողջացնել Յու. Ստեպանովի հետևյալ ձևակերպմամբ. «Ըստ ժամանակակից լեզվաբանական պատկերացումների՝ խոսքային ակտը իր կենտրոնի՝ խոսողի հետ միասին ամբողջ լեզվական համակարգի միջուկն է»¹: Հակիրճ ներկայացնելով խոսող անհատի գաղափարը՝ կուզենայինք անդրադառնալ մարդու **գիտակցության** «բովանդակությանը, պարունակությանը» և դրա ձևավորմանը, քանի որ դրանք են ի վերջո մարդուն վերածում խոսող անհատի և ձևավորում նրա **կանխենթադրությանին հենքը**: Մարդու ճանաչողական, մտահայեցողական այն գործընթացը և դրա արդյունքը, որը սկսվում է նրա ծնվելու պահից և տևում մինչև մահ, որի հետևանքով նրա գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների և պատկերացումների մի ստվար զանգված, մենք անվանել ենք կանխենթադրությանին հենք:

Պարզելու համար, թե ինչ է պահվում մարդու գիտակցության մեջ և ինչպես են գործառում այդ գիտակցական միավորները, հարկ ենք համարում անդրադառնալ մարդու բնությանը և նրա գիտակցությանը, ինչպես նաև հասկացությունորտի կառուցվածքային միավորներին՝ ներկայացված Լ. Վիգոտսկու, Ա. Լեոնտևի, Ա. Լուրիայի, Ն. Ժինկինի և նրանց հետևորդների աշխատություններում²:

Նախ սահմանենք, թե ինչ է **գիտակցությունը**: Ըստ Ա. Լեոնտևի՝ այն «բնորոշ է կենդանի, բարձրակարգ նյութական մարմիններին, որի էությունն է իր վիճակների միջոցով արտացոլել իրեն շրջապատող, իրենից անկախ գոյություն ունեցող իրականությունը: Գիտակցության երևույթները՝ զգայությունները, պատկերացումները, հասկացությունները, իրականության ավելի կամ պակաս հստակ ու խոր արտացոլումները, պատկերները, նկարներն

¹ Степанов Ю. С., Основы общего языкознания, М., 1975, с. 139.

² St' u Виготский Л. С., Мышление и речь, М.-Л., 1934, *նույնի* Избранные психологические исследования, М., 1956, *նույնի* Мышление и речь. Собр. соч. в 6-ти томах, т. 2, М., 1982, Леонтьев А. А., Слово в речевой деятельности, М., 1965, *նույնի* Внутренняя речь и процессы грамматического порождения высказывания // Вопросы порождения речи и обучения языку, М., 1967, с. 6-16, *նույնի* Язык, речь, речевая деятельность, М., 1969, *նույնի* Смысл как психологическое понятие // Психологические и психолингвистические проблемы владения и овладения языком, М., 1969, с. 56-66, Лурия А. Р., Мозг человека и психические процессы, М., 1970, *նույնի* Язык и сознание, М., 1979, Жинкин Н. И., Развитие письменной речи учащихся 3-7 классов // Изв. АПН СССР РСФСР, вып. 78, 1956, с. 248-255, *նույնի* Механизмы речи, М., 1958, *նույնի* О кодовых переходах во внутренней речи // Вопросы языкознания. 1964, № 6, с. 26-38, *նույնի* Речь как проводник информации, М., 1982:

են»¹: Հեղինակի բանաձևումով՝ դրանք երկրորդային են, մինչդեռ իրականությունը առաջնային է, որոշիչ: Ընդ որում, գիտակցության յուրահատկությունն այն է, որ «զգացողությունը առարկայական է, այն արտացոլում է իրականության առարկաների հատկանիշները»²:

Հարկ ենք համարում մի փոքր ավելի մանրամասն անդրադառնալ գիտակցության միջոցով իրականության արտացոլման երևույթին: **Մարդը ծնված օրվանից իր ամբողջ կյանքի ընթացքում արտացոլում է իրական աշխարհը իր գիտակցության միջոցով:** Այս առումով Ա. Լեոնտևը նշում է. «Ցանկացած գիտակցական արտացոլում կենդանի, բարձրակարգ, նյութական սուբյեկտի և նրան շրջապատող նյութական իրականության իրական կապի, իրական փոխազդեցության արդյունքն է»³:

Գիտակցության առկայությունը, այսինքն՝ արտաքին աշխարհի ակտիվ արտացոլման ունակությունը, տարբերակում է կենդանի սուբյեկտին ոչ կենդանի սուբյեկտից: Չնայած հենց այդ ունակությամբ պայմանավորված՝ միևնույն դասի (կենդանի բարձրակարգ նյութական մարմինների) մեջ առկա է ևս մեկ դասային ստորաբաժանում՝ մարդկանց և կենդանիների տարբերակումը, քանի որ հոգեկան արտացոլմամբ օժտված են նաև կենդանիները, սակայն այն տարբերվում է **գիտակցական արտացոլումից**, որը հատուկ է միայն մարդուն: Այս հանգամանքը թույլ է տալիս մարդուն արտացոլել առարկայական իրականության իրողությունները առանց մարդու՝ այդ իրողության նկատմամբ ունեցած սուբյեկտիվ վերաբերմունքի, այսինքն՝ գիտակցական արտացոլումը առանձնացնում է իրական առարկայական աշխարհի կայուն հատկանիշները: Այսքանով մենք մոտենում ենք **գիտակցության հասկացությանը, որը իրականության արտացոլման հատուկ մարդկային ձև է և հոգեկանի ամենաբարձր տեսակը**⁴:

Մեր հետազոտության այս փուլում նպատակահարմար ենք գտնում հստակեցնել՝ ինչ է **իրականությունը**, և ինչ է **արտացոլումը**: Ակնհայտ է, որ իրական աշխարհը շատ ավելի լայն է, քան մարդուն անմիջականորեն շրջապատող առարկայական աշխարհը: Հետևաբար, **իրականությունը կարող է սահմանվել որպես ցանկացած գոյություն ունեցող բան՝ նյութական և վերացական, իրականում գոյություն ունեցող կամ մտացածին** (ինչպես, օրինակ՝ անցյալի հիշողությունները, ապագայի մասին երազանքները, ծրագրերը, երևակայության պտուղները և այլն), որը պատկանում է գիտակցությանը և գտնվում է դրանից դուրս (ոչ թե դրա սահմաններից դուրս, այլ հենց դրանից դուրս, այսինքն՝ այն նյութական աշխարհը, որը կարող է ընկալվել զգայական հինգ ուղիներով): Եվ եթե տիեզերքը

¹ Леонтьев А. Н., Проблемы развития психики, изд. 3-е, М., 1972, с. 18.

² Նույն տեղում, էջ 158:

³ Նույն տեղում, էջ 54, 287, 288:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 263, 273, 285:

(աշխարհը, մոլորակը), որը ընկալվում է որպես ճանաչված և չճանաչված իրողությունների ամբողջություն, ամեն ճանաչելի և չճանաչելի, անտարբեր է ճանաչողության գործընթացի նկատմամբ, կապված չէ գիտակցության հետ և, հետևաբար, կարող է ներառել չբացահայտված **ոչինչ**-ը, ապա իրականությունը, որը կապված է ճանաչողության գործընթացի հետ, պարունակում է **«ինչ-որ բան և որոշակի մի բան»**-երը: Իսկ գիտակցության սահմաններից դուրս գտնվող **ոչինչ**-ը մտնում է իրականության մեջ միայն նշված կարգերի (ինչ-որ բան և որոշակի մի բան) միջոցով¹:

Այսպիսով, իրականության տարրերը, դրվագները փաստերն են ամենալայն իմաստով՝ իրողություններից մինչև մտափաստեր: Իրականության մեջ են մտնում թե՛ ձին և թե՛ պեզասը: Գեղարվեստական գրականության աշխարհը մեզ համար «երկրորդային իրականություն» է, «վիրտուալ իրականություն», որը նույնպես իրականության մաս է կազմում: Փաստորեն, ստացվում է, որ «երկրորդային իրականության» իրողությունները նույնպես մտնում են «առաջնային իրականության» մեջ: Օրինակ՝ իրական ձին, որը կարելի է տեսնել, հեծնել և վարել, և պեզասը, որին երբեք չես տեսել և չես տեսնի, իրականության նույնատեսակ իրողություններ են, չնայած ունեն շատ տարբեր ծագումներ:

Հաջորդ հետաքրքրական հարցն այն է, թե ինչ է **արտացոլումը**: Բնական է, որ մեր հետազոտության բնույթից ելնելով՝ արտացոլում ասելով՝ նկատի չունենք այս բառի բառարանային առաջին իմաստը՝ արտացոլում հայելու մեջ կամ նույնիսկ որևէ հետք: **Արտացոլում ասելով՝ մեր դեպքում պետք է հասկանալ ընկալման ակտիվ գործընթաց՝ դրա միաժամանակյա ճանաչողական մշակման հետ մեկտեղ:** Օրինակ, տեղեկատվություն ընկալելիս ինչ-որ առարկայի մասին, մարդը սկզբում բնորոշում է այն, որոշակիորեն դասակարգում է և ապա տեղավորում ինչ-որ մի տեղ իր՝ արդեն առկա աշխարհի պատկերի մեջ: Այլապես մարդը չէր կարողանա աշխարհում կողմնորոշվել, աշխարհը նրա համար կլիներ անվերջ *tabula rasa*. Նա ստիպված կլիներ յուրաքանչյուր արդեն իսկ ճանաչած իրողություն ամեն անգամ նորից ճանաչել դրա հետ կրկին առնչվելու դեպքում:

Այսպիսով, մենք ստանում ենք երկու իրականություն. մեզ շրջապատող իրողությունների իրականությունը, որը առաջնային է, և դրա համապատասխան արտացոլումը մեր գիտակցության մեջ, որը երկրորդային է:

Իրականություն – գիտակցություն – արտացոլում եռանդամությունը քննարկելիս ծագում է մեկ այլ կարևոր հարց ևս. ինչպե՞ս են հարաբերակցվում գիտակցությունը և իրականությունը, մտնո՞ւմ է գիտակցությունը իրականության մեջ: Հիմնվելով այս հարցի հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք պատասխանել, որ գիտակցությունը մտնում է իրականու-

¹ Տե՛ս **Чернейко Л. О.**, Лингво-философский анализ абстрактного имени, М., 1997, с. 13.

թյան մեջ, սակայն սա մասի և ամբողջի հարաբերությունն չէ: Եթե գիտակցությունը իրականության արտացոլումն է, ապա գիտակցության «պարունակությունը» իրականության իդեալական, վերացական կողմն է: Բայց քանի որ մտքերը, մտափաստերը գիտակցության «բովանդակության» տարրերն են, ապա իրականության իդեալական կողմի և գիտակցության միջև պետք չէ հավասարության նշան դնել: Մարդու կողմից ստացվող ամբողջ տեղեկատվությունը ձեռք է բերվում հինգ զգայական ուղիների միջոցով, սակայն սա չի նշանակում, որ գիտակցությունը նույնպես նյութական է: Այսպիսով, գիտակցությունը, որ ոչ նյութական է իր բնույթով, իրականության մաս է կազմում, սակայն վերջինս ներառում է նաև ոչ նյութական երևույթներ:

Հատկանշական է, որ **մարդու գիտակցությունը գոյություն ունի մտապատկերների տեսքով**, որը ներհայեցման միջոցով հասանելի է դիտարկման համար միայն գիտակցության սուբյեկտի կողմից, ինչպես նաև այդ մտապատկերների «արտաքնայնացման» ժամանակ, այսինքն՝ այնպիսի գործունեության ընթացքում, որում գիտակցության սուբյեկտը մարմնավորում է այդ պատկերները և այդ պատկերները առարկայի փոխակերպելիս, այսինքն՝ այդ գործունեության արդյունքների, արգասիքների մեջ¹:

Քանի որ մարդը հասարակական էակ է, «հասարակականը իր ողջ էությամբ, մարդկայինը մարդու մեջ ծնվում է նրա կյանքով հասարակության պայմաններում, մարդկության կողմից ստեղծված մշակույթի պայմաններում»², ապա մարդու գիտակցությունը «իրականության արտացոլումն է, կարծես թե հասարակայնորեն մշակված լեզվական իմաստների, հասկացությունների պրիզմայով արտացոլված», իսկ «մարդու անհատական գիտակցությունը հնարավոր է միայն հասարակական գիտակցության գոյության պայմաններում»³: «Գիտակցությունը մատերիայի զարգացման արդյունքն է, կյանքի զարգացման արդյունքը: Դա արտացոլման վերին ձևն է, հատուկ մարդկային ձև է, որն առաջացել է պատմական զարգացման ընթացքում, մարդկային կյանքի անցնելու հետևանքով՝ կյանքը հասարակության մեջ, հասարակական հարաբերությունների պայմաններում»⁴:

Մարդու գիտակցության պատկերացումը ամբողջական չի լինի, եթե առանձին չանդրադառնանք **լեզվական գիտակցությանը**:

Ասելով լեզվական գիտակցություն՝ նկատի ունենք գիտակցության այն կողմը, որը կապված է և պատասխանատու է անհատի լեզվական գործունեության համար: Այլ կերպ ասած՝ լեզվաբանի տեսանկյունից գիտակցությունը և լեզվական գիտակցությունը չեն տարանջատվում: Ի դեպ, ինչպես

¹ Ст' у Тарасов Е. Ф., Введение // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 6.

² Леонтьев А. Н., Человек и культура, М., 1961, с. 3.

³ Леонтьев А. Н., Проблемы развития психики, изд. 3-е, М., 1972, с. 283.

⁴ Леонтьев А. Н., Философия психологии, М., 1994, с. 27.

նշում է Ե. Տարասովը, շատ լեզվաբաններ և հոգելեզվաբաններ օգտագործում են երկու եզրերն էլ մարդու գիտակցության մասին խոսելիս¹: Մենք մեր հերթին գիտակցության մասին խոսելիս ուղղակի մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք գիտակցության այն կողմի վրա, որը ապահովում է անհատի խոսքային գործունեությունը, որի ուսումնասիրությամբ մենք հանգում ենք ազգային մտածական-լեզվական համալիրին (եզրույթը պատկանում է Վ. Մորկովկինին²), ազգային հասկացությունորտին, քանի որ «լեզուն նյութականացնում է մտածականը»³: Ընդ որում, պետք է նշել, որ լեզվական գիտակցությունը հնարավոր չէ ուսումնասիրել դրա գործառնական պահին, այն կարող է ուսումնասիրվել միայն որպես անցած, նախկին կամ նախկին փորձի հիման վրա հնարավոր գործունեության արգասիք, այսինքն՝ այն կարող է դառնալ ուսումնասիրության առարկա միայն գիտակցությունից օտարված, նյութականացած մշակութային իրողությունների տեսքով, ինչպես Ե. Տարասովն է նշում, «մշակութային առարկաներ, որոնք օգտագործվում են որպես նշանի մարմին»⁴: Նշյալ դիտողությունը, ըստ երևույթին, հարում է Ա. Պոտեբնյայի այն գաղափարին, որ «Մեր փորձը ցույց է տալիս, որ մեր ներկայիս վիճակը մեր կողմից ենթակա չէ ուսումնասիրության, և մեր կողմից մեր մասին նկատած ցանկացած բան արդեն անցյալ է»⁵:

Մարդու լեզվական գիտակցության արգասիքը, փաստորեն, տեքստն է, որը և կարելի է ուսումնասիրել և դրանից եզրահանգումներ անել մարդկային գիտակցության բովանդակության և գործառնական մասին: Ե. Տարասովի և Ա. Պոտեբնյայի դատողությունները, ըստ էության, փաստում են գիտակցության և լեզվի կապը. այն, որ լեզուն իր նշանների համակարգի մեջ կրում է մարդու փորձը և պատմությունը որպես իմաստ, իսկ խոսքը անմիջականորեն արտացոլում է մարդու գիտակցության բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ նյութական խոսքը՝ տեքստը, կազմվում է մարդու գիտակցության բովանդակության՝ նախորդ, կուտակած գիտելիքի հիման վրա և հանդես է գալիս որպես դրա կրիչ: Իսկ **խոսող անհատի գիտակցության բովանդակությունը, որը, փաստորեն, նրա կենսափորձի արգասիքն է, հենց մարդու կանխենթադրությանն է:**

Նշենք, որ Լ. Վիգոտսկու և ապա նրանից հետո Ա. Ն. Լեոնտևի համար գիտակցությունը լեզվական բնույթ ունի. «Ունենալ գիտակցություն նշանակում է լեզվի տիրապետել: Տիրապետել լեզվի նշանակում է իմանալ իմաստ-

¹ Ст' у Тарасов Е. Ф., Введение // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 7.

² Ст' у Морковкин В. В., Морковкина А. В., Язык, мышление и сознание et vice versa // Русский язык за рубежом, 1994, № 1:

³ Гийом Г., Принципы теоретической лингвистики, М., 1992, с. 71.

⁴ Тарасов Е. Ф., Введение // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 7, 8.

⁵ Потебня А. А., Мысль и язык // Слово и миф, М., 1989, с. 153.

ները: Իմաստը գիտակցության միավոր է (այստեղ հեղինակները նկատի ունեն լեզվական, բառային իմաստը – *Հ. Թ.*): Գիտակցությունը այս իմաստով նշանային է»¹: Լեզուն, ըստ էության, իմաստների համակարգ է, այն չի կարող ինչ-որ բան չնշանակել, և դրա ամբողջ գոյությունը սահմանափակված է իմաստի մեջ: Զարգացնելով Լ. Վիգոտսկու և Ա. Ն. Լեոնտևի ուսմունքը՝ Ա. Ա. Լեոնտևը պնդում է, որ եթե լեզուն ընկալվում է որպես հաղորդակցման և ընդհանրացման ամբողջություն, որպես իմաստների համակարգ, որոնք դրսևորվում են գոյության ինչպես առարկայական, այնպես էլ խոսքային ձևերում, ապա լեզվական գիտակցությունը, այսինքն՝ այն գիտակցությունը, որը միջնորդավորված է իմաստների միջոցով, մոտենում է աշխարհի պատկերի գաղափարին ժամանակակից գիտության մեջ: Հենց իր մեջ առկա աշխարհի պատկերի միջոցով է մարդը ընկալում աշխարհը. «Աշխարհը մարդու աչքերով աշխարհի մի տեսակ է՝ այն մշակման հիման վրա, որին մենք ենք ենթարկում մեր մեջ պարփակված աշխարհը»²: Հետևաբար, մարդու լեզուն «մակերեսային կառույց է, որում տեքստերի միջոցով ամրագրվում է աշխարհի կաղապարը, որը մենք կրում ենք մեր գիտակցություն մեջ»³, քանի որ ինքը լեզուն՝ որպես որոշակի իմաստակիր համակարգ, պահանջում է հարաբերակցում գոյություն ունեցողի հետ»⁴: Այս առումով տեղին է հղել Տ. Լոմտսին. «Սկզբունքորեն անհնար է նախադասություն կազմել բնական լեզվի բառերից այնպես, որ բացակայի արտացոլումը արտացոլվող իրողության գոյության դեպքում, այսինքն՝ որ նշանը հարաբերակցվի իրականության հետ՝ շրջանցելով դրա արտացոլումը մարդու գիտակցության մեջ»⁵: Այսպիսով, «Կարելի է ենթադրել, որ իրական իրավիճակի և այդ իրականությունը արտացոլող ասույթի (խոսքային գործունեության արգասիքի) միջև առկա է որոշակի միջանկյալ փուլ՝ որոշակի նպատակների համար այդ իրավիճակը մասերի տրոհելու փուլ»⁶, մինչդեռ հենց իրականության տրոհումը կապված է տեղադրության հետ⁷: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ մեր գիտակցությունը դասակարգում է իրականության իրողություններն այնպես, որ համապատասխանեցնի նախ և առաջ լեզվական համակարգին (կարգեր, դասեր, խոսքի մասեր և այլն), ապա օբյեկտիվ իմաստային բջիջներին՝ նշաններին: Արտացոլ-

¹ Леонтьев А. А., Языковое сознание и образ мира // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 16.

² Гийом Г., Принципы теоретической лингвистики, М., 1992, с. 144.

³ Тураева З. Я., Лингвистика текста и категория модальности // Вопросы языкознания. 1994, № 3, с. 105.

⁴ Рикер П., Конфликт интерпретаций (Очерки о герменевтике), М., 1995, с. 24.

⁵ Ломтев Т. П., Структура предложения в современном русском языке, М., 1979, с. 19.

⁶ Шахнарович А. М., Юрьева Н. М., Психолингвистический анализ семантики и грамматики, М., 1990, с. 21.

⁷ Шейн Шрейдер Ю. А., Семантическая информация и принцип фокализации // Общение в свете теории отражения. Фрунзе, 1980, с. 46-48.

ման երկրորդ փուլը, ըստ մեզ, աշխարհի մշակութայնացման ճանաչողական փուլն է. երբ միևնույն իրական աշխարհի իրողությունները յուրաքանչյուր խոսող անհատի կողմից տարբեր անձնական իմաստի՝ մշակութային-ազգային-հասարակական երանգներ են ձեռք բերում՝ ելնելով տվյալ խոսող անհատի՝ որպես որոշակի ազգի, մշակույթի, հասարակական շերտի, մտածելակերպի ներկայացուցչի և կրողի: Փաստորեն, **խոսող անհատի՝ աշխարհի գիտակցական պատկերը, այսինքն՝ աշխարհի մասին նրա գիտելիքները՝ կանխենթադրության հենքը, մի կողմից օբյեկտիվ է, մյուս կողմից՝ սուբյեկտիվ**: Օբյեկտիվ է առաջնային արտացոլման փուլում, սակայն մշակութային ճանաչողական արտացոլման փուլում այն խստիվ անհատական է: Վերջինս, սակայն, չի նշանակում, որ մարդիկ չեն կարող պատշաճ հաղորդակցվել, այն նշանակում է, որ հասցեագրողի՝ հաղորդման տեքստի տակ ներդրված կանխենթադրության հենքը չի համապատասխանում հասցեատիրոջ կանխենթադրության հենքին, որով վերջինս ընկալում է և մեկնաբանում տեքստը:

Կարևոր է նաև այն, որ լեզվական գիտակցությունը, ըստ Ա. Վեժբիցկայայի, ունի տարբեր մակարդակներ, և որ այն պարունակում է ինչպես մակերեսին գտնվող փաստերը, այնպես էլ շատ խոր թաքնվածները¹: Այլ կերպ ասած՝ «գիտակցությունը խորություն ունի»²: Ընդ որում, խորքում թաքնվածը կարելի է «դուրս քաշել» մակերես: Վերը ասվածը կարելի է ընդհանրացնել Ի. Զիմնյայայի լեզվական գիտակցության սահմանմամբ. «**Լեզվական գիտակցությունը գիտակից մարդու, խոսող մարդու, հաղորդակցվող մարդու, մարդու՝ որպես հասարակական էակի անհատական, ճանաչողական գիտակցության գոյության ձև է**»³:

Այսպիսով, գիտակցությունը ունի լեզվական բնույթ, «ինքնադրսևորվում է» լեզվի մեջ, այն մարդկային մտքի արտացոլման լավագույն միջոցն է: Ըստ Ն. Ժինկինի՝ խոսքը լեզվի պարզ դրսևորումը չէ: Այն շղթայի ոչ թե վերջն է, այլ սկիզբը, ուսումնասիրության առարկան, այլ ոչ թե արդյունքները⁴: Հասցեագրողի նախաձեռնած և հասցեատիրոջ կողմից շարունակվող խոսքային հաղորդակցությունը մարդու գիտակցության մեջ ներխուժելու փորձ է, որն ուղղված է մարդու ճանաչողական համակարգի մեջ աշխարհի լեզվական պատկերի կառուցմանը: «Լեզուն մարդկային գործունեություն է, որն ամեն անգամ որոշակի նպատակի է ուղղված. սեփական մտքերի և զգացմունքների ամենալավ ու ամենահարմար արտահայտմանը»⁵: Մերելով խոսույթ՝

¹ Տե՛ս **Вежбицкая А.**, Язык. Культура. Познание, М., 1996, с. 244.

² **Леонтьев А. А.**, Языковое сознание и образ мира // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 18.

³ **Зимняя И. А.**, Способ формирования и формулирования мысли как реальность языкового сознания // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 51.

⁴ Տե՛ս **Жинкин Н. И.**, Механизмы речи, М., 1958:

⁵ **Щерба Л. В.**, Языковая система и речевая деятельность, Л., 1974, с. 102.

հասցեագրողը իրականացնում է իր նպատակները, որոնք մի կողմից ուղղված են հասցեատիրոջը որոշակի տեղեկատվություն տալու և նրա գիտակցության մեջ ներդնելու իրականության և խոսքային իրավիճակի սեփական տեսլականը, արտահայտել իր վերաբերմունքը աշխարհի նկատմամբ, գնահատել հաղորդվող տեղեկատվությունը, փոխանցել իր զգացմունքներն ու կամքը: Մյուս կողմից՝ հասցեագրողը նպատակ է հետապնդում ներգրավել հասցեատիրոջը գործաբանական իրավիճակի համատեղ իմաստավորմանը և փոփոխությանը, նրա մեջ առաջացնել համապատասխան հակազդեցություններ՝ հավանություն/անհավանություն, համաձայնություն/անհամաձայնություն և այլն: Լ. Յակուբինսկու պնդմամբ՝ «լեզուն այն է, որի մեջ և որի օգնությամբ գոյություն ունի հասարակության գիտակցությունը: Լեզուն մարդու վարքի տեսակ է: Մարդու վարքը հոգեբանական (կենսաբանական) փաստ է՝ որպես մարդու օրգանիզմի դրսևորում, այն նաև հասարակական փաստ է՝ որպես այնպիսի դրսևորում, որը կախված է այդ օրգանիզմի համատեղ կյանքից այլ օրգանիզմների հետ դրանց փոխազդեցության պայմաններում»¹: Ընդ որում՝ լեզվական տվյալները մեծ դեր են խաղում բնակչության տարբեր խմբերի մտածողության հիմնարար կաղապարների դուրսբերման մեջ²: Հասցեագրողի հաղորդակցական ռազմավարությունը փուլերով է իրականացվում՝ հաշվի առնելով հաղորդակցման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն ու պայմանները: Հաղորդակցման ձևավորման գործընթացների հիմքում ընկած է լեզվական և ոչ լեզվական գիտակցության ձևավորման գործընթացը, սակայն, դրա հետ մեկտեղ, գիտակցության ձևավորման գործընթացը հնարավոր է միայն հաղորդակցման մեջ³:

Ամփոփելով քննության արդյունքները՝ կարող ենք ասել, որ խոսող անհատի (լեզվական) գիտակցությունը մարդու հասարակայնացման արդյունք է: Իսկ լեզվական գիտակցությունը իր հերթին խոսող անհատի կանխենթադրության հենքն է, որը նյութականանում է որպես տեքստ հաղորդակցության ընթացքում՝ արտացոլելով այդ տեքստի հիմքում ընկած կանխենթադրության հենքի ողջ ճանաչողական բնութագիրը:

¹ Якубинский Л. П., Избранное. Язык и его функционирование, М., 1986, с. 17.

² Вежбицкая А., Язык. Культура. Познание, М., 1996, с. 291-292.

³ Տե՛ս Սֆիմցեա Ն. Յ., Человек и его сознание: проблема формирования // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, с. 59.

Грануш Товмасын – *Понятие говорящей личности и ее (языкового) сознания как основы для коммуникации*

В статье рассматривается понятие говорящей личности и как она отображает реальность в своем сознании и формирует свою индивидуальную картину мира. Последняя в свою очередь формирует ее индивидуальную пресуппозиционную базу. Пресуппозиционная база говорящей личности играет центральную роль в ее речемыслительной деятельности, то есть при формировании текста, так как любая говорящая личность внедряет в текст содержание своего (языкового) сознания, то есть своей пресуппозиционной базы. Таким образом, (языковое) сознание это отображение реальности в мозгу человека, таким образом формируя его индивидуальную картину мира. Любой речевой акт, сформированный говорящей личностью, основан на содержании ее сознания.

Hranush Tovmasyan – *The Notion of Speaking Individual and his/her (Linguistic) Consciousness as a Basis for Communication*

The article dwells upon the notion of speaking individual and how the latter reflects the reality in his/her consciousness and forms his/her individual picture of the world. The latter shapes his/her individual presupposition base. The presupposition base of the speaking individual takes a crucial part in shaping a text as any speaking individual contributes to the text the content of his/her (linguistic) consciousness, hence his/her presupposition base. Thus, the (linguistic) consciousness is the reflection of reality into a person's brain, this way forming his unique individual picture of the world. Any speech act that a speaking individual initiates is based on the content of his/her consciousness.

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՈՒ ՇՐՋԱՓՈԻԼԵՐԸ՝ ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

***Բանալի բառեր** – լեզվի պատմություն, ժողովրդի պատմություն, գրական հայերեն, շրջանաբաժանում, երկու շրջափուլ, գրաբար, աշխարհաբար, միջին հայերեն, անմիջորինակություն, ընդհանրություններ, արևմտահայ աշխարհաբարի ենթաշրջան, ժամանակակից կամ արդի հայերեն*

Գիտության ցանկացած ոլորտում կան հարցեր կամ հարցերի շրջանակ, որոնք գիտական քննարկումներից և որոշակի լուծումներ ստանալուց հետո, թվում է՝ նոր արծարծումների քիչ առիթներ պետք է ունենան, մասնավորապես ներկայացվում են ոլորտի գիտակի և մեծ համբավ ունեցող գիտնականի կողմից: Բայց գիտական առաջընթացի տրամաբանությունը հուշում է, որ դրանք ժամանակ առ ժամանակ օրյեկտիվորեն նետվում են քննարկումների թատերաբեմ՝ ակնկալելով վերլուծությունների և լուծումների նոր եղանակներ՝ նոր հայացքով և նոր մոտեցումներով կամ մեթոդաբանությամբ:

Գրական հայերենի շրջանաբաժանման հարցը հարյուր և ավելի տարիներ շարունակ գիտական հետաքրքրությունների առանցքում է: Եվ այն տպավորությունը կա, թե հարցը վերջնական լուծում ստացավ 1951 թ. Գևորգ Զահուկյանի գեկուցումով, որը հետագայում որոշ փոփոխություններով վերահրատարակվեց նրա այլևայլ աշխատություններում:

Շրջանաբաժանման հիմքում Գ. Զահուկյանը դնում է երեք սկզբունք՝ 1. Լեզվի պատմությունը տվյալ լեզվի բոլոր տարատեսակությունների պատմությունն է: 2. Շրջանաբաժանումը չպետք է հասկացվի բացարձակ իմաստով. «Այն առավել կամ պակաս չափով հարաբերական բնույթ ունի»: 3. Լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ¹: Այս մոտեցմամբ գրային շրջանում առանձնացվում է հայոց լեզվի պատմության երեք փուլ՝ հին շրջան (V-XI դարեր), միջին շրջան (XII-XVI դարեր), նոր շրջան (XVII դարից մինչև մեր օրերը): Գիտական շրջանառության մեջ դրված այս տեսակետը այսօր պաշտպանվում է առանց վերապահության: Սակայն շուրջ յոթ տասնամյակի պատմություն ունեցող

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 33-35:

մոտեցումները, մեր կարծիքով, որոշ բացատրությունների և ճշգրտումների պահանջ ունեն:

Անդրադառնանք առաջին սկզբունքին, որը մեր տպավորությամբ ամենից կարևորն է: «Լեզվի պատմության շրջանաբաժանումը,– գրում է Գ. Ջահուկյանը,– պետք է արտացոլի լեզվի պատմության տարբեր շրջաններում այդ տարատեսակների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերը, որոնք արտացոլվում են լեզվի զարգացման օրենքների մեջ»¹: Ասել է թե՛ լեզվաբանը չի փորձում տալ հայերենի միայն գրական արտահայտությունների պատմության շրջանաբաժանումը: Եվ այս մոտեցմամբ միանգամայն հասկանալի կարող էր լինել միջին հայերենի առանձնացումը որպես առանձին շրջափուլ, թեև բաց էր մնում լեզվի տարատեսակություններից, օրինակ, բարբառների խնդիրը. XV-XVI դարերում բարբառների ակտիվացումը արդյո՞ք առանձին շրջափուլ էր, թե՞ ենթաշրջան միջին հայերենի համակարգում: Բայց իր սկզբունքները շարադրելիս Գ. Ջահուկյանը անում է ևս մի վերապահություն. լեզվի գրային շրջանի մասին խոսելիս նա նկատում է. «Այնուամենայնիվ, մենք ստիպված ենք մեծ մասամբ սահմանափակվել գրական լեզուների պատմությամբ՝ այլ կարգի տվյալների խիստ սահմանափակության պատճառով»²: Այս մոտեցումը որդեգրելուց հետո, երբ հայոց լեզվի բոլոր տարատեսակությունների պատմության շրջանաբաժանման փորձը ի վերջո օբյեկտիվորեն հանգում է գրական լեզուների շրջանաբաժանման, լեզվաբանին այլ բան չէր մնում, քան միջին հայերենը տեղավորել հայոց գրական լեզուների պատմական շղթայի մեջ՝ նրան վերագրելով գրական լեզվի հատկանիշներ: Գ. Ջահուկյանը սրանով պայմանականորեն ընդլայնում է առհասարակ գրական լեզվի ըմբռնման սահմանները՝ նրա հիմնական հատկանիշ համարելով ավելի կամ պակաս նորմավորված լինելը և կաշուն լեզվական որակ ունենալը: Այսօր խիստ հստակեցված են այդ սահմանները: **Գրական լեզուն** ազգային լեզվի պատմական գոյության ձև է, որը լեզվակիրառողի կողմից ընդունվում է որպես օրինակելի. ընդհանուր գործածական այնպիսի լեզվատարրերի և խոսքային միջոցների պատմականորեն ձևավորված համակարգ է, որոնք ազգային լեզվի կրթված կրողների ու խոսքի հեղինակավոր վարպետների կողմից տեքստերում (գրավոր և բանավոր) ենթարկվել են տևական մշակման³: Որպես գրական լեզվի հիմնական որակներ են նշվում մշակվածությունը, միասնականությունը, ավանդականությունը, գրավոր ամրագրումը, գրական լեզվի շրջանակներում խոսակցական և գրքային լեզվատարրերի համատեղ գործառնությունը, ոճական բազմազանությունը և ազատ կիրառելիությունը գործառական բոլոր

¹ Նույն տեղում, էջ 33:

² Նույն տեղում, էջ 34:

³ См. u “Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам)”, М., 2009: (Էլ. հասցե՝ http://methodological_terms.academic.ru/859/ЛИТЕРАТУРНЫЙ):

ոճերում, գուգաձևությունների հաղթահարման միտումը, գործառական փոխներթափանցումները, առաձգական կայունությունը և այլն: Գրական լեզուն վերաբարձաբային իրողություն է և իր մշակվածությամբ «հակադրվում» է բարբառայնությանը, հասարակաբանություններին ու ժարգոններին: Գրական լեզվի բոլոր բնորոշումներում որպես հիմնական հատկանիշ է առանձնացվում **նորմավորվածությունը**: Դա նշանակում է, որ գրական լեզվի բառային կազմը հիմնականում ընտրված է ընդհանուր համաժողովրդական լեզվի բառազանձից, բառերի իմաստներն ու գործածությունները, արտասանությունը և ուղղագրությունը կանոնակարգված են, ձևակազմությունը և շարահյուսական կառույցները ենթարկվում են համընդունված օրինաչափություններին: Գրական լեզվի կանոնները համապարտադիր են բոլոր լեզվակիրառողների համար խոսքային հաղորդակցման բոլոր ասպարեզներում¹: «Գրական լեզուն,– կարդում ենք դասագրքային սահմանումներից մեկում,– ազգային լեզվի պատմականորեն ձևավորված բարձրագույն ձև է, լեզվական միջոցների նորմավորված, կանոնակարգված, մշակված համակարգ, որը հանդես է գալիս որպես օրինակելի և ընդհանուր գործածական որակ ու ծառայում է իբրև հաղորդակցման միջոց հասարակական և անձնական գործունեության բոլոր ոլորտներում»²:

Միջին հայերենը ոչ մի կերպ չի տեղավորվում գրական լեզվի նորագույն ըմբռնման այս շրջանակներում: Միջին հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող բոլոր լեզվաբանները հատուկ շեշտում են այն միտքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը գրական լեզվի կարգավիճակի չհասավ: Գերմանացի հայագետ Յոզեֆ Կարստը միջին հայերենի առաջացման ու կազմավորման հարցերում հիմնականում պաշտպանում է իր նախորդների տեսակետները. միջին կամ կիլիկյան հայերենի շրջան է համարում XI-XV դարերը, նոր հայերենի ժամանակաշրջանը սկսում է XV դարից: Միջին հայերենը դիտում է որպես հին և նոր հայերենների միջև ընկած ժամանակաշրջան: Տարբեր առիթներով նա շեշտում է այն հանգամանքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը իր լեզվական որակներով չի ներկայանում որպես միասնական և մշակված, միատարր լեզու և ունի անցման շրջանի լեզվի կամ շրջափուլի հատկանիշներ, աչքի է ընկնում բարբառային տարբերություններով³: Գ. Սևակը, խոսելով IX-XIII դարերում ստեղծված աշխարհիկ գրականության մասին, նշում է, որ այդ գրականությունը ստեղծվում է նոր լեզվով, որը «**միջին հայերեն**» ընդհանուր անունն է կրում, թեև միասնական չէ և նայած

¹ Տե՛ս նույն տեղում, նաև՝ **Д. Розенталь, М. Теленкова**, “Словарь-справочник лингвистических терминов”, 2-е изд., М., 1976:

(Էլ. հասցե՝ http://dic.academic.ru/dic.nsf/lingvistic/684/литературный_язык)

² **Радугин А.**, Русский язык и культура речи, М., 2004, с. 50.

³ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Երևան, 1972, էջ 13-16 (այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 1 և էջը):

հեղինակի բարբառին, գրաբարագիտության չափին ու ճաշակին՝ ավելի կամ պակաս չափով մոտ է գրաբարին»¹: **Ս. Ղազարյանը** միջին հայերենի նկարագրությանը նվիրած իր աշխատություններում գրավոր հայերենի այդ տարբերակը թեև անվանում է «իր օրինաչափությունները ունեցող գրական լեզու», «հայոց գրական լեզվի միջին շրջան», «գրական նոր լեզու»² և իր տեսակետը փորձում է հիմնավորել այն փաստարկումով, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը չենք կարող նույնացնել ժամանակի խոսակցական լեզվի հետ, սակայն տարբեր առիթներով շեշտում է այն գաղափարը, որ այդ լեզուն միատարր չէ, աչքի է ընկնում ձևերի բազմազանությամբ և ի վերջո չի հասնում զարգացման անհրաժեշտ մակարդակի. լեզվաբանը միջին հայերենի բնութագրական ընդհանուր հատկանիշ է համարում այն, որ հայերենի զարգացման այս շրջափուլում «կիրառվում էին լեզվական միևնույն կանոնը արտահայտող տարբեր ձևեր, որոնք ցույց էին տալիս, որ այդ լեզվի մշակման ու կայունացման պրոցեսը դեռևս չի ավարտվել»³: **«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» հեղինակները** թեև իրենց երկհատոր աշխատասիրության վերնագրում **միջին հայերեն**-ի կողքին գետեղել են **գրական** որակումը, բայց գրքի հենց ներածական մասում ու նաև շարադրանքում մի քանի անգամ հիշեցնում են, որ **գրական** անվանումը պայմանական է, որ կիլիկյան հայերենի գրական լինելը պետք է ընդունել որոշ վերապահությամբ, և որ այդ հայերենն իր գոյության ամբողջ շրջանում միօրինակ չի եղել: Նշվում են նաև հիմնավոր պատճառներ և ազդեցություններ: «Կիլիկիայում գրի առնված ժողովրդական հայերենը հնարավորություն չունեցավ մշակվելու և դառնալու կանոնավոր ու միասնական օրինաչափություններով գրական լեզու,– գրում է Հ. Մուրադյանը:– Դրան նախ խանգարում էր նրա հիմքում ընկած խոսակցական լեզվի անմիօրինակությունը: Չնայած գրավոր լեզվի հիմքում ընկած բանավոր լեզվի ընդհանրություններին, այնուամենայնիվ, սնվելով ժողովրդական լեզվի ակունքներից, նա իր մեջ էր առնում նաև տարբերությունները, որոնք և առաջացնում էին անմիօրինակություններ: Մյուս կողմից՝ այդ տարբերությունները հաղթահարելու և դրանք միասնական գրական լեզվի մեջ ձուլելու համար պահանջվում էր երկարատև ժամանակ, որից սակայն զրկվեց գրական լեզուն՝ կիլիկյան պետականության վերացման հետևանքով» (Ա 1, 36-37): «Նորակազմությունների տարածման և անկանոնությունների մասնակի վերացման հետևանքով լեզվի համակարգը զգալիորեն ձգտում է պարզեցման,– գրում է Լ. Հովսեփյանը:– Սակայն նորմայի տեսակետից լեզուն դեռևս կայունացած չէ իր քերականական ձևերի մեջ: Այդ պատճառով էլ միջին հայերենի հոլովման համակարգը աչքի է ընկնում ներքին անմիօրինակու-

¹ **Մևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 52:

² Տե՛ս **Ղազարյան Ս.**, Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960, էջ 6-7, 96:

³ **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 204:

թյամբ, թեքությունների բազմազանությամբ և նրանց տարբերակների միջև փոխանցումների ազատությամբ: Միևնույն քերականական իմաստն ունեցող ձևությունների այդ բազմազանությունը ստեղծվում է ի հաշիվ գրաբարից և միջին հայերենի տարբեր բարբառներից եկող լեզվական իրակությունների խառն ու առանց ընտրության օգտագործման»¹: Ինքը՝ Գ. Ջահուկյանը ևս, բուն միջին հայերենի շրջափուլի մասին խոսելիս մեկ անգամ չէ, որ ընդգծում է այդ միտքը. նրա համոզմամբ՝ միջին հայերենը «մշակման որոշակի հունի մեջ չի դրվել և անմիօրինակ է», միջին հայերենը այդպես էլ չկարողացավ հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին²:

Անմիօրինակությունները առկա են միջին հայերենի լեզվական բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունաբանությունից մինչև շարահյուսական կառույցներ: Վկայված բազմաթիվ իրողություններից թվարկենք ընդամենը մի քանիսը. **հնչյունական համակարգում** կան բառեր և բառաձևեր, որոնց մեջ հերթագայում են **ո//օ//ու** գրերը՝ **տոմար//տամար// տօմար, կաթողիկե//կաթաղիկե//կաթողիկե**, նմանապես՝ **կաթողիկոս//կաթաղիկոս//կաթողիկոս, Լամբրոն//Լամբրան//Լամբրուն//Լապրուն** (Ա 1, 85), առկա է **ե-ի** և **է-ի** գրության շփոթ (գեղ//գեդ, աղէկ//աղեկ, քաւել//քաւէլ, ամէն//ամեն և այլն), **ո-ի** երկգրություններ, օրինակ, ենթակայական դերբայում (ծնող//ծնաղ, ընթերցող//ընթերցաղ) (Ա 2, 65-67), եռագրություններ (բաշխաղ, խաբող, գնօղ, առնող) (Ա 1, 314), սկզբնաղբյուրներում արձանագրվում են բառերի հնչյունափոխված բազմազան տարբերակներ՝ **յուղարկէ, յղարկէ, որկէ, ուղարկէ, յօղարկէ** (Ա 2, 80), **այգի, էգի, իգի** (Ա 1, 93), **առնել, արնել, այրնել, այնել, անել, էնել, ընել** (Ա 2, 151), և այլն:

Ձուգաձևությունները և տարբերակային ձևերի փոխանցումները չափազանց շատ են **ձևաբանական համակարգում**, մասնավորապես՝ հոլովական ձևերում ու հոլովումներում, հոգնակիի կազմության մեջ, գոյական դերանունների թեքված ձևերում, բայի խոնարհման համակարգում: Մեծ թվով անուններ փոխանցում են կատարում **ի, ո, ու** հոլովումների միջև՝ շատ հաճախ կազմելով եռաձևություններ, ինչպես՝ **ամսի//ամսոյ//ամսու, առիւծի//առիւծոյ//առիւծու, արևի//արևոյ//արևու, գետի//գետոյ//գետու, ուժի//ուժոյ//ուժու, ծովի//ծովոյ//ծովու, փողի//փողոյ//փողու, շահի//շահոյ//շահու, տեղի//տեղոյ//տեղու, օձի//օձոյ//օձու** և էլի տասնյակ այլ բառեր, ինչպես նաև

¹ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Երևան, 1975, էջ 8 (այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 2 և էջը):

² **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 44-45: Գ. Ջահուկյանը հայոց լեզվի գրավոր ժամանակաշրջանի պատմության շրջանաբաժանման հարցերին և միջին հայերենի լեզվական որակի բնութագրությանը անդրադարձել է նաև այլ աշխատություններում՝ սկզբունքորեն պաշտպանելով և զարգացնելով տասնամյակներ առաջ արտահայտած իր տեսակետը. տե՛ս **Ջահուկյան Գ.**, Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, *նույնի*՝ Միջին հայերենը որպես լեզվական որակ // «ԲԵՀ», 1993, թիվ 1, էջ 14-21:

այլ տիպի փոխանցումներով՝ **Գրիգորի/Գրիգորոյ/Գրիգորայ, ցորեկի/ցորեկոյ/ցորեկվան, ընկերի/ընկերոյ/ընկերոջ, գառնի/գառնոյ/գառան/գառին** և այլն (Ա 2, 32-34): Գոյականի հոգնակին կազմվում է մեկուկես տասնյակից ավելի վերջավորություններով (**-եր, -ք, -ներ, -նի, -ունք, -վի, -ստան, -այք, -որայք, -անի, -իք, -տի, -ան, -ար** և այլն), որոնք տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների մոտ առավել կամ պակաս կենսունակությամբ են հանդես գալիս: Օրինակ՝ **ակռա-ակռայք/ակոեր/ակռանի/ակռաներ, ոսք-ոսք/ոտեր/ոտնի/ոտվի/ոտներ, միրգ-միրգք/մրգեր/մրգունք/մրգանք, ծաղիկ-ծաղիկք/ծաղկունք/ծաղկներ/ծաղկնի/ծաղկունաք, իր-իրք/իրվի/իրվան/իրվտանք, աչք-աչեր/աչք/աչվի/աչունք/աչվեր/աչվներ/աչվնի** և այլն (Ա 2, 62): Ըստ որում, մի խումբ հոգնակերտներ կարող են գործածվել նաև միասնաբար, ինչպես՝ **գետերք, մարդիկք, մանկտիկ, իրվտանք, աչվնի, իշվանք, գեղերայք** և այլն (Ա 2, 38): Միջին հայերենին հատուկ՝ հիմնական և անհամեմատ ավելի գործուն ձևերի կողքին մատենագրության մեջ հանդիպում են սահմանափակ կիրառություն ունեցող դերանվանաձևեր՝ ստեղծելով զուգաբանությունների անմիօրինակ շարքեր. **մենք** դերանվան բացառականի տարբերակներից են՝ **ի մեզնե, ի մեզանե, մենե, մեզե, մեզնե, ի մենե**, կամ՝ **դու** դերանվան բացառականի տարբերակներից՝ **ի քեզնե, ի քեզմե, ի քեզե, ի քենե, ի քեզանե** (Ա 2, 90-93): Իսկ եթե սրանց ավելացնենք նաև ուշ միջնադարում ձևավորված զուգաձևերը (**մեզնե/մեզմե, մեզնից/մեզանից, քեզնե/քեզմե, քեզնից/քեզանից**), ապա հարացույցը շատ ավելի խայտաբղետ կլինի: Առանձին դերանունների դեպքում, եթե հաշվի առնենք նաև արմատի հնչյունական փոփոխակների առկայությունը, տարբերակային հոլովաձևերը հասնում են մեկ տասնյակի, ինչպես, օրինակ՝ **իրենք** դերանվան պարագայում՝ **յիրենցնե, իրմնցե, իրմնցնե, իւրմնցնե, իւրմնցմե, իւրենցե, իւրենցմե** (Ա 2, 89), ինչպես նաև **իրենցնե, իրենցմե** և այլն:

Կարելի է անմիօրինակության բազմաթիվ այլ օրինակներ բերել միջին հայերենի նաև բայական համակարգից՝ բայի խոնարհման անմիօրինակ ձևերից, շարահյուսական կառույցներից, որոնցում համատեղ գոյակցում են գրաբարից, արևելահայ և արևմտահայ բարբառներից եկած շարահյուսական կապակցման եղանակների ու ձևերի ամենաբազմազան տարբերակներ: Իհարկե, ճիշտ է նկատված, որ առաջին հայացքից լեզվական իրականությունների որպես մի խառնակություն ներկայացող միջին հայերենը «ինչքան էլ անցումային մի օղակ լինի», այնուամենայնիվ «իր հերթին ունի իր քերականական համակարգը» (Ա 2, 300), որ թեև քերականական կարգերը դրսևորվում են հիմնականում հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերին հատուկ միջոցներով, այնուամենայնիվ «միջին հայերենի քերականական կառուցվածքը հանդես է բերում նաև միայն իրեն հատուկ առանձնահատկություններ» (Ա 1, 7): Բայց այս ամենով հանդերձ՝ միջին հայերենը չունի զրական լեզվին հատուկ՝ վերը նշված հիմնական որակները. բավարար

չափով մշակված և միօրինակ չէ, չունի դասական կոտ և ամբողջական կառուցվածք և այլն. ունի անցումային շրջանի լեզվին բնորոշ բոլոր հիմնական գծերը՝ անմիօրինակություն, նախորդող և հաջորդող լեզվափուլերի իրողությունների առատ գործածություն, բարբառային լեզվատարրերի խառնիխուռն և անհամաչափ կիրառություններ, լեզվական նույն իրողության տարբերակային ձևերի փոխանցումներ և այլն: Իր այս հատկանիշներով միջին հայերենը, առանց խիստ մեծ պայմանականության, չի կարող հայերենի զարգացման շղթայում դրվել գրաբարի և աշխարհաբարի կողքին՝ որպես համարժեք երևույթ:

Եվ ահա հարց է առաջանում. այդ դեպքում ո՞րն է միջին գրական անվանված հայերենի տեղը գրավոր հայերենի զարգացման պատմության մեջ:

Ուզում ենք ուշադրություն հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա. արևելահայ բոլոր քերականները, ովքեր զբաղվել են հայերենի այսպես կոչված պերիոդիզացիայի հարցերով, ելակետ են ունեցել հիմնականում արևելահայերենի լեզվական նյութի տվյալները: Գ. Սևակը, ով առաջին լուրջ փորձը կատարեց գրական հայերենի գիտական շրջանաբաժանման, ի սկզբանե հայտարարում է, որ ինքը «անհրաժեշտ է համարում վերանայել մեր ազգային գրական լեզվի՝ **արևելյան գրական աշխարհաբարի** սկզբնավորման հարցը» (ընդգծումը – Գ. Ս.): Նրա «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ հարցին նվիրված բաժինը հենց այդպես էլ կոչվում է՝ «Արևելահայ գրական լեզվի պատմության պերիոդիզացիա»: Արևելահայ գրական լեզվի բուն պատմությունը նա սկսում է XVII դարից: Մի կողմ թողնելով լեզվաբանի այն վիճահարույց տեսակետը, թե մեր ազգային գրական լեզվի ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, տարբեր լեզուներ են, ինչպես գրաբարը և միջին հայերենը, պետք է նկատել, որ այսօր միանգամայն արդիական է հնչում նրա այն կարծիքը, ըստ որի՝ գրական հայերենի այդ երկու տարբերակները «իրենց ֆորմացիայի և ակունքների մեծ նմանություններով, փոխադարձ ուժեղ կամ թույլ ներազդեցություններով հանդերձ, ունեն բնույթի ու պատմական ճակատագրի խոշոր տարբերություններ, ուստի և ենթակա են առանձին ուսումնասիրության»¹: Հարցին անդրադարձած մյուս արևելահայ լեզվաբանները՝ Ս. Ղազարյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Մուրադյանը, Հ. Կուսիկյանը և ուրիշներ, չեն դիտարկում տարբերակված մոտեցման խնդիրը և, որքան էլ տարօրինակ է, չեն քննարկում նաև Գ. Սևակի այդօրինակ մոտեցման պարագան: Ս. Ղազարյանի աշխատություններում² հիմնականում պաշտպանվում է այն տեսակետը, որ գրաբարի և միջին հայերենի սահմանագիծը X դարն է, իսկ միջին հայերենինը և աշխարհաբարինը՝ XVII-ը: Նա չի պաշտպանում այն

¹ Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 15:

² Տե՛ս **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1954, *նույնի*՝ Միջին հայերեն, գիրք Ա, 1960, *նույնի*՝ Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961:

լեզվաբանների կարծիքը (Յ. Կարստ և ուրիշներ), թե եղել են միջին հայերենի տարբերակներ, որոնցից կիլիկյան հայերենը բարձրացավ գրականության աստիճանի և պահպանվեց՝ ի տարբերություն մյուսների: Նրա կարծիքով՝ միջին հայերենը մինչև կիլիկյան հայերենը արդեն իր հիմնական հատկանիշներով ուրվագծված էր, պարզապես կիլիկյան շրջանում ավելի մշակվեց ու զարգացավ: «Միջին հայերեն տերմինի տակ,– գրում է Ս. Ղազարյանը,– մենք հասկանում ենք 10-17-րդ դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին: Լեզվական այդ ընդհանրությունը, ինչպես ամեն մի գրական լեզու, տարբեր ժանրերի գործերի մեջ ունեցել է իր ինքնատիպ արտահայտությունները, որոնք գրական երկի բովանդակության, հեղինակի ըմբռնումների, կրթական մակարդակի ու գրաբարին տիրապետելու աստիճանին համապատասխան ավելի նվազ կամ ուժեղ են ընդգծվել: Սակայն չնայած լեզվական տարրերի բազմազանությանը, միջին հայերենը ունեցել է զարգացման իր ընդհանուր օրինաչափությունները, որոնք այն տարբերել են գրաբարից և որոշել նրա կառուցվածքը իր բոլոր բաղադրիչներով: Միջին հայերենը իր այդ ընդհանուր վիճակով ուրվագծվում է 10-րդ դարից սկսած»¹: Իր տեսակետը հաստատելու համար նա բերում է միջին հայերենը բնութագրող հնչյունական, բառային և քերականական բազմաթիվ վկայություններ ինչպես Արսեն Այտընյանի արձանագրած լեզվական փաստերից, այնպես էլ IX-X դարերի հայ մատենագրությունից և ձեռագրերի հիշատակարաններից: Դրանք հայերենի նոր շրջափուլի ամենավաղ վկայություններից են՝ միջին հայերեն-աշխարհաբար լեզվակառուցվածքի էական տարրերը, որոնք, սակայն, առավել տեսանելի դարձան և ընդհանուր ճանաչում գտան XII-XIII դարերից սկսած (մեր հետագա շարադրանքում դրանց կանոդրադառնանք): Հ. Կուսիկյանը, հիմնականում հետևելով Գ. Ջահուկյանի ուրվագծած ժամանակագրական սխեմային, կատարում է հետևյալ շրջանաբաժանումը՝ հին շրջան՝ V-XII դարեր, միջին շրջան՝ XII-XVII, նոր՝ XVII-XIX, նորագույն՝ XIX-ից հետո²:

Արևելահայերենի փաստական նյութի տեսանկյունից արված այս դիտարկումներում միանգամայն համոզիչ է ներկայացվում գրաբար – միջին հայերեն – արևելահայ աշխարհաբար շրջանաբաժանումը, քանի որ վերջինը լեզվական որակի էական տարբերություններ ունի նախորդ շրջափուլից: Նույնը, սակայն, չի կարելի ասել գրական արևմտահայերեն և միջին հայերեն հարաբերակցության մասին: Միջին դարերում շատ ավելի հիմնավոր և հետևողական զարգացում ստացավ գրական աշխարհաբարի արևմտահայ

¹ Ղազարյան Ս., Միջին հայերեն, էջ 92-93:

² Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 23:

տարբերակը: Գրական արևմտահայերենի բոլոր իրողությունները կան միջին հայերենում՝ որպես արևմտահայ բարբառների լեզվական իրողություններ, որոնց հիմքի վրա ձևավորվեց միջին հայերեն կոչված փուլի խոսակցական բանավոր և գրավոր տեսակը: Միջին հայերենը, գրաբարից զատ, ձևավորվեց գերազանցապես արևմտահայ բարբառների հիմքի վրա, որոշակիորեն մշակվեց ու զարգացավ այդ բարբառների լեզվական նյութով: Խոսելով կիլիկյան հայերենի մասին, որը, ինչպես գիտենք, միջին հայերենի ամենաբարձր՝ դասական արտահայտությունն է, «Ակնարկների» հեղինակները արձանագրում են, որ «...Կիլիկյան հայերենը փաստորեն գրի էր առնվում արևմտահայ բարբառների ընդհանրությունների հիման վրա: Հենց սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ այս նույն ժամանակներում Կիլիկիայից դուրս՝ բուն Հայաստանի արևմտյան շրջանների լեզուն, իր հիմնական առանձնահատկություններով այնքան մոտ է կիլիկյան հայերենին» (Ա, էջ 36-37):

Արսեն Այտընյանը «Աշխարհաբար կամ ժողովրդական ստորին լեզուի մը գոյութիւնը» հաստատող տարրերը փնտրում է V-VII և հետագա դարերի հայ մատենագրության մեջ: VII դարը նկատում է սահմանագիծ հին և նոր լեզուների՝ գրաբարի և «նախնեաց ռամկօրէնի» միջև: «Այս դարն իրօք դարագլուխ մըն է հայերէն լեզուին պատմութեանը մէջ,– գրում է նա,– մանաւանդ թէ սահմանագլուխ՝ հին հայերէնի, որուն գրաբար կ'ըսենք՝ եւ հին աշխարհաբարի մը մէջտեղը. այսինքն այն աշխարհաբարին գորն որ գործոյս ընթացքին մէջ **Նախնեաց ռամկօրէն** կը կոչենք»¹: Ի դեպ, իր աշխատանքի մեջ նա **աշխարհաբար, ստորին դարուց ռամկօրէն** կամ **նախնեաց հայերէն** տերմինների փոխարեն գործածում է նաև **միջին հայերեն, միջին հայերեն լեզու** տերմինները²: Արևմտահայ լեզվաբանը այս կարծիքին է հանգում նախնյաց մատենագրական նյութի ուշադիր և հետևողական քննությամբ: Ըստ որում, քննական աղբյուրներում, որոնք հիմնականում VII-XII, նույնիսկ V դարի մատենագրության նմուշներ են, հետազոտողը փնտրում և հանգամանորեն ներկայացնում է արևելահայերենի և արևմտահայերենի համընկնող և կամ միայն արևմտահայ աշխարհաբարին բնորոշ լեզվատարրեր՝ **նորանոր բառեր** խիստ փոխ. **կարի, մոտեցան**, փոխ. **մերձեցան**, փլան, փոխ. **կործանեցան**, **շատ**, փոխ. **բազում**, կամ **աղեկ, գեշ, աղուոր, ուրիշ, ճիտ, աստեն, հանաք, կաչիլ, ուզել, խճալ, մտիկ ընել** և այլն, **բայերու նոր ձևեր**՝ **նեղացար** (նեղեցար), **չպրծնուս** (ոչ պրծանիս), **հոլովական ձևեր**՝ **մեզնէ, մարդէն, ջրեդ, բերանէն, ձորակով, սրտով, ի գետերէն եւ նաւերէն**, «ի և **զ** նախդիրներու անհետանալու սկիզբն տեսանք», «համաձայնութեան նկատմամբ գրաբարէն խոտորմունքն առհասարակ», **ոչ** և **չ** ժխտականներից

¹ Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 121:

² Տե՛ս նույն տեղում, էջ 156:

երկրորդի ակտիվ կիրառությունը, **որ**-ի գործածվելը **զի** շաղկապի նշանակությամբ և այլն: Ի վերջո, քննելով նախնյաց մատենագրության լեզվական նյութը, Ա. Այտընյանը հանգում է այն համոզման, որ «հիմակուան աշխարհաբարին (նկատի ունի XIX դարի կեսերի արևմտահայերենը – Յու. Ա.) հետ ըլլալու համեմատությունը կը դիւրացընեն՝ միայն երբեմն երբեմն երեւան ելած եւ համարձակ գործածուած նորագոյն ձեւերն ու բառերը, որոնցմով կը տեսնուի որ գրեթէ հիմակուան լեզուն ըստ էական մասին ձեւացած էր ասկէ իբր 7 դար յառաջ»¹: Նա նոր հայերենի ձևավորման և հնից զատվելու ժամանակաշրջանը փաստորեն հասցնում է XII-XIII դարեր²: **Նախնեաց հայերենի** ամենաբնորոշ գծերից է համարում անմշակությունը և անմիօրինակությունը: Ինչպես արդեն ասվեց, լեզվաբանի ներկայացրած փաստական հարուստ նյութը վերաբերում է առավելապես արևմտահայ աշխարհաբարին: Ներկայի **կու** (**կը**, **կ'**) մասնիկի գործածությունը Ա. Այտընյանը համարում է նոր լեզվի մեջ «զլխաւոր կերպարանափոխութիւն յառաջ բերող», այդ լեզուն գրաբարից զատող և առանձին կերպով աշխարհաբարի դրոշմ տվող հատկանիշներից³: Աշխարհաբարի ձևավորման և զարգացման վերաբերյալ նրա գիտական հայացքների ամբողջ տրամաբանությունը հանգում է այն մտքին, որ միջին հայերեն կոչված շրջափուլի ձևավորման գործընթացը ի վերջո արևմտահայ աշխարհաբարի առաջացման ու կազմավորման պատմությունն է: Այդ միտքը արևմտահայ քերականագետը ձևակերպել է շատ պարզորոշ ու հստակ. ավարտելով գրաբարի քերականության համառոտ բնութագրությունը՝ նա գրում է. «Այս իբր հինգ դարու միջոցի գրաբարին տեսութենէն ետքը դառնանք **աշխարհաբար լեզուին** պատմութեանը (ընդ-գծումը մերն է – Յու. Ա.): Միջին դարուն վերջերը և մասնաւորապէս Բագրատունեաց ժամանակները*՝ երբ արդէն մեր գրաբարը իրենց ալ իրօք գրաբար էր, ձեւացած էր կերպաւորեալ աշխարհաբար լեզու մը. կամ մանաւանդ

¹ Նույն տեղում, էջ 151:

² Ի դեպ, **նախնեաց ռամկօրէն**-ի առաջին հետազոտողներից Ղևոնդ Հովնանյանը միջին հայերեն կամ աշխարհաբար լեզվատարների գործածության առաջին օրինակները արձանագրում է մեր վաղ մատենագրության մեջ՝ սկսած հինգերորդ դարից, իսկ **բուն ռամկական** լեզվով գրականության սկիզբ է համարում XII դարի կեսերը: «Հին գրութեանց ոմանց ժամանակին այս անորոշութեան, եւ այլ գրոց ժամանակին վրայ լիովի ապահովութեան պակասութեան պատճառաւ,– գրում է նա,– դժուարին է ճշդիւ եւ որոշակի սահմանել թէ ե՞րբ սկիզբն եղած է այս կերպ գրութեանց, ո՛վ զառաջինն ձեռնարկած է ի նոյն: Արդարեւ աստ անդ ակնարկեցինք թէ ըստ մեր տեսութեան՝ ԺԲ. դարուն երկրորդ կէսն կրնայ դրուիլ իբրեւ ժամանակ սկզբնաւորութեան, նոյն միջոցէն ըլլալով մեր ձեռքն հասած ամէնէն հին բուն ռամկական (եւ ոչ լոկ ռամկախառն) գրութիւնն՝ որոյ ժամանակն գէթ մերձաւորապէս որոշ է, եւ հնար չէ կասկածի ներքեւ ձգել» (**Հովնանեան Ղ.**, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ա., Վիեննա, 1897, էջ 53):

³ Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

* Նկատի ունի VIII-X դարերը, որ անվանում է **միջին դարեր**՝ «գրաբար մեռեալ լեզու և կերպաւորեալ աշխարհաբար հայերէն»:

դարերով ձևացած աշխարհաբարն սկսած էր նաև իբրև աշխարհաբար ի գիր առնուիլ. լեզու մը՝ որ ժամանակին մատենագրութենէն բոլորովին տարբեր բնութիւն ու կազմութիւն ունի»¹:

Հանգամանորեն քննելով կիլիկյան շրջանի միջին հայերենի լեզվական փաստերը՝ Յ. Կարստը վստահաբար հանգում է այն եզրակացության, որ դրանք իրենց հնչյունական վիճակով և քերականությամբ բնորոշ են հայ բարբառների արևմտյան խմբին: «Պատմական այդ ժամանակի համար Կարստը նույնիսկ ընդունում է միջին արևմտահայերեն մի խոսվածքի գոյությունը, որը եղել է եթե ոչ ամբողջ արևմտյան խմբի, ապա գոնե նրա բարբառների մի մասի մայրը» (Ա 1, 15):

Մանուկ Աբեղյանը հայերենի պարբերացման խնդրին հատուկ չի անդրադարձել: «Հայոց լեզվի տեսության» ներածության մեջ նա փորձել է համառոտակի ուրվագծել գրավոր հայերենի անցած ճանապարհը՝ հիմնականում հետևելով ընդունված կարծիքներին: Նա **հին և միջին գրական** լեզուների սահմանագիծ է համարում XII-XIII դարերը, իսկ **նոր գրական լեզվի** սկիզբը՝ XIX դարը՝ արևմտյան և արևելյան ճյուղերով²: Բուն միջին դարերի մատենագրության լեզվական որակը նկատելիս Աբեղյանը գուսանական երգերի առիթով հետաքրքիր դիտարկում է անում միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի մասին. միջին հայերենը, գրում է նա, «իր հնչյունների դրությամբ և քերականությամբ պատկանում է արևմտյան բարբառներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը»³:

Հրաչյա Աճառյանը հստակ գծված շրջանաբաժանում չի տալիս, չի անդրադառնում դրա սկզբունքներին, այսուհանդերձ լեզվի պատմական զարգացման և կրած փոփոխությունների վերաբերյալ նրա արտահայտած կարծիքների տրամաբանությամբ հայերենի զարգացման պատմության մեջ հստակորեն առանձնացվում է երկու շրջափուլ՝ **գրաբար և աշխարհաբար**: Միջին հայերենը և բարբառները դիտվում են որպես տարատեսակություններ և աշխարհաբարի ձևավորման ու զարգացման նշանաձողեր: Զարգացման փուլերը առանձնացնելիս Հ. Աճառյանը նշում է, որ «ինչպես գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար»⁴: Միայն խիստ պայմանականորեն նա **գ** նախդիրի բացակայությունը դիտում է որպես աշխարհաբարը միջին հայերենից զատող նշան: Եվ ուշագրավն այն է, որ իբրև այդ կարծիքի հակափաստարկ բերում է ոչ միայն տեքստի հեղինակի՝ գրաբարագիտության կամ գրաբարին հակված լիելու հանգաման-

¹ Նույն տեղում, էջ 140:

² Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 58:

³ **Աբեղյան Մ.**, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՄԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1972, թիվ 2-3, էջ 225:

⁴ **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, 1951, էջ 441:

քը, այլև այն, որ **գ** նախդիրի հաճախակի գործածությունը բնորոշ է արևմտահայ մի շարք բարբառների՝ Մուշի, Տիգրանակերտի, Պոլսի և այլն։ Սա մեկ անգամ ևս վկայում է, որ միջին հայերեն և արևմտահայ աշխարհաբար սահմանաբաժանման միջև նշված փաստարկը, ըստ էության, լուրջ ապացույց չի կարող լինել։ Աշխարհաբարի հնագույն նմուշները Հ. Աճառյանը փնտրում է XIV դարի մատենագրության մեջ և արձանագրություններում։ Ա. Այտընյանի հետևողությամբ՝ հնագույն նմուշ է համարում Բջնիի արձանագրությունը (1358 թ.)։ Նշվում են նաև այլ օրինակներ։ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետը» (1478 թ.) երկի մասին գրում է. «Այստեղ ավելի լավ է զգում մարդ աշխարհաբարի շունչը»¹։

Արևմտահայերենի ձևավորման հարցերով զբաղվող այլ լեզվաբաններ, հետևելով Ա. Այտընյանի նշած շրջանաբաժանմանը, աշխարհաբարի ձևավորման սահմանները տանում են միջին դարերի սկիզբ։ XI դարից սկսված թուրք-թաթարական բարբառոսական արշավանքները, ապա XV դարից օսմանյան թուրքերի հաստատած տիրապետությունը ծանր պայմաններ ստեղծեցին նաև լեզվի ու մշակույթի պահպանման համար. ընդհատվեց հայերենի բնականոն զարգացումը։ Ներկայացնելով պատմաքաղաքական այդ հանգամանքները՝ արևմտահայ աշխարհաբարի պատմության հետազոտողներից Տ. Շահբազյանը հանգում է այն եզրակացության, որ պատմաքաղաքական բարենպաստ պայմաններում լեզվի բնականոն զարգացումով ամբողջ հայության համար մենք կունենայինք մշակված ու կատարյալ մի լեզու տակավին XIV-XV դարերում։ «Ուրեմն այդ բարբառոսական արշավանքները,– շարունակում է նա,– մեր լեզուն կանգնեցրին իր էվոլյուցիոն կանոնավոր զարգացման փլուզումների առաջ և առնվազն 3-4 դարով հետաձգեցին մեր աշխարհաբարի առաջացումն ու վերջնական ձևակերպումը, տեղի տալով բազմաթիվ բարբառների ու դրանց հետ կապված լեզվական իրականությունների յուրահատուկ բազմաթիվ ու բազմապիսի փոփոխություններին»²։

Բերված կարծիքներն ու քննարկումները վկայում են, որ հետազոտողների շատ որոշակի մասի համոզմամբ միջին դարերում ձևավորվող լեզվական որակը սերտ կապի մեջ էր արևմտահայ բարբառների հետ, ձևավորվեց այդ բարբառների հիմքի վրա և իր հերթին հիմք հանդիսացավ արևմտահայ աշխարհաբարի ձևավորման ու զարգացման համար։

Միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի և լեզվական ակնհայտ ընդհանրությունների մասին է վկայում մեր լեզվի երկու ճյուղերը՝ «սահմանագատող» հնչյունային, բառային և քերականական փաստերի ամենապարզ համադրությունն անգամ։

¹ Նույն տեղում, էջ 442-443։

² **Շահբազյան Տ.**, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Երևան, 1963, էջ 56-57։

Այսպես: Միջին հայերենում առկա է գրական արևմտահայերենին հատուկ **հնչյունական-հնչյունափոխական բոլոր երևույթների աստիճանական զարգացումը**: Ըստ որում, դրանք ձևավորվում են կամ գրաբարի ուշ շրջանում և կամ վաղ միջնադարում: Ինչպես, օրինակ՝ **ա**-ի սդումը կամ անկումը բառական ուղիղ ձևերում՝ **հասկնայ, հավնել, մեռնիլ, ճանչնայ, սպաննել** (XIII դ.) (Ա 1, 74), կամ՝ «Վասն զի մաղձն **շատցաւ** ի յայս անդամս», «....և այնկից ի վեր **թուլցաւ**», «....և զիս **մոռցան**» (Ա 1, 334), **ու**-ի անկումը **ուղարկել** բառում՝ **որկել** (XV դ.) (Ա 1, 80), **ե**-ի անկումը **գիտենալ** բառում՝ **գիտնալ** (Ա 1, 82), **այ>ա** պատմական փոփոխությունը՝ **գաղբարն** (XI դ.), **վար<վայր, աւ<այս, որ** ավելի լայն տարածում է ստանում XIV-XV դարերում՝ **այլ>ալ, այն>ան, այսր>ասոր, այնր>անոր** (Ա 1, 91-92), հրամայականում գրաբարյան **-եա** վերջավորության փոփոխությունը է ձայնավորի՝ **խառնեա>խառնէ, մաղեա>մաղէ** (XII դ.), **սիրեա>սիրէ** (XIII դ.) (Ա 1, 100), արդեն մի քանի բառերում բառասկզբում արձանագրվում է **ա>ը** (անկանել>ընկնիլ, անկողին>ընգողին), որը XV դարից մատենագրության մեջ ներթափանցում է արևմտահայերենին հատուկ **ա>ը** հնչյունափոխության այլ օրինակներով՝ **ընել** (<անել<այնել<առնել), **ըսել** (ասել) (Ա 1, 76): XII-XIII դարերի մատենագրության մեջ համընդհանուր երևույթ է ձայնեղ հպականների շնչեղ իլացումը՝ **սուք, սարկաւաք, փափաք, հոքս** (Ա 1, 116), որի դրսևորումները Գ. Զահուկյանը արձանագրում է տակավին V-XI դարերի ձեռագրերի հիշատակարանների լեզվում. այն արտահայտվում է մի շարք բառերի գրության մեջ, ինչպես՝ **յարհանւէ, մանգունք, ընգերանցն, դաքաղ, երկրպաքեցաւ, քահակցի, Սարքսի** և այլն¹: Ս. Ղազարյանը միջին հայերենի հնչյունաբանությանը նվիրված իր աշխատության մեջ բերում է ձայնեղ և խուլ բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխության բազմաթիվ օրինակներ X դարի ձեռագրերի հիշատակարաններից (աստուածամաւրւ, ցանգալի, ընգլմեցայ, վաթթար, Դաղեոս, Թաւթի, Բարթաղեմեոս և այլն) և XII-XIII դարերի մատենագրությունից ու վանքերի արձանագրություններից (խաբանէ, զանհակատանս, ընգալա, անցցի, ընձա, չարոն, պատարաք և այլն)², միջին հայերեն-արևմտահայերեն համակարգերին հատուկ հնչյունափոխական այլևայլ բազմաթիվ երևույթներ՝ հնչյուն(ներ)ի անկում (արժան-աժան, ջրաղաց-ջաղաց, ինքն-ինք/զինք), հնչյուն(ներ)ի ամփոփում և հավելում (առնել-ընել, կանաչ-կանանչ, դու-դուն) (Ա 1, 143-162), դրափոխություն (փետուր>թեպուր, թեփուր) տառադարձումներ (Աշղղարիւշ> Աղղարիք, Աշուսահլ>Աշուսահլ, Աշլ հասան>Աշլ հասան)³ և այլն:

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Երևան, 1997, էջ 12:

² Տե՛ս Ղազարյան Ս., Միջին հայերեն, էջ 97-98:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 97:

Բառային կազմի ընդհանրություններից է այն, որ գրական արևմտահայերենին փոխանցվեցին բուն միջինհայերենյան մի շարք բառեր: Ամենից առաջ նկատի ունենք այդ բառապաշարի բնիկ բառերի շերտը, որը գործածվել է գրաբարի խոսակցական տարբերակում, բայց մեզ է ավանդվել միջին հայերենի գրական հուշարձանների շնորհիվ¹ և ամենայն հավանականությամբ մեծ մասով արևմտյան բարբառների սեփականությունն է, ինչպես՝ **մորճ** – ծառի դալար ճյուղ, **սարբինայ** – խաղողի թառմա, **խածնել** – կծել, **սկրդել** – քերել, **սորթել** – հավաքել, քշտել, **գոց** – փակ, **աղէկ** – լավ, **ցանցառ** – նոսր, **սուղ** – թանկ, **հեղ** – անգամ, **հոս** – այստեղ, **նէ** – եթէ: Քիչ չեն նաև միջին հայերենից ավանդված իմաստափոխությունները՝ **հատնիլ** (<հատանիլ) գրբ. կտրվել, միջ. հյ. նաև՝ վերջանալ, **ցաթիլ** (<ցայտել) գրբ. թռչել (ջրի), միջ. հյ. նաև՝ ծագել (արևի, լույսի), **բարակ** գրբ. նուրբ, միջ. հյ. նաև՝ մանրամասն, ինչպես նաև՝ **քամի** – հողմ, **մրափ** – քուն, **կարգել** – ամուսնացնել, ուշադիր, **տեսնել** – իմանալ, գիտենալ և այլն: Մատենագրության մեջ վկայված են արևմտահայերենը արևելահայերենից և գրաբարից տարանջատող բառային այլ միավորներ՝ **հոս**, **հոն**, **քով**, **ատեն**, **աղվոր** (XII-XIII դդ.) և այլն:

Միջին հայերեն-արևմտահայերեն կապի և ընդհանրության դրսևորումները ակնառու են **ձևաբանական մակարդակում**: Արևմտահայերեն ձևերի գործածություն է արձանագրվում դերանվանական հոլովման հարացույցում և գոյականի հոգնակի սեռականի կազմության մեջ. «**Քեզի** բերեմ հայու դըստրիկ»², «Հաստատեցէք զձեզ հետ **ինձի**» (ՀԴՔ, 85), «Ասցի. Հոգւով հիւանդ եմ, ըզբեզ բըժիշկ **ինձի** գտա» (ՀԴՔ, 94), «Որ տէրն այնէ **մեզի** վճար» (ՀԴՔ, 119), «Յաչաց լուսոյդ զձեռոյ լուս, **Ականջներոյդ** դուռն չի կայ» (ՀԴՔ, 112):

Շատ բնորոշ օրինակներ են վկայված բայական համակարգում. վաղակատար դերբայը **-ել**-ով ձևերին զուգահեռ, որը գրաբարի անցյալ դերբայի զարգացումն է (**-եալ** > **-ել**), ստանում է **-եր** վերջավորությունը՝ **լ>ր** ձայնորդների հնչյունափոխությամբ՝ «Իրք մի կայ ու ինքն է ջըրբեր, Հանց զինէխում մարդ **չէ տեսեր**», կամ՝ «Ի յերկնաւորաց դասուց սաղայէլ զերեսն **էր շրջեր** Ի յերկնից անդունդս **իջեր** Ի ի լուսոյն խաւար **մնացեր**...», «Դիւաճէնն ասէ, այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին **տագնապեր** և **տաքցեր է**, և իր տաքութենէն զայց ջերմս յերեսն է բերել» (Ա 1, 308-309), որպես քերականորեն ամբողջացած երևույթ՝ հարակատարը հանդես է գալիս նաև իբրև ժամանակակերտ դերբայ՝ «Ուղիղ ճամփէն **եմ մոլորած**, Եւ յանիհուն ծովս **եմ անկած**, Ի վիհ մեղացս **եմ գլորած**. Զարթո՛ղիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց»³, կամ՝ «Ամենայն իրք, որ ինքն աչօք է **տեսած**,

¹ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, էջ 63-73:

² «Հայ դասական քնարերգություն», Երևան, 1987, 69: Այսուհետև շարադրանքում՝ ՀԴՔ, և էջը:

³ **Հովհաննես Երզնկացի**, Հայ քնարերգության մատենաշար, Երևան, 1986, էջ 58:

Հաւատով հեռաւորն ի ձեռն **է եկած**. Յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն **են գոված**, Յաշխարհիս հաւատով յերկինքն **են ելած**» (Ա 1, 310-311)¹: Սովորական է և տիրապետող օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի՝ **ք-**ի հնչյունափոխված ձևով սահմանական ներկայի կազմությունը՝ **չես լրսեր, չես երթար, չի ընկնիր, չի մնար, չես ուրանար** (XIII դ.), որը արևմտահայ գրականում ընդհանուր և միակ ձևն է. միջին հայերենի ուսումնասիրողները այս առիթով դարձյալ պիտի արձանագրեին, որ «Արևմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Նույնիսկ **ի** խոնարհման բայերի անցյալ անկատարի ժխտականի **ի>է** հնչյունափոխությամբ՝ **չեր փախչեր**» (Ա 1, 320): Միջին հայերենում օրինաչափ է եզակի հրամայականի՝ **եա>է** հնչյունափոխված վերջավորությամբ ձևերի օգտագործումը, մի բան, որ **ե, ի** լծորդության պարզ բայերի համար կանոնական դարձավ արևմտահայ գրականում՝ **շփէ՛, մաղէ՛** (XII դար), **պարզէ՛, խառնէ՛, յիշէ՛** (XIII դ.), պատճառական բայերի համար հանդես են գալիս գրական արևմտահայերենին բնորոշ ձևեր՝ **ցամաքեցո՛ւր, կերցո՛ւր** (Ա 1, 339): Տարածված կազմություններ են արգելական հրամայականի **մի՛ պահեր, մի՛ վառեր, մի՛ խօսիր** (XIII դ.), **մի՛ մնար, մի՛ օժաներ, մի՛ թողուր** (XII դ.) ձևերը (Ա 1, 357-358): Անկանոն բայերի անցյալ կատարյալի կազմության մեջ նկատելի է արևմտահայերենին հատուկ կազմությունների կայունացումը, ինչպես, օրինակ՝ **տալ** բայի հարացույցում է. «**Տալ** բայի անցյալ կատարյալում հետևողականորեն ունենք **տուի, տուիր, տուաւ** խոնարհման ձևերը» (Ա 1, 351): Սահմանական ներկայի և անցյալի կազմության վերաբերյալ պիտի ասել հետևյալը. ներկայի **կու/կը, կ՛**-ով համադրական կազմությունը (**կու խօսիմ, կ՛աղօթէ, կը բուժէ** ձևերը արձանագրվում են որպես բարբառային-խոսակցական ձևեր՝ երեք բայերի

¹ «Ակնարկներ...»-ում կարծիք է արտահայտվում, որ միջին հայերենում հարակատար ժամանակներն ամբողջությամբ չեն նույնանում արևմտահայ գրականի հարակատար ձևերի հետ, քանի որ միջին հայերենում ներգործական սեռի բայերից հարակատար ժամանակներ չեն կազմվում, և որ «հարակատար դերբայը ներգործական սեռի բայերի դեպքում արտահայտում է կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային դրսևորման» (տե՛ս Ա 1, 311): Մեր ձեռքի տակ եղած և հենց «Ակնարկներ...»-ում բերված որոշ բնագրային օրինակներում, սակայն, հանդիպում են գործածություններ, որոնց վերաբերյալ հազիվ թե «որոշակիորեն չի կարելի պնդել», որ դրանք ներգործական սեռի իմաստ ունեն, ինչպես «Զինչ աշխարհը դաշինք ու ուխտ կա դրած, Ամենին կապն ամուր հաւատն **է դրբած**: Ամենայն իրք, որ ինք աչօք **չէ տեսած**, հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած. յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն **են գոված**, յաշխարհէս հաւատով յերկինքն են ելած» (Հովհաննէս Երզնկացի, 68), «...Զերդ լոկնայ մարդն ջրով, որ **խառնած է** յինքն տաք իրք» (Մխիթար Հերացի) (տե՛ս Ա 1, 331): Բոլոր դեպքերում, ինչպես արևմտահայերենում, այնպես էլ միջին հայերենում հարակատարը հանդես է գալիս որպես ժամանակակերտ դերբայ ոչ միայն կրավորական, այլև ներգործական ու չեզոք սեռի բոլոր բայերի հետ՝ անկախ նրանից, որ արևմտահայերենում առավելապես ներգործական սեռի բայերի հետ այդ ձևերն արտահայտում են վաղակատարի և անցյալ վաղակատարի նշանակություն:

դեպքում կանոնական է գրական լեզվում՝ **կու գամ, կու լամ, կու տամ**) միջին հայերենի բացարձակ հատկանիշն է: Ա. Այտընյանը, ինչպես նշվեց, դա համարում է լեզվական այն հիմնական նշանը, որով աշխարհաբարը զատվում է գրաբարից: «Միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, Երզնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները» (Ա 1, 322):

Ավելորդ չենք համարում քննարկվող ժամանակաշրջանի հայ մատենագրությունից բերել բնագրային մեկ-երկու օրինակ, որոնցում ակնառու են արևմտահայերենում և արևելահայերենում համընկնող կամ միայն արևմտահայերենին բնորոշ և գրաբարից տարբեր իրողություններ.

Աստղեր. Ձառ ի վեր ջուրն է մեկնած, Ներքոյ ամուր աւզով փակած, Աւազն ամեն հրով լցած՝ Մի քան զմի պայծառացած: (Շնորհալի)	Կատու. Որպէս տիկին յուշիկ գնայ, Պարան յետնն ի քարշ կուգայ, Բազմի յոսկի բարձի վերայ, Որսիկ առնէ քան զբազայ: (Շնորհալի)¹
---	---

Այծ. Յամէն շրջի ինքն ի քարեր.
Ունի ծախու մազէ քրքձեր,
Գինւոյ ունի աղուոր տըկեր,
Ի օժտէ ձրի դանկի կոթեր²: (Շնորհալի)

- Ծո՛յ Յոհաննէս, ծո՛յ իմ տըղայ, Դարձի՛ր ի տունն, ասա մեղայ, Քեզի բերեմ հայու դըստրիկ, Ըզբեզ օրհնել տամ քահանայ: - Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ, Գէմ Աշային նըման չըկայ, Աշան է թուխ, ունքն է կամար, Քաֆիր եմ թէ զինքն ուրանամ: - Ծո՛յ Յովաննէս, ծոյ ի մ տըղայ, Դարձիր ի տուն, ասա մեղայ,	Լեզուն պիւլպիւլ, ձայնն դումրի, Մեջքըն բարակ գէտ ֆռանկի: Աշան նըստեր էր փէնձերէն, Ափն երեսին էր, խիստ կուլար, Թ՛այսօր ծեծեց իմ հայր դատին, Թ՛է՛ր կու սիրես հայուն որդին. Տես թէ կելնէ մէկ մի կուգայ, Ականջըն խուլ Յովաննէսին: Խեւ Յովաննէսն, երբ գայն լըսեց, Բըռնեց զճամբան ի Եզրնկին.
--	---

¹ Այս հանելուկը՝ որպես աշխարհաբարի տարրերով լեզվական նմուշ, բերված է նաև **Տահթագյանի** «Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը» ուսումնասիրության մեջ: Սակայն հեղինակը կարծես ավելորդ ջանք է գործադրել նմուշի լեզուն «ավելի աշխարհաբարյան» դարձնելու համար. լեզվական երկու իրողություն «սրբագրվել է» արևմտահայ աշխարհաբարով՝ **յետնեն-յետնն, կ'առնէ-առնէ** (հմմտ.՝ էջ 63):

² Տե՛ս **Շնորհալի**, Երևան, 1968, էջ 35-40:

Աշան տաճիկ է անօրէն,
Այն քո հատտուն հետ կու ջանայ:
(Հովհաննէս Երզնկացի)

Ու գլխիբաց, գրտակն ափին,
Գնաց կանգնեց յառջն խանին¹:

- Հայ իմ մարիկ մի՛ տըխմարնար,
Չըկայ նըման գէմ Աշային,

Քանի որ յիմ տեսուս գատեր՝
Կենաց ճարակն է ինձ հատեր,
Լացն ու հառաճն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սրտացաւ: (Կոստանդին Երզնկացի, ՀԴՔ, 92)

Բերված վկայությունները XII-XIV դարերի մատենագրությունից են: Հետագա դարերում ավելի ընդգծվեցին նշված հատկանիշները: Առանձին իրողություններ կայունացան: Բայց շատերը մնացին չնորմավորված՝ երկ-ընտրության կամ եռընտրության մեջ. «Երկընտրության երևույթը նկատելի է ...ընդհանրապես: Ասենք, միջին հայերեն լեզուն էլ, իր ամբողջության մեջ վերցրած, ունի լեզվա-քերականական ձևերի բազմազանություններ, որոնք, իհարկե, լեզվի զարգացման ընթացքում պետք է կայունանային, նոր երևույթները պիտի ընդհանրանային, հները պիտի զիջեին ու մոռացվեին, սակայն Կիլիկիայի հայ պետականության խորտակման հետևանքով միջին հայերեն գրական լեզվի զարգացումը ևս իր բնական ու տրամաբանական վախճանին չհասավ» (Ա 1, 326): Ազգային և քաղաքական կյանքի վայրիվերումների պատճառով միջին հայերենի զարգացումը իր ավարտին չհասավ միջին դարերում: Դա տեղի ունեցավ շատ ավելի ուշ՝ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին:

Ինչ վերաբերում է գրական արևելահայերենին, ապա դրա մասին հարկ է ասել հետևյալը. XV-XVI դարերից սկսած, բարբառների ակտիվացմանը զուգահեռ, աշխուժանալ սկսեցին նաև արևելահայերենի լեզվատարրերը: Դրանք, իհարկե, առավելապես հանդիպում են **-ում** ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների գործերում: Քննարկելով **-ում**-ի գործածության՝ հայագիտության մեջ հայտնի օրինակները² Սամվել Անթոսյանը

¹ Հովհաննէս Երզնկացի, նշվ. աշխ., էջ 46-47:

² Իբրև այդպիսիք բերվում են հետևյալ երեք օրինակները. ա) «Ապա թէ հիւանդին թպտիրն **մաշում** լինի, կերակուր չոր է պատեհ, նա ընծային այլ ցեղ նիւթ...» (**Մխիթար Հերացի** (XII դ.), Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832). Ա. Այտընյանը այս վկայությունը գնահատել է որպես **-ում** վերջավորությամբ անկատար դերբայի նախաձև, մինչդեռ մի շարք փաստերով ճշտվում է, որ **մաշում**-ը արաբերենից փոխառված բառ է՝ **շարաղետ, չարագուշակ, չարաբաստիկ** նշանակությամբ (տե՛ս Ա 1, 304): բ) «Ասացի թէ. «զինչ քրիստոնէայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղոթք **են առնում**» (**Վարդան Արևելցի** (XIII դ.), Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861). ձեռագրերի

հանգում է այն համոզման, որ դրանք «չեն կարող հիմք ծառայել պնդելու, որ **-ում** վերջավորությամբ անկատար դերբայ ու նրանով կազմված ժամանակներ են եղել այս շրջանի (նկատի ունի XII-XIV դարերը – *Յու. Ա.*) միջին հայերենի մատենագրության մեջ» (Ա 1, 305): Շատ ավելի ուշ՝ XVII դարից սկսած, երկու հեղինակներ (Նաղաշ Հովնաթանը և Զաքարիա Ագուլեցին) սկսեցին լայնորեն օգտագործել **-ում** և **-իս** վերջավորությամբ անկատար դերբայի և ներգոյական հոլովի ձևերը: «Այս վերապահությունից երևում է,– գրում է միջին հայերենի ուսումնասիրողը,– որ մյուս հեղինակների մոտ **-ում** և **-իս** դերբայական վերջավորությունների չենք հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ կլիկյան բարբառի ներկայացուցիչներ են և ապրել ու ստեղծագործել են այդ բարբառի ազդեցության սահմաններից ներս» (Ա 1, 365): Ուշ միջնադարում արևմտահայերենին բնորոշ **-է** վերջավորությամբ տիրապետող ձևերին զուգահեռ (խառնէ՛, տրորէ՛, ծեփէ՛, խօսէ՛ և այլն)՝ նկատելիորեն ակտիվանում է արևելահայերենի եզակի հրամայականի **-իր** վերջավորությունը (ելի՛ր, գտի՛ր, հետևի՛ր, խոստովանի՛ր), առավել շատ են օգտագործվում **ե** խոնարհման պարզ բայերում հոգնակի հրամայականի միայն արևելահայերենին հատուկ արմատական-հիմքային ձևերը (**կանչէ՛ք, խմէ՛ք, ծիծաղէ՛ք**), արևմտահայերենին հատուկ նորակազմ վերջավորությամբ ձևերին զուգահեռ (խմացո՛ւր, ուրախացո՛ւր)՝ սկսում են հանդիպել պատճառական բայերի եզակի հրամայականի՝ արևելահայերեն կամ արևելահայերենին մոտ կազմությունները՝ **եռցո՛ւ, կաթեցո՛ւ, խմցո՛ւ** (Ա 1, 390-391), գրավոր խոսքում կիրառության մեջ են հայտնվում բարբառային **ես-**, **եդ-**, **էն-**ը և դրանցով բաղադրված ձևերը, գործածական հաճախականություն է ձեռք բերում **ոնց** բառը, որը միայն արևելահայերենին բնորոշ հատկանիշ է և այլն: Արևելահայերենը բնութագրող առանձին լեզվատարրեր, որոնք անմիջականորեն ածանցվում էին գրաբարից և ոչ թե արևելահայ բարբառներից (բացառականի **-ից-**ը, ներգոյականի **-ում-**ը, վաղակատարի **-ել-**ը և այլն¹) արդեն

նախնական տարբերակներում լեզվական այդ փաստը կա՛մ ավանդված չէ, կա՛մ վկայված է «աղօթք են յառնում» ձևով, և եզրակացությունը այն է, որ «իրական հիմք չկա «աղօթք են առնում» ձևը 13-րդ դարի լեզվական փաստ դիտելու կամ իբրև այդպիսին ճանաչելու համար» (տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 472, տե՛ս նաև՝ Ա 1, 304-305): **զ** **«Գրում** ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 358) (տե՛ս Ա 1, 305): Վերջին փաստը, որ համեմատաբար հավաստի է, ավանդված է ավելի ուշ շրջանի՝ XV դարի մատենագրությունից՝ Զաքեոս գրչից (1474 թ., Վայոց ձոր): Դա մեկ անգամ ևս վկայում է, որ արևելահայերենին հատուկ քերականական այս իրողությունը համեմատաբար ուշ շրջանի երևույթ է:

¹ Գրաբարի անեզական գոյականների բացառականի **-ից-**ը, որը հետո փոխանցվեց արևելահայերենին, ուներ նաև եզակիի իմաստ, ներգոյականի **-ում-**ը, որը արևելահայերենի հոլովական համակարգը սահմանազատող հատկանիշ է, նախդրավոր կազմությամբ սովորական գործածություն ուներ գրաբար մատենագրության մեջ՝ ներգոյականի, երբեմն նաև տրականի իմաստներով, արևելահայերենի **-ել-**ով վաղակատարը գրաբարի անցյալ դերբայի պարզ զարգացումն է:

իսկ գործածվում էին վաղ միջնադարի մատենագրության մեջ: Պատահական չէ, որ դրանք առավելապես հանդիպում էին այնպիսի գրողների երկերում, «որոնց լեզուն հարազատ էր գրաբարին»¹: Բայց դրանք էապես ակտիվացան ուշ միջնադարում:

Ըստ էության, ստացվում է այսպիսի պատկեր. գրաբարի ընդերքում աստիճանաբար և դանդաղ, իսկ XII-XIII դարերից սկսած՝ ավելի ակտիվ կերպով սկսում են ձևավորվել արևմտահայ աշխարհաբարի լեզվատարբերը: Այդ գործընթացը շարունակվում է մինչև XIX դարի վերջերը՝ մինչև գրական արևմտահայերենի նորմավորման փուլը: Իսկ ահա XV-XVI դարերից արևելահայերենի լեզվատարբերի աշխուժացումը աստիճանաբար տեսանելի է դարձնում արևմտահայ-արևելահայ կողմնորոշումը կամ, է. Աղայանի խոսքերով ասած, «երկու հակադիր երևույթների բախումը»², որը ի վերջո հանգեցնում է արևմտահայ աշխարհաբարից արևելահայ ճյուղի տարանջատմանը:

Կարծիք կա, որ XVII դարը **միասնական հայերենի շրջանն** է: Եվ միասնական գրական հայերեն ասելով՝ առաջարկվում է հասկանալ նոր ձևավորվող այն գրականը, որի մեջ **հավասարակշռում են** արևմտահայ և արևելահայ լեզվատարբերը, կամ, ըստ ուսումնասիրողի՝ «ընդհանուր առմամբ չկա արևմտահայ և արևելահայ լեզվամիջոցների ակնհայտ գերակշռություն»³: Եղած արձակ և չափածո մատենագրության նմուշների լեզվական քննությունը այդպիսի եզրակացության առիթներ չի տալիս: XVII դարի հայ մատենագրության լեզուն միասնական անվանված հայերենն է այնքանով, որքանով համատեղում է արևմտահայերենի և արևելահայերենի կամ նրանց բարբառների լեզվատարբերը առավել կամ պակաս չափով⁴:

XVIII դարը համարվում է այսպես կոչված **երկփեղկումի դարաշրջան**. մատենագրության այս կամ այն թևին պատկանող հեղինակների երկերում ակնհայտորեն երևում է արևելահայ կամ արևմտահայ կողմնորոշումը: Այսպես՝ Պաղտասար Դպիրի և Հովհաննես Կարնեցու աշխարհիկ երկերում գերակշռում են արևմտահայերենի տարրերը, իսկ Նաղաշ Հովնաթանի և Զաքարիա Ագուլեցու գործերում միանգամայն գերիշխող է արևելահայերենը:

Գրական հայերենի պատմության երկու հիմնական փուլերի գոյության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ XIX դարում գրապայքարը ծավալվեց գրաբարի և աշխարհաբարի միջև և ոչ թե գրաբարի ու միջին

¹ Տե՛ս **Մկրտչյան Է.**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Երևան, 1980, էջ 139:

² Տե՛ս նույն տեղում, էջ 12:

³ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Նոր գրական հայերենը XVII-XVIII դդ., Երևան, 1979, էջ 89:

⁴ Ավելի մանրամասն տե՛ս **Ավետիսյան Յու.**, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Երևան, էջ 19-23:

հայերենի: Դա ըստ էության պայքար էր պաշտպանելու համար բնականոն ճանապարհով ձևավորված նոր հայերենի իրավունքները, որը միայն պայմանականորեն կոչվել է միջին հայերեն:

Անվանումների մասին պետք է ավելացնել հետևյալը. **գրաբար**-ը գրի բառ էր՝ գրքի խոսք, **աշխարհաբար**-ը աշխարհիկ խոսք էր՝ աշխարհի բառ և իր հասկացական նշանակությամբ հակադրվում էր գրաբարին: **Միջին հայերեն** անվանումը այս տրամաբանությանը չի ենթարկվում և ընդամենը պետք է ընկալվի որպես աշխարհաբարի նախապատրաստական շրջափուլի կամ վաղ աշխարհաբարի պայմանական անվանում: Միջնադարի շատ մատենագիրներ հենց այդպես էլ ընկալում էին իրենց գործածած լեզուն և այդ լեզվով ստեղծվող արժեքների գործառական նշանակությունը: Մխիթար Հերացուց, Ֆրիկից, Երզնկացիներից մինչև Գրիգորիս Աղթամարցի, Նաղաշ Հովնաթան և ուրիշներ այդ մտքով են տոգորված եղել, այն է՝ գրել **աշխարհիկ** կամ **աշխարհական լեզվով, գեղջուկ բարբառով, աշխարհի բառով, ռամկորեն** կամ **ռամկական հայերենով, ռամկաց խօսքով** և կամ պարզապես **աշխարհաբառով**: Իր «Անգիտաց անպետ» գրքի վերջում Ամիրդովլաթ Ամասիացին նշում է պատճառներ, որոնք դրդել են իրեն երկը գրելու աշխարհաբարով. «Եւ այլ ասենք, թէ էր եղաւ այս գիրքս աշխարհաբառ: Եւ այս երեք պատճառի: Ա այն է՝ որ ամենայն մարդ չկարէ քերական կարդալ, և կամ արտաքին գրեանք, որ յայս խրթին բառերն յիմանայ. այնոր համար եղաւ աշխարհաբառ...»²:

Այսպիսով՝ գրական հայերենի պատմության համար առաջարկվում է հետևյալ շրջանաբաժանումը՝ **գրաբար** (V-XII դարեր), **աշխարհաբար** (XII-ից մինչև այսօր): XII-XVIII դարերը աշխարհաբարի ձևավորման կամ **վաղ աշխարհաբարի** ենթաշրջանն են, որը խիստ պայմանականորեն կոչվել է կամ կարող է կոչվել նաև միջին հայերեն: XVIII դարից սկսվում է **երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը**, որը, ի դեպ, ոչ թե ավարտվում է 1920 թ., ինչպես ներկայացնում է Գ. Ջահուկյանը³, այլ շարունակվում է մինչև այսօր (այսօր ևս մենք ունենք մեկ ազգային լեզվի երկու տարբերակներ կամ ճյուղեր՝ արևելահայերեն և արևմտահայերեն): Ավելի ճշգրիտ լինելու համար այն կարելի է անվանել երկճյուղ գրական աշխարհաբարի նորմավորման ենթաշրջան: Հաջորդը, ինչպես առաջարկում է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը, կոչվում է **Ժամանակակից հայերենի ենթաշրջան**՝ 1920 թ. հետո: Այն կարող է կոչվել նաև **արդի հայերենի ենթաշրջան**: Երկու դեպքում հարկ է նկատի առնել հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը: Այս սահմանագծումները ևս

¹ Տե՛ս նաև **Հովնանեան Ղ.**, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրենի վրայ, Ա, Վիեննա, 1897, էջ 23-24:

² Տե՛ս **Մկրտչյան Է.**, նշվ. աշխ., էջ 26:

³ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 64:

բացատրության կարիք ունեն, քանի որ Գ. Ջահուկյանը շատ համառոտ է բնութագրում այս ենթաշրջանը և առիթ տալիս տարակարծություններին: Տասնամյակներ շարունակ հաճախակի գործածության և ավանդույթի ուժով հայ լեզվաբանության մեջ **Ժամանակակից հայերեն** կամ **Ժամանակակից հայոց լեզու** հասկացությունը նույնացվել է գրական արևելահայերենին. իբրև ապացույց վկայակոչենք մեր կեսդարյա լեզվաբանական ժառանգությունը, ակադեմիական քերականության և բուհական դասագրքերի վերնագրերը՝ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1974, հ. 3, Երևան, 1976, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, **Գ. Գարեգինյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1991, **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999: Կարելի է շարունակել այս ցանկը: «Ժամանակակից հայոց լեզու» անվանված բոլոր այս աշխատությունները ներառում են բացառապես արևելահայերենի լեզվական նյութը: Ավելին: 1987 թ. հրատարակված «Հայերենագիտական բառարան»-ում ուղղակիորեն նշված է, որ **Ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով, ըստ էության, հասկանում ենք արևելահայ գրական լեզուն: Բառարանի համապատասխան բառահոդվածում կարդում ենք. «**ԱՐԵՎԵԼԱՆԻՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ....** ասում են նաև **Ժամանակակից** կամ **արդի արևելահայ գրական լեզու**, **արևելահայ գրական աշխարհաբար**, **գրական արևելահայերեն**, կամ պարզապես՝ **արևելահայերեն....** այժմ մեզ մոտ սովորական է այն կոչել **Ժամանակակից՝ արդի գրական հայերեն** կամ **Ժամանակակից հայոց լեզու**»¹: Այս միտքը ընդգծվում է նաև բառարանի **ՀԱՅԵՐԵՆ** կամ **ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ** հոդվածում. «Հայ ազգային լեզվի բոլոր էական գործառությունները այժմ փաստորեն իրականացնում է արևելահայ գրական լեզուն, որը միտում է դառնալու ընդհանուր հայության գրական լեզուն: Այժմ **Ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով ըստ էության հասկանում ենք այդ լեզուն»²: Այլ կիրառություններում **արդի հայերեն**-ը՝ որպես արևելահայ և արևմտահայ տարբերակների միասնական անվանում, խիստ պայմանականորեն հակադրվել է **Ժամանակակից հայոց լեզու** հասկացությանը: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի «Առաջաբան»-ում Է. Աղայանը փորձում է ներկայացնել գրքի համար իբրև խորագիր ընտրված **արդի հայերեն** հասկացության իր ընկալումներն ու մոտեցումները: Միանգամայն ընդունելի համարելով այն տեսակետը, որ «արդի հայերեն ասելով հասկանում ենք աշխարհաբար կամ նոր հայերեն գրական լեզուն իր երկու գրական տարբերակներով, որոնք մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են», բառարանագիրը միաժամանակ առաջարկում է **Ժամանակակից հայերեն** տերմինը գործածել միայն արևելա-

¹ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 62:

² Նույն տեղում, էջ 333:

հայերենի համար: «Արևելահայերենը, – գրում է նա, – Հայաստանում սովետական իշխանության հաստատման ու պետականության ստեղծման շնորհիվ աննախընթաց կերպով ընդարձակեց իր գործառնությունները, բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի համագային լեզվի բարձունքը: Այս բնութագրությամբ, – շարունակում է Է. Աղայանը, – «արդի հայերեն» անվանումը տարբերակվում է «Ժամանակակից հայերեն» տերմինից, որով մեզ մոտ անվանում են մեր գրական և խոսակցական լեզուներից (ազգային լեզվի տարբերակներից) միայն մեկը՝ արևելահայերենը»¹: Բերված փաստերը վկայում են, որ պայմանականորեն թե անպայման գիտական շրջանակներում կա այդպիսի մոտեցում՝ **ժամանակակից հայերեն տերմինով անվանվում է մեր ազգային լեզվի միայն մեկ տարբերակը՝ արևելահայերենը**²: Բայց այս դեպքում հարցի այսպիսի դրվածքը ջահուկյանական շրջանաբաժանումը, ըստ էության, տանում է փակուղի, քանի որ եթե **ժամանակակից հայոց լեզու** ասելով՝ հասկանում ենք միայն արևելահայերենը, ապա այդ անվանումով հորջորջվող ենթաշրջանից դուրս է մնում արևմտահայերենը կամ այլ կերպ ասած՝ **սփյուռքահայերենը**, և նույն տրամաբանությամբ՝ 1920 թ. տեսականորեն ավարտվում է երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը:

Անշուշտ քիչ հավանական է, որ Գ. Ջահուկյանը գրական հայերենի շրջափուլերը ուրվագծելիս **ժամանակակից հայերեն** ասելով ի սկզբանե նկատի է ունեցել արևելահայերենը՝ արևելահայ գրական լեզուն՝ տուրք տալով ժամանակի (հիշենք, որ գեկուցումը կարդացվել է 1951 թ.) մտայնությանը: 1950-ական թվականներին այս մտայնությունը գիտական շրջանակներում ինչ-ինչ արձարծումներ ունեցավ. արևելահայերենը աննախադեպ զարգացումներ ունեցավ, արագորեն ընդլայնեց իր գործածության ոլորտները, հարստացավ և մշակվեց՝ Է. Աղայանի խոսքերով՝ «բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի **համագային լեզվի բարձունքը**» (ընդգծումը մերն է – ՅՆ. Ա.): Արևմտահայերենը չունեցավ այդ հնարավորությունները: Եվ նրա հեռանկարի վերաբերյալ կարծիքները, մեղմ

¹ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ VII-VIII:

² Ի դեպ, կարելի է արձանագրել մի շատ ուշագրավ իրողություն. արևմտահայ քերականները, հավանաբար հետևելով ավանդույթին, հակված են արևմտահայերենին նվիրված իրենց աշխատասիրությունները, լինեն դրանք դասագիրք թե գիտական հետազոտություն, անվանակոչելու **արդի հայերեն, արդի հայ լեզու** և նման տերմինաբանությամբ, ինչպես՝ **Ռուսինեան Ն.**, Ուղղախօսություն արդի հայ լեզուին, Կ. Պոլիս, 1853, **Այտընեան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, **Դաթեան Ս.**, Տարական քերականություն արդի հայերենի, Կ. Պոլիս, 1894, **Ջապել Սաստուր**, Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, գիրք Ա-Բ, Կ. Պոլիս, 1900, **Գազանճեան Յովհ.**, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, **Մելքոնեան Ջ.**, Գործնական քերականություն արդի հայերեն լեզուի, Պէյրուս, 1970, **Առաքելեան Կ.**, Արդի հայերենի քերականություն, գիրք 1, 2, 3, Պէյրուս, 1998 և այլն:

ասած, հուսադրող չէին: Ուշագրավ է Հր. Աճառյանի տեսակետը: 1946-1948 թթ. զանգվածային ներգաղթը ազգային զարթոնքի հզոր ալիք էր բարձրացրել համայն հայության շրջանում: Ինքը՝ ճակատագրի բերումով նույնպես տարագիր Հր. Աճառյանը, հայրենադարձության առիթով դիմելով սփյուռքահայությանը, «Սովետական Հայաստան» թերթի 1945 թ. դեկտեմբերի համարներից մեկում գրում է. «Ձեր սրտի իդալ կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք հայրենիք վերադառնալու: Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված՝ սպասում ենք ձեզ»¹: Եվ հայրենասիրական այս մտայնության հիմքի վրա հաճախ քննության էին առնվում նաև գիտության, լեզվի, մշակույթի հարցեր: Փորձում էին լուծումներ գտնել նոր ձևավորվող հարաբերությունների համակարգում: Դրանց մեջ, սակայն, ավելի շատ ընդհանուր ոգևորվածություն կար, քան գիտական մոտեցում: Հավանաբար տուրք տալով ժամանակի այս ընդհանուր տրամադրություններին՝ Հր. Աճառյանը, իբրև զանգվածային ներգաղթի հետևանք, տխուր վախճան էր կանխատեսում արևմտահայերենի համար: «Հայոց մեծամասնությունը հավաքված է Խորհրդային Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնակավայրը, – գրում է նա, – նրան կից է Կովկասի և Ռուսաստանի հայությունը, որ գործածում է արևելահայ գրական լեզուն: Նույնը նաև ամբողջ Պարսկաստանի հայությունը: Գաղութներից Ամերիկայի հայերը լեզուն կորցնելու նախօրյակին են: Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Տաճկաստանի և Եգիպտոսի հայ գաղութները փոքր թիվ են կազմում: Սիրիայի հայությունն էլ թեև բավական բազմաթիվ է, բայց էլի Երևանի կեսից ավելի չէ: Իսկ երբ, ինչպես ծրագրված է, սփյուռքի հայերը հայրենադարձ լինեին, կարճ ժամանակում նրանք էլ կամ նրանց որդիները կփոխեն իրենց լեզուն, և **արևելահայ գրականը միակ տիրույթ կդառնա** (ընդգծումը մերն է – ՅՈՒ. Ա.)»²: Հայրենադարձած հայությունը, իհարկե, թեև ոչ կարճ ժամանակում, բայց փոխեց իր լեզուն: Սակայն մեծ գիտնականի մյուս կանխատեսումները չիրականացան: Նախ՝ հայրենադարձությունը սպասվող կամ ենթադրվող ծավալները չունեցավ: Հետո՝ Սփյուռքի հայության ջանքերը և ազգային զարթոնքը հզոր դեր կատարեցին արտերկրում հայության ինքնությունը և ամենից առաջ լեզուն պահպանելու համար: Եվ ապա՝ ավելի ուշ, տեղի ունեցավ հակառակ գործընթացը՝ արտագաղթ դեպի սփյուռքահայ կենտրոններ, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Ակնհայտ դարձավ, որ արևմտահայերենը դեռ երկար ժամանակ կոչված է իրական-

¹ Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 185:

² **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան, 1951, էջ 553:

նացնելու իր գործառույթները Մփյուռքում և մասամբ նաև հայրենիքում՝ որպես մեր ազգային գրական լեզվի տարբերակներից մեկը¹:

Կարծում ենք՝ հարցի տրամաբանական լուծման մեկ ճանապարհ կա. պետք է ընդունել, որ Գ. Ջահուկյանի կողմից ներկայացված շրջանաբաժանման մեջ **Ժամանակակից հայերեն** տերմինը գործածված է լայն առումով՝ ներառելով արևելահայերենը և արևմտահայերենը:

Այժմ անդրադառնանք Գ. Ջահուկյանի որդեգրած երրորդ սկզբունքին, ըստ որի՝ **լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ**: Մրա էությունն այն է, որ լեզվի տարատեսակների առաջացման, նրանց փոխազդեցության ու առնչությունների փոփոխության հարցերը կապված են ժողովրդի պատմության ընթացքի հետ: Սա վեճ չընդունող ճշմարտություն է: Սակայն այդ կապի կոնկրետ դրսևորումները ցուցադրելու մեջ լեզվաբանը դժվարություններ ունի. «Մենք հնարավորություն չունենք մեր նպատակի սահմաններում մանրամասնորեն ցուցադրելու լեզվի և ժողովրդի պատմության կապը», – գրում է նա և առաջարկում է նկատել, որ իր ամբողջ շրջանաբաժանումը տոգորված է ժողովրդի պատմության հետ ունեցած կապով²: Կոնկրետ կապեր և առնչություններ փնտրելը թերևս շնորհակալ գործ չէ և գիտականորեն ոչ այնքան հիմնավորված, սակայն հենց իր իսկ առաջարկած սահմանագծումներում այդպիսի կապի ու առնչության առանձին դրսևորումներ ակնառու են. այսպես՝ հայոց լեզվի գրային շրջանի պատմության սկիզբը հայոց պատմության հին շրջանի սկիզբն է (V դար), Կիլիկյան թագավորության շրջանը համընկնում է միջին հայերենի ծաղկման ժամանակաշրջանին (XI-XIV դարեր), աշխարհաբար կամ նոր հայերենի սկզբնավորման ժամանակաշրջանը հայոց պատմության նոր շրջանի սկիզբն է (XVIII-XIX դարեր), հայոց պատմության նորագույն շրջանը համընկնում է ժամանակակից հայերենի ենթաշրջանին (1920-ականներից մինչև մեր օրերը) և այլն:

Շրջանաբաժանման սխեմայում մեր կողմից առաջարկվող ճշգրտումները դույզն չափով չեն խաթարում այդ կապի և առնչությունների տրամաբանությունը:

Գ. Ջահուկյանը մի քանի անգամ ընդգծում է իր շրջանաբաժանման պայմանական լինելը, այն միտքը, որ իր և առհասարակ այս կարգի ցանկացած շրջանաբաժանում հարաբերական բնույթ ունի, և որ սահմանագծումները ավելի կամ պակաս չափով պայմանական են, «որովհետև անցումը մի շրջանից կամ փուլից մյուսին տեղի է ունենում առանց որևէ «պայթյունի»»³: Մեր կողմից առաջարկվող շրջանաբաժանումը չի խախտում նաև այդ պայմանը,

¹ Տե՛ս նաև «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», Երևան, 2008, էջ 169-170:

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 34:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 33:

ընդհակառակը՝ ևս մեկ անգամ հաստատվում է այն գաղափարը, որ այս կարգի շրջանաբաժանումները հարաբերական բնույթ ունեն:

Հայոց լեզվի գրային շրջանի պատմության շրջանաբաժանման՝ մեր կողմից առաջարկվող տարբերակը հիմնական գծերով համընկնում է հայոց պատմության շրջափուլերին. նախագրային հայերենի շրջան՝ մինչև մ. թ. V դար, հին շրջան կամ գրաբար՝ V-XII դարեր, նոր կամ աշխարհաբարի շրջան՝ XII դարից մինչև մեր օրերը: XII-XVIII դարերը վաղ աշխարհաբարի կամ, պայմանականորեն, միջին հայերենի ենթաշրջանն է, XVIII դարից մինչև 1920-ականները՝ երկճյուղ գրական աշխարհաբարի կազմավորման և նորմավորման ենթաշրջանը, 1920-ականներից մինչև մեր օրերը՝ ժամանակակից կամ արդի հայերենի ենթաշրջանը՝ երկու ճյուղերով՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

Юрий Аветисян – *Два этапа развития литературного армянского языка – грабар и ашхарабар*

Этапы разделения литературного армянского языка более ста лет находятся в центре научного интереса. Точка зрения академика Геворга Джаукяна, представленная в научном докладе в 1951 г. (согласно которой выделяется три этапа истории армянского языка – древний период (V-XI), средний (XII-XVI), новый период (XVII – до наших дней), сегодня нуждается в некоторых объяснениях и корректировках.

Исходя из новых принципов и подходов понимания литературного языка, факта очевидных сходств между средним армянским и западноармянским ашхарабаром и более точной трактовки понятия современного армянского языка, предлагается сделать некоторые уточнения в принятом варианте этапов разделения литературного армянского языка. Считать XII-XVIII века подэтапом раннего ашхарабара, или условно среднеармянского языка, а с 1920-х годов до наших дней – подэтапом современного армянского языка с двумя ветвями – восточноармянским и западноармянским.

Yuri Avetisyan – *The Two Stages of the Development of Literary Armenian – Grabar and Ashkharhabar*

The question of stage division of the literary Armenian language has been in the focus of scientific interest for more than two hundred years. The view which was put into scientific circulation with the report of Gevorg Jahukyan in 1951 (according to which three stages of the history of the Armenian language are separated – Old period (V-XI), Middle period (XII-XVI) and New period (from XVII to our days), needs some explanations and specifications.

Proceeding from the new principles and approaches of literary language perception, the fact of the obvious presence of Middle Armenian-Western Armenian-Ashkharhabar generalities and more reliable interpretations of the concepts **New Armenian** and **Modern Armenian** it is proposed to introduce clarity into the accepted version of periodization of literary Armenian i.e to consider XII-XVIII centuries **Early Ashkharhabar** or, conditionally, **sub-period of Middle Armenian** and from the 1920s to our days sub-period of **New or Modern Armenian** with two branches – Eastern Armenian and Western Armenian.

Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը, Երևան, «Դանիելյան Պրինտ», 2014, 264 էջ

2014 թ. ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» (այսուհետև՝ ՊՄԱԹՊՄՕ) ՊՈԱԿ-ը հրատարակեց «Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը» խորագիրը կրող գիտական հոդվածների ժողովածուն՝ նվիրված ականավոր պատմաբան և հնագետ, ակադեմիկոս Բորիս Բորիսի Պիոտրովսկու հիշատակին (գլխավոր խմբագիր՝ պ. գ. դ. Աշոտ Փիլիպոսյան):

Բորիս Պիոտրովսկին XX դարի խոշորագույն գիտնականներից է: Համաշխարհային հռչակի արժանացած, բացառիկ տաղանդի տեր այս անձնավորությունը օժտված էր աստվածաշնորհ ունակություններով: Նա բազմակողմանի զարգացած մտավորական էր, հրաշալի հնագետ, արևելագետ, թանգարանագետ, արվեստաբան, պատմաբան, լեզվաբան: Նրա կյանքն ու գործունեությունը հիբրավի դարակազմիկ էին թե՛ ժամանակակիցների և թե՛ գալիք սերունդների համար: Բ. Պիոտրովսկին գործնականում ստանձնել էր գիտական դպրոցի հիմնադրի, բարձրակարգ և որակյալ մասնագետներ պատրաստողի և նրանց ուղորդողի պատմական առաքելությունը: Նրա գրչին է պատկանում Անդրկովկասի հնագիտությանը նվիրված առաջին ամփոփ ձեռնարկը¹:

1930 թ. Նիկողայոս Մառի հանձնարարությամբ Բ. Պիոտրովսկին առաջին անգամ ուղևորվել է Անդրկովկաս, այցելել նաև Հայաստան՝ որոնելու անհետացած քաղաքակրթությունների ակունքները: Այդ օրվանից վաստակաշատ գիտնականի հետազոտությունների անկյունաքարը դարձան ուրարտական հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունը, պեղված նյութերի համակողմանի քննությունն ու պատմամշակութային գնահատումը: Սակայն Բ. Պիոտրովսկու գիտական ուսումնասիրությունների շրջանակը անհամեմատ ավելի լայն էր: Նրա գրչին են պատկանում արժեքավոր հետազոտություններ նվիրված ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի երկրների, Նուբիայի հնագիտությանն ու հնագույն պատմությանը:

¹ Ст'я Пиотровский Б. Б., Археология Закавказья (с древнейших времен до I тысячелетия до н. э.). Курс лекций, Ленинград, 1949:

Բ. Պիոտրովսկու գիտական հետաքրքրությունների լայն շրջանակով է պայմանավորված գրախոսվող ժողովածուում ամփոփված հոդվածների թեմատիկ և ժամանակագրական ընդգրկումը: Այն բացվում է ականավոր ուրարտագետ Նիկոլայ Հարությունյանի (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ) «Հիշողություններ իմ ուսուցչի՝ Բ. Բ. Պիոտրովսկու մասին» հոդվածով, որը նա գրել է 2014 թ. հունիսին՝ մահվանից երկու ամիս առաջ: Փաստորեն, նրա հուշագրությունը, ինչպես նշում են ժողովածու կազմողները, «սիրելի ուսուցչին հետմահու արված հարգանքի և սիրո խոստովանություն է» (էջ 10): Գիտակենսագրական բնույթ է կրում Կլարա Ասատուրյանի (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) (այսուհետև՝ ՀԱԻ) «Դրվագներ Բորիս Պիոտրովսկու և Սեդրակ Բարխուդարյանի գիտագործնական հարաբերություններից» հոդվածը: Հեղինակը հատուկ ընդգծում է Բ. Պիոտրովսկու քաղաքացիական խիզախությունը, ով 1947 թ. հայ գիտության և մշակույթի ականավոր գործիչներ Մարտիրոս Սարյանի, Հրաչյա Աճառյանի և Գրիգոր Ղափանցյանի հետ մեկտեղ ստորագրել է ԽՍՀՄ ԳԽ Նախագահության նախագահ Նիկոլայ Շվերնիկին ուղղված մի նամակ՝ ի պաշտպանություն հերթական անգամ ստալինյան բռնաճնշումների ենթարկված Սեդրակ Բարխուդարյանի:

Բ. Պիոտրովսկու հետազոտություններին և դրանց գիտական նշանակությանն են նվիրված Վասիլի Լյուբինի (Լյուբական մշակույթի պատմության ինստիտուտ, Սանկտ-Պետերբուրգ) (այսուհետև՝ ՆՄՊԻ) «Բ. Բ. Պիոտրովսկու դերը Հայաստանի պալեոլիթի ուսումնասիրման գործում» և Գարեգին Թումանյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Բ. Բ. Պիոտրովսկին Հայկական լեռնաշխարհում կիմմերական և սկյութական մշակույթների առկայության մասին» հոդվածները: Վ. Լյուբինը ներկայացնում է 1950-1960 թթ. ծավալված գիտական սուր բանավեճերը, ինչպես նաև հպանցիկ անդրադարձ կատարում 2000 թ. հայ-ռուսական արշավախմբի աշխատանքների հիմնական արդյունքներին: Գ. Թումանյանը մանրակրկիտ դիտարկում է սկյութական հիմնահարցին նվիրված Բ. Պիոտրովսկու հետազոտությունները:

Հայաստանում հնագիտական հետազոտությունների պատմությանն է նվիրված Արթուր Պետրոսյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Նեոլիթի ուսումնասիրությունը Հայաստանում» հոդվածը: Հեղինակը մանրամասն անդրադառնում է պատմական այս կարևորագույն շրջափուլին վերաբերող հետազոտություններին, փորձում դասդասել և պարբերացնել դրանք՝ մատնանշելով նաև վերջին ուսումնասիրություններն այս ասպարեզում:

Բ. Պիոտրովսկու աշխատությունների հիրավի հանրագիտարանային բնույթը կանխորոշել է ներկայացվող ժողովածուում մինչմասնագիտական բնույթի մի շարք հոդվածների հրատարակությունը: Ռուզան Մկրտչյանի (ԵՊՀ), Լևոն Պետրոսյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) և Ա. Փիլիպոսյանի («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ) «Էթիունի երկրի երկարակյացները» հոդվածում

վերլուծության է ենթարկվում Հայաստանի միջին-ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան հուշարձաններից հայտնաբերված հնէամարդաբանական նյութը, որը դիտարկվում է լեռնաշխարհի պատմամշակութային ու քաղաքական զարգացման և դրա հնագիտական դրսևորման համատեքստում: Հրաչ Մարտիրոսյանը (Լեյդենի համալսարան) «Համեմատական լեզվաբանության և պատմագիտության խաչմերուկներում» հոդվածում քննության է առնում անվանի սեպագրագետ Հովհաննես Կարապյոզյանի հետազոտությունները, նշում դրանցում առկա վիճելի դրույթները: Ա. Փիլիպոսյանը, «Մեծամորի սարդոնիքսե կշռաքարը՝ գորտի խորհրդանշական պաշտամունքի առարկա» հոդվածում համադրելով հնագիտական նյութը դիցաբանական տվյալների հետ, եզրակացությունների է հանգում գորտի պաշտամունքի մասին ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ Մերձավոր Արևելքում: Բացի դրանից, օգտագործելով պատմագիտական տվյալները, հեղինակը նորովի է մեկնաբանում նաև Մերձավոր Արևելքի մ. թ. ա. II հազարամյակի կեսի մի շարք կարևոր զարգացումներ:

Տեսական հարցերին է նվիրված Լիլիթ Սիմոնյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Հնագիտության և երաժշտական ֆոլկլորագիտության փոխառնչությունների խնդրի շուրջ» ուսումնասիրությունը, որտեղ քննարկվում է երաժշտագիտական մեթոդների կիրառելիությունը հնագույն ծիսական տեքստերի վերծանման համար:

Մի շարք հոդվածներ նվիրված են հուշարձանների և առանձին իրերի տիպաբանությանը: Հարկ է նշել Արսեն Բոբոխյանի (ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ)» հոդվածը, որտեղ նա առաջին անգամ փորձում է պարբերացնել Հայաստանում քաղաքագոյացման գործընթացները սկսած վաղ բրոնզի ժամանակաշրջանից մինչև մ. թ. ա. I հազարամյակը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Նինո Շանշաշվիլիի և Գոդերձի Նարիմանիշվիլիի (Վրաստանի ազգային թանգարան) «Հարավային Կովկասի մ. թ. ա. II հազ. կեսի բրոնզե զինանշանների ուսումնասիրության շուրջ» հետազոտությունը: Հեղինակները ոչ միայն ներկայացնում են առ այսօր հայտնի զինանշանների հիմնական խմբերը, այլև դիտարկում դրանք մ. թ. ա. II հազարամյակի Մերձավոր Արևելքի պատմության և ռազմաքաղաքական իրավիճակի համատեքստում: Տիպաբանական հարցեր են շոշափվում նաև Արտավազդ Զաքյանի (ՊՄՄԹՊՄԾ) «Հայկական լեռնաշխարհի ք. ա. II-I հազարամյակների վահանները» հոդվածում, որտեղ ներկայացվում են վահանների ծագումնաբանությունը, վաղագույն օրինակները և դրանց գուգահեռները, ինչպես նաև ուրարտական վահանների տիպերը:

Օրինաչափ է, որ ժողովածուում ընդգրկված հոդվածների մեծ մասը նվիրված է Վանի թագավորության պատմությանն ու նյութական մշակույթին: Ուրարտական ամրաշինության և քաղաքաշինության հարցերին են անդրադարձել Քշիշտոֆ Յակուբյակը (Վարշավայի համալսարանի հնագի-

տության ինստիտուտ) «Փոքր ամրոցների դերը Ուրարտուի արևելյան շրջանների ներքին պահպանական համակարգում» և Ռոբերտո Դանը (Իտալիա) «Պաշտպանական համակարգը մ. թ. ա. IX-VIII դարերում. Ամրոցների շրջանաձև դասավորությունը Վանի (Տուշպայի) շուրջըլորը» հոդվածներում: Ք. Յակուբյակը դիտարկում է Ուրմիա լճի ավազանի և հարակից շրջանների մի շարք ամրոցներ, հնագույն ճանապարհների համատեքստում՝ կապված նրանց անվտանգության ապահովման հետ: Ռ. Դանը, վերլուծելով և տիպաբանելով Տուշպա քաղաքի շրջակայքում տեղադրված բնակավայրերը, հանգում է այն եզրակացության, որ դրանք նպատակաուղղված էին մի կողմից խթանելու տվյալ տարածքների տնտեսական զարգացումը, իսկ մյուս կողմից՝ ապահովելու մայրաքաղաքի անվտանգությունը:

Նորահայտ հուշարձանների պեղումներին են նվիրված Աթիլա Բաթմազի (Էջեի համալսարան, Իզմիր) «Հնագիտական վերջին ուսումնասիրություններն Այանիս ամրոցում (Վան, Թուրքիա)» և Հայկ Ավետիսյանի ու Նատալյա Ավետիսյանի (ԵՊՀ) «Պեղումներ Արամուսում» հաղորդումները: Ա. Բաթմազը ներկայացնում է Այանիս ամրոցի 2009-2011 թթ. պեղումները, մասնավորապես պեղված հատվածների շերտագրությունը, ճարտարապետությունը, ինչպես նաև նյութական մշակույթի նմուշները: Կոտայքի նշանավոր հուշարձաններից մեկի՝ Արամուսի պեղումներին նվիրված հետազոտությունում հեղինակները ուշադրությունը կենտրոնացնում են ամրոցի ներքին կառուցվածքի, ճարտարապետության, ինչպես նաև պեղումներից հայտնաբերված իրերի վրա, որոնց թվում առանձնանում է ցլի բրոնզե արձանիկը:

Ժողովածուում ընդգրկված են նաև ուրարտական դիցաբանին նվիրված երկու՝ Միքայել Բադալյանի («Էրեբունի» պատմամշակութային արգելոցանցարան) «Խալդի և Բաբարթու»: Ուրարտուում «սրբազան ամուսնության» ծեսի գոյության խնդրի շուրջ» և Մուհիտին Բաշթյուրքի (Անադոլու համալսարան, Էսկիշեհիր) «Խալդիի երկու բնույթները. ուրարտական գերագույն աստծո արական և իգական բնույթների քննություն» հրապարակումներ: Մ. Բադալյանը, օգտագործելով հնագիտական հարուստ նյութը, ինչպես նաև համեմատական դիցաբանության տվյալները, վերլուծում է Վանի թագավորության ծիսակարգում «սրբազան ամուսնության» ծեսի առկայության հնարավորությունները հին արևելյան համապատասխան ծեսերի համատեքստում: Ուշագրավ են նաև հեղինակի՝ «սրբազան հետերիզմին» առնչվող դիտարկումները: Մ. Բաշթյուրքի հոդվածը նվիրված է Ժամանակակից դիցաբանագիտությունում քննարկվող կարևորագույն հարցերից մեկին՝ գերագույն աստծո արական և իգական բնույթների միասնությանը: Հեղինակը վկայակոչում է թե՛ հնագիտական և թե՛ համեմատական դիցաբանական ու էպիգրաֆիկ տվյալներ: Թադման ծեսին և խորհրդաբանությանը վերաբերող

հարցեր են արծարծվում Նվարդ Տիրացյանի (ՀԱԻ) «Արմավիրի սարդիոնե ուլունքաշարը» հաղորդման մեջ:

Կնիքագործության հարցերին են նվիրված Ստեփան Ասլանյանի (Քաղաքական և ռազմավարական հետազոտությունների կենտրոն, Սանկտ-Պետերբուրգ) ու Սերգեյ Վասիլևի (ՆՄՊԻ) «Հյուսիսային Հայաստանի Կուրթան բերդամրոցի պեղումներից հայտնաբերված դրոշմ-կնիքը» և Մատեոշ Իսկրայի (Վարշավայի համալսարանի հնագիտության ինստիտուտ) «Ուրարտուի պաշտոնական կնիքները և նրանց կապն ասսուրական կնիքագործության հետ» հոդվածները: Կուրթանի պեղումներից հայտնաբերված կնիքին վերաբերող հոդվածում հեղինակները ոչ միայն ներկայացնում են այդ ուշագրավ արտեֆակտը, նրա հնագիտական ենթատեքստը, այլև հրապարակում արժեքավոր տեղեկություններ Կուրթանի բնակավայրի և նրա շերտագրության մասին: Ուրարտական պաշտոնական կնիքներին նվիրված Մ. Իսկրայի հոդվածում արծարծվում են տիպաբանության հարցեր: Հեղինակը բազմաթիվ գուգահեռներ է անցկացնում ասորական կնիքների հետ:

Վերջին երկու տասնամյակում հրատարակվել են Բորիս Պիտրովսկուն նվիրված մի շարք ժողովածուներ, գումարվել են գիտաժողովներ¹: Դրանց մասնակիցների տարեցտարի ընդլայնվող կազմը, թեմաների բազմազանությունը վկայում են մեծ հնագետի գիտական ժառանգության արդիականության և այն հզոր խթանի մասին, որ հանդիսացան նրա աշխատությունները հայագիտության զարգացման համար:

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ԲՈՒՌՆՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

¹ Տե՛ս «Էրեբունի-Երևան, հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ», խմբ. Ա. Քալանթարյան, Ս. Հմայակյան, Երևան, 1998, «Հին Հայաստանի մշակույթը», պր. XV, հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, նվիրված Բ. Պիտրովսկու և Հ. Ջանփոլադյանի հիշատակին, Երևան, 2005, «Հուշարձան» տարեգիրք, 9, Երևան, 2010:

Ռուբեն Մելքոնյան, Մհեր Աբրահամյան, Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2015, 238 էջ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Մելքոնյանի և ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Մհեր Աբրահամյանի Հայոց ցեղասպանության հարյուրամյակի առիթով հրատարակած գրախոսվող մենագրությունում բավականին ընդգրկուն գիտական քննարկման է ենթարկված Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առ այսօր խիստ նվազ ուսումնասիրված թեմաներից մեկը: Ուստի նրանց գիրքը մեծապես կնպաստի հայ ժողովրդի բնաջնջման գործընթացին խիստ բնորոշ՝ հեղինակների ուշադրության կենտրոնում գտնվող առանձնահատկության բացահայտմանը, ինչպես նաև XX դարում Թուրքիայի Հանրապետության կիրառած հայատյաց քաղաքականության ըմբռնմանը:

Բռնի կրոնափոխությանը վերաբերող թեման խիստ կարևոր է, քանի որ այն, ինչպես իրավացիորեն նշում են Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը, ցեղասպանության մեթոդներից և ձևերից է (էջ 20): Թեման, որը մեր նախորդների կողմից հավուր պատշաճի ուսումնասիրված և մեկնաբանված չէ, հիմնականում վաղուց ի վեր կարոտ էր գիտական խոր վերլուծության: Հեղինակներն իրենց հիմնական նպատակը համարում են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ բռնի իսլամացման քաղաքականության ձևավորման, զարգացման, ինչպես նաև կիրառման մեթոդների բացահայտումը (էջ 21): Նշենք, որ նրանք օգտագործել են բազմաբնույթ և մեծաքանակ այլալեզու սկզբնաղբյուրներ (հայերեն, ռուսերեն, թուրքերեն և անգլերեն), այդ թվում՝ արխիվային, հանգամանք, որը նրանց հնարավորություն է ընձեռել, պատմական տարբեր դարաշրջաններում թուրքական մի քանի վարչակարգերի ցեղասպան քաղաքականությունը լուսաբանել և մեկնաբանել տարբեր տեսանկյուններից և ամբողջ խորությամբ:

Նախ Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը համառոտակի անդրադառնում են քրիստոնյաների, մասնավորապես հայ ժողովրդի (այդ թվում համշենահայերի) բռնի իսլամացման գործընթացի տարբեր փուլերին և փաստում, որ դեռևս XI դարում՝ սելջուկյան ժամանակաշրջանում, սկիզբ առած հայերի բռնի իսլամացման գործընթացը պետական քաղաքականության է վերածվել Օսմանյան կայսրությունում և կիրառվել զանազան եղանակներով, ինչպիսիք են մահվան սպառնալիքը, հարկային քաղաքականությունը, մանկահավաքը և այլն (էջ 32, 34, 55): Մենագրությունում մեծ տեղ է հատկացվում

ուսումնասիրվող հիմնախնդրի քննությանը Հայոց ցեղասպանության տարիներին:

1890-ական թվականներին հայկական զանգվածային կոտորածների սանձազերծումը հեղինակներն իրավամբ պայմանավորում են Հայկական հարցին լուծում տալու օսմանյան կառավարության ցանկությամբ, միաժամանակ ընդգծում նաև այդ տարիներին տարբեր վիլայեթներում հազարավոր հայերի պարտադրված կրոնափոխության իրողությունը: Փաստելով հայերի բռնի իսլամացման գործընթացում մուսուլման հասարակության գրեթե բոլոր շերտերի ներգրավվածությունը՝ նրանք շեշտում են, որ ոչ միայն հայկական զանգվածային կոտորածները, այլև շուրջ 200.000 հայերի կրոնափոխությունը կատարվել են պետական մակարդակով (էջ 77), և ըստ այդմ՝ հավաստում են կրոնափոխության՝ իբրև ցեղասպանության դրսևորման և իրականացման փաստը: Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը գտնում են, որ հայերի՝ 1890-ական թվականների կրոնափոխությունը հետագայում դարձել է իսլամացման ու թուրքացման քաղաքականության հիմքը: Միաժամանակ նրանք հիշատակում են 1840-1850-ական թվականներին կրոնափոխված հայերի՝ քրիստոնեությանը վերադարձի ցանկությունը (էջ 67), որը սկիզբ է առել 1909 թ. կիլիկյան կոտորածների և Մեծ եղեռնի տարիներին (էջ 80):

Ինչ վերաբերում է 1909 թ. կիլիկյան կոտորածներին, ապա հեղինակներն ընդգծում են, որ հայերի իսլամացման թիրախում եղել են կանայք և աղջիկները, իսկ երիտթուրքական իշխանությունները, ի տարբերություն նախորդ վարչակարգի, շատ ավելի անգիջում վերաբերմունք են ցուցաբերել բռնությամբ կրոնափոխված այն հայերի հանդեպ, որոնք ցանկացել են վերադառնալ իրենց կրոնին (էջ 83, 86): Դրանով հեղինակներն ընդգծում են երիտթուրքերի՝ հայերի բռնի կրոնափոխությանը ավելի հետևողականորեն հետամուտ լինելու հանգամանքը (էջ 88): Այդուհանդերձ, ցանկալի ենք համարում նրանց ուշադրությունը հրավիրել նաև 1890-ական թվականների համիդյան և 1909 թ. կիլիկյան կոտորածների ընթացքում հայերի բռնի կրոնափոխությունը հավաստող ֆրանսիական արժանահավատ սկզբնաղբյուրների վրա, որոնք նրանք, ցավոք, չեն օգտագործել¹:

Մենագրության անառարկելի արժանիքներից է խնդրո առարկա ասպարեզում երիտթուրքական վարչակարգի քաղաքականության տարբեր առանձնահատկությունների բացահայտումը, ինչպիսիք են իսլամացման միջոցով հայերի՝ աքսորից խուսափելը, փոխարենը նաև արդեն մուսուլման

¹ St' u op'hinal' Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897, Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897, **Brézol G.**, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911, **Meyrier G.**, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France. 1894-1896. Présentée et annotée par Claire Mouradian et Michel Durand-Meyrier, Paris, 2000.

դարձած անձանց աքսորելը և նույնիսկ սպանությունը կամ նվազագույնը նրանց տեղաշարժի արգելումն առանց մայրաքաղաքից ստացված հատուկ թույլտվության, աքսորված հայերի կրոնափոխությունն արաբական նահանգներում և այլն: Հեղինակներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում իսլամացման ենթակա հայերի վրա, որոնց դասակարգում են երկու՝ երեխաների և կանանց խմբերում՝ միաժամանակ նշելով, որ նրանցից բացի՝ իսլամն ընդունելու ենթակա են եղել նաև «սահմանափակ թվով հայ արհեստավորներ և բացառիկ մասնագիտության տեր մարդիկ» (էջ 113): Նրանք, անտարակույս, միանգամայն իրավացի են, երբ փաստում են, որ հայ որբերի իսլամացումը «կրել է պետական քաղաքականության բնույթ», իսկ կրոնափոխ հայերի երկու երրորդը եղել են կանայք, որոնց իբրև կին կամ աղախին բաժանել են մուսուլմաններին (էջ 137, 138):

Հայացք նետելով բռնի իսլամացված կանանց և երեխաների ազատագրման գործընթացի վրա՝ Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը նշում են, որ նույնիսկ Հայոց ցեղասպանության ավարտից հետո թուրքական պետությունը և թուրքական հասարակության բազում շերտեր չեն ցանկացել ազատ արձակել գերված հայ կանանց և երեխաներին: Այդուհանդերձ, նրանք քննարկում են հայության մի փոքր հատվածի փրկության հարցը միջազգային, միսիոներական և մարդասիրական կազմակերպությունների օգնության շնորհիվ:

Մեր կարծիքով, առավել հետաքրքրական է գրախոսվող մենագրության՝ Թուրքիայի հանրապետությունում հայերի բռնի իսլամացման քաղաքականությանը նվիրված գլուխը, որտեղ Ռ. Մելքոնյանի և Մ. Աբրահամյանի քննարկած հիմնախնդիրները, ըստ էության, պատմաբանները դեռևս չէին ուսումնասիրել: Հեղինակները նշում են, որ թուրքական իշխանությունները երբեք չեն հրաժարվել հայերին բռնի իսլամացման ենթարկելու քաղաքականությունից: Այդ է վկայում 1936-1938 թթ. Դերսիմում զազանների և հայերի հանդեպ օսմանյան պետության կողմից «ծրագրված և մանրակրկիտ մշակված» ցեղասպանությունը, որի զոհն են դարձել շուրջ 70.000 անձինք (էջ 181):

Խիստ ուշագրավ են մասնավորապես Ռ. Մելքոնյանի և Մ. Աբրահամյանի անդրադարձները 1940-1960-ական թվականներին Թուրքիայում բնակվող հայերի իսլամացման շարունակական գործընթացին, որը լուսաբանվում է Հայաստանի ազգային արխիվում պահվող անտիպ փաստաթղթերի վերլուծության հիման վրա: 1940-ական թվականների երկրորդ կեսին Թուրքիայում տեղի ունեցած տեղաշարժերը պայմանավորված էին էտպատերազմյան շրջանում ԽՍՀՄ-ի՝ Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներով: Ստեղծված իրավիճակը նպաստել է Թուրքիայում բնակվող հայերի՝ ԽՍՀՄ ներգաղթելու ցանկության աճին, հանգամանք, որի կասեցումը, ինչպես նշում են հեղինակները, թուրքական իշխանություններին դրդել է դիմելու նրանց նկատմամբ բռնությունների և հալածանքների տարբեր միջոցների, այդ թվում բռնի իսլամացման կիրառմանը (էջ 187-188):

Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը բացահայտում են 1950-1960-ական թվականներին հատկապես Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում (Մասուն, Դիարբեքիր) թուրքական պետական գերատեսչությունների իրականացրած իսլամացման քաղաքականությունը: Նրանք չեն անտեսում նաև հետագա տասնամյակներում հայերի հանդեպ ճնշումը սաստկացնելու հանգամանքը, որը շաղկապում են, դրա համար ունենալով բոլոր իրավունքները, ԱՍՄԼԱ-ի ահաբեկչական գործունեությանը (էջ 196): Հայտարարում նրանք հանգում են միակ հնարավոր իրատեսական հետևության, որ «Թուրքիայի Հանրապետությունը հետևողականորեն շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման ցեղասպան քաղաքականությունը» (էջ 198):

Անհրաժեշտ ենք համարում Ռ. Մելքոնյանի և Մ. Աբրահամյանի ուշադրությունը հրավիրել մի շարք բանավիճային հարցերի, բացթողումների և փաստական անճշտությունների վրա: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ վիճահարույց է իրադարձության ժամանակագրական եզրերի սահմանման խնդիրը: Հայեցակարգային խիստ էական այս հանգամանքի առնչությամբ հեղինակներն առաջադրում են զանազան մոտեցումներ, որոնցից միայն մեկն է մեր կողմից ընդունելի, ըստ որի՝ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1894-1923 թթ. (էջ 5, 16): Միաժամանակ, սակայն, որքան տարօրինակ է, Հայոց ցեղասպանությունը նրանք պարփակում են կա՛մ 1915 թվականի (էջ 49, 80, 92), կա՛մ 1915-1923 թվականների շրջանակներում (էջ 93, 207): 1915 թ. կամ 1915-1916 թթ. շրջանակներում Հայոց ցեղասպանությունն ընդգրկող գլխավորապես ֆրանսիացի և ամերիկացի մեր գործընկերները իրենց հայեցակարգային դիրքորոշումը հիմնավորում են մասնավորապես երիտթուրքերի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսությամբ և նոր ազգային պետություն ստեղծելու նրանց բուռն ցանկությամբ: Տրամաբանական այս հարցադրումները հիքավի տեղիք են տալիս մտորումների: Սակայն մեր կողմից միանգամայն անընդունելի է Հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ. շրջափակող մոտեցումը, որն իրականության հետ որևէ առնչություն չունի:

Ցավոք, Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը նպատակահարմար չեն գտել համեմատականներ անցկացնել Հայոց ցեղասպանության և մի շարք այլ ցեղասպանությունների, մասնավորապես Շոայի միջև, որոնց, ի տարբերություն հայ ժողովրդի ոչնչացման պարագայի, բռնի կամ կամովին իրականացված կրոնափոխության հանգամանքներն ամենևին հատուկ չեն եղել, թեպետ ամերիկացի հայտնի պատմաբան Ռոբերտ Մելսոնը հայ և հրեա ժողովուրդների ցեղասպանություններն իրավամբ դասել է ներքին (միևնույն պետության տարածքում տեղի ունեցած) և համատարած (էթնիկական ընդհանրության լիակատար ոչնչացման նպատակ հետապնդող)

ցեղասպանությունների շարքը¹: Դրանով հեղինակները կրնոգծեն Հայոց ցեղասպանությանը բնորոշ էական առանձնահատկություններից մեկը, որն այն զանազանում է տարբեր ժողովուրդների հանդեպ իրականացված ցեղասպան գործընթացներից:

Ռ. Մելքոնյանը և Մ. Աբրահամյանը թույլ են տվել նաև փաստական որոշ վրիպումներ: 1894-1896 թթ. Դիարբեքիում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեին (Meyrier) նրանք ներկայացնում են իբրև Ֆրանսիայի հյուպատոս Մեյրիեի (էջ 78)²: Հայոց ցեղասպանության հայտնի մասնագետ Թաներ Աքչամին նրանք անվանում են «թուրք պատմաբան» (էջ 94, 110, 134), այն դեպքում, երբ վերջինս ազգությամբ թուրք ամերիկացի սոցիոլոգ է:

Եզրափակելուց առաջ ցանկանում ենք մատնանշել, որ Ռ. Մելքոնյանի և Մ. Աբրահամյանի արժանահավատ փաստերով հիմնավորված և անաչառ դիրքերից գիտական պատշաճ մակարդակով շարադրված մենագրությունը կարևոր ներդրում է հայերի բռնի իսլամացման հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության ասպարեզում, որն անտարակույս իր արժանի տեղը կգտնի Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված բավականին հարուստ պատմագիտական գրականության մեջ:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

¹ **Melson R.**, Problèmes soulevés par la comparaison entre le génocide arménien et l'Holocauste // L'actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998, Paris, 1999, p. 378.

² Նրա մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, Գուստավ Մեյրիեն համիդյան կոտորածների մասին // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 152-159:

Муса Гасымлы, *Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг.: в поисках исторической истины*, Москва, «Инсан», 2014, 528 с.

Մուսա Գասիմլի, *Անատոլիան և հարավային Կովկասը 1724-1920-ական թվականներին. պատմական ճշմարտության փնտրություն*, Մոսկվա, «Ինսան», 2014, 528 էջ

В рамках подготовки азербайджанского агитпропа к столетию Геноцида армян вышла книга д. и. н., профессора и депутата Милли меджлиса Азербайджана Мусы Гасымлы. В ней поставлена цель выяснить значение Армянского вопроса и средств по его решению. Декларируется беспристрастность монографии: «На наш взгляд, если бы тот или иной историк из нейтральной ознакомился бы с использованными нами архивными материалами и документами, то он занял бы аналогичную позицию» (с. 5). Между тем перед нами не сборник документов, а монография – исследование одной проблемы, автор которой занимается поиском «исторической истины» по проблеме Армянского вопроса. Декларируется возможный пристрастный подход армянской стороны, сочтенной заранее политизированной: «Армянские историки без конца фальсифицируют исторические факты», – заявляет автор (с. 5).

М. Гасымлы известен рядом трудов, которые пропагандируются за рубежом¹. Не исключением является новая работа, где стратегической установкой представлено стремление по разоблачению «искусственно» созданного Армянского вопроса².

В этом контексте представлен ряд мифов: 1) армяне не автохтонное население Кавказа; 2) справедливое управление османскими султанами всеми подданными; 3) значительность роли армянской церкви в освободительном движении; 4) покровительство России армянскому населению; 5) «армянские мятежи» против Османской империи; 6) заселение армянами «азербайджанских земель» на Южном Кавказе; 7) армяне «притеснители азербайджанцев»; 8) деятельность партии «Дашнакцутюн» по созданию «Великой Армении»; 9) наличие армянского террора; 10) создание армянской государственности на азербайджанской земле (с. 10-13, 23, 25); 11) «Анатолия и Южный Кавказ не являются исторической родиной армян» (с. 518).

Армяне – представители Армянского нагорья, северная часть которого доходит до реки Куры. Закавказская Армения это часть Армянского нагорья, где возник и сформировался армянский народ. Значимость этого факта, в отличие от среднеазиатского происхождения азербайджанских тюрок, заставляет мифотворцев оспаривать эту аксиому³. Естественны и закономерны перемещения внутри

¹ **Гасымлы М.**, СССР-Турция: от нормализации отношений до новой холодной войны, 1960-1979 гг., М., 2008; *его же*: Турция-СССР: от переворота до распада, 1980-1991, М., 2010.

² **Гасымлы Муса Джафар оглу.** - webirbis.spsl.nsc.ru/cgiirbis64.exe?...%20Муса.

³ Армянское нагорье: географический термин или идеологическое оружие против Азербайджана // <http://www.aze.az/news/89011.html>

ареала происхождения, как и миграционные перемещения. Между тем Гасымлы считает, что «размещением армян на Кавказе» царизм подготавливал почву для захвата Стамбула, черноморских проливов Босфор и Дарданеллы, а также теплых морей. При этом игнорируется организация самодержавием России мусульманского переселенчества из провинции Азербайджан Персии весной 1828 г. во главе с муштеидом Ага-Мир-Фетте Тавризмским в закавказские пределы. На это казна выделила 20 тысяч червонцев, равных 4 миллионам рублей из 80 миллионов контрибуции от Тегеранского двора. В то время как на миграцию 8249 семейств христианских переселенцев – армян, айсор, греков (42 тыс.) из Персидской Армении в Араратскую долину выделено 16 тыс. червонцев. Только жителям деревни Узумчи и четырех селений Карадага, было разрешено поселиться в Карабахе, составивших около 700 человек¹. Из 16 тыс. на христианское переселение было истрчено 8 тысяч червонцев, значительно уступая сумме затрат на мусульманское переселенчество. Массовость переселения «татарских племен» из Персии заставила комитет министров России в 1832 г. ограничить поселение русских раскольников в Карабахе². Вместо христианизации Кавказа произошла «азербайджанизация» части его территории.

Использование М. Гасымлы данных этносоостава Восточной Армении носит избирательный характер. Так, им отмечается, что после Крымской войны 1853-1856 гг. царизм «продолжил размещение» армян на Южном Кавказе, «предпочтительно» в Ереванской губернии. Выдвинутое положение мотивируется «горячими фактами». Указывается, что в рапорте местного военного губернатора Ереванской губернии генерала-майора И. И. Назарова от 5 ноября 1850 г.³ число местного населения определяется в 217234. Дается наличие равного этнического состава: «Численность же азербайджанцев и армян была приблизительно одинаковой» (с. 22). Далее отмечается, что по мнению начальника департамента Кавказа по гражданской части А. Костенского 1882 г. «численность мусульман и христиан в городе Иреване практически одинакова» (с. 23). Конкретных данных не приводится.

В этой информации привлекает ряд моментов: 1) численность населения Ереванской губернии на 5 октября 1850 г.; 2) состав населения почти фити-фити; 3) подкрепление этих данных не указанными сведениями; 4) наконец, обоснование этими сведениями «продолжения размещения» армян на Южном Кавказе.

Обратимся к фактам. Действительно, в рапорте Назарова за 5 октября 1850 г. вел. цесаревичу Александру Николаевичу фигурирует указанные данные о численности населения, хотя в определенном контексте: «жительствоющих в губернии обоего пола душ 213243, а всего 217234»⁴. Но в рапорте не значится азербайджанское население, поскольку оно возникло в начале XX в. Тогда откуда возникает тезис о почти равном этническом составе. Проверка этих

¹ К 185-летию подписания Туркманчайского договора. «В Туркменчае Персия и Россия делили независимые Азербайджанские ханства или».- <http://erevangala500.com/?direct=newspage&id=123>

² Тунян В.Г., Карабахский конфликт, Ереван, 1999, с. 70, 71.

³ В работе ошибочно дана дата 5 ноября 1850 г.

⁴ Государственный исторический архив (ГИА), ф. 678, оп. 1, д. 549, л. 1 об.

данных, на основе еще аспирантских записей, заставила обратить внимание на «Отчет Ереванского губернатора о состоянии Эриванской губернии за 1850 г». Численность губернии определена в 262 662 чел.(13688 – м.п. и 125974 ж.п.) т.е. увеличена на 45428 чел.¹. Разница, очевидно, связана с неучетом кочевых курдов и других племен.

Этническая характеристика населения представлена состоящая из представителей двух главных исповеданий: армян-григориан и магометан. Указывается наличие отдельно армян-католиков и армян-лютеран, русских раскольников, но азербайджанцев нет². Дается этноконфессиональная характеристика: «Армяне – народ спокойный и трудолюбивый», хотя отмечается что переселенцы из Персии и Турции «носят на себе отпечаток страны, или народа, с которым долго были в соприкосновении». Другая характеристика дана представителям противоположной конфессии: «Мусульмане все вообще склонны к воровству, грабежам и разбоям»³.

Очевидна, такую характеристику можно применить лишь к кочевому населению и лишь при значительной численности, но и то всё относительно. При этом русские раскольники, за исключением религиозных воззрений, по своему «гражданскому быту, сельскому хозяйству и ремеслам» поставлены выше всех этносов Ереванской губернии⁴.

Vahram Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939, Beirut, Haigazian University Press, 2015, 376 p.*

Վահրամ Շեմմասեան, *Մուսա Տաղի Հայերը. Ընկերային-Տնտեսական Եւ Մշակութային Պատմութիւն, 1919-1939, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի Հրատարակչատուն, 2015, 376 էջ*

Հատորին հեղինակը՝ Դոկտ. Փրոֆ. Վահրամ Շեմմասեան հայ նորագոյն շրջանի պատմութեան մասնագետ է: Ան 1996ին պաշտպանած է իր դոկտորականը Քալիֆորնիա-Լոս Անճելըսի Համալսարանէն՝ «Մուսա Տաղի Հայ Գիւղացիութիւնը. Պատմաագագրական Ուսումնասիրութիւն, 1840-1915» նիւթով: Ներկայիս ան վարիչն է Քալիֆորնիոյ Նահանգային Համալսարանի Նորթրիճի մասնաճիւղի Ժամանակակից եւ Դասական Լեզուներու եւ Գրականութեանց Բաժնին Հայագիտական Ուսմանց Ծրագրին:

Գրախօսուող գիրքը դրսեւորումն է հեղինակին երեք երեւոյթներու՝ որդիական զգացումներ, քաղաքացիական պարտականութիւն եւ գիտական միտք: Որդիական՝ որովհետեւ հեղինակը ծնունդն է մուսալեոցի ընտանիքի: Քաղաքացիական՝ որովհետեւ ան քաղաքացին է Մուսա Լեռան յետնորդ Այնճարի: Մեզ, սակայն, այստեղ առաւել կը հետաքրքրէ գիրքին գիտական արժէքը:

Գիրքին ներածականին մէջ հեղինակը կը ճշդէ որ հատորը կ'ուսումնասիրէ Մուսա Լեռան շուրջ 6300 հոգի հաշուող գլխաւոր վեց գիւղերու (Պիթիաս, Հաճի Հապիպլի, Եողուն Օլուք, Խտըր Պէկ, Վաքըֆ եւ Քեպուսիէ)՝ երկու աշխարհամարտերուն միջեւ եղած ժամանակաշրջանի ընկերային, տնտեսական եւ մշակութային պատմութիւնը: Իսկ այդ գիւղերուն կրօնաեկեղեցական, կրթական եւ քաղաքական պատմութիւնը՝ հեղինակը կը հաւաստէ ներկայացնել այլ հատորով մը: Եթէ հրատարակուած այս հատորին աւելցնենք «խոստացուած» հատորը, նաեւ՝ հեղինակին դոկտորական աւարտաճառը, ապա կրնանք լաւատեսօրէն հետեւցնել, որ շնորհիւ Շեմմասեանի յարատեւ եւ հետեւողական անդուլ աշխատասիրութեան, հայագիտութիւնը յառաջիկային պիտի ունենայ հայ ժողովուրդի մէկ մասին՝ մուսալեոցիներուն, վերջին հարիւրամեակի ամենահամապարփակ, ժամանակակից գիտական պատմութիւնը: Նման տարողութեամբ եւ բնոյթի ուսումնասիրութենէ դժբախտաբար զուրկ է գրեթէ որեւէ այլ հայամաս, հակառակ հայրենակցական միութիւններու կողմէ հրատարակուած հարիւրաւոր հատորներուն եւ վերջին տասնամեակներուն լոյս տեսած ազգագրական բազում գիտական ուսումնասիրութիւններուն, որոնք անգնահատելի յաւելում

են հայուն կենցաղային-առօրեական կեանքին եւ պատմութեան ուսումնասիրական բնագաւառին:

Հատորը բաժնուած է ութ Գլուխներու, որոնք յաջորդաբար կ'անդրադառնան մուսալեոցիներու յետպատերազմեան վերաբնակեցումին, ընկերային կառոյցին, երկրագործութեան եւ անասնապահութեան, առեւտուր-շուկայ-արհեստներուն, Միջին Արեւելք եւ Եթովպիա պանդխտած մուսալեոցիներուն, Մ. Նահանգներ պանդխտած մուսալեոցիներուն, զբօսաշրջութեան եւ հանգստավայրերուն, եւ մշակութային դրսեւորումներուն: Գիրքը ունի նաեւ ներածական մը ու վերջաբան: Հատորը հարուստ է 91 նկարներով¹, ունի ծաւալուն աղբիւրացանկ եւ անուանացանկ: Ան ունի նաեւ հինգ յաւելումներ, որոնց առաջինով տրուած են Պիթիասի 284 ընտանիքներու 1939ի անդամաթիւր եւ կալուածները (տուն, պարտէզ, հողաշերտ եւ արեժէքը այդ կալուածներուն), երկրորդով, երրորդով եւ չորրորդով յաջորդաբար՝ 207 պիթիասցիներու, 207 հաճիհապիպլիցիներու եւ 217 խտրբալէկցիներու անասուններու (կով, եգ, այծ, ոչխար, ձի, էշ, խոզ, մեղուափեթակ) 1939ի քանակը եւ արժէքը, իսկ հինգերորդով՝ 184 քեպուսիէիցի ընտանիքներու 1939ի անդամաթիւր եւ անասուններու (կով, եգ, այծ, ոչխար, էշ) քանակն ու արժէքը: Վերջաբանը կը կատարէ համառոտակի ողիսականը Մուսա Լեռան պարպումին, ժողովուրդին կամաւոր հեռացումին եւ Այնճար տեղաւորումին:

Մուսալեոցիք արեւմտահայ այն իւրայատուկ զանգուածն են, որոնք յետ-եղեռնեան բնօրրանային կեանք մը ունեցան շուրջ քսան տարիներ²:

Մուսա Լեռը առանձնայատուկ է նաեւ անով որ՝ ի տարբերութիւն միւս բոլոր հայրենակցական ենթախումբերուն, ան Սփիւռքի հաւաքական առաւելագոյնս մէկտեղուած կեանքը ունեցաւ: Այս երեւոյթը առիթ տուաւ որ Մուսա Լեռան պապենական կենցաղային, ազգագրական եւ պատմական յիշողութեան ու բանահիւսական նշխարներ առաւելագոյնս պահպանուելու առիթն ունենան: Մուսալեոցիներու համախումբ կեանքը նաեւ լայն հնարաւորութիւն տուաւ որ ուսումնասէրներ դիւրութեամբ կարենան մուսալեռեան միջավայրը օգտագործել իբրեւ գիտական ուսումնասիրութեան տեսադաշտ եւ առաւել մատչելի բնագաւառ:

¹ Ասոնք բնանկարներ են, ինչպէս նաեւ՝ ընտանեկան, ընկերային առիթներու, զինեալ խմբակներու, յուղարկաւորութեան, պսակի, որսորդական, սովորութեանական, հերկի, երեւելիներու, Ոստայն Հիւսուածեղէնի Ընկերութեան, արհեստագործական, մուսալեոցիներու արտասահմանեան (Եթովպիա, Եգիպտոս, Մ. Նահանգներ) կեանքի, կենցաղի եւ ասպարէզի նկարներ:

² 1939ին, Ալեքսանտրէթի Սանճաքի կցումով վերջ գտաւ մուսալեոցիներու այդ կեանքը: Այնուհետեւ, քեսապահայութիւնը մնաց միակ արեւմտահայ բեկորը որ յետ-եղեռնեան բնօրրանային կեանք ունեցաւ եւ կը շարունակէ ունենալ հակառակ 2014ին պարտադրուած 87օրեայ արտաքսումին:

Դժբախտաբար, Զինադադարեն ետք բնօրրան վերադարձեն մինչև քեմալական ցեղային միատարրութեան քաղաքականութեան հետեւանք կրկնաքստորը (1918-1921)՝ պապենական հողին վրայ տարուող վերականգնումի աշխատանքներուն եւ կեանքին մասին ուսումնասիրութիւնները շատ դրուագային են: Հետաքրքրական պիտի ըլլար ուսումնասիրական բաղդատութիւն կատարել ցեղասպանութենէն ետք հայ վերականգնումի եւ վրածնունդի ճիգին. թէ ի՛նչ տարբերութիւններ եւ նմանութիւններ, խորք, ծրագրաւորում, թափ ու լիցք, տեսիլք եւ հեռանկարներ ունէին երկու ենթախորքերը բնօրրանին՝ Մուսա Լեռ եւ Կիլիկա: Դեռ աւելին, կարելի է նաեւ ուսումնասիրել թէ ինչ զարգացումներ ունեցան այս երկու համայնքներու մշակութային ժառանգութիւնները՝ երկրորդ տեղահանութենէն ետք՝ իրարմէ շուրջ քսանամեակ մը հեռաւորութեամբ: Կարելի է վերլուծել նաեւ թէ ինչ ճակատագրուեցաւ այս երկու համայնքներուն մշակութային ժառանգութեան յետ-սփիւռքեան կեանքին (մին՝ 1921էն ետք, միւսը՝ 1940էն ետք) եւ արդեօք կարելի էր որեւէ բան փրկել, կարելի՞ էր որեւէ մշակութային ժառանգ այժմեացնել՝ արդիական շունչ տալով անոր, արտադրական միաւորներու զարկ տալով եւ համապատասխան շուկաներ յառաջացնելով: Այս եւ ուրիշ վերլուծութիւններու դուռ կը բանայ այս գիրքը, առիթ տալով թուրքին կողմէ մեզի պարտադրուած կորուստին մէջ իսկ մէր կողմէ կորսնցուցած առիթները վերլուծելու, եւ մակերեսային չնայելու մեր դարերու ընթացքին արարած մշակութային ժառանգի երեւոյթներուն անհատնում կորուստներուն:

Դեռ աւելին, այս գիրքը նիւթ կը տրամադրէ նաեւ բնօրրանին մէջ, Հայաստանի Հանրապետութեան, թէ՛ սփիւռքացող հայ քստորավայրերուն մէջ յետ-եղեռնեան հայկական վերականգնումի պատումին: Նման ուսումնասիրութիւնը կրնար պարզել այն հսկայ ճիգը (եւ այն ուղղութիւնները որոնց վրայ կատարուեցաւ հիմնական ներդրումը), զոր հայ ժողովուրդը պարտադրուեցաւ ընել՝ իր ուժականութիւնը շեղելով զարգացումէն ապաքինումին եւ վերականգնումին:

Դժուար է, եւ արդէն շատ ուշ՝ վերականգնել յետ-եղեռնեան գաղթական առաջին սերունդին կեանքը: Այդ սերունդը եւ այդ կեանքին ականատեսները, այլ խօսքով՝ Սփիւռքի առաջին մշակները չկան այլեւս: Այդ հանգրուանին մասին կենդանի վկայութեան հազուադէպօրէն գրառուած տուեալներու օգտագործումով մասամբ կարելի պիտի ըլլայ վերակառուցել այդ անցեալը:

Շեմմասեան, սակայն, գիտական արթնութիւնը ունեցած է մուսալեոցի ականատեսները խօսեցնել՝ նամակագրութեամբ, հարցազրոյցներով (102 անհատ) եւ անոնց ունեցած կեանքի վկայութիւնները թուղթին դնել: Ասոնց համադրած է ան այն յուշագրութիւնները զորս զանազան մուսալեոցիներ ըրած են եւ թողած իրենց ընտանեկան աւանդներուն շարքին (20 նիւթ): Շեմմասեան նաեւ մաղած է սփիւռքահայ մամուլը եւ կարգ մը օտար

պարբերականներ (34 անուն թերթ) ու մեկտեղած մինչև 1940ականներ Մուսա Լեռան մասին եղած գրեթե ամեն գրություն, արձագանգ, տեղեկություն: Ան պրպտած է նաև ընտանեկան նիւթերն ու արխիւները 21 անհատներու, սերտած չորս տեղեկագիր ու վեց դոկտորական եւ մագիստրական թեզեր: Եւ ոչ միայն այսքան: Հեղինակը գիտական ուսումնասերի մեղուաջանութեամբ պրպտած է Միջին Արեւելքի առնչուող պետութեանց համապատասխան եւ հաստատութենական, հայկական եւ օտար արխիւներուն բացարձակ մեծամասնութիւնը (13 արխիւ)՝ առաւել փաստացիութիւն, հաւաստիութիւն բերելու, շահեկան տուեալներ աւելցնելու, հարստացնելու եւ յաւելեալ լոյս սփռելու կարգ մը պղտոր մանրամասնութիւններու վրայ: Այս բոլորը իր ուսումնասիրական կենսապատումին կու տան թէ՛ ամբողջականի եւ թէ՛ մասնակիի կշիռ: Անշուշտ բնաւ ալ զանց չէ առնուած տպագիր գրականութիւնը (95 անուն): Կը թուի թէ բացի թրքական ու սուրիական պետական ու հաստատութենական արխիւներէն եւ տեղական մամուլի լրատուութենէն (վերջինս շատ անհաւանական՝ յաւելեալ մանրամասնութեանց առումով) դժուար թէ յայտնաբերուի որեւէ նիւթ որ նոր տուեալ աւելցնէ Շեմմասեանի՝ այս հատորին մէջ համադրաբար մեկտեղած ուսումնասիրութեան:

Հակառակ, սակայն հեղինակին լայնածիր եւ խորունկ գիտելիքին, ան երբեք ալ յաւակնութիւնը չի ցուցաբերեր ամենագէտ ներկայանալու. երբ հարկն է՝ ան կը նշէ որ տուեալ պարագան կարիքն ունի յաւելեալ տուեալներու, յաճախ կը զգուշանայ վերջնական եզրակացութիւն կատարելէ, հակառակ նիւթին ընձեռած հնարաւորութիւններուն:

Տուեալներու եւ մանրամասնութեանց բերումով, թերեւս, Մուսա Լեռ, այն միակ հաւաքականութիւնն է, ուր միջկուսակցական եղբայրասպանութեան թատերավայրի տուեալները առաւելագոյն խտութեամբ կատարուած են¹: Այս առումով եւս կրնանք հաստատել թէ Շեմմասեան առարկայականութեամբ կը բանայ այս երեսակը խնդիրներուն²: Եւ լա՛ւ է որ կը բանայ, խախտելով ժամանակավրէպ *թապու* մը, ու առիթ տալով որ զայն տեսնենք ու մասնակի գաղափար մը գոյացնենք հայ միջքաղաքական պայքարին ու անոր մարդկայիւրն կորուստներուն: Եւ անշուշտ, այստեղ շատ բան կայ ըսելիք՝ նախաեղեռնեան միջկուսակցական-միջֆետայական հակամարտութիւններէն, մինչեւ մատնութիւնները, Հայաստանի առաջին Հանրապետու-

¹ Ճիշդ է որ 1958ի Լիբանանի քաղաքացիական կռիւներու շրջանի եղբայրասպանութիւնը աւելի բիրտ էր ու աւելի մեծաթիւ զոհեր իլեց, սակայն թուական համեմատութիւնը եւ տեւողութիւնը եթէ նկատի առնենք, հաւանաբար մուսալեռեան եղբայրասպանութիւնը ամենէն սուրը կրնանք նկատել:

² Այս առումով ալ, նկատի առնելով որ մուսալեռեան եղբայրասպանութիւնը թերեւս կը հանդիսանայ առաջին հանգրուանը յետ-եղեռնեան եղբայրասպանութեան, Շեմմասեան առաջին քարը դրած կ'ըլլայ յետ-եղեռնեան կծիկը քակելու, ծալքերը բացայայտելու, աշխարհագրական տարածքը ճշդելու, զարգացման ալիքները եւ հետեւանքները ուսումնասիրելու դառնաղէտ, ինքնավնաս եղբայրասպանութեան:

թեան տարիներուն իշխանափոխութեան հետեւանքով յառաջացած քաղաքացիական բախումներն ու մեծաթիւ սպանութիւնները, Միջին Արեւելքի մէջ 1940-1960ականներու սկիզբ, ապա նաեւ Պէրութի մէջ 1980ականներուն տեղի ունեցած հայկական փոխադարձ սպանութիւնները...: Ինչու՞ չէ նաեւ՝ Հայաստանի Գ. Հանրապետութեան մեր օրերուն, ցոյցերու ընթացքին բրտութեան հետեւանքով յառաջացած մահ-սպանութիւնները...: Անշուշտ, հաճելի չէ թուարկումը՝ ուր մնաց վերլուծումը այս բոլորին: Յաւալի՛ է ասիկա: Բայց աւելի՛ ցաւալին այն է որ մենք անգիտանալով մեր քաղաքական նաեւ ա՛յս փորձը կրնանք նման վտանգի մը մէջ օր մը, տեղ մը, դարձեալ ու մի՛շտ գտնուիլ: Ասոր համար ե՛ւս հայագիտութիւնը անելիք ունի թապո՛ւ յառաջացնելով ո՛չ թէ նիւթի բացայայտման, այլ ոճրագործութեան կրկնութեան դէմ: Այս առումով եւս Շեմմասեանի երկը իր դրական դերը կը խաղայ:

Եզրակացնելով, կրնանք ըսել, թէ դժուար է գիտական նոր խօսք ըսել Շեմմասեանի ուսումնասիրած Մուսա Լեռան ոլորտներուն մասին: Ան գրեթէ սպառիչ է այդ առումով, սակայն նաեւ իր նախատիպութեամբ նոր ճամփայ կը հարթէ այլ համապարփակ ուսումնասիրութիւններու եւ բաղդատական համեմատութիւններու:

ԱՆՆՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

Amalia van Gent, Christina Leumann, *Den Ararat vor Augen. Leben in Armenien, Wettingen, Kolchis-Verlag, 2015, 246 S.*

Ամալիա վան Խենթ, Քրիսթինա Լոյման, *Հայեացք Արարատին. կեանքը Հայաստանի մէջ, Վեթինգեն, Կոլչիս Վերլագ, 2015, 246 էջ*

Սոյն գիրքին հեղինակները՝ գուիցերացի Ամալիա վան Խենթը եւ Քրիսթինա Լոյմանը հոս կը հրամցնեն իրենց գիտելիքները Հայաստանի պատմութեան ու մշակոյթին մասին, այսուհանդերձ նաեւ 1988-2015 թուականներու իրենց տպաւորութիւնները եւ ապրումները Հայաստանի մէջ: Այդ պատումին մեկնակէտը եւ դրդապատճառը եղած էր 1988 թ. Դեկտեմբերի ահաւոր երկրաշարժը, որը արդի Հայաստանի Հանրապետութեան հիւսիսային տարածքներն աւերած ու քանի մը տասնեակ հազար մարդկային կեանքեր խլած էր: Հեղինակներէն մէկը՝ Ամալիա վան Խենթ, ծագումով Յոյն մը՝ Ղարափոտութիւն (Karapodougrou) ազգանունով, երկար տարիներ աշխատած է որպէս գուիցերական «Neue Zürcher Zeitung» թերթին թղթակից Պոլսոյ, Բաքուի ու Երեւանի մէջ: Ան ամուսնացած է յայտնի հոլանտացի-գուիցերացի հեռատեսիլի լրագրող Վերներ վան Խենթի հետ, որը յաճախ թղթակցութիւններ կը հաղորդէ Յունաստանէն, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքէն: Ամալիա վան Խենթի գրածները կը վերաբերին առաւելապէս ներկայ Հայաստանի իրադարձութիւններուն քաղաքական, ընկերային, հասարակական ու մշակութային ոլորտներէն ներս: Իսկ ցիրիխցի մանկաբոյժ Քրիսթինա Լոյմանը «Հայաստանին ուղղակի օգնութեան ընկերութիւն» ոչ կառավարական կազմակերպութեան տնօրէնը, իր ամուսնոյն՝ նոյնպէս մանկաբոյժ Էրնսթ Լոյմանի հետ միասին անոր ուժ ու եռանդ գերազանցապէս գործնական օգնութեան էր նուիրած, անոր եւ իր ամուսնոյն կողմէ Դեկտեմբեր 1988 թ. հիմնադրած ու ղեկավարած «Արաբկիր» երեւանեան մանկական հիւանդանոցին մէջ: Երկար տարիներու ընթացքին այս զոյգ գուիցերացի հեղինակները կը տիրանային Հայաստանի ու անոր ժողովուրդի մասին արեւմտաեւրոպացիի մը համար պատկառելի գիտելիքներուն՝ երկիրի մը մասին, որը մինչեւ այդ անոնց համար բոլորովին անծանօթ է եղեր: Եւ ի վերջոյ անոնք ձեռնարկած են ներկայ գիրքին հրատարակութեանը, որուն մէջ կը պատմեն իրենց կուտակած գիտելիքներն ու ապրումները: Այդ կերպ կը նկարագրէ գիրքին նախաբանին մէջ յայտնի գուիցերացի հայագէտ Հանս-Լուքաս Քիզեր այդ աշխատութեան ստեղծումին պատմութիւնը:

Հեղինակներուն մարդասիրական մղումները պատճառաբանած են անոնց մօտեցումներուն, քննարկումներուն ու դիտարկումներուն տեսանկիւնը եւ առանձնայատկութիւնները: Անոնց նշուած մղումներու էութիւնը եւ

անկեղծ հետաքրքրությունը ու համակրանքը Հայաստանի ու Հայերու հանդեպ ինքնին մեծ դրուատանքի արժանի են: Այնուհանդերձ կը վկայէ այդ աշխատությունը նաեւ արեւմտաեւրոպացիներու կողմէ Հայաստանի ընկալումին բաւական նեղ սահմաններ՝ երկիրի մը, որը բաւական օտար է անոնց համար, հանդիսանալով օտարոտի հոգեւոր տարածութիւն մը՝ օտար ասանդոյթներու, բարքերու ու վարքերու տէր մշակութային ոլորտ մը, մարդկային բոլորովին այլ վարուելակերպ ու նկարագիր մը:

Իմ դիտարկումս կը կեդրոնանայ այն գլուխներուն վրայ, զորս գրած է Ամալիա վան Խենթը, քանի որ անոնք կը լուսաբանեն Հայաստանի քաղաքական ու մշակութային ոլորտը: Անոր քննարկումսն ու վերլուծումը կը կազմեն սոյն գիրքին հիմնական արժէքը եւ հետաքրքրութեան կորիզը: Իսկ իմ քննարկումս բաւական քննադատական պիտի ըլլայ, քանի որ շահագրգռուած եմ այս թեմային ճիշդ լուսաբանում մը տալու գործով:

Ամալիա վան Խենթի գլուխներ-յօդուածները նուիրուած են առաջին հերթին Հայաստանի նոր ու նորագոյն պատմութեան լուսաբանումին, անոր քննարկումներու կիզակէտին կը գտնուին Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, ինչպէս նաեւ քաղաքական եւ ընկերային վերիվայրումները նորանկախ Հայաստանի Հանրապետութեան մէջ: Ամալիա վան Խենթը կը սկսի բազմանշան խորագիր կրող գլուխով մը՝ «Արարատ լեռը միայն մեզի կը պատկանէ...»: Չակերտները հոս երկակի իմաստ ունին. անոնք կը մատնանշեն մեջբերումի մը պարագան, ասկէ զատ անոնք կ'ակնարկեն հետեւեալ մտքին՝ մեջբերուած արտայայտութիւնը Հայերէ կը բխի, իսկ հեղինակը կը մեջբերէ զայն առանց անոր իմաստին հետ համամիտ ըլլալու: Այդպիսի տպաւորութիւն մը երթալով աւելի ու աւելի կը խորանայ: Ի մասնաւորի քանի մը տող ետք, երբ նա կը գրէ. «Անոնք (Հայեր – Ա. Պ.) «Մասիս» կը կոչեն իրենց «Մայր սարը», թէւ Արարատը արդէն վաղուց կը գտնուի հայկական տարածքէն դուրս. տարիներէ ի վեր Թուրքիոյ հարաւարեւելքն է՝ Քիւրտերու բնօրրանին մէջ» (էջ 16): Մեջբերուած նախադասութիւնը կը պարունակէ երկու ծանրակշիռ սխալ. նախ «Թուրքիոյ հարաւարեւելք» հասկացողութիւն, իսկ յետոյ՝ «Քիւրտերու բնօրրանը»:

Ամալիա վան Խենթի նման հեղինակէ մը, որը Հայաստանի պատմութեան բաղդատաբար զգալի գիտելիքներու տէր մարդ է, սոյն հասկացութիւններու, ինչպէս նաեւ հետագային բազմիցս օգտագործուող նման եզրի՝ «Արեւելեան Անատոլիա» գործածութիւնը բաւական տարօրինակ կը թուի (մեղմ ըսած): Նշեալ հասկացողութիւնները ոչ միայն ոչ ճշգրիտ, այլ սկզբունքօրէն սխալ եւ առաւել էւս՝ դատապարտելի են: Արեւմուտքի մէջ գործածուող Փոքր Ասիոյ աշխարհագրական քարտէսներուն վրայ. մանաւանդ ֆիզիկական աշխարհագրութեան վերաբերող՝ յաճախ կը հանդիպինք «Հայաստան» կամ «Հայկական Լեռնաշխարհ» մակագրութեան, որը ամբողջ պատմական Հայաստանի տարածքը կ'ընդգրկէ: «Արեւելեան Թուրքիա» կամ «Արեւելեան Անատոլիա» հասկացողութիւնները կը ծագեն քաղաքականա-

պէս (հակահայ) պայմանաւորուած թրքամէտ բառային գործածութենէն, որը, ցաւօք սրտի, նաեւ Արեւմուտքի մէջ յաճախ անքննադատ կերպով կը իւրացուի՝ ըստ տիրող «քաղաքական պատշաճութեանը» («political correctness»), արեւմտեան մտածելակերպին խիստ բնորոշ «խոհեմ» գործնապաշտութեան՝ *պրագմատիզմի*: Սակայն Ամալիա վան Խենթին նման լրագրողէ մը կ'ակնկալուէր պատմականօրէն եւ աշխարհագրականօրէն շատ աւելի ճշգրիտ եզրը, այսինքն՝ «Արեւմտեան Հայաստան»ը:

Երկրորդ կոպիտ սխալը՝ «Քիւրտերու բնօրրանը». ինքնին բոլորովին ակնյայտ է եւ կը մատնանշէ հեղինակին անգրագիտութիւնը Միջին Արեւելքի պատմութեան, աշխարհագրութեան ու ազգագրութեան վերաբերեալ: Մասնագէտներուն համար քաջ յայտնի է, թէ Քիւրտերու՝ որպէս իրանական ծագում ունեցող ցեղախումբի՝ բնօրրան-նախահայրենիքը Արարատէն բաւականաչափ հեռու գտնուող Զագրոս լեռնաշխարհին մէջ կը գտնուի, այսինքն՝ ներկայ Իրանի Իսլամական Հանրապետութեան հարաւ-արեւմուտքը: Մասիս սարը ատոր հակառակ կը գտնուի Հայկական Լեռնաշխարհի միջին արեւելեան մաս կազմող տարածքին վրայ, Վանայ լիճէն ոչ հեռու: Իսկ Վանայ լիճը կը հանդիսանայ Հայ ժողովուրդի բնօրրանը, Հայկական Լեռնաշխարհի կորիզը՝ Ուրարտու-Արարատ հնագոյն հայկական պետութեան, հետագային միջնադարեան Հայաստանի Վասպուրական փառաւոր թագաւորութեան սիրտը: Թէեւ այսուհետեւ Ամալիա վան Խենթ կը հաղորդէ. «Արարատին շուրջ հայկական, քիւրտ ու թուրք մշակութային ոլորտները աշխարհագրականօրէն կը շերտաւորուին: Ինչպէս Հայերը, այնպէս ալ Քիւրտերն ու Թուրքերը իրենց սեփական կամ ընդհանուր պատմութեան կարեւոր դրուագները կը կապեն այս լեռան հետ: Սակայն այս լեռը իր շուրջ բնակող ժողովուրդները չի միացներ՝ անցեալի ստուերները, մանաւանդ Առաջին աշխարհամարտի հետ կապուած յուշերը, երբ երիտթուրքերու կողմէ յանձնարարուած էր ողջ Հայութեան տեղահանութիւնը եւ աքսորը դէպի Սուրիոյ անապատները, մինչեւ օրս կենդանի են, անոնք միշտ առկայ են: Հայերու համար այս տեղահանութիւնը, որու ընթացքին աւելի քան մէկ միլիոն մարդ սարսափելի ձեւով նահատակուել է, կը հանդիսանայ քսաներորդ դարու առաջին մեծ ցեղասպանութիւնը» (էջ 16): Այսպէս Ամալիա վան Խենթ կ'ընդունի այն փաստը, թէ Արարատ լեռը, ներկայիս Թուրքիոյ պետական սահմաններէն ներս գտնուելով հանդերձ, այնուամենայնիւ Հայերու Հայրենիքին կը պատկանէ: Սակայն հեղինակը կը պնդէ թէ նշեալ տարածաշրջանը ո'չ միայն Հայերու, այլ նաեւ Քիւրտերու եւ Թուրքերու *Հայրենիքը* կը հանդիսանայ: Ան յամառօրէն կը պնդէ նաեւ, թէ թուարկուած ժողովուրդները, երեքն ալ անխտիր, հաւասար իրաւունքներու տէր են այս տարածաշրջանին վերաբերեալ: Ամալիա վան Խենթ կը խօսի «քիւրտ ու թուրք մշակութային միջավայրին» մասին, սակայն ան պէտք է գիտակցէր, թէ այսօրուան Թուրքիոյ այս արեւելեան տարածքին վրայ ո'չ Քիւրտերը եւ ո'չ ալ Թուրքերը ռեւէ մշակութային արժէքներ չեն ստեղծած:

Ընդհակառակը՝ Թուրքերը որպես Կեդրոնական Ասիոյն ներխուժած վայրենի ու բարբարոս օտար հորդաներ աւեր ու կողոպուտ սփռեցին Փոքր Ասիոյ ողջ տարածքին վրայ, թալանելով, սպաննելով ու բռնաբարելով բնիկ հնագոյն ժողովուրդները՝ Հայերը, Ասորիները, Յոյները: Միջնադարուն Փոքր Ասիա ներխուժած, թուրք ցեղերը աւերած են նշեալ ժողովուրդներու հազարամեայ ու բարձր զարգացում ապրած մշակոյթը: Հազարամեայ հայկական տաճարները անոնք վերածած են մզկիթներու եւ ախոռներու կամ ընդհանրապէս հիմնայատակ ըրած են: Իսկ Քիւրտերը՝ անասնապահ, վաչկատուն ու թափառական իրանալեզու ցեղային խումբեր («աշիրէթ»), ներթափանցած էին Հայկական Լեռնաշխարհի շատ աւելի ուշ ժամանակներու ընթացքին: Արդի եւ թուրք, եւ քիւրտ արհեստը, ի մասնաւորի գորգագործութիւնը, ինչպէս նաեւ պարարուեստը, խոհանոցը, հիմնուած են հայկական աստիճաններուն վրայ, զորս Թուրքերն ու Քիւրտերը (վերջինները՝ նուազ աստիճան) կ'ուրանան: Հայ, թուրք ու քիւրտ մշակութային միջավայրերուն որպէս հաւասար նշանակութիւն եւ արժէք ունեցող երեւոյթներուն մասին գրելը կը համարեմ ո՛չ միայն ոչ ճշգրիտ, այլ՝ որպէս Ամալիա վան Խենթի լրագրական անգրագիտութեան վկայական մը: Տարօրինակ կը թուի նաեւ անոր հետեւեալ արծարծումը. ան կը գրէ, թէ նշեալ տեղահանութիւնը «անըմբռնելի ռազմական ոճիր մը կը հանդիսանայ», սակայն նոյն տեղը ան կը խորհրդածէ «նախկին զոհ» Հայերու եւ «նախկին յանցագործ» Թուրքերու ու Քիւրտերու միջեւ հնարաւոր ու ցանկալի հաշտութեան մասին (էջ 16-17): Ըստ երեւոյթին, հեղինակը նկատի ունի հաշտութիւն մը առանց որեւէ հատուցումի, քանի որ վերջինիս մասին խօսք անգամ չկայ: «Նախկին» բառը կը մատնանշէ այս հեղինակին բնորոշ յարաբերականացումի միտում մը: Արդեօ՞ք հնարաւոր է Հայութեան մասին որպէս «նախկին զոհ»ի խօսիլ: Իսկ բազմամիլիոննոց Հայկական Սփիւռքին գոյութիւնը եւ ճակատագիրը արդեօք զոհի այժմեական վիճակի վառ ապացոյց մը չի՞ հանդիսանար: Ամալիա վան Խենթի մտքով իսկ չ'անցնիր պատկերացում մը, գաղափար մը, ըստ որուն այդ Սփիւռքը, որը աշխարհի չորս կողմ կ'ապրի, իրաւունք ունի ետ ստանալու իր բռնագրաւուած ընդարձակ երկիրը եւ ունեցուածքը «Արեւելեան Անատոլիա»յի մէջ: Այդ տեսակի մտածելակերպի պատճառներուն եւ կ'անդրադառնամ իմ գրախօսականիս վերջը, իսկ հիմա պիտի շարունակենք հետեւիլ Ամալիա վան Խենթի շարադրանքին:

Նախքան իր գլխաւոր նիւթին՝ Հայոց Յեղասպանութեան թեմային անցնիլը, ան կը կատարէ քանի մը հպանցիկ շեղումներ դէպի Հայոց պատմութեան ասպարէզ. ի մասնաւորի ան կ'անդրադառնայ քրիստոնէութեան որպէս պետական կրօնք հռչակումին ու գիրերու գիւտին կարեւորագոյն իրադարձութիւններուն: 1877-1878 թուականներու Ռուս-թուրքական պատերազմի պարագան շոշափելով՝ ան կը մատնանշէ, թէ անոր իբրեւ արդիւնք Ռուսաստանի կողմէ նուաճուած «հիւսիս-արեւելեան Անատոլիոյ» Պաթում-Կարս-Արտահան ընդգրկող տարածքը մաքրուեցաւ մինչ այդ հոն

բնակող մահմետականներէ, որոնք վտարուեցան ու ստիպուած էին եղեր դէպի Օսմանեան կայսրութեան արեւմտեան շրջանները փախչիլ (էջ 21): Այդ մանրամասնութիւնը իր այս մեկնաբանութեամբ շատ բան կը խօսէ Ամալիա վան Խենթի մտածելակերպին մասին: Այնուամենայնիւ, անոր այս պատմական ակնարկին կից գետեղուած է նաեւ պատմական Հայաստանի քարտէս մը, որմէ յստակօրէն կ'երեւայ՝ թէ որո՞ւն կը պատկանէին խնդրոյ առարկայ տարածքները:

Յաջորդ դրուագին մէջ՝ «Յեղասպանութիւն որպէս բացարձակ, անըմբռնելի բեկում», Ամալիա վան Խենթ ահա կ'անդրադառնայ իր կեդրոնական թեմային՝ Հայոց մեծագոյն ազգային ողբերգութեանը: 1915-1916 թուականներու Մեծ Եղեռնի պատմութիւնը ան կը ներկայացնէ բաւական ճշգրիտ, ցոյց տալով անոր դրդապատճառներն ու ընթացքը՝ իր գլխաւոր դրուագներով, ինչպէս նաեւ հետեւանքներով: Իր շարադրանքին մէջ ան չի խուսափիր թրքական ամենէն սահմակեցուցիչ դաժանութիւններուն նկարագրումէն: Այս եւ յաջորդ հատուածին մէջ հեղինակը կը բնութագրէ ու կը դատապարտէ Մեծ Եղեռնը միանշանակ ու յստակ որպէս Թուրքիոյ կողմէ ծրագրուած ու համակարգուած կերպով իրագործուած ցեղասպանութիւն: Տուեալ ժամանակաշրջանի պատմութեան ներկայացումի բացթողումներէն կը նշեմ սուլթան Ապտիւլ Համիտի իշխանութեան օրօք տեղի ունեցած 1894-1896 թթ. Հայկական կոտորածներու մասին ոեւէ տեղեկութեան բացակայութիւնը: Կը բացակայի նաեւ ոեւէ տեղեկութիւններ Արեւմտահայութեան ազգային-ազատագրական շարժումին մասին՝ հայկական կուսակցութիւններու գործունէութեան, ինչպէս նաեւ հայ ֆետայիներու զինեալ պայքարի վերաբերեալ: 1890-ական թուականներու Հայերու կոտորածները կը յիշուեն աւելի ուշ՝ Հայոց Յեղասպանութեան մէջ Քիւրտերու դերի կապակցութեամբ, սակայն Հայ գոհերու թիւը հոն կը սահմանուի որպէս 100.000, մինչդէռ յայտնի է, թէ ճիշդ թիւը երեք անգամ աւելի բարձր է: Ատկէ զատ պէտք է նշուած ըլլային նաեւ Կիլիկիոյ մէջ 1909ի հայկական կոտորածները (Ատանայի ջարդը եւ այլն), որոնց զոհ գացած են աւելի քան 30.000 Հայեր՝ փաստ մը, որ ընդհանրապէս անտեսուած է հեղինակին կողմէ: Կարելոր բացթողումներէն է նաեւ քեմալական ժամանակաշրջանի ընթացքին շարունակուող Հայոց Յեղասպանութեան փաստի անտեսումը: Մինչդէռ Հայոց պատմութեան հանրայայտ փաստերէն են նաեւ 1918-1923 թուականներուն Արեւելեան Հայաստան՝ նոյնիսկ Արցախ (1920 թ. Շուշիի ջարդը) ու Պարսկահայք ներառեալ՝ ներխուժած թուրքական բանակներուն կողմէ իրագործած ջարդերը, որոն հետեւանքով զոհ գացած է մօտ 200.000 հայ խաղաղ բնակչութիւն: Այդուամենայնիւ կը կարծեմ, որ, ընդհանուր առումով, Հայոց Յեղասպանութեան մասին Ամալիա վան Խենթի գրածը (գլուխ առաջին՝ «Միայն մերն է Արարատը») քննարկուող գիրքին ամենէն տպաւորիչ ու ճշգրիտ դրուագներէն է: Սակայն հոս ալ հեղինակը կը խուսափի Թուրքիոյ կողմէ հատուցումին մասին ոեւէ մտորում կատարելէ, ընդհակառակը՝ ան ակնյայտ

հեզնանքով կը գրէ Հայերու «իրենց» Արարատի ու «իրենց» պատմական Արեւմտեան Հայաստանի մասին՝ միայն չակերտներու մէջ: Իսկ այս գլուխին վերջը, Հայաստանի Հանրապետութեան պետական զինանշանին մէջ ամփոփուած Արարատի ուրուագիծին մասին գրելով, ան կը պնդէ նոյնիսկ թէ այսպէտով Հայերը «ստուերային կոիւներ» կը մղեն լոկ յանուն խորհրդանիշերու (էջ 47): Ըստ Ամալիա վան Խենթի, Հայերը այդպիսի կոիւները պիտի շարունակեն այնքան ատեն, որքան «անոնց նախնիներու հանդէպ գործուած անհաւոր մեղքը Թուրքերը քաւած չըլլան» (էջ 47): Սակայն, հեղինակը չէ մատնանշած, թէ այդ քաւութիւնը ո՞ր ձեւի պէտք է ըլլայ Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան պաշտօնական ճանաչումի ու լոկ բանաւոր կերպ Հայութենէն ներողութիւն հայցումի՞, թէ՞ նիւթական որեւէ շօշափելի փոխհատուցումի ձեւաչափով՝ դրամական կամ (եւ) հողային՝ Արեւմտեան Հայաստանի տարածքներու վերադարձի եղանակով: Նման ճշդումներ բացակայ են ոչ պատահաբար: Յաջորդ գլուխին սկիզբը՝ «Նոր ժամանակաշրջան մեկնիլը», հեղինակը այդ խնդրին վերաբերեալ իր կարծիքը կը բացայայտէ, երբ որ ան «Արարատ լեռնէն դէպի արեւմուտք տարածուող Հայերու *ընդ միշտ* կորսուած Հայրենիք»ին մասին կը գրէ (թաւատառ ընդգծումը իմս է – Ա. Պ.):

Ամալիա վան Խենթի շարադրանքի լաւագոյն էջերուն շարքին կը մատնանշեմ ներկայ Թուրքիոյ կողմէ Քիւրտերու հանդէպ դաժան հալածանքի, ինչպէս նաեւ ծպտեալ Հայերու եւ Հայոց Յեղասպանութեան ժխտումի խնդիրներուն մասին գրածները (տե՛ս «Արարատ լեռան ցատումը», «Սուրէն մագապուրծ ճողոպրածներու պատմուածքները» եւ «Պատմութեան թուրքական տեսակետը» դրուագները): Խիստ ողջունելի է նաեւ հեղինակին գծած զուգահեռները 1915 եւ 2015 թուականներուն միջեւ՝ Թուրքիոյ կողմէ գործած Հայոց Յեղասպանութեան եւ մեր օրերուն Սուրիոյ եւ Իրաքի մէջ արհիւսարբու «Իսլամական պետութեան» ցուցաբերուող անոր բազմակողմանի ու գործօն յանցաւոր օժանդակութեան միջեւ:

Ամալիա վան Խենթ իր յաջորդ գլուխներուն մէջ կը նկարագրէ Հայաստանի նորագոյն պատմութիւնը՝ իր հիմնական գիծերով ու զարգացումներով. խորհրդային ժամանակաշրջան (որը սակայն բաւական հպանցիկ կերպ շօշափուած է), Ղարաբաղեան շարժումը, 1988-ի անհաւոր երկրաշարժը, անկախութեան անակնկալ պարզելը՝ Խորհրդային Միութեան փլուզումէն որպէս հետեւանք, Արցախեան պատերազմը եւ քաղաքական ու ընկերային վերիվայրումները նորանկախ Հանրապետութեան մէջ ընդհուպ մինչեւ մեր օրերը: Սակայն անտեսուած են այնպիսի կարեւոր դրուագներ, ինչպիսիք են 1920ի Հայ-թուրքական պատերազմը, Առաջին Հանրապետութեան խորհրդայնացումի բարբարոս միջոցները, ատոր դէմ ազգային դիմադրութիւնը (Գարեգին Նժդէհի գործունէութիւնը, Լեռնային Հայաստանի դրուագը), ստալինեան ճնշումները: Այս շարադրանքին մէջ հեղինակը կրկին կը մատնանշէ «Արարատէն արեւմուտք ընկնող *ընդ միշտ* կորսուած Հայրենիք»ին հանգամանքը (էջ 50): Այդ յամառ կրկնութիւնը իմ մէջ կը յառաջացնէ

այն տպաւորութիւնը, թէ Ամալիա վան Խենթ ամբողջ աշխարհը, եւ առաջին հերթին Հայերը, կ'ուզէ համոզել, թէ Արեւմտեան Հայաստանը անոնց համար իրօք ընդ միշտ կորսուած է: Նշեալ շարադրանքն իր հերթին անճիշդ ձեւակերպումներէ գերծ չէ. Առաջին Հայկական Հանրապետութեան խորհրդայնացումին որպէս մեկնակետը նշուած է 1922 թ., մինչդեռ ճիշդ կ'ըլլար՝ 1920 Դեկտեմբեր 2, երբ իշխանութիւնը կը յանձնուի Յեղկոմին: Ըստ երեւոյթին, հեղինակը շփոթած է Խորհրդային Միութեան հիմնումի թուականը Հայաստանի խորհրդայնացումի սկիզբին հետ: Համապատասխան անճշգրտութիւններ կը պարունակէ ժամանակագրական աղիւսակը՝ գիրքին յաւելումս ձին մէջ:

Ատոր հակառակ նորագոյն պատմութեան մասին դրուագները՝ ի մասնաւորի Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութենէն, գրուած են բաւական ճշգրիտ ու համոզիչ կերպով: Զգալի է որ այս թեմայի մշակումին ընթացքին հեղինակը հայաստանցի բանիմաց խորհրդատուներու օժանդակութիւնը վայելած է (տե՛ս «Տնտեսութեան անկում» խորագրուած գլուխը): Սակայն, «Ղարաբաղ» կոմիտէէն մինչեւ «Ղարաբաղ Կուսակցութիւն» խորագրուած գլուխին մէջ հեղինակը կը ներկայացնէ ոչ ճշգրիտէն մինչեւ բոլորովին սխալ գնահատականներու եւ պնդումներու ընդարձակ շարան մը: Այդ տխուր երեւոյթը ի յայտ կու գայ առանձնապէս հեղինակին նորանոր պատմագրական շեղումներուն պարագային, որոնց առիթը արդի Հայաստանի Հանրապետութեան երկրորդ խոշորագոյն քաղաքի՝ Գիւմրիի պատմութիւնը կը հանդիսանայ: Հայաստանի XIX դարու կէսերէն մինչեւ XX դարու սկիզբը տարածուող պատմութեան մէջ հեղինակին կողմէ կատարուած շեղումները պատճառ կը դառնան շարադրանքին աւելորդ ու վնասակար փշրումին՝ երբ Արցախեան շարժումին նկարագրութիւնը սոյն գլուխին հիմնական թիրախը յայտարարուած է:

Այդ շեղումներուն կարեւորագոյն սխալ արժեւորումներէն կը մատնանշեմ հետեւեալը. Ամալիա վան Խենթ կը պնդէ, թէ 1877-1878 Ռուս-թուրքական պատերազմէն ետք Ռուսները իբրեւ թէ սկսած էին Կարսի նահանգի «բնիկ» մահմետական բնակչութիւնը արտաքսել եւ անոնց տեղը «քրիստոնեայ ժողովուրդներ» բնակեցնել, այդուհանդերձ, այս վերջիններուն ազգային պատկանելիութիւնը չի յստակեցնէր (էջ 112): Նման նկարագրութիւն մը առնուազն ոչ ճշգրիտ է, որովհետեւ Կարսը պատմական Հայաստանի սիրտը կը հանդիսանայ, Մեծ Հայքի պատմական Այրարատ նահանգի ճիշդ կեդրոնը, ուստի սկզբունքօրէն սխալ է «տեղացի» կամ «բնիկ» կոչել Հայերէն դուրս ունէլ այլ ազգաբնակչութիւն: Սակայն, «ազգերու պատմական իրաւունք»ի հասկացողութիւնը այնպիսի գաղափար մըն է, որ ըստ երեւոյթին Ամալիա վան Խենթի համար գոյութիւն չունի: Այդ մասին կը վկայէ անոր ողջ շարադրանքը սոյն գիրքին մէջ: Քննարկուող գլուխին մէջ նորէն կը հանդիպինք հեղինակին կողմէ բնիկ Հայերու եւ օտար, եկուոր մահմետական ցեղերու հանդէպ կիրառուող հաւասարումի միտումներուն՝ թե՛ իրենց որակին եւ թե՛

պատմական իրաւունքներուն կշռումին առումով: Ըստ Ամալիա վան Խենթի, քրիստոնեայ Հայերը եւ մահմետական Թուրքերը, Քիւրտերը կամ Պարսիկները պատմական Հայաստանի տարածքին հանդէպ հաւասար իրաւունքներ կ'ունենան, աւելի՛ն՝ մահմետականները աւելի ծանրակշիռ իրաւունքներու տէր ժողովուրդներն են, քանի որ անոնք այդ տարածքին վրայ ներկայիս կ'ապրին, իսկ Հայերը այս նոյն տարածքը (իմա՝ ողջ Արեւմտեան Հայաստանը) «ընդ միշտ կորսնցուցած են» որպէս Հայրենիք: Այդ արատաւոր տրամաբանութենէն մեկնելով, մենք անխուսափելիօրէն պիտի գանք հետեւեալ եզրակացութեան. քանի որ Հայերը «ընդ միշտ կորսնցուցեր են», ուստի անոնց ոեւէ պահանջատիրութիւն այս հարցին մէջ կը նշանակէր սոսկ «ստուերներու դէմ պայքար» մը, Տօն Քիշոթի մը նման «հողմադացներու դէմ» զաւեշտալի կոիւ մը: Նշեալ տրամաբանութենէն մեկնելով Ամալիա վան Խենթ կ'ափսոսայ ու կը ցաւի, թէ Առաջին աշխարհամարտէն ետք քննարկուող տարածաշրջանին, ի մասնաւորի Գիւմրիի մէջ, «բազմազգ կեանքը այլեւս գոյութիւն չունի», մինչդեռ նախքան նշեալ աշխարհամարտը ցարական կայսրութեան այս տարածաշրջանին մէջ «*բոլորովին իրար հետ խառնուած*» կ'ապրէին Վրացիներ, Հայեր, ինչպէս նաեւ թրքալեզու եւ իրանալեզու մահմետականներ» (էջ 115) (ընդգծումը իմս է – *Ա. Պ.*): Արեւմտեան Հայաստանի Արդահան եւ Արդուին քաղաքները ան կ'անուանէ «վրացական» (էջ 116), իսկ Արեւմտեան Հայաստանի այն տարածքը, որը ըստ 1919ի Փարիզի պայմանագրին պիտի կցուէր Հայաստանի Հանրապետութեան՝ «ներկայ Թուրքիոյ արեւելեան կէս»ը: Իսկ «Արեւմտեան Հայաստան» հասկացողութիւնն ընդհանրապէս չի յիշուիր: Սեւրի դաշնագրի պատմութիւնը հպանցիկ կերպով շօշափելով՝ Ամալիա վան Խենթ լրիւ կ'անտեսէ անոր մէջ նաեւ անկախ Քիւրտիստանի նախագիծը (Վուտրօ Ուիլսընի «իրաւարար վճիռը»): 118-րդ էջին մէջ ան կը յիշէ ի վերջոյ «Արեւմտեան Հայաստան» հասկացողութիւն, սակայն չակերտներու մէջ եւ նորէն «ընդմիշտ կորսուած» եզրի յաւելումով: Քիչ մը ետք հեղինակը կը պնդէ, թէ Թուրքիոյ հետ ներկայ Հայաստանի Հանրապետութեան սահմանը միակ սահմանը կը հանդիսանայ, որ զայն կը կապէ **արեւմտեան** աշխարհի հետ, կարծես թէ Թուրքիան Արեւմուտքին անբաժան մաս մը կը կազմէր, կամ անոր տարածքը Հարաւային Կովկասն ու Արեւմտեան Եւրոպան կապող հանդարտ ու ներդաշնակ ցամաքային կամուրջ մը կը հանդիսանար:

«Պատմութիւն որպէս խոչընդոտ» խորագրուած յաջորդ դրուագը նուիրուած է Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ ցանկալի հաշտեցման թեմային: Հոս ալ, ինչպէս ասոկէ առաջ, հեղինակը կը շրջանցէ փոխհատուցումի հարցը: Այս դրուագին մէջ Ամալիա վան Ամալիա վան Խենթ «անկողմնակալ» ու պաղարիւն կերպով կը նկարագրէ Թուրքերու ընկալումը Հայերու կողմէ որպէս յաւերժ թշնամին, «սարսափազդու Թուրքը»՝ իբրեւ թէ իրականութիւնը այլ ըլլար եւ այդ ընկալումը ճիշդ չըլլար: Իբրեւ թէ նաեւ մեր օրերուն իրականութիւնը այլ ըլլար եւ ներկայ Թուրքիան մոլեռանդ եւ բոլոր

առումներով բարբարոս հակաքրիստոնեայ «Իսլամական պետութեան» ամենագործուն դաշնակիցներէն եւ օժանդակողներէն չըլլար: Մինչդէռ նաեւ Արեւմտեան Եւրոպայի մէջ բաւականաչափ յայտնի է, թէ ի՞նչ վայրագութիւններ եւ անասելի յանցանքներ կը կատարեն այս մոլեռանդ իսլամականները, ներառեալ թուրք եւ ազերի վարձկաններ, Սուրիոյ մէջ քրիստոնեաներուն եւ յատկապէս Հայերուն հանդէպ: Հոս բաւական է յիշեցնել միայն Տէր Զօրի հայկական յուշահամալիրին պղծումն ու կործանումը, Քեսապի Հայութեան նպատակասլաց վտարումը, կողոպուտը եւ սպանութիւնները: 1992 թուականին սկսեալ Հայ-թուրքական մերձեցումի փորձերը («ֆուրպուլայի» դիւանագիտութիւն») նկարագրելիս Ամալիա վան Խենթ կը գործէ քանի մը ծանրակշիռ սխալ գնահատականներ եւս: Ան կը պնդէ, թէ 1992ի Հայաստան-Թուրքիա բանակցութեանց որպէս արդիւնքներէն մէկը ներկայ հայ-թուրքական սահմանն արձանագրուեցաւ իբր հայկական կողմէ պաշտօնապէս ճանչցուած պետական սահման (էջ 122):

Աւելի անդին, այս կարծեցեալ հայագետը կը յանդգնի պնդել, թէ Հայերը Արցախեան պատերազմի ընթացքին «Լեռնային Ղարաբաղէն դուրս գտնուող զուտ ազերպայճանական տարածքներ» նուաճեր են, իսկ տեղի ազերի խաղաղ բնակչութիւնը անգութ կերպով արտաքսեր են (էջ 123): Բաւական խօսուն կը թուի այդ կապակցութեամբ հետեւեալ խորագիրը. «Սեփական պատմութեան մէջ բանտարկուած», ուր Ամալիա վան Խենթ նկատի կ'ունենայ նոյնիսկ Հայերը (՝): Ատկէ ետք, ան կը գրէ Արցախեան պատերազմին մէջ հրադադարի կայացումին Մոսկուայի խաղաղարար առաքելութեան մասին. «1994 թ. Մայիսին Մոսկուան կրցաւ Ազերպայճանի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ հրադադար մը կայացնել»: Այնուհանդերձ հեղինակը կ'անտեսէ, որ հայկական կողմը այս պատերազմէն դուրս ելած է որպէս յաղթական, իսկ Ազերպայճանն էր, որը պատերազմը սկսած էր եւ ջախջախիչ պարտութեան որպէս հետեւանք հրադադարի հաստատումը Հայերէն աղերսած էր: Քննարկուող գլուխին վերջը, Ամալիա վան Խենթ անգամ մը եւս կը պնդէ, թէ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզէն դուրս գտնուող ազատագրուած պատմական հայկական շրջանները բուն ազերպայճանական տարածքներ կը հանդիսանան: Այդ գլուխին շարադրանքը ան կ'եզրափակէ գիւմրեցի ոմն Ալեքսան Տէր-Մինասեանի խօսքերով. ինք, ինչպէս նաեւ այդ քաղաքի իբր թէ շատ բնակիչներ, կը պարծենայ այն փաստով, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութեան օրօք Հայաստանը «յանդգնեցաւ սկզբունքային քայլ մը ընել՝ **անցեալը ընդմիջտ թողուլ** եւ բոլորովին նոր, լաւագոյն դարաշրջան մը թեւակոխել» (էջ 129) (թաւատառ ընդգծումը իմս է – Ա. Պ.): Հեղինակը չափազանց ողջունելի կը գտնէ այսպիսի դիրքորոշում մը: Սակայն ան կը մոռնայ գլխաւոր ճշմարտութիւններէն մին՝ սեփական անցեալը, պատմութիւնը ոչ ոք ի վիճակի է մոռնալու, եւ չի կրնար մոռացութեան մատնել, «թողուլ»: Պատմութեան յիշողութիւնն է, որը, ինչպէս անհատի մը, նոյնպէս ամբողջ ազգի մը

հաւաքական յիշողութիւնն ու նկարագիրը կը հանդիսանայ. ան կը կազմէ իւրաքանչիւր ժողովուրդի ազգային գաղափարի անքակտելի բաղադրիչ մաս մը: Հայ ժողովուրդի պարագային այս հաւաքական յիշողութիւնն առաւել եւս կարեւոր է, քանի որ այս ազգը պատմութեան դաժան ճակատագրի բերումով բիւր, դարաւոր տանջանքներով ու կորուստներով անցած է, իսկ իր նոր պատմութեան ընթացքին ահաւոր ազգային ողբերգութիւն մը ապրած է՝ 1894-1923 թուականներու Հայոց Ցեղասպանութիւնը: Որպէս հետեւանք, Հայութիւնը կրեց անհամար կորուստներ՝ մարդկային, նիւթական, տարածքային, մշակութային, ինչպէս եւ ահաւոր հոգեբանական վնասներ: Հայութիւնը կորսնցուց իր կենսական տարածաշրջանի՝ Հայկական Լեռնաշխարհի իննսուն առ հարիւր: Սեփական անցեալը «թողնելու», այսինքն՝ մոռացութեանը մատնելու կոչերը ոչ այլ ինչ են, քան սեփական ազգային նկարագիրը եւ իրաւունքը մոռնալու կոչեր, արդար ազգային պահանջատիրութենէն հրաժարիլ: Պիտի յիշեցնենք որ Հայ ժողովուրդի պարագային խօսքը 7 միլիոնոց Սփիւռքի մասին է: Անցեալը «թողուլ» եւ պահանջատիրութենէ հրաժարիլ կը նշանակէ այս ստուար պանդուխտ զանգուածին արդար իրաւունքներէն հրաժարիլ, զայն անդառնալի, վերջնական ուժացումի մատնել օտար ավերուն վրայ: Միւս կողմէ, այս «լաւագոյն դարաշրջան» թեւակոխումը կը նշանակէ Հայ, Յոյն եւ Ասորի ժողովուրդներուն դահիճին՝ յանցաւոր Թուրքիոյ փաստացի վարձատրում մը, պարգեւատրում մը. ան հանգիստ եւ առ յաւիտ կը վայելէ իր ահաւոր յանցաւորութեան պտուղները՝ առաջին հերթին Հայերէ, Ասորիներէ ու Յոյներէ բռնագրաւուած ընդարձակ տարածքներ: Այսօր ամբողջ աշխարհը թուրքական նորանոր վայրագութիւններուն վկայ է՝ այս անգամ Քիւրտ ժողովուրդին հանդէպ: Բայց, ըստ երեւոյթին, Ամալիա վան Խենթի նման հեղինակներուն համար այս ակներեւ դաժան իրականութիւնը եւ արդարութեան խնդիրը էական չէն: Հոս ամենայն յստակութեամբ անգամ մը եւս պիտի ընդգծեն. եթէ նա «անցեալը թողնելու» կեցուածքին մէջ կը տեսնէ Հայկական Հարցի արդար լուծումը, ապա այդ դիրքորոշումը կը նշանակէ, թէ ան փաստօրէն կը քաջալերէ թուրք դահիճներու ներկայ ժառանգները:

Քննարկուող դրուագին եզրափակիչ նախադասութեան մէջ, հեղինակը կը պնդէ, թէ Տէր-Պետրոսեանի հրաժարականով Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան գլուխ անցած կ'ըլլար այսպէս կոչուած «Ղարաբաղեան» կամ «Ռազմատենչ կուսակցութիւնը»: Այսպիսի տեսակէտէ ան կը դիտէ Հայաստանի քաղաքական զարգացումները նաեւ իր յաջորդ գլուխին մէջ, որ հետեւեալ խորագիր կը կրէ՝ «Նախկին գոհը կը դառնայ յանցագործ (՝)» Լեռնային Ղարաբաղին շուրջ առճակատում» (բացագանչումի նշանը իմս է – Ա. Պ.): Հոս Ամալիա վան Խենթ կը պատմէ Հայերու եւ Ազերիներու միջեւ տիրող *կոյր ատելութեան* մասին, իբրեւ թէ այդ ատելութիւնը դարաւոր դաժան պատմութեան մէջ արմատաւորուած չըլլար: Հոս հեղինակը կը հաւասարեցնէ յանցագործը եւ գոհը, աւելին՝ ան կը մեղադրէ Հայերը գոհի

իրավիճակէն յանցագործի դերը ստանձնելու յանցանքին մէջ, քանի որ անոնք անմեղ ազերի բնակչութիւնը իրենց Հայրենիքէն՝ Հայերու կողմէ «բռնագրաւուած ազերպայճանական շրջաններէն» վտարած եւ աւելի՛ն՝ սպաննած են: Ամալիա վան Խենթ կը կրկնէ ազերիներու քարոզչական սուտը Խոջալուի սպանդին մասին, որուն համար Հայերը կ'ամբաստանուին: Ան նորէն ու նորէն կը կրկնէ Հայերու կողմէ «բռնագրաւուած բուն ազերպայճանական տարածքներ» կեղծ եզրը՝ հանգամանք մը, որ ակնյայտօրէն կը ապացուցէ այս հեղինակին աղաղակող անգրագիտութիւնը Հայոց պատմութեան ու աշխարհագրութեան ասպարէզէն ներս: Այս անգրագիտութեան յաջորդ ապացոյցն ան կը ներկայացնէ քիչ մը ետք՝ պնդելով, թէ «Արցախ» անունը կը նշանակէ լոկ «այս տարածքին հին հայկական եկեղեցական անունը» (էջ 156): Սոյն կոպիտ սխալին բաղդատմամբ խորհրդային քաղաքական գործիչ Գորբաչովին «կովկասցի» անուանումը (էջ 155) որպէս զաւեշտալի կատակ մը կ'երեւի. ըստ երեւոյթին, Ամալիա վան Խենթ չէ կրցած զատորոշել Հիւսիսային Կովկասն ու Ստաւրոպոլը (Գորբաչովի հայրենիքը): Հոս պիտի նշեմ նաեւ անոր յաջորդ կոպիտ թիւրմբոնումները. Արցախեան պատերազմին մէջ Հայերը չակերտաւոր «յաղթող»ներ կը նկատուին, իսկ Բերձորի մօտ մատուռի մը կառուցումը ան կ'որակէ որպէս այս տարածքին «**այստուհեաւ** քրիստոնէայ բնոյթին խորհրդանշի մը հաստատում» (էջ 161): Քիչ մը ետք ան հեզնանքով կը գրէ «Արցախցիներուն արտասովոր ռազմական տաղանդի **առասպելի**» մասին (էջ 162) (թաւատառ ընդգծումները իմն են – *Ա. Պ.*): Ամալիա վան Խենթ լրիւ կ'անտեսէ Ազերիներու կողմէ Արցախի եւ Նախիջեւանի Հայութեան ճնշումին եւ արտաքսումին երկար պատմութիւնը, ընդհակառակը, ան կ'ողբայ Արցախի տարածաշրջանին նախկին բազմազգ-բազմամշակութային բնոյթին կորուստը (արեւմտաւերոպական քաղաքական բարբառով՝ Multikulturalismus, Multikulti):

Ի վերջոյ կը քննարկենք Ամալիա վան Խենթի վերջին գլուխը՝ «Սեղմուած Ռուսաստանին եւ Արեւմուտքին միջեւ»: Հեղինակը հոս կը նկարագրէ Հայաստանի զարգացումները Արցախեան պատերազմէն մինչեւ մեր օրերը՝ սակաւապետերու յառաջացումը, բնակչութեան մեծամասնութեան թշուառութիւնը, երկրի վերնախաւի խուսանաւումը աշխարհի ուժի կեդրոններու՝ Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ: Այս նկարագրութիւնը բաւական դիպուկ է կատարուած եւ կարիք չկայ անոր անդրադառնալու: Այստուհանդերձ պէտք է մատնանշենք հեղինակին հետեւեալ սկզբունքային սխալները:

Ա) Ան կը դատապարտէ Լեոնային Ղարաբաղի անկախութեան «միակողմանի հռչակումը»՝ անտեսելով առ նուազն մէկ նախադէպ, որ բարեհաճօրէն ճանչցուած է Արեւմուտքին կողմէ՝ Քոստովոյի անկախութեան նոյնպէս միակողմանի հռչակումը:

Բ) Համիտեան կոտորածները ան կը տեղադրէ 1896-1898 թուականներուն միջեւ եւ անոնց զոհերուն թիւը նորէն կը սահմանէ որպէս 100.000 (էջ 182),

իսկ ճշմարտությունը կը վկայէ 1894-1896 թուականներուն ու 300.000 զոհերուն մասին:

Գ) Հայաստանի այժմու Հանրապետութեան երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի դիմադրությունը ազերայաճանական ռազմական սպառնալիքին Ամալիա վան Խենթ կ'որակէ որպէս չափազանցուած ու նոյնիսկ դատապարտելի, քանի որ ատոր միջոցաւ հնարաւոր դարձաւ Ռուսաստանի վերադարձը Հարաւային Կովկաս: Այնպէս կը թուայ, թէ այս հեղինակը տեղեակ չէ ազերայաճանական պետականօրէն ամրագրուած քաղաքական ուսմունքին, ըստ ուրուն Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ Հայութիւնը գոյութեան իսկ իրաւունքէն զուրկ է: Ըստ այդ ուսմունքին Ազերայաճանը պատմական իրաւունքի յաւակնութիւն կը վերապահէ նաեւ ներկայ Հայաստանի Հանրապետութեան ողջ տարածքին նկատմամբ, որը ան կը դիտէ որպէս «բռնագաւթած ազերայաճանական հողեր»: Այդ ոգով կը կրթութի ազերի բնակչութիւնը, իսկ նշեալ ոգին հէնց ոչ այլ ինչ է, քան կոյր, ոչ արդարացուած հայատեացութիւն: Ըստ նշեալ ուսմունքին, հէնց Հայերը Հարաւային Կովկասի մէջ եկուոր ցեղ մը կը հանդիսանան, իսկ Ազերիները եւ միւս թուրք ցեղեր այս տարածաշրջանի բնիկ ժողովուրդներն են:

Դ) Ամալիա վան Խենթը կը պնդէ նաեւ, թէ իբր Ռուսաստանը մինչեւ վերջերս չէր ճանչցած Հայոց Ցեղասպանութիւնը (էջ 196), մինչդէռ իրականութիւնը բոլորովին այլ է՝ Ռուսաստանի Խորհրդարանը (Պետական *Դումա*) պաշտօնապէս ճանչցած էր զայն դէռ 1995 թուականին: Եւ ահա իր շարադրանքին վերջը հեղինակը կ'ափսոսայ, թէ Ախուրեան գետէն արեւելք բնակող Հայերը՝ այսինքն արդի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, այդ գետէն արեւմուտք ընկնող երկիրը ցայսօր կ'անուանեն «Արեւմտեան Հայաստան», արդէն մի քանի տասնամեակ «գոյութիւն ունեցող նոր քաղաքական սահմաններու առկայութենէն չտպաւորուած» (էջ 198): Այդ մէկ նախադասութեամբ Ամալիա վան Խենթ, իմ խորին համոզումովս, վերջնականապէս կը դիմակազերծէ ինքն իրեն որպէս Հայ ժողովուրդի կարծեցեալ բարեկամ մը:

Գրախօսականը հասած ըլլալով իր աւարտին, կը պարզենք մեր եզրակացութիւնները: Հայաստանի մասին այս նոր Գերմաներէն գիրքէն տպաւորութիւններս խիստ հակասական են: Մէկ կողմէ պիտի խոստովանիմ, թէ այս հրատարակութիւնը կրնանք արժէտրել որպէս դրական երեւոյթ. գերմանախօս արեւմտաեւրոպացիի մը համար ան հնարաւորութիւն կ'ընձեռէ հեռաւոր ու տակաւին գրեթէ անծանօթ երկիր մը եւ անոր ժողովուրդը, անոր պատմութիւնն ու մշակոյթը որոշ չափով ծանօթանալու ու հասկնալու: Քրիսթինա Լոյմանի կողմէ գրուած գլուխները ջերմ համակրանք յառաջացուցած են իմ մէջ՝ այս ազնիւ, բարեխիղճ ու խղճամիտ զուիցերացի մանկաբոյժ կնոջ նկատմամբ, որը Հայ ժողովուրդին հանդէպ իր ցուցաբերած մարդասիրական ու ընկերային մեծ նուիրումով միայն փառք ու պատիւ բերած էր իր մասնագիտութեան, ինչպէս նաեւ իր Հայրենիքին՝ Զուիցերիոյ: Այդ

առումով, ես գայն կը տեսնեմ մեծ դանիացի մարդասիրական գործիչ կիներուն՝ Քարեն Եփփէի (1876-1935) ու Մարիա Եակոբսէնի (1882-1960) շարքին մէջ, որոնք Մեծ Եղեռնէն մագապուրծ Հայ երախաներուն խնամք ու մխիթարանք, հոգիի եւ մարմնի խոր վերքերուն սփոփանք կը բերէին Սուրիոյ որբանոցներուն մէջ:

Միւս կողմէն՝ Ամալիա վան Խենթի գրութիւնները վերլուծելով, կը յանգեմ այն եզրակացութեան, որ անոր շարադրուած տեղեկութիւններուն մէջ ճիշդն ու սխալը սերտ կերպով կը գոյակցեն: Այդ պատճառով, սոյն գիրքը զգալի թիրիմացութիւն կրնայ յառաջացնել անտեղեակ եւրոպացի ընթերցողի մտքին մէջ: Ամալիա վան Խենթի վերը նշուած ու վերլուծուած անընդունելի պնդումներուն ամբողջ երկար շարանը ինծի կը պարտադրէ անոր լրագրական աւանդին ընդհանուր առումով բացասական գնահատական մը տալու: Այս եզրակացութիւնը առաւել եւս ծանրակշիռ է, քանի որ Ամալիա վան Խենթի գրած գլուխները շատ աւելի կարեւոր են Հայաստանն ու Հայ ժողովուրդը ճանչնալու ու հասկնալու համար, քան Քրիսթինա Լոյմանի գրածները: Ամալիա վան Խենթի ցուցաբերած խիստ անընդունելի դիրքորոշումները, նկարագրութիւնները ու գնահատականները կը վերագրեմ անոր մտածելակերպին ու աշխարհահայեացքին, զորս ես կը բնութագրեմ որպէս արդի արեւմտաեւրոպացի մտաւորականներուն մեծ մասին բնորոշ ***ազատամիտ-աշխարհաքաղաքացիական*** (լիբերալ-կոսմոպոլիտ) ***մտածելակերպ մը***: Այդ առումով Ամալիա վան Խենթը (ինչպէս նաեւ անոր ամուսին լրագրող Վերներ վան Խենթ) կը ներկայացնէ այնպիսի մտածելակերպի տէր լրագրողի խիստ բնորոշ տիպար մը: Ինչպէս արդէն նշուած է մեր գրախօսականի սկիզբը, այդ տեսակի լրագրութիւն Անգլերէն «mainstream», կամ «political correctness» կը կոչուի: Այդ տեսակի արեւմտաեւրոպացի մտաւորականներուն համար այնպիսի հասկացողութիւններն եւ արժէքները, ինչպիսիք են՝ ***ազգային յիշողութիւն, ազգի պատմական իրաւունքներ, ազգային գաղափար, պատմական արդարութիւն, ազգի պահանջատիրութիւն***, էական չեն, աւելին՝ այդ ազգային-հոգեւոր գաղափարները անոնց համար փաստօրէն գոյութիւն չունին: Այդ տեսակի մտաւորականները կը մտածեն զուտ *պրագմատիկ*, նիւթապաշտ, տաղտկալի, բարձր հոգեւոր արժէքներէն, ոեւէ «*իդէալիզմ*»էն շատ հեռու: Անոնք կը մտածեն ու կը գործեն աշխարհաքաղաքացիական կերպով՝ ապագային եւ մշակութային առումով «չեզոք», կը գերադասեն «բազմամշակոյթ»ը («Multikultur»): Այդ տիպուր երեւոյթը պայմանաւորուած է համաշխարհայնացումի միտումներով, որոնցմով կը տառապի արդի Արեւմուտքը: Ամալիա վան Խենթի պարագային նշեալ մտածելակերպ նոյնիսկ անոր յունական ծագումը չէ կրցած նուագեցնել: Այդ հանգամանքը կարծես թէ առիթ մը կ'ընծայէր յուսալու, թէ այդ հեղինակը Թուրքերուն եւ անոնց ցեղակից-եղբայր Ազերիներուն հանդէպ աւելի քննադատական վերաբերմունք մը կը ցուցաբերէ, քաջ գիտնալով, թէ ի՛նչէ՛ր ըրած էին Թուրքերը նաեւ Յոյներուն, օրինակ, նոյն 1915-1922 թուականներուն Փոքր

Ասիոյ մէջ կամ 1974 թ. Կիպրոս կողմի վրայ (ամենաթարմ օրինակներէն մէկը): Այդ հանգամանքը նկատի առնելով կ'ականկալէի, որ Ամալիա վան Խենթի տեղեկագրութիւնը հայ-ազերպայճանական, ինչպէս նաեւ հայ-թուրքական առճակատումին մասին նուազ թրքամետ կ'ըլլար: Մեր օրերէն հանրայայտ ու բազմազան տեղեկութիւններ Թուրքիոյ հակաքրիստոնէայ ու հակաքիւրտ բռնատիրական քաղաքականութեան մասին նոյնպիսի ականկալիքներ կը յառաջացնէին նաեւ: Սակայն, Ամալիա վան Խենթի մտածելակերպին վրայ այս բոլորը ռեւէ ազդեցութիւն չի գործեր. ինչպէս արդէն մատնանշուած է, ան կը մտածէ ազատամիտ-աշխարհաքաղաքացիական կերպով, «հաւասարակշռուած» եւ «անկողմնակալ»: Անգամ մը եւս կ'ընդգծեմ, թէ սոյն մտածելակերպ մը արեւմտաեւրոպացի լրագրողներուն մօտ համատարած երեւոյթ մըն է, հետեւաբար մենք Ամալիա վան Խենթէն խենթանալու կարիք չունինք: Աւելցնեմ, թէ այդ «հաւասարակշռուած» մտածելակերպին մէջ անոր պարագային հաւանաբար իր բաժինը ունի նաեւ այն հանգամանքը, որ ան երկար տարիներու ընթացքին աշխատած է որպէս գոյիցերական «Neue Zürcher Zeitung» թերթի թղթակիցը Բաքուի եւ Պոլսոյ մէջ:

Ամփոփելով եզրակացութիւնս կ'ընդգծեմ այս գիրքէն կրած իմ խիստ հակասական տպաւորութիւնս:

ԱԼԵՔՍԱՆԴԻ ԲՆԻՆՔԵՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ
ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԿԱՐԼՍՐՈՒՀԵՈՒՄ**

Գերմանիայի Կարլսրուիե քաղաքն անցյալ տարեվերջին դարձավ Գերմանիայում Հայաստանին և մասնավորապես հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կենտրոններից մեկը: Դրա վկայությունն էր քաղաքի պետական թատրոնում «Անմոռուկ» խորագրով մեկշաբաթյա փառատոնը (նոյեմբերի 21-29), որ կազմակերպվել էր «Խոսել սահմանների մասին» կազմակերպության ղեկավար, հայտնի դրամատուրգ և հասարակական գործիչ Խրիստիան Պապկեի և քաղաքի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Յան Լինդերսի նախաձեռնությամբ: Փառատոնը բնութագրվում էր հայոց պատմության, մշակույթի և առանձնապես ցեղասպանության վերաբերյալ լիարժեք և խտացված տեղեկատվություն բովանդակող բարձրակարգ միջոցառումներով, որոնցում, գերմանացի և սփյուռքահայ մասնակիցներից զատ, իրենց ներդրումն ունեցան նաև Հայաստանից հրավիրված 11 մասնակիցներ:

Նոյեմբերի 21-ի երեկոյան երևանաբնակ բանաստեղծ Վահե Արսենը դերասան Ջոնաթան Բրուկմայերի հետ ներկայացրեց իր մի շարք բանաստեղծությունները հայերեն, գերմաներեն և անգլերեն, որոնք եզրափակվեցին երաժշտական կատարումներով: Հաջորդ օրը տեղի ունեցավ փառատոնի հանդիսավոր բացումը, որից հետո ելույթ ունեցավ Բոխումի Ռուհրի համալսարանի՝ սփյուռքի և ցեղասպանագիտական հետազոտությունների ինստիտուտի հիմնադիր և ղեկավար, ցեղասպանագետ դր. Միհրան Դաբաղը: Նա, տասնամյակներ շարունակ հավաքելով ցեղասպանությունը վերապրած բազմաթիվ հայերի հուշերը, 2015 թ. դրանք հրատարակել է առանձին գրքով՝ «Կորուստ և կտակ» վերնագրով: Նրա ելույթից հետո դերասաններ Վերոնիկա Բախֆիշերն ու Մաքսիմիլյան Գրյունսլադը ընթերցեցին այդ գրքից հատվածներ, որոնցում ցեղասպանությունն առարկայանում էր իր զարհուրելի մանրամասներով:

Միհրան Դաբաղից հետո «1915 թվական. միայնա՞կ, թե՞ կոլեկտիվ հիշողություն» թեմայով ելույթ ունեցավ եգիպտագետ, գրականագետ, մշակութաբան, հիշողության մշակույթի փորձագետ պրոֆ. Ալեիդա Ասմանը: Նա, ներկայացնելով «մշակութային հիշողության» որոշ հիմնարար սկզբունքներ, ընդգծեց, որ ցեղասպանության հիշողությունը պետք է կրի կոլեկտիվ,

համամարդկային բնույթ, այլապես այն ժամանակի ընթացքում կխամրի և կմարի: Գնահատելի է, որ ելույթ ունեցողը չմոռացավ ընդգծել նաև այն պատասխանատվությունը, որ այդ հարցում ունի Գերմանիան:

Տիկին Ասմանի ելույթից հետո բազմաքանակ ունկնդիրներին ներկայացվեց Գերմանա-հայկական ընկերության պատրաստած՝ «1915. աղետ. բնաջնջումը» խորագրով ցուցահանդեսը: Այն բովանդակում էր անցած 100 տարիների ընթացքում ընկերության ժողոված լուսանկարների և ականատեսի վկայությունների մի մեծ հավաքանի, որոնց շարքում, բնականաբար, առանձնանում էին ընկերության հիմնադիր, հայ ժողովրդի մեծ երախտավոր դր. Յոհաննես Լեփսիուսի ի մի բերած և հրատարակած նյութերը: Ցուցահանդեսի ցուցանմուշները ներկայացրեց Գիորգիո Բավայը՝ կատարելով նաև անհրաժեշտ պարզաբանումներ: Նշենք, որ ցուցահանդեսն այցելուներին մատչելի էր դարձվել դեռևս պաշտոնական բացումից առաջ:

Ցուցահանդեսի պաշտոնական բացմանը հաջորդեց «Թագավորի ուղտը և Արևհատը» խորագիրը կրող հայ ժողովրդական հինգ հեքիաթների ընթերցումը Դիանա Կրյուգերի կողմից: Վերջինս ունկնդիրներին նաև իրազեկեց հայ բանահյուսության պատմության և զարգացման որոշ առանձնահատկությունների մասին: Օրվա հագեցած ծրագիրը եզրափակվեց երեկոյան՝ Հրանտ Դինքի, նրա հրապարակախոսական գործունեության, ողբերգական մահվան և «Ակոսի» վերաբերյալ հանգամանալից զեկուցումով, որով հանդես եկավ Ստամբուլից ժամանած Միհրան Թոմասյանը: Այնուհետև վերջինիս և Շողակաթ Միքե-Գալստյանի մասնակցությամբ տեղի ունեցավ ակտիվ քննարկում խնդրո առարկա և հարակից հարցերի շուրջ:

Նոյեմբերի 25-ին միջոցառումները վերսկսվեցին ֆիլմերի ցուցադրմամբ, որոնք կրում էին «Հոշոտված Հայաստան» խորագիրը: Նախ ներկայացվեց ցեղասպանությունը վերապրած Ավրորա Մարդիգանյանի ճակատագիրը, որից հետո ցուցադրվեց 1919 թ. նրա մասնակցությամբ նկարահանված մի համր ֆիլմ: Իսկ այնուհետև ցուցադրվեց 2015 թ. գարնանը Խրիստիան Պապկեի նկարահանած՝ «Հայաստանում. երկար ճանապարհի ստվերը» փաստավավերագրական ֆիլմը, որը 2015 թ. ապրիլին հեռարձակել էին գերմանական և ավստրիական հեռուստաընկերությունները՝ մեծապես նպաստելով Հայաստանի և Հայոց ցեղասպանության մասին գերմանական և առհասարակ եվրոպական հասարակայնությանը իրազեկվածության բարելավմանը: Այն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Հաջորդ օրը ներկայացվեց «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդազրույցի բեմադրությունը, որը պատրաստել էին և մեծ վարպետությամբ կատարեցին Հայաստանից հրավիրված շնորհալի արվեստագետներ Աիդա Սիմոնը, Սուսաննա Ջոհրաբյանը, Մերի Ավետիսյանը, Մարիա Թոմասյանը, Գոհար Մուրադյանը, Վիոլետա Մկրտչյանը և Էմիլ Ներսիսյանը: Բեմադրությունից հետո Աիդա Սիմոնը հանգամանալից դասախոսություն կարդաց Հայաս-

տանի նախաքրիստոնեական և վաղ քրիստոնեական շրջանի մշակույթի վերաբերյալ:

Նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ երև

անցի հեռուստալրագրող և դրամատուրգ Սամվել Մարտիրոսյանի «Սահմանը քո ոտքերի միջև» պիեսի բեմադրությունը, որն, ի դեպ, «Խոսել սահմանների մասին» կազմակերպության կողմից 2015 թ. արժանացել է «լավագույն դրամատիկական երկեր» անվանակարգում հատկացվող ամենամյա մրցանակին: Հաջորդ օրը ելույթ ունեցավ ծագումով դիարբեքիրցի 91-ամյա Գրիգոր Մելիքյանը, ով տասնամյակներ շարունակ որպես դերասան աշխատել է Բեռլինի Շիլլերի անվան թատրոնում: Նա գերմանացի հանդիսատեսներին ներկայացրեց իր ընտանիքի և ժողովրդի դրամատիկ պատմությունը՝ ընթերցելով նաև հատվածներ սեփական գրական ստեղծագործություններից: Նոյեմբերի 28-ին Կարլսրուհեի պետական թատրոնում տեղի ունեցավ «Մուսա լեռան զավակները» ներկայացման պրեմիերան, որն իր մեջ խտացնում էր ոչ միայն մուսալե-ցիների հերոսամարտը, այլև ցեղասպանության բազմաթիվ խոսուն ու բնութագրական դրվագներ: Այնուհետև ունկնդիրները վայելեցին հայ ժողովրդական պարերի և երաժշտության հմայքը: «Անուշ» պարային համույթը հանդես եկավ ժողովրդական և ազգագրական պարերի գեղեցիկ կատարումներով, իսկ Ստրասբուրգում բնակվող հայ երաժիշտներ Գեղամ և Արկադի Կարակազովները դուդուկի բարձրարվեստ կատարմամբ ներկայացրեցին մի շարք ժողովրդական երգեր: Վերջում ներկաները համտեսեցին հայկական կոնյակ և գինի, ինչը նույնպես հայ ազգային ինքնության բացահայտման այցեքարտ էր:

Փառատոնի եզրափակիչ օրը՝ նոյեմբերի 29-ին, տողերիս հեղինակը հանդես եկավ Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի համապատասխանատվությունը փաստող ծավալուն գեկուցմամբ՝ այդ համատեքստում կարևորելով գերմանական Բունդեսթագի կողմից ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, ինչը, բնականաբար, մի կողմից Գերմանիայում ցեղասպանության հիշողությունն ամրակայելու և մյուս կողմից Թուրքիայի՝ սեփական պատմությանն առերեսվելու մի նոր խթան կդառնա: Այնուհետև Անդրե Վազները ընթերցեց հատվածներ Վարուժան Ոսկանյանի «Շշունների մատյան» գրքից, ինչն ուղեկցվում էր «Էրեբունի» քառյակի երաժշտական կատարումներով, իսկ վերջում ելույթ ունեցան Կարլսրուհեում բնակվող ջութակահարուհի Անի Աղաբեկյանը և դաշնակահար Ռուբեն Մելիքսեթյանը՝ բազմամարդ լսարանին ներկայացնելով մի գեղեցիկ ընտրանի կոմպոզիտորներ Ռուբեն Ալթունյանի, Կոմիտասի, Արամ Սուքիասյանի, Ալեքսանդր Հարությունյանի և Գագիկ Հովունցի ստեղծագործություններից:

Փառատոնը, որի եզրափակիչ հանդիսությանը ներկա էր և գնահատանքի ու շնորհակալության ջերմ ելույթով հանդես եկավ նաև ԳԴՀ-ում ՀՀ դես-

պան Աշոտ Սմբատյանը, կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Գերմանիայում կազմակերպված բազմաթիվ միջոցառումների շարքում ինչպես նման ընդարձակ ժամանակացույցի, այնպես էլ թեմատիկ-բովանդակային այդօրինակ լայն ընդգրկման առումով իր նախադեպը թերևս չունեն։ Եթե մյուս միջոցառումները գերազանցապես գիտաժողովներ էին և, ըստ այդմ, դրանցում հիմնականում գերմանական գիտական հասարակայնությունն էր ներգրավված, ապա Կարլսրուհեում կազմակերպված միջոցառումներին հաղորդակից դարձան հետաքրքրությունների և նախասիրությունների առավել մեծ բազմազանությամբ բնութագրվող՝ գերմանական հասարակական շրջանները։

Փառատոնը միաժամանակ փաստեց, թե նման միջոցառումների իրականացման դեպքում որպիսի արդյունավետ համագործակցություն կարող է ծավալվել։ Գնահատանքով պետք է նշել, որ փառատոնին նյութական մեծ աջակցություն էր ցուցաբերել Գյունտեր Պիլարսկին, որը Հայաստանում տնտեսական լայն գործունեություն է ծավալել՝ ստեղծելով բազում աշխատատեղեր։ Այդ հարցում իրենց նպաստն էին բերել նաև Գերմանիայում Հայաստանի օգնության կազմակերպությունը, Գերմանա-հայկական ընկերությունը, Գերմանա-հայկական երիտասարդական միությունը, Գերմանա-հայկական երաժշտական ընկերությունը, Կարլսրուհեի շինարարական բարձրագույն դպրոցը և «Երիտասարդ հայեր» կազմակերպությունը։

Շնորհակալության և գնահատանքի խոսք ուղղելով փառատոնի կազմակերպիչներ Խրիստիան Պապկեին, Յան Լինդերսին, նրանց աշխատակիցներ Էրիկ Նիկոլիմին, Լաուրա Քիհնեին, Օլա Ստանկևիցին և այն բոլոր անձանց ու կազմակերպություններին, ովքեր նրանց աջակցել են այդ կարևոր միջոցառումը կազմակերպելու հարցում, կկամենայինք ակնկալել, որ այն Կարլսրուհեում կձևավորի ավանդույթ՝ հայ-գերմանական մշակութային, գիտական և քաղաքական երկխոսությունը հետագայում ևս զարգացնելու համար։

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

ՀՐԱԶԻԿ ՄԻՄՈՆՅԱՆ (1928-2016)



2016 թ. հունվարի 30-ին կյանքին հրաժեշտ տվեց մեծ պատմաբան, հասարակական-քաղաքական և ազգային հայտնի գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Միմոնյանը:

Նա ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիսում: Քաղաքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որը գերազանց առաջադիմությամբ ավարտել է 1952 թ.: Աշխատանքային մկրտությունը ստացել է հարազատ շրջանում՝ գործուղվելով ծննդավայր որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: Հաջորդ տարվանից նա աշ-

խատանքի է անցել ՀԿԿ Գորիսի շրջկոմում նախ որպես հրահանգիչ, այնուհետև՝ բաժնի վարիչ: 1957 թ. ընտրվել է նույն շրջկոմի գաղափարական գծով քարտուղար:

1959 թ. Հ. Միմոնյանը մեկնել է Մոսկվա և ընդունվել ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա, որն ավարտել է 1962 թ. և նույն տարում այնտեղ պաշտպանել թեկնածուական թեզ: Վերադառնալով Երևան՝ նա աշխատանքի է անցել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում. 1962-1966 թթ.՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1977-1990 թթ.՝ որպես տնօրեն: 1966-1977 թթ. նա աշխատել է ՀԿԿ կենտկոմում՝ իբրև դասախոսական խմբի ղեկավար, այնուհետև՝ բաժնի վարիչի առաջին տեղակալ, եղել է նաև վարիչի պաշտոնակատար: 1990-1991 թթ. Հ. Միմոնյանը վարել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991-1994 թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ: 1994-2006 թթ. նա ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդականն էր, միաժամանակ 1999-2003 թթ. ղեկավարել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը:

1969 թ. Հ. Միմոնյանը պաշտպանել է դոկտորական թեզ, իսկ մեկ տարի անց ստացել պրոֆեսորի կոչում: Գիտության մեջ ներդրած ավանդի համար 1986 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ:

Հ. Միմոնյանն անգնահատելի վաստակ ունի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության բազմաթիվ հիմնահարցերի խորը ուսումնասիրության ասպարեզում: Նա հեղինակել է ավելի քան 40 մենագրություն և շուրջ 400 գիտական հոդվածներ: 1960-ական թթ. նրա գիտական հետաքրքրությունները կենտրոնացած են եղել հայկական սփյուռքի, այնտեղ գործող հայ քաղաքական ուժերի գործունեության, Խորհրդային Հայաստանի հանդեպ նրանց վերաբերմունքի վրա: 1968 թ. հրատարակվում է նրա «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը: 1970-ական թթ. սկզբներից Հ. Միմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում գտնվել են քաղաքական-փիլիսոփայական բնույթի հիմնահարցերը: Նա ընթերցողներին է ներակայացրել «Ինդուստրիալ հասարակության տեսությունները» (1973), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» երկհատոր (1977), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982) մենագրությունները, որոնցում ներկայացված են բուրժուական գաղափարական տարբեր ուղղությունների ծագման ու զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ-դասակարգային էությունը: Նա հանդես է եկել նաև Հայաստանի և Այսրկովկասի կոմունիստական շարժման պատմությանը նվիրված բազմաթիվ հրապարակումներով, եղել «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (1967), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր» (Թբիլիսի, 1971, ռուսերեն) կոլեկտիվ աշխատությունները ստեղծողներից մեկը:

1970-ական թվականների վերջերից Հ. Միմոնյանը ուշադրությունը բնեռել է բացառապես XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ժողովրդի ազատագրական շարժումների, Հայոց ցեղասպանության պատմության և այդ թեմաներին առնչվող թուրքական գաղափարախոսության հիմնախնդիրների ուսումնասիրության վրա: Այս հարցերին են վերաբերում «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1980), «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991) մենագրությունները: Այնուհետև նա հրատարակել է «Անդրանիկի ժամանակը» (1996) մեծարժեք երկհատոր ուսումնասիրությունը, որը միանգամայն նոր խոսք է ազգային հերոսի կյանքի ու մարտական անցած ուղու մասին, քանի որ այնտեղ շրջանառվում են հարյուրավոր նորահայտ արխիվային փաստաթղթեր և նյութեր: 2003-2013 թթ. Հ. Միմոնյանը հրատարակել է «Ազատագրական պայքարի ուղիներում» հիմնարար աշխատությունը՝ ամփոփված հինգ գրքերում, որտեղ փաստական հարուստ նյութերի վերլուծության հիման վրա համակողմանիորեն ներկայացրել է XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ ընկած ժամանակահատվածում Արևելյան և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձու-

թյունները: Այս մենագրությունը 2013 թ. արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ մեծ ներդրում է Հ. Միմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» (2009) մենագրությունը, որը թարգմանվել է անգլերեն և հրատարակվել Մեծ Բրիտանիայում (2012): 2014 թ. նա հրատարակել է նաև «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը» մենագրությունը:

Հ. Միմոնյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել ոչ միայն Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, այլև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Ճապոնիայում, Լիբանանում՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները: Նրա աշխատություններից մի քանիսը լույս են տեսել Չեխովսկայայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում:

Հայ ժողովրդի նորագույն շրջանի ազգային-ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից Հ. Միմոնյանը արցախյան համաժողովրդական շարժման բովում էր, նրա տասնյակ հոդվածներն ու հրապարակային ելույթները խանդավառում էին մեր հայրենակիցներին: 1990-1995 թթ. լինելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ նա հեղինակել է և քննարկման ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր, նպաստել Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակման ու կայացման գործընթացին:

1964 թվականից Հ. Միմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության և փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության այլ բուհերում, իր գիտելիքներն անմնացորդ նվիրումով հաղորդել ուսանողությանը, ջանացել երիտասարդ սերնդի մեջ ներարկել ազգային շահի գիտակցում ու պետական մտածողություն: Նրա անմիջական ղեկավարությամբ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դասախոսներից կազմված հեղինակային խումբը 2000 թ. հրատարակեց հայոց պատմության բուհական ծրագիրն ու դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Հ. Միմոնյանի խմբագրությամբ պատրաստվեց և 2012 թ. հրատարակվեց հայոց պատմության բուհական դասագրքի լրամշակված և ամբողջացված տարբերակը, որի ռուսերեն հրատարակությունը լույս տեսավ 2014 թ.:

Հ. Միմոնյանը մեծ հեղինակություն էր վայելում հանրապետական մտավորականության և մեր ժողովրդի լայն շրջաններում: Մինչև կյանքի ավարտը նա երիտասարդական եռանդով ու ավյունով էր ծառայում իր հայրենիքին և հարազատ ժողովրդին: Նույնիսկ նրա կյանքի վերջին շրջանը հագեցած էր ստեղծագործական բեղուն գործունեությամբ. հետմահու լույս տեսան նրա «Անդրանիկի քաղաքական արդարացման պատմությունից» ռուսերեն մենագրությունը և «Ինչպես եղել է...» հուշերի գիրքը: Ռուսաստանի Դաշնությունում շուտով կհրատարակվի նրա «Ռուսական կայսրությունը և հայկական հարցը Առաջին աշխարհամարտի նախօրյակին» մեծածավալ ուսումնասիրությունը, իսկ Իրանում՝ «Հայերի դերը Իրանի սահմանադրական

հեղափոխության մեջ» պարսկերեն աշխատությունը: Ցավոք կիսատ մնացին նրա՝ Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովին և պարսիկ մեծ պոետ Նիզամուն նվիրված աշխատությունները:

Զարմանք և հիացմունք էին պատճառում Հ. Միմոնյանի աշխատասիրությունն ու աշխատունակությունը: Նա ուներ մտավորականի բարձր կերպար՝ պարզ, անկեղծ ու բարյացակամ: Նրա մարդկային առաքինի հատկանիշներից էին համեստությունը, անսահման բարությունը, ուղղամտությունը, ազնվությունը և անմնացորդ նվիրվածությունն աշխատանքին: Հ. Միմոնյանի գիտակրթական բեղուն գործունեությունը գիտությանն անմնացորդ նվիրյալի դաստիարակչական փայլուն օրինակ էր գիտակրթական լայն հանրության, առավելապես երիտասարդության համար:

*ԵՊՀ ռեկտորատ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
Պատմության ֆակուլտետ*

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1944-2016)



72-րդ տարում կյանքից հեռացավ անվանի պատմաբան, աղբյուրագետ և մատենագետ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանը:

Պ. Հովհաննիսյանը ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քա-

ղաքում՝ Երզնկայից գաղթած ավանդապահ հայ ընտանիքում: 1951-1961 թթ. նա սովորել է տեղի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում, որը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո՝ 1962 թ., ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Երրորդ կուրսից գորակոչվել է խորհրդային բանակ և ծառայել ռազմաօդային ուժերում, իսկ գորացրվելուց հետո՝ 1967-1970 թթ. շարունակել է ուսումնառությունը:

1970-1973 թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում ուսանելու տարիներին Պ. Հովհաննիսյանը պրոֆեսոր Սերոբ Պողոսյանի ղեկավարությամբ պատրաստել է և 1976 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի աշխատություններում» թեմայով: 1975-2016 թթ. նա աշխատել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում, նախ՝ իբրև կաբինետի վարիչ, այնուհետև՝ ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 2013 թվականի մարտից ստանձնել է այդ նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պարտականությունները:

1992-1993 թթ. Պ. Հովհաննիսյանը դասավանդել է նաև Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկում, 1995-1999 թթ.՝ համատեղությամբ աշխատել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրոցում, իսկ 1999 թվականից՝ Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (Աստվածաբանական համալսարանում):

Պ. Հովհաննիսյանն իր կյանքի շուրջ քառասուն տարիներ նվիրաբերել է դասախոսական աշխատանքին և իր մեծ ավանդը ներդրել երիտասարդ սերունդների ոչ միայն կրթության, այլև դաստիարակության գործում: Նա

ղեկավարել է տասը ասպիրանտների, որոնցից վեցը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Հանգուցյալ պատմաբանը մեծ ներդրում ունի ոչ միայն բուհական, այլև դպրոցական դասագրքերի ստեղծման գործում: Նա հանրակրթական դպրոցի 4-10-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» (2002-2013), 5-րդ դասարանի «Հայրենագիտություն», 6-րդ և 7-րդ դասարանների, ինչպես նաև ավագ դպրոցի 10-րդ դասարանի «Հայոց պատմություն» (2007-2013) դասագրքերի համահեղինակներից և խմբագիրներից է: 2009 թ. նա արժանացել է «Հայաստանի վաստակավոր մանկավարժի», իսկ 2011 թ.՝ պրոֆեսորի կոչումների:

Իր մանկավարժական ակտիվ աշխատանքը Պ. Հովհաննիսյանը հաջողությամբ զուգակցել է գիտական բեղուն գործունեությանը, որը ծավալել է չորս հիմնական և խիստ կարևոր պատմագիտական ուղղություններով: Հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունից զատ նա զբաղվել է նաև աղբյուրագիտությամբ, պատմագրությամբ և մատենագիտությամբ: Նրա գրչին են պատկանում 400-ից ավելի տպագիր աշխատանքներ՝ գրքեր, հոդվածներ, ժողովածուներ, ակնարկներ: Ուսանողական և գիտական հանրության համար մեծ արժեք են ներկայացնում նրա աշխատակցությամբ հրատարակված «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (հ. 1-ին, 1981, 2007, հ. 2-րդ, 2011), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001), «Հայ եկեղեցու հանրագիտարան» (պրակ Ա, 2008), «Նշանավոր ճեմարանականներ» (պրակ 1-2, 2005, 2009) գրքերը, ինչպես նաև նրա գրչին պատկանող «Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ)» (2010) դասախոսությունների ժողովածուն:

Պ. Հովհաննիսյանը բազմիցս անդրադարձել է թե՛ հայ հին պատմիչների երկերի և թե՛ իր ժամանակակից պատմաբանների գործունեության գիտական վերլուծությանը: Նրա աշխատասիրությամբ և խմբագրությամբ լույս են ընծայվել նաև 70-ից ավելի պատմագիտական աշխատություններ: Գիտական հանրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա նախորդների աշխատությունների հրատարակությունները, ինչպիսիք են Աշոտ Հովհաննիսյանի «Պատմագիտական ուսումնասիրությունները» (2007), Ավետիս Պերպերյանի «Պատմություն հայոցը» (2009), Կ. Տեր-Մկրտչյանի «Հայոց եկեղեցու պատմությունը» (մասն Ա, 2011), Հակոբ Զորյանի «Պատմագիտական ուսումնասիրությունները» (2015) և այլն:

Այդուհանդերձ, հարկ է առանձնացնել Պ. Հովհաննիսյանի մեծ նվիրումը հայ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցին, որի մասին հրատարակել է ավելի քան 60 հոդվածներ և հրապարակումներ: Նրա աշխատասիրությամբ լույս են ընծայվել ոչ միայն Ադոնցի «Երկերի» Ա-Զ հատորները (2006-2012) (առաջիկայում լույս կտեսնի նաև նրա նամակագրությունն ընդգրկող յոթերորդ հատորը), այլև նրա տարբեր ուսումնասիրությունները՝ «Հայկական հարցը» (1996), «Պատկերների խնդիրը» (2003), «Քննություն Մովսես

Կադանկատվացու» (2005), «Հայաստանի ոսկեհանքը» (2006), «Տիգրան Մեծը» (2010): Պ. Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ հայերեն թարգմանությամբ հրատարակվել են նաև Ադոնցի տարբեր անտիպ աշխատությունները, որոնք նա հայտնաբերել է Բեյրութում պահվող նրա անձնական արխիվում:

Մեծ էր Պ. Հովհաննիսյանի ակնածալից վերաբերմունքը նաև Հակոբ Մանանդյանի նկատմամբ: Նա ոչ միայն նրա գիտական գործունեության որոշ դրվագների նվիրեց իր թեկնածուական ատենախոսությունը, այլև հետազայում հրատարակեց նրա «Երկերի» 7-րդ և 8-րդ հատորները (2010, 2011), ինչպես նաև «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին» (2010) բավականին հետաքրքիր ժողովածուն:

Պ. Հովհաննիսյանը անժխտելի ներդրում ունի նաև մատենագիտական գրականության բնագավառում: Նա հրատարակել է Հ. Մանանդյանի (1981), Ծատուր Աղայանի (1983) կենսամատենագիտությունները: Հատկապես հիշատակելի են, սակայն, Է. Բաբայանի աշխատակցությամբ նրա լույս ընծայած «Հայկական հարց. Հայոց ցեղասպանություն» ռուսալեզու գրականության (1877-1997) մատենագիտությունը (1998) և «Սովսես Խորենացի. մատենագիտություն» սովարածավալ աշխատանքը (2013):

Նա գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» բազմահատորյակի II և III հատորների (2010, 2014) հրատարակությանը, գրել հոդվածներ նվիրված XVII-XVIII դարերի հայ պատմագիտական մտքին: Հեղինակել է մեծաքանակ բառահոդվածներ «Հայկական սովետական հանրագիտարան», «Հայկական համառոտ հանրագիտարան», «Հայկական հարց», «Քրիստոնյա Հայաստան», «Ո՞վ ով է» հանրագիտարանների համար:

Պ. Հովհաննիսյանը գիտական տարբեր հանդեսների՝ «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», «Պատմություն և մշակույթ», «Միջուռքագիտություն», «Հայագիտությունը դպրոցում», «Ակունք» խմբագրական խորհուրդների անդամ էր: Գիտական բարձր պատասխանատվությամբ նա բազմիցս ներկայացրել է պատմագիտական միտքը միջազգային գիտաժողովներում՝ Մոսկվա, Մոնպելիե, Բեյրութ, Սոֆիա և այլուր:

Գիտամանկավարժական բեղուն գործունեության համար Պ. Հովհաննիսյանը պարգևատրվել է կառավարական շնորհակալագրերով և պատվոգրերով, իսկ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» Հայոց եկեղեցու բարձրագույն շքանշանով:

Ճանաչված պատմաբանի, սիրված դասախոսի և ազնիվ քաղաքացու հիշատակը միշտ վառ կմնա նրա գործընկերների, ուսանողների, նրան ճանաչողների և հարազատների սրտերում:

*ԵՊՀ ռեկտորատ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
Պատմության ֆակուլտետ*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այվազյան Գայանե	Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (forgayane@gmail.com)
Ավագյան Վաչագան	ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (avagyan.vachik@yandex.com)
Ավետիսյան Հայկ	ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (hykavetisyan@yahoo.com)
Ավետիսյան Յուրի	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (spyurq2009@yahoo.com)
Բոբոխյան Արսեն	ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (arsenbobokhyan@yahoo.com)
Բրինքեն Ալեքսանդր	Արվեստագիտության թեկնածու, Շվեյցարիայի կաթոլիկ եկեղեցում երգեհոնահար (brincken@bluewin.ch)
Գալստյան Գայանե	ԵՊՀ ՀՀԻ հայոց պետականության պատմության հիմնահարցերի հետազոտության բաժնի լաբորանտ (tiguar-tur@hotmail.ru)
Գևուհի Արտակ	ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (telepinus@rambler.ru)
Եղիազարյան Արման	ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (armyegh@yahoo.com)
Թելյան Լեոնիդ	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (telyanl@mail.ru)
Թովմասյան Հրանուշ	Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու
Թունյան Վալերի	Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (tunyanvalery@rambler.ru)
Կարապետյան Լիլիթ	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ (lilitkarapetyan90@mail.ru)
Հակոբյան Աստղիկ	ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ, Հայաստանի ազգային արխիվի աշխատակցուհի (astghik.hakobyan@mail.ru)

Հայրունի Աշոտ	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ahayruni@yahoo.de)
Ղանալանյան Տիգրան	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ (tghanalanian@yahoo.com)
Մալխասյան Միքայել	ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, դասախոս, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար (mmalkhasyan@ysu.am)
Մալկիդիս Թեոֆանիս	Կավալայի (Հունաստան) տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր (malkidis@gmail.com)
Մելքոնյան Նարինե	ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ (nar_melq@yahoo.com)
Պետրոսյան Վարդան	ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (vpetrosyan@yahoo.com)
Պողոսյան Վարուժան	ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (varuzhan.poghosyan@mail.ru)
Սահակյան Հրանուշ	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ (hranush.sahakyan@mail.ru)
Սուքիասյան Համո	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (hamosukiasyan@gmail.com)
Տազեսեան Անդրանիկ	Բեյրութի Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, քաղաքական գիտությունների դոկտոր (adakessian@haigazian.edu.lb)

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Авагян Вачаган	Доцент кафедры армянской литературы ЕГУ, кандидат филологических наук (avagyan.vachik@yandex.com)
Аветисян Гайк	Заведующий кафедрой археологии и этнографии ЕГУ, заведующий лабораторией археологических исследований Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук, профессор (hykavetisyan@yahoo.com)
Аветисян Юрий	Заведующий кафедрой армянского языка, доктор филологических наук, профессор (sruyurq2009@yahoo.com)
Айвазян Гаяне	Старший научный сотрудник Матенадарана имени Маштоца, кандидат исторических наук (forgayane@gmail.com)
Айруни Ашот	Профессор кафедры истории армянского народа ЕГУ, ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (ahayruni@yahoo.de)
Акопян Астгик	Соискатель кафедры истории сопредельных стран Армении ЕГУ, сотрудник Национального архива Армении (astghik.hakobyan@mail.ru)
Бобохян Арсен	Доцент кафедры археологии и этнографии ЕГУ, кандидат исторических наук (arsenbobokhyan@yahoo.com)
Бринкен Александр	Кандидат искусствоведения, органист в католической церкви в Швейцарии (brincken@bluewin.ch)
Ганалаян Тигран	Аспирант кафедры истории армянского народа ЕГУ (tghanalanian@yahoo.com)
Галстян Гаяне	Лаборант отдела истории армянской государственности Института арменоведческих исследований ЕГУ (tiguar-tur@hotmail.ru)
Гнуни Артак	Старший научный сотрудник лаборатории археологических исследований Института арменоведческих исследований ЕГУ, кандидат исторических наук (telepinus@rambler.ru)
Дакесян Андраник	Директор Центра исследований армянской диаспоры Университета Айказян (Бейрут), доктор политических наук (adakessian@haigazian.edu.lb)
Егизарян Арман	Заведующий кафедрой армянской диаспоры ЕГУ, доктор исторических наук (armyegh@yahoo.com)
Карапетян Лилит	Аспирант Института искусств НАН РА (lilitkarapetyan90@mail.ru)
Малкидис Теофанис	Профессор Технологического института Кавалы (Греция) (malkidis@gmail.com)
Малхасян Микаэл	Аспирант кафедры истории Армении факультета истории ЕГУ, секретарь Совета попечителей ЕГУ (mmalkhasyan@ysu.am).
Мелконян Нарине	Соискатель кафедры общего языкознания ЕГУ (nar_melq@yahoo.com)
Петросян Вардан	Заведующий кафедрой общего языкознания ЕГУ, кандидат филологических наук, доцент (vpetrosyan@yahoo.com)
Погосян Варужан	Заведующий отделом геноцидологии Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (varuzhan.poghosyan@mail.ru)

Саакян Грануш	Аспирант исторического факультета ЕГУ (hranush.sahakyan@mail.ru)
Сукиасян Амо	Старший научный сотрудник Института истории НАН Армении, кандидат исторических наук, доцент (hamosukiasyan@gmail.com)
Телян Леонид	Доцент кафедры армянского языка ЕГУ, кандидат филологических наук (telyanl@mail.ru)
Товмасян Грануш	Доцент кафедры языкознания и теории коммуникации Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова, кандидат филологических наук
Тунян Валери	Профессор Ереванского филиала Российского государственного университета туризма и сервиса, доктор исторических наук (tunyanvalery@rambler.ru)

INFORMATION ABOUT THE AUTHORS

Avagyan Vachagan	PhD in Philology, Associate Professor of the Chair of Armenian Literature, YSU (avagyan.vachik@yandex.com)
Avetisyan Hayk	Doctor of Historical Sciences, Professor, Head of the Chair of Archeology and Ethnography, Head of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies, YSU (hykavetisyan@yahoo.com)
Avetisyan Yuri	Doctor of Philology, Professor, Head of the Chair of Armenian Language, YSU (spyurq2009@yahoo.com)
Ayvazyan Gayane	PhD in History, Senior Research Worker of Matenadaran after Mashtots (forgayane@gmail.com)
Bobokhyan Arsen	PhD in History, Associate Professor of the Chair of Archeology and Ethnography, YSA (arsenbobokhyan@yahoo.com)
Brincken Alexander	Doctor of Musicology, Swiss Composer, Principal Organist at the Roman-Catholic Parish Church St. Martin in Buochs (canton Nidwalden, Central Switzerland) (brincken@bluewin.ch)
Dakessian Andranik	Doctor of Political Sciences, Director of the Armenian Diaspora Research Centre of Haigazian University in Beirut (adakessian@haigazian.edu.lb)
Galstyan Gayane	Laboratory assistant of the Department of the History of Armenian Statehood, IAS YSU (tiguar-tur@hotmail.ru)
Ghanalanyan Tigran	PhD student of the Chair of Armenian History, YSU (tghanalanian@yahoo.com)
Gnuni Artak	PhD in History, Senior Research Worker of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies, YSU (telepinus@rambler.ru)
Hakobyan Astgik	PhD student of the Chair of the History of Armenia's Neighbouring Countries, YSU, employee of the National Archives of Armenia (astghik.hakobyan@mail.ru)
Hayruni Ashot	Senior Researcher of the Institute for Armenian Studies, Doctor of History, Professor of the Chair of Armenian History, YSU (ahayruni@yahoo.de)
Karapetyan Lilit	PhD student of the Institute of Art NAS RA (lilitkarapetyan90@mail.ru)
Malkhasyan Michael	PhD student of the Chair of the History of Armenia, lecturer, YSU, Secretary of YSU Board of Trustees, (mmalkhasyan@ysu.am)
Malkidis Teofanis	Professor of Tecnological Institute of Kavala (Greece) (malkidis@gmail.com)
Melkonyan Narine	Dissertree of the Chair of General Linguistics, YSU (nar_melq@yahoo.com)
Petrosyan Vardan	PhD in Philology, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU (vpetrosyan@yahoo.com)
Poghosyan Varoujean	Doctor of Historical Sciences, Head of the Department of Genocide studies of the Institute for Armenian Studies, YSU (varuzhan.poghosyan@mail.ru)

Sahakyan Hranush	PhD student of the Chair of the History of Armenia, YSU (hranush.sahakyan. @mail.ru)
Sukiasyan Hamo	PhD in History, Associate Professor, senior Researcher of the Institute of History NAS RA(hamosukiasyan@gmail.com)
Telyan Leonid	PhD in Philology, Associate Professor of the Chair of Armenian Language, YSU (telyanl@mail.ru)
Tovmasyan Hranush	PhD, Associate Professor of the Chair of Linguistics and Theory of Communication, Yerevan Bryusov State University of Languages and Social Sciences
Tunyan Valery	Doctor of Historical Sciencies, Professor of Yerevan branch of Russian State University of Tourism and Service (tunyanvalery@rambler.ru)
Yeghiazaryan Arman	Doctor of History, Head of the Chair of Diaspora Studies, YSU (armyegh@yahoo.com)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ

Թեֆանիս Մալկիդիս

Ցեղասպանությունը որպես հանցանք և Հայոց ցեղասպանությունը 3

Գայանե Գալստյան

ԱՄՆ դիրքորոշումը Հայոց ցեղասպանության առնչությամբ 19

Հրանտ Սահակյան

Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը 27

Արման Եղիազարյան

Աբաս Բագրատունու հզորացումը Հայաստանի շուրջը ձևավորված նոր
իրադրության պայմաններում 38

Գայանե Այվազյան

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Օրագրութիւն» երկի մի անհայտ
սկզբնաղբյուրի մասին 51

Լիլիթ Կարապետյան

Կեդլայի Սողոմոն եկեղեցու մուտքի հարդարանքը 61

Աստղիկ Հակոբյան

Իրանահայ համայնքի ինքնավարության մարմինները և իրավական
կարգավիճակը 1921-1945 թթ. 68

Տիգրան Ղանալանյան

Հայերի արտագաղթը Բուլղարիայից (1950-1970-ական թթ.) 82

Միքայել Մալխասյան

Ժողովրդագրական գործընթացների միտումները և
առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին 94

Գևորգ Սահակյան

Ճակատագրապաշտության և առասպելների համադրումը
Օրհան Փամուքի «Կարմիր մազերով կինը» վեպում 105

Վաչագան Ավագյան

Մի լրացում սայաթնովագիտության մեջ 117

Վարդան Պետրոսյան

Հին հայերենի Ը և հին սլավոներենի Ǫ հնչյւյթների
տարածամասնակյա տիպաբանությունը 128

Լեռնիդ Թեյլան

Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման շուրջ 142

Նարինե Մելքոնյան

Հոլովական իմաստների արտահայտումը ըստ հայ և իսպանացի
քերականագետների 153

Հրանտ թովմասյան

Խոսող անհատի գաղափարը և նրա լեզվագիտակցությունը որպես
հաղորդակցվելու հիմք 168

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Յուրի Ավետիսյան

Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար.....	179
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի

Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը.....	204
---	-----

Վարուժան Պողոսյան

Ռուբեն Մելքոնյան, Միեր Աբրահամյան, Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը....	209
---	-----

Վալերի Թունյան

Մուսա Գասիմլի, Անատոլիան և Հարավային Կովկասը 1724-1920-ական թվականներին (ռուսերեն)	214
---	-----

Աշոտ Հայրունի

100-ամյա Գերմանա-հայկական ընկերությունը	228
---	-----

Անդրանիկ Տազեսեան

Վահրամ Շեմմասեան, Մուսա Տադի Հայերը	233
---	-----

Ալեքսանդր Բրինքեն

Ամալիա վան Խենթ, Քրիսթինա Լոյման, Հայեացք Արարատին.....	238
---	-----

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Աշոտ Հայրունի

Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչումը Կարլսրուիեում.....	252
Հրաչիկ Սիմոնյան (1927-2016)	256
Պետրոս Հովհաննիսյան (1944-2016).....	260

Տեղեկություններ հեղինակների մասին.....	263
--	-----

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Теофанис Малкидис	
Геноцид как преступление и Геноцид армян (на английском).....	3
Гаяне Галстян	
Позиция США относительно вопроса Геноцида армян	19
Грануш Саакян	
Основание Немецко-армянского общества	27
Арман Егиазарян	
Подъем Абаса Багратуни в условиях новой обстановки вокруг Армении	38
Гаяне Айвазян	
Об одном неизвестном источнике «Дневника»	
Еремии Челеповича Кемурчяна.....	51
Лилит Карапетян	
Дизайн входа армянской церкви Соломон в Герле.....	61
Астхик Акопян	
Органы самоуправления и правовой статус Иранской армянской общины	
за 1921-1945 годы	68
Тигран Ганалаян	
Эмиграция армян из Болгарии (1950-1970 гг.).....	82
Микаэл Малхасян	
Тенденции и особенности демографических процессов в Армении в первой	
половине XVII в.	94
Геворг Саакян - Сочетание фатализма и мифов в романе Орана Памука	
«Рыжеволосая женщина»	105
Вачаган Авагян	
Одно дополнение к саятноведению	117
Вардан Петросян	
Диакроническая типология фонем Ё в древнвармянском и Ъ	
в старославянском языках	128
Леонид Телян	
О классификации многосложных предложений	142
Нарине Мелконян	
Выражение падежных значений согласно армянским и испанским	
грамматикам	153
Грануш Товмасян	
Понятие говорящей личности и ее (языкового) сознания как основы	
для коммуникации	168

ДИСКУССИЯ И ОБСУЖДЕНИЕ

Юрий Аветисян	
Два этапа развития литературного армянского языка – грабар и ашхарабар.....	179

РЕЦЕНЗИИ

Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни

Б. Б. Пиотровский и археология 204

Варужан Погосян

Рубен Мелконян, Мгер Абраамян, Насильственная политика исламизации
в Османской империи и Республики Турция 209

Валери Тунян

Муса Гасымлы, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг. (на русском). 214

Ашот Айруни

Столетнее Немецко-армянское общество 228

Андраник Дакесян

Ваграм Шеммасын, Армяне Мусса Дага 233

Александр Принкен

Амалия ван Гент, Кристина Лойман, Взгляд на Арарат..... 238

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Ашот Айруни

Глас памяти жертв Геноцида армян в Карлсруэ 252

Грачик Симонян (1927-2016)..... 256

Петрос Оганисян (1944-2016)..... 260

Сведения об авторах..... 263

CONTENTS

ARTICLES

Theofanis Malkidis

The Crime of Genocide and the Armenian Genocide (in English) 3

Gayane Galstyan

The USA Standpoint on the Armenian Genocide 19

Hranush Sahakyan

The Foundation of German-Armenian Association 27

Arman Yeghiazaryan

Rising of Abas Bagratuni in the New Situation around Armenia 38

Gayane Ayvazyan

On an Unknown Source of Jeremia Chelebi Qyomurtchyan's "Diary" 51

Lilit Karapetyan

Entrance decoration of Solomon Church in Kerla 61

Astghik Hakobyan

Autonomous Bodies and Legal Status of Iranian-Armenian Community
(1921-1945s) 68

Tigran Ghanalanyan

Emigration of Armenians from Bulgaria (1950-1970s) 82

Mikayel Malkhasyan

The trends and features of the demographic processes in Armenia in the
the first half of the 17th century 94

Gevorg Sahakyan

The combination of fatalism and myths in Orhan Pamuk's novel
"The Red-Haired Woman" 105

Vachagan Avagyan

An Addition to Sayat-Nova Science 117

Vardan Petrosyan

The Diachronic Typology of the Old Armenian *Է* and the Old Church
Slavonic *Ѣ* Phonemes 128

Leonid Telyan

On the Classification of Multi-Clause Sentences 142

Narine Melkonyan

Expression of Declensional Significance according to the Armenian and
Spanish Grammarians 153

Hranush Tovmasyan

The Notion of Speaking Individual and his/her (Linguistic) Consciousness as
a Basis for Communication 168

DEBATE AND DISCUSSION

Yuri Avetisyan

The Two Stages of the Development of Literary Armenian –
Grabar and Ashkharhabar 179

REVIEW

Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni

B.B. Piotrovsky and the Archeology..... 204

Varoujean Poghosyan

Ruben Melkonyan, Mher Abrahamyan, The Policy of the Forced Islamization
in the Ottoman Empire and the Republic of Turkey 209

Valery Tunyan

Musa Qasimli, Anatolia and the South Caucasus in 1724-1920s (in Russian) 214

Ashot Hayruni

A 100-Year-Old German-Armenian Society 228

Andranik Dakessian

Vahram Shemmassian, The Musa Dagh Armenians..... 233

Alexander Brincken

Amalia van Gent, Christina Leumann, A Look at Ararat 238

SCIENTIFIC LIFE

Ashot Hayruni

Commemoration of the Victims of the Armenian Genocide in Karlsruhe..... 252

Hrachik Simonyan (1927-2016) 256

Petros Hovhanissyan (1944-2016)..... 260

Information about the Authors 263

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

1 (7)

Սրբազրիչ՝ Վ. Դերձյան
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զվխատառերով), վերնագիրը (զվխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլիտոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*hands@armin.am*), հեռ. +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (*hands@armin.am*), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (*hands@armin.am*), тел.: +374 60 710092

